

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՎՈՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Գիտագործնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ 2010

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԵԱՀԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆԱՅԿԻ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՌԹՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Գիտագործնական ձեռնարկ

Ընդհանուր խմբագիր՝

ՎԱՐԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՀՀ դատավորների միության գործադիր տնօրեն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական
դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի
դոցենտ,
իրավագիտության թեկնածու, դոցենտ

ԵՐԵՎԱՆ 2010

**Տպագրվում է ՀՀ դատավորների միության
խորհրդի որոշմանք**

Դեղինակային խումբ

**ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽՍԱԳԱԻ, ԻՐԱՎԱԳԻՍՏՈՒԹՅԱՆ
ԹԵՂՆԱԾՈՒ, ՀՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԻՐԱՎԱԲԱՆ**

ԴԱՎԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ պալատի
նախսագահ, ՀՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԻՐԱՎԱԲԱՆ,
ԻՐԱՎԱԳԻՍՏՈՒԹՅԱՆ ԹԵՂՆԱԾՈՒ, դոցենտ

ՀՐԱԶԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽՍԱԳԱԻ,
ԱՐՄԱՎԻՐԻ մարզի առաջին ատյանի դատարանի
նախսագահ

ՎԱՐԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ գործադիր տնօրենն,
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՍՏՈՒԹՅԱՆ ՓԱԼՈՎԼՍԵՏԻ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ամբիոնի
դոցենտ,
ԻՐԱՎԱԳԻՍՏՈՒԹՅԱՆ ԹԵՂՆԱԾՈՒ, դոցենտ

ՈՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽՍԱԳԱԻԻ
խորհրդական, ԻՐԱՎԱԳԻՍՏՈՒԹՅԱՆ ԹԵՂՆԱԾՈՒ

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ պալատի
նախսագահի ավագ օգնական

ԼՈՒԻՆԵ ԱԲՐԱՅԱՄՅԱՆ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՉԽԱՍՏԱԿԱԳՅԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՈՐՋԱՔՆԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՀՈՒԹՅԱՆ
ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

Սույն աշխատանքի մեջ ընդգրկվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006-2008թ. այն վճիռները, որոնք հավակնում են նախադեպային նշանակություն ունենալ ներպետական դատարանների պրակտիկայի համար:

Աշխատանքի նպատակն է աջակցել դատավորներին, դատական ժառայողներին, ինչպես նաև իրավակիրառ գործունեություն իրականացնող մյուս մարմիններին ու կազմակերպություններին

Ժանրագործություն դատական համակարգի և ընդհանրապես դատական իշխանության առավել հրատապ հիմնախնդիրներին:

Աշխատանքը կարող է օգտակար լինել նաև Եվրոպական դատարան դիմելու մտադրություն ունեցող քաղաքացիների, իրավաբանական բուհերի ուսանողների և իրավունքի բնագավառում գիտական հետազոտություններ կատարող անձանց համար:

isISBN

© ՀՀ դատավորների միություն, 2010թ.

© Հեղինակային խումբ, 2010թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ողջույնի խոսք.....

Ներածություն.....

ԲԱԺԻՆ 1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՔՆԵՐԸ.....

ԲԱԺԻՆ 2.

ԴԱՏԱՐԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎ ՌՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....

ԲԱԺԻՆ 3.

ԴԱՏԱԿԱՆ ՔԵՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ.....

ԲԱԺԻՆ 4.

ԴԱՏԱՐԱԿԱՆ ԴԵՐԸ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՐԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՋՈՎԵԼԻՒ.....

ԲԱԺԻՆ 5.

ՀԱՆՁՆՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՄԻԶԱՋԱՅԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱԿԱՐԱԿԱՆ
ԱՌԱՋՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....

ԲԱԺԻՆ 6.

ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՍԱՅՈՒԾ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....

ԲԱԺԻՆ 7.

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻԶԱՋԱՅԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԿԱԽ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ.....

ԲԱԺԻՆ 8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ ԽՈՐՃՐՈՒ

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Արդարադատության իրականացումը պետական գործունեության տեսակ է և միտված է ապահովելու քաղաքացիական հասարակության անդամների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Սակայն որքան էլ ամրագրվի դատական պաշտպանության իրավունքը, միևնույն է այն իրական կյանքում արդյունավետ չի կարող կենսագործվել, եթե իրավական համակարգում գործուն երաշխիքներ չնախատեսվեն արդարացի դատավարության իրականացման, այլ կերպ ասած՝ գործի արդարացի քննության համար:

Դատական պաշտպանության իրավունքի կենսագործման կարևոր նախապայմաններից է գործի արդարացի քննության իրավունքի և դրա իրականացման համար իրական երաշխիքների ապահովումը: ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի իրապարակային քննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքը ենթադրում է հասկանալի, թափանցիկ, մատչելի, կանխատեսելի և արդյունավետ արդարադատություն: Ինչ խոսք, այս ամենի ապահովումը հնարավորություն է տալիս ոչ միայն ամրապնդել դատարանների դերը

հասարակական ու պետական կյանքում, այլև բարձրացնել դրանց հանդեպ հասարակական վստահության մակարդակը:

Անշուշտ, դատական պաշտպանության և գործի արդարացի քննության իրավունքները գտնվում են փոխադարձ կապի մեջ, իսկ դրանց իրակացնան գրավականը, թերևս, դատավորի մասնագիտական գիտելիքների ու աշխատանքի կազմակերպման բարձր մակարդակն է: Այս կապակցությամբ միանգամայն տեղին է հիշատակել Ցիցերոնի թևավոր խոսքն այն մասին, որ դատավորը խոսող օրենք է, իսկ օրենքը՝ համը դատավոր:

Ներկայումս հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների շրջանակներում, ինչպես նաև դատական համակարգի կատարելագործման, դատական ավանդույթների ձևավորման համատեքստուն առանցքային խնդիր է դառնում դատավորների մասնագիտական գիտելիքների խորացումը, օրենսդրության մեջ կատարված վերջին փոփոխությունների և նախադեպային իրավունքի յուրացումն ու դրանց կիրառումն իրավակիրառ պրակտիկայում:

Դատավորի առօրյա աշխատանքի կատարելագործումը դատավորից պահանջուն է ոչ միայն մասնագիտական գիտելիքների խորացում և գործնական հմտությունների զարգացում, այլ նաև առկա գիտական մոտեցումների, առաջավոր փորձի ուսումնասիրում և դրա փոխանցում:

Այս կապակցությամբ ողջունելի է սույն ձեռնարկը պատրաստելու և հրատարակելու ՀՀ դատավորների միության նախաձեռնությունը: Հուսով եմ, որ ձեռնարկը կծառայի իր նպատակին և արդարադատություն իրականացնելիս կօգնի դատավորներին:

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՉՈՒՄՅԱՆ
ՀՀ ՎԵՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ
ՀՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԻՐԱՎԱԲԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատավորին ներկայացվող սույն ձեռնարկն ինքնատիպ է իր տեսակի մեջ, քանզի դրանում ընդգրկված են դատավորի առօրյա աշխատանքի և ընդհանրապես դատական համակարգի համար հետաքրքրություն ներկայացնող ժամանակակից հիմնախնդիրները, որոնք կոչված են նպաստելու ինչպես դատավորի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների, այնպես էլ դատարանի դերի ու հեղինակության բարձրացմանը:

Անշուշտ, հրապարակում կան բազմաթիվ ձեռնարկներ ու ժողովածուներ, որոնք նվիրված են դատավորի աշխատանքի կատարելագործմանը, սակայն սույն ձեռնարկի առանձնահատկություններից կարելի է համարել այն, որ աշխատանքը պատրաստվել է մասնագիտական խնդիր կողմից, իսկ համապատասխան թեմաներն էլ ընտրվել են հաշվի առնելով ինչպես Հայաստանի Հանրապետությունում դատական պրակտիկայի հրատապ պահանջները, այնպես էլ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները: Այս կապակցությամբ պետք է նշել, որ աշխատանքում քննարկված հիմնախնդիրների ընտրությունը պայմանավորված է նաև նրանով, որ դրանք ներկայումս համապատասխան միջազգային մասնագիտական կառույցների կողմից խնդրո առարկա են համարվում: Մանսավորապես, դատարանների անկախության, գործի հրապարակային քննության, դատական վերանայման, հանձննան և մինչդատական վերահսկողության ինստիտուտների հիմնախնդիրները քննարկման թեմաներ են Դատավորների միջազգային միության կառուցվածքային օդակներում, որոնց վերաբերյալ ընդունվող որոշումներն այնուհետև օգտագործվում են ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի մասնագիտական կառույցների աշխատանքների ընթացքում, որոնց

Դատավորների միջազգային միությունը մասնակցում է խորհրդատվական ձայնի իրավունքով:

Այսպիսով, մի կողմից հնարավորություն է ստեղծվում տեղեկանալ համաշխարհային մակարդակով դատական համակարգերին հուզող գլոբալ հիմնահարցերին, իսկ մյուս կողմից՝ դրանց ենթատեքստում վերլուծել մեր իրականության իրատապ հիմնախնդիրերը:

Պետք է փաստել, որ ձեռնարկի նյութի արժանահավատությունն ապահովելու նպատակով շատ քննարկված են դատավարական իրավունքի գիտության շրջանակներում: Բացի դրանց, դրանք ներկայացված են նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի լույսի ներքո, քանզի 2002թ. ապրիլի 26-ից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան ՀՀ-ի համար մտել է ուժի մեջ, հետևաբար ՀՀ-ը ստանձնել է ինչպես Կոնվենցիայով ամրագրված իրավունքների ու ազատությունների ներպետական պաշտպանությունն ապահովելու, այնպես էլ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի իրավագորության ճանաչման պարտավորություններ:

Քանի որ աշխատանքի նպատակն է ոչ միայն դատավորի աշխատանքի բարելավումը, այլ նաև դրա արդյունքում կայացվող դատական ակտերի որակի ու մակարդակի բարձրացումը, ուստի աշխատանքում առանձին բաժնով ներկայացված են այն դատական ակտերին ներկայացվող պահանջներն ու օրինակելի կառուցվածքը, որոնք հաստատված են ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կողմից:

Յիշավի, ներկայումս արդարադատության իրականացմանը ներկայացվող մարտահրավերների պայմաններում դատական համակարգին հուզող հիմնախնդիրները բազմազան են և բոլորն ել իրատապ, սակայն մեկ աշխատության ժրջանակներում դրանց անդրադառնալը ոչ հնարավոր է, և ոչ էլ նպատակահարման, ուստի հուսով ենք, որ ՀՀ դատավորների միության այս բարի ավանդույթը կշարունակելով՝ դրանք կներկայացվեն հետագա աշխատություններում, որոնցով կհամալրվի դատավորի գրադարանը:

Այսպիսով, դատավորի սեղանին է դրվում մի աշխատություն, որն իր առաքելության իրականացման ճանապարհին, անկասկած, կնպաստի դատավորի մասնագիտական գիտելիքների հարստացմանը և աշխատանքի բարձր մակարդակով կազմակերպմանը:

ԵՎ ՎԵՐՉԱՎԵՍ ՍՈՒՄ ԱԺԽԱՏՈՎԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ԻՐԱՏՈՐԱԿՄԱՆ ԻԱՄԱՐ ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀՆՈՐԻԽԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ԻԱՅՏՆՈՒՄ ԵԱՀԿ ԵՐԿԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ ՇՈՒԾԱԲԵՐԱԾ ԱԶԱԿԱԳՈՒԹՅԱՆ ԻԱՄԱՐ:

ՎԱՐԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄՆՈՐԵՆ,
ԵՊԴ ԻՐԱՎԱԳԻՍՏՈՒԹՅԱՆ ֆակուլտետի ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԱՆԲԻՈՆԻ ԴՈԳԵՆԱՏ,
ԻՐԱՎԱԳԻՍՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈԳԵՆԱՏ

ԲԱԺԻՆ 1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՁՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Իսկ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդիհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով:

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Իր այդ առաքելությունն իրականացնելիս վճռաբեկ դատարանը պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը:

Վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերաբերյալ է վերաքննիչ և վարչական դատարանների դատական ակտերը:

Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտն առերևույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ կամ եթե առկա են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ:

Վճռաբեկ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է ստորադաս դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը և վերաբննիչ դատարանի կողմից միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները:

Վճռաբեկ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում:

Վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վճռաբեկ դատարանի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածըն է:

Վճռաբեկ դատարանը կազմված է վճռաբեկ դատարանի նախագահից, պալատների նախագահներից և տասնչորս դատավորից (նատավայրը՝ քաղաք Երևան, Վազգեն Սարգսյան 5, հեռախոս՝ (010) 511-745):

Վճռաբեկ դատարանն ունի Երկու պալատ՝

- 1) քրեական պալատ,
- 2) քաղաքացիական և վարչական պալատ:

Յուրաքանչյուր պալատ կազմված է պալատի նախագահից և պալատի դատավորներից: Քրեական պալատը կազմված է պալատի նախագահից և պալատի հինգ դատավորներից, իսկ քաղաքացիական պալատը կազմված է պալատի նախագահից և պալատի հինգ դատավորներից:

Վճռաբեկ դատարանին ներկայացված վճռաբեկ բողոքները քննության ընդունելու հարցը լուծում է վճռաբեկ դատարանի համապատասխան պալատը:

Պալատի այդ որոշումները կայացվում են միաժամ և բողոքարկման ենթակա չեն:

Դատավորներից թեկուզ և մեկի այլ կարծիք ունենալու դեպքում վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը Ենթակա է լուծման վճռաբեկ դատարանի ողջ կազմով:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը:

Սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից:

ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

2) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.

3) լուծում է հանրաքենների արդյունքների հետ կապված վեճերը.

3.1) լուծում է հանրապետության նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

4) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում հանրապետության նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտմերը.

5) եզրակացություն է տալիս հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

6) եզրակացություն է տալիս հանրապետության նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին.

7) եզրակացություն է տալիս Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության Ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.

8) եզրակացություն է տալիս համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին.

9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

ՀՀ սահմանադրական դատարան կարող են դիմել՝

1) հանրապետության նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

2) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

3) պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4) կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով.

6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, եթե առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.

7) դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.

8) մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.

9) հանրապետության նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ և 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:

Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Առաջին ատյանի դատարանները ընդիանուր իրավասության դատարաններն են:

Ընդիանուր իրավասության դատարանին ենթակա են բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի:

Ընդիանուր իրավասության դատարանը քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ:

Ընդիանուր իրավասության դատարանները տեղակայված են Երևան քաղաքում և մարզերում:

Երևան քաղաքում գործում են ընդիանուր իրավասության հետևյալ դատարանները.

- 1) Երեքունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 7 դատավորի կազմով. (Նստավայրը՝ քաղաք Երևան, Մովսես Խորենացի 162 ա.)
հեռախոս՝ (010) 57-39-03)
- 2) Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 13 դատավորի կազմով. (Նստավայրը՝ քաղաք Երևան, Տիգրան Մեծի 23/1 փողոց.)
հեռախոս՝ (010) 54-79-15)
- 3) Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 5 դատավորի կազմով. (Նստավայրը՝ քաղաք Երևան, Նազարելյան թաղամաս 40.)
հեռախոս՝ (010) 39-95-96)
- 4) Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 9 դատավորի կազմով. (Նստավայրը՝ քաղաք Երևան, Գյուղական լիքեխան 20 փողոց.)
հեռախոս՝ (010) 64-94-65)
- 5) Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 9 դատավորի կազմով. (Նստավայրը՝ քաղաք Երևան, Ցրաչյա Ներսիսյան 10.)
հեռախոս՝ (010) 24-08-31)
- 6) Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 6 դատավորի կազմով. (Նստավայրը՝ քաղաք Երևան, Արշակունյաց պողոտա 24/1.)
հեռախոս՝ (010) 44-14-30)
- 7) Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 5 դատավորի կազմով (Նստավայրը՝ քաղաք Երևան, Օտյան փողոց 53/2.)
հեռախոս՝ (010) 74-59-50):
- Մարզերում գործում են ընդհանուր իրավասության հետևյալ դատարանները՝
- 1) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 9 դատավորի կազմով. (Նստավայրերը՝ քաղաք Ջրազդան, Միկոշշոջան թաղամաս.)

հեռախոս՝ (0223) 2-32-96.

քաղաք Չարենցավան, 6-րդ թաղամաս, 19 շենք.

հեռախոս՝ (0226) 4-50-54, 4-51-56.

քաղաք Եղվարդ, Երևանյան 15.

հեռախոս՝ (0224) 2-16-15, 2-16-12.

քաղաք Աբովյան, Էլարի 8.

հեռախոս՝ (0222) 2-46-01):

2) Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 10 դատավորի կազմով. (նստավայրերը՝ քաղաք Արտաշատ, Շահումյան 19.

հեռախոս՝ (0235) 2-20-35.

քաղաք Մասիս, Արարատյան 3.

հեռախոս՝ (0236) 4-59-20.

քաղաք Վեդի, Թումանյան փողոց.

հեռախոս՝ (0234) 2-42-78, 2-46-48.

քաղաք Եղեգնաձոր, Միկոյան 18.

հեռախոս՝ (0281) 2-27-70.

քաղաք Վայք, Լենինի 1.

հեռախոս՝ (0282) 2-16-00):

3) Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ դատարանի նախագահի և 7 դատավորի կազմով. (նստավայրերը՝ քաղաք Արմավիր, Ղանրապետության 41.

հեռախոս՝ (0237) 6-22-65.

քաղաք Եջմիածին, Կամոյի 15.

հեռախոս՝ (0231) 5-30-85):

4) Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատարանի նախագահի և 5 դատավորի կազմով. (նստավայրերը՝ քաղաք Աշտարակ, Եջմիածնի խճուղի 65.

հեռախոս՝ (0232) 3-65-08.

քաղաք Ապարան, Գայի 25.

հեռախոս՝ (0252) 2-43-81.

քաղաք Թալին, Խանջյան 13.

հեռախոս՝ (0249) 2-28-69):

5) Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝
դատարանի նախագահի և 12 դատավորի կազմով. (նստավայրերը՝
քաղաք Գյումրի, Անկախության հրապարակ 7.

հեռախոս՝ (0312) 5-01-83.

քաղաք Արթիկ, Բաղրամյան 40.

հեռախոս՝ (0244) 5-20-24.

քաղաք Մարալիկ, Անկախության հրապարակ, Վարչական շենք.

հեռախոս՝ (0242) 2-18-98.

գյուղ Աշոցք. հեռախոս՝ (0245) 2-16-29):

6) Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝
դատարանի նախագահի և 12 դատավորի կազմով. (նստավայրերը՝
քաղաք Վանաձոր, Մխիթար Գոշի 6.

հեռախոս՝ (0322) 2-40-31.

քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի 8.

հեռախոս՝ (0253) 2-23-04, 2-23-01.

քաղաք Տաշիր, Խանջյան 5.

հեռախոս՝ (0254) 2-25-15.

քաղաք Սպիտակ, Այգեստան 1.

հեռախոս՝ (0255) 2-22-03.

քաղաք Ստեփանավան, Գարեգին Նժդեհի 5.

հեռախոս՝ (0256) 2-22-19):

7) Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝
դատարանի նախագահի և 5 դատավորի կազմով. (նստավայրերը՝
քաղաք Իջևան, Եղիտասարդական 1.

հեռախոս՝ (0263) 4-08-41, 4-08-90.

քաղաք Դիլիջան, Կալինինի 233.

հեռախոս՝ (0268) 2-26-66.

քաղաք Նոյեմբերյան, Կամոյի 3.

հեռախոս՝ (0266) 2-22-02, 2-22-03.

քաղաք Բերդ, Նժդեհի 1.

հեռախոս՝ (0267) 2-11-10, 2-11-12):

8) **Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝**
դատարանի նախագահի և 8 դատավորի կազմով. (նստավայրերը՝
քաղաք Գավառ, Սայադյան 18.

հեռախոս՝ (0264) 2-36-01, 2-23-03.

քաղաք Սևան, Գործարանային 8ա.

հեռախոս՝ (0261) 2-37-39, 2-31-42.

քաղաք Մարտունի, Շահումյան 5.

հեռախոս՝ (0262) 4-48-47.

քաղաք Վարդենիս, Ռոնանի փողոց, քաղաքապետարանի շենք.

հեռախոս՝ (0269) 2-27-62.

քաղաք ճամբարակ, Պարույր Սևակի 4.

հեռախոս՝ (0265) 2-22-77):

9) **Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝**
դատարանի նախագահի և 8 դատավորի կազմով (նստավայրերը՝
քաղաք Կապան, Երկարուղայինների 4.

հեռախոս՝ (0285) 2-75-58.

քաղաք Գորիս, Սյունիքի 8.

հեռախոս՝ (0284) 2-29-91.

քաղաք Սիսիան, Գարեգին Նժդեհի 6.

հեռախոս՝ (02830) 32-20):

Հայաստանի Հանրապետությունում միակ մասնագիտացված դատարանը ՀՀ վարչական դատարանն է:

Վարչական դատարանն ըստ Էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

Վարչական դատարանի վճիռները կարող են բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով: Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում վարչական դատարանը կայացնում է դատական ակտեր, որոնք վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Օրենքով կարող է նախատեսվել այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ:

Վարչական դատարանի միջանկյալ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետները սահմանվում են դատավարական օրենսդրությամբ:

Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը բացառիկ դեպքերում կարող են հրապարակման պահից դատարանի կողմից հայտարարվել օրինական ուժի մեջ մտած, եթե դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ կողմից համար: Նման ակտերը ենթակա են բողոքարկման նույն դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած ակտերի համար սահմանված կարգով:

Վարչական դատարանի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքն է:

Վարչական դատարանը դատարանի նախագահի և 19 դատավորի կազմով տեղակայված է.

(կենտրոնական նստավայրը՝

քաղաք Երևան, Գարեգին Նժդեհի 23, հեռախոս՝ (010) 44-71-21 (230),

նստավայրերը մարզերում՝

քաղաք Գյումրի, Անկախության հրապարակ 7, հեռախոս՝ (0312) 5-70-98,

քաղաք Վանաձոր, Միսիթար Գոշի 6, հեռախոս՝ (0322) 2-32-35,

քաղաք Սևան, Գործարանային 8ա, հեռախոս՝ (0261) 2-01-49,

քաղաք Վեդի, Արարատյան 55. հեռախոս՝ (0234) 2-27-20,

քաղաք Կապան, Երկաթուղայինների 4, հեռախոս՝ (0285) 2-00-04,

քաղաք Էջմիածին, Կամոյի 15, հեռախոս՝ (0231) 5-36-01:

Հայաստանի Հանրապետությունում գործում է երկու վերաքննիչ դատարան՝

1) վերաքննիչ քաղաքացիական դատարանը,

2) վերաքննիչ քրեական դատարանը:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը գործում է դատարանի նախագահի և 15 դատավորի կազմով (նստավայրը՝ քաղաք Երևան, Գարեգին Նժդեհի 23, հեռախոս՝ (010) 44-84-04 (307)):

Վերաքննիչ քրեական դատարանը գործում է դատարանի նախագահի և 15 դատավորի կազմով (նստավայրը՝ քաղաք Երևան, Գարեգին Նժդեհի 23, հեռախոս՝ (010) 44-88-94 (107)):

Վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է ընդիանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը:

Վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում:

Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերաքննիչ դատարանի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքն է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավագորությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, որոնք սահմանափակվուն են՝

- միջազգական գործերին առնչվող բողոքներով Կոնվենցիայի դրույթների մեկնաբանմանը և կիրառմանը (Կոնվենցիայի 33-րդ հոդված)։
- անհատական գանգատներով Կոնվենցիայի դրույթների մեկնաբանմանը ու կիրառմանը (Կոնվենցիայի 34-րդ հոդված)։
- Նախարարների կոմիտեի խնդրանքով Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանմանը վերաբերող իրավական հարցերի առնչությամբ խորհրդատվական եզրակացություններ տալով (Կոնվենցիայի 47-րդ հոդված)։

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 11-րդ լրացուցիչ արձանագրությամբ կատարված փոփոխությունների համաձայն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորների թիվը հավասար է Կոնվենցիայի մասնակից պետությունների թվին։

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1. Լիազումար նիստը.
2. Դատարանի նախագահը.

3. Մեծ պալատը.
4. Բաժանմունքները.
5. Պալատները.
6. Կոմիտեները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տեղակայված է Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում:

Դատարանը կարող է (անհատական) գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմից թույլ տված խախտման գոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:

Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, եթե սպառվել են միջազգային իրավունքի հանրածանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, եթե կայացվել է ներպետական վերջնական որոշումը:

Դատարանը քննության չի ընդունում ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝ ա. անանուն է կամ,

բ. ըստ էռթյան այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:

Դատարանն անընդունելի է համարում ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ այն անհամատեղելի է Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների դրույթների հետ, կամ ակնհայտորեն անհիմն է, կամ հանդիսանում է գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում:

Դատարանը մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում վերը նշված դեպքերում: Դատարանը կարող է դա անել քննության ցանկացած փուլում:

Եվրոպայի խորհրդին անդամակցող պետությունները՝ Բարձր պայմանավորվող կողմերը, պարտավորվում են կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որի կողմ են հանդիսանում: Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկում է դրա կատարումը:

Եթե Նախարարների կոմիտեն գտնում է, որ վերջնական վճռի կատարման վերահսկումը խոչընդոտում է վճռի մեկնաբանման խնդրով պայմանավորված, այն կարող է դիմում ներկայացնել Դատարան՝ հարցի մեկնաբանման վերաբերյալ որոշում կայացնելու պահանջով։ Դիմում ներկայացնելու որոշումը կայացվում է կոմիտեի իրավասու ներկայացուցիչների քվեների երկու երրորդ մեծամասնությամբ։

Եթե Նախարարների կոմիտեն գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմը հրաժարվում է կատարել այն գործի առումով վերջնական վճռոք, որի կողմ է հանդիսանում, այն կարող է տվյալ կողմին պաշտոնական ծանուցումից հետո և կոմիտեի իրավասու ներկայացուցիչների քվեների երկու երրորդ մեծամասնությամբ ընդունված որոշմամբ Դատարանին հարց հղել՝ արդյոք տվյալ կողմը չի կատարել իր պարտավորությունը։

Եթե Դատարանն այս հարցում խախտում է գտնում, այդ գործը հղում է Նախարարների կոմիտե՝ ձեռնարկվելիք միջոցառումները քննարկելու նկատառումով։ Եթե Դատարանը խախտում չի գտնում, այն գործը հղում է Նախարարների կոմիտե, որը փակում է գործի քննությունը (Կոնվենցիայի 39-րդ հոդվածում լրացում նախատեսող՝ Արձանագրության 15-րդ հոդված)։

ԲԱԺԻՆ 2.

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՍԱԴՐՈՒՅԹԱՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՌՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Արդարադատության անաշառ իրականացման անկյունաքարը պետության կողմից դատարանների անկախության ապահովումն է: Ընդ որում, դատարանի անկախության սկզբունքը պետք է կենսագործվի, ազգային օրենսդրության մեջ պետք է սահմանվեն իրական երաշխիքներ այդ դրույթի իրականացման համար: Հակառակ դեպքում դատարանի անկախության սկզբունքը կվերածվի ծևական իրողության և այդպես էլ լիարժեք կյանքի չի կոչվի:

ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են, ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին:

Այնուհետև, նույն հոդվածում, որպես նշված սկզբունքի ապահովման երաշխիք, սահմանված է, որ դատավորի և սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում ասվում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործիքնության իրավունք: Այս երկու չափանիշները՝ անկախությունը և անկողմնակալությունը, սերտորեն կապված են միմյանց հետ, և հաճախ դատարանը դիտարկում է դրանք միաժամանակ:

Որպես կանոն, համարվում է, որ դատարաններն անկախ են, և դատավորների համար հազվադեպ է լինում որոշել, թե արդյոք դատարանն անկախ է, թե ոչ, բացառութ-

յամբ այն իրավիճակների, երբ նրանց հանձնարարված է քննել ոչ դատական մարմինների կողմից ընդունված որոշումները: Այն դեպքերում, երբ դատարան չհանդիսացող մարմինների վրա դրված է քաղաքացիական բնույթի կամ քրեական մեղադրանքների հետ կապված հարցերի քննության գործառույթ, դրանք պետք է գործեն անկախության և անկողմնակալության սկզբունքներին համապատասխան:

Դատական մարմնի անկախության հարցը որոշելիս՝ դատարանը հաշվի է առնում հետևյալ հանգամանքները՝

- դրա անդամների նշանակման կարգը,
- նրանց պաշտոնավարման տևողությունը,
- նրանց վրա ճնշում գործադրելուն խոչընդոտող երաշխիքների գոյությունը,
- տվյալ մարմնի համար անկախության արտաքին ատրիբուտներ ունենալու հարցը:¹

Դատարանը որոշեց, որ դատական մարմինը պետք է անկախ լինի ինչպես գործադիր իշխանությունից, այնպես էլ կողմերից²:

6-րդ հոդվածի՝ դատարանի անկախության և անկողմնակալության մասին դրույթ-ներն իրենց արտացոլումն են գտել ՀՀ օրենսդրության մեջ: Դատարանի անկախությունը առաջին հերթին պայմանավորված է դատավորի անկախությամբ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն. «Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով», իսկ արդեն վերը նշված 97-րդ հոդվածը սահմանում է, որ արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին:

Դատարանը նշել է, որ դատական մարմնում իրավաբանական որակավորում ունեցող դատավորների կամ այլ ներկայացուցիչների առկայությունը, վերջինիս անկախության վառ ապացույցն է³:

Մրամեկն ընդդեմ Ավստրիայի գործով⁴ Դատարանը որոշել է, որ քննող մարմինը (անշարժ գույքի հետ կապված գործադրների տարածքային բաժանմունքը) չի եղել անկախ: Կառավարությունը հանդես էր գալիս որպես դատավարության կողմերից մեկը, և կառավարության ներկայացուցիչը դատարանում որպես հաշվետու հանդես եկող անձի պետն էր հանդիսանում:

¹ Տե՛ս **Քեմպբելը և Ֆելմ ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով 1984թ. հունիսի 28-ի որոշումը, էջ 78:

² Տե՛ս **Ոխնգեզենն ընդդեմ Ավստրիայի** գործով 1971թ. հուլիսի 16-ի որոշումը, էջ 95:

³ Տե՛ս **Լեն Կոնսոն ընդդեմ Բելգիայի** գործով 1981թ. հունիսի 23-ի որոշումը, էջ 57:

⁴ Տե՛ս **Մրամեկն ընդդեմ Ավստրիայի** գործով 1984թ. հոկտեմբերի 22-ի որոշումը:

Այն փաստը, որ դատական մարմնի անդամները նշանակվում են գործադիր իշխանության կողմից, ինքնին չի հանդիսանում կոնվենցիայի խախտում¹: Կոնվենցիան խախտված կարող է համարվել այն դեպքում, եթե դիմողը կարողանա ցույց տալ, որ դատական մարմնի անդամներին նշանակելու կարգը, ընդհանուր առնամբ, կրել է անբավարար բնույթ, կամ որ գործի քննության համար հատուկ մարմնի հաստատությունը թելադրված է եղել այնպիսի դրդապատճառներով, որոնք կապված են դրա ընթացքի վրա ազդելու փորձի հետ²:

Ուստի, եթե դատարանի անդամները նշանակվում են որոշակի տևողությամբ, ապա դա դիտարկվում է որպես նրա անկախության երաշխիք: *Լե Կոնտն ընդդեմ Բելգիայի* գործով³ ընդունվել է, որ Վերաքննիչ խորհրդի անդամների՝ 6-ամյա տևողությամբ պաշտոնավարությունը հանդիսանում է դրա անկախության երաշխիքը: *Քեմաքելը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով⁴ Այցելուների բանտային խորհրդի անդամները նշանակվում էին 3-ամյա ժամկետով: Այդպիսի ժամկետը համարվել է համեմատաբար ոչ երկարատև, սակայն, դրա հետ մեկտեղ, նշվել է, որ խորհրդի անդամներն իրենց պարտականություններն իրականացնում են անհատուցելիության հիման վրա, և որ դժվար է գտնել անձինք նման աշխատանքի համար: Այդ պատճառով 6-րդ հոդվածի խախտում չի հայտնաբերվել:

Անկախության արտաքին ատրիբուտների նկատմամբ փոքր-ինչ կասկածելի վերաբերմունքը կարող է որոշ չափով ուժենալ օբյեկտիվ արդարացում: *Բելիլոսն ընդդեմ Ըվեյցարիայի* գործով⁵ որոշ մանր իրավակախտումների քննությամբ զբաղվող տեղական «Ոստիկանական հանձնաժողովը», բաղկացած էր սոսկ մեկ անդամից՝ ոստիկանական պաշտոնյայից, որը գործում էր իր սեփական հայեցողությամբ: Չնայած նա չպետք է ենթարկվեր իշխանությունների ցուցումներին, որ նա երդում է տվել և ենթակա չէ ազաման, ի վերջո՝ պետք է վերադառնար իր պարտականությունների կատարմանը քաղաքապետարանում: Նրան կարելի էր դիտել որպես ոստիկանության ներկայացուցիչ, որը ենթարկվում է իր ղեկավարներին և համերաշխ է իր գործընկերների հետ, ինչը, հետևաբար, կարող էր վերացնել այն վստահությունը, որը պետք է ունենան դատարանները: Այդպիսով, եղել են հիմնավոր կասկածներ՝ կապված Ոստիկանական հանձնաժողովի

¹ Տե՛ս *Քեմաքելը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1984թ. հունիսի 28-ի որոշումը, էջ 79:

² Տե՛ս *Զանդն ընդդեմ Ավստրիայի*, 15 DR 70, էջ 77:

³ Տե՛ս *Լե Քոնտը, վան Լևեն և Նե Սայերն ընդդեմ Բելգիայի* գործով 1981թ. հունիսի 23-ի որոշումը:

⁴ Տե՛ս *Քեմաքելը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով 1984թ. հունիսի 28-ի որոշումը, էջ 80:

⁵ Տե՛ս *Բելիլոսն ընդդեմ Ըվեյցարիայի* գործով 1988թ. ապրիլի 29-ի որոշումը, էջեր 66-67:

անկախության և կազմակերպչական անկողմնակալության հետ, ինչն այդ առումով չէր համապատասխանում 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Դատարանը պետք է իրավասու լինի ընդունելու պարտավորեցնող որոշումներ, որոնք չեն կարող փոխվել ոչ դատական մարմինների կողմից¹: Այդ կապակցությամբ չի հայտնաբերվել 6-րդ հոդվածի խախտում գինվորական տրիբունալների և այլ գինվորական կարգապահական մարմինների կողմից: Գործադիր մարմինը կարող է ընդունել դեկավար ցուցումներ իր անդամների համար՝ կապված նրանց պարտականությունները կատարելու հետ, բայց նման դեկավար ցուցումներն ընդհանրապես չպետք է դիտվեն որպես դատական բնույթի որոշումներ ընդունելու կանոններ²:

Պակաս կարևոր չէ նաև դատարանների **անկողմնակալության** սկզբունքը: **Պյերսակն ընդդեմ Բելգիայի** գործով Դատարանը հայտարարել է. «Չնայած անկողմնակալությունը, սովորաբար, նշանակում է նախահամոզման կամ կողմնապահության բացակայություն՝ դրա բացակայությունը կամ, ընդհակառակ՝ առկայությունը կարող է ստուգվել տարբեր միջոցներով՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան: Տվյալ համատեքստում կարելի է տարբերություններ անցկացնել կոնվենտ գործով տվյալ դատավորի անձնական համոզմունքներն արտացոլող սուբյեկտիվ մոտեցման և օբյեկտիվ մոտեցման միջև, որը որոշում է, թե արդյոք եղել են բավարար երաշխիքներ այդ կապակցությամբ ցանկացած կասկած բացառելու համար»³:

Սուբյեկտիվ անկողմնակալության կապակցությամբ Դատարանին պահանջվում են նախահամոզման փաստական առկայության ապացույցներ: **Պաշտոնապես նշանակված դատավորի** անձնական անկողմնակալությունը չի դովում կասկածի տակ, եթե միայն ի հայտ չեն գալիս հակառակն ապացուցող վկայություններ⁴: Տվյալ կանխավարկածը շատ ուժեղ է, քանի որ գործնականում բավականին դժվար է ապացուցել անձնական կողմնապահության առկայությունը: Չնայած նման բողոքները հաճախ ուղղվում են Ստրաֆուրդ. դրանցից ոչ մեկը դեռ չի ճանաչվել իրավաչափ:

Ինչ վերաբերում է օբյեկտիվության թեստին, ապա **Ֆեյն ընդդեմ Ավստրիայի** գործով Դատարանը հայտարարել է. «Օբյեկտիվության թեստի սահմաններում անհրաժեշտ է որոշել՝ արդյոք անկախ դատավորի անձնական վարքագծի համար գոյություն ունե՞ն անվիճելի փաստեր, որոնք կարող են կասկած հարուցել նրա անկողմնակալության վերաբերյալ: Այդ կապակցությամբ նույնիսկ արտաքին ատրիբուտները կարող են ունենալ ո-

¹ Տե՛ս **Ֆինլին ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով 1997թ. փետրվարի 25-ի որոշումը, էջ 7:

² Տե՛ս **Քեմաքրելը և Ֆեյն ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով 1984թ. հունիսի 28-ի որոշումը, էջ 79:

³ Տե՛ս **Պյերսակն ընդդեմ Բելգիայի** գործով 1982թ. հոկտեմբերի 1-ի որոշումը, էջ 30:

⁴ Տե՛ս **Դաուսիհիլդտն ընդդեմ Դանիայի** գործով որոշումը, էջ 47:

րոշակի նշանակություն: Տվյալ դեպքում կարևորվում է այն վստահությունը, որ ժողովրդավարական հասարակությունում պետք է առաջանա դատարանների նկատմամբ հասարակության և, նախևառաջ, քրեական դատավարությունում՝ մեղադրյալների մոտ: Դա նշանակում է, որ եթե հիմքեր կան կասկածելու կոնկրետ դատավորի անկողմնակալության վերաբերյալ, մեղադրյալի կարծիքը կարևոր, բայց ոչ վճռորոշ դեր է կատարում: Այստեղ վճռորոշն այն է, թե որքանով է տվյալ կասկածն օբյեկտիվորեն արդարացված»¹:

Դատարանը վճռել է, որ ցանկացած դատավոր, որի անկողմնակալության վերաբերյալ կան հիմնավոր կասկածներ, պետք է դուրս գա դատարանի կազմից²:

Տվյալ դեպքում նշանակություն ունի նաև ազգային օրենսդրության մեջ դատական քննության անկողմնակալությունն ապահովող ընթացակարգերի առկայությունը: Եվ այն դեպքում, եթե կոնվենցիան ուղղակիորեն այնպիսի մեխանիզմների գոյության անհրաժեշտության մասին դրույթ չի ձևակերպում, որոնց օգնությամբ դատաքննության մասնակիցները կկարողանային վիճարկել նրա անկողմնակալությունը, 6-րդ հոդվածի խախտումները, որպես կանոն, տեղի են ունենում դրանց բացակայությամբ: Եթե դիմողը կասկածներ է հայտնում դատարանի անկողմնակալության վերաբերյալ, ապա անհրաժեշտ է քննություն իրականացնել, եթե միայն նման կասկածն «ամբողջովին գուրկ չէ հիմքերից»³:

Ամենից հաճախ Ստրասբուրգում նման հարց առաջանում է ռասիզմի դրսևորումներին վերաբերող գործերով: Ներքոհիշյալ գործերում շարադրված սկզբունքները հավասարապես կիրառելի են նաև կողմնապահության կամ կանխակալ կարծիքի այլ ձևերի նկատմամբ:

Ումլին ընդդեմ Ֆրանսիայի գործով⁴ ատենակալներից մեկի հայտարարությունը՝ «Ես նաև ռասիստ եմ» լսել էր երրորդ անձը: Ազգային դատական մարմինը որոշել է գործին չմիացնել այնպիսի փաստեր, որոնք իբրև թե տեղի են ունեցել դատարանի դահլիճից դուրս: Դատարանը նշել է, որ ազգային դատարանը պատշաճ կերպով ստուգում չի կատարել դատական քննության անկողմնակալության կապակցությամբ՝ դրանով իսկ դիմողին զրկելով իրավիճակն ուղղելու հնարավորությունից, որը հակասում է կոնվենցիայի պահանջներին: Այդպիսով, Դատարանն արձանագրեց 6-րդ հոդվածի խախտում:

¹ Տե՛ս **Ֆեյն ընդդեմ Ավստրիայի**, գործով 1993թ. փետրվարի 24-ի որոշումը, էջ 30:

² Տե՛ս **Պյեռսակն ընդդեմ Բելգիայի** գործով որոշումը, էջ 30; **Նորսյերն ընդդեմ Նիդեռլանդների** գործով որոշումը, էջ 33; **Դասուսիլդստն ընդդեմ Դանիայի** գործով որոշումը, էջ 48:

³ Տե՛ս **Ումլին ընդդեմ Ֆրանսիայի** գործով 1996թ. մարտի 30-ի որոշումը, էջ 48:

⁴ Տե՛ս **Ումլին ընդդեմ Ֆրանսիայի** գործով 1996թ. մարտի 30-ի որոշումը:

Այն դեպքերում, երբ ազգային դատական մարմինն իրականացրել է պատշաճ քննություն՝ կողմնապահության մեղադրանքի փաստով, և եկել է այն եզրակացության, որ քննարկվող դատական քննությունը եղել է արդարացի, Դատարանը հակված չէ կասկածի տակ դնել տվյալ որոշումը: **Գրեգորին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով¹** քննության ընթացքում դատավորը երդվյալ ատենակալներից ստացել է հետևյալ նամակը. «Երդվյալները ցույց են տալիս ռասխստական տրամադրություններ: Անդամներից մեկը պետք է դուրս գա ատենակալների կազմից»: Դատարանը նամակը ցուցադրում է մեղադրանքի և պաշտպանության կողմերի ներկայացուցիչներին: Դատարանը նաև դիմում է ատենակալներին՝ գգուշացնելով նրանց՝ գործը քննել միայն ապացույցների հիման վրա՝ գերծ մնալով բոլոր տեսակի կանխակալ համոզնունքներից: Դատարանը վերջինս բավարար է համարել 6-րդ հոդվածի լույսի ներքո: Նա կարևոր է համարել, որ պաշտպանը չի պահանջել ատենակալների կազմի փոփոխություն և դրաց դատաքննության ժամանակ նրանց չի դիմել, թե արդյոք նրանք ընդունակ են շարունակել քննությունը և ընդունել որոշում բացառապես ապացույցների հիման վրա: Դատաքննությունն իրականացնող դատավորը հստակ, մանրամասն և համոզիչ հայտարարություն է արել՝ կոչ ամելով ատենակալներին գերծ մնալ «բոլոր տեսակի նախահամոզնունքներից»: Այնուհետև, համեմատելով տվյալ գործը **Ումլին ընդդեմ Ֆրանսիայի** գործի հետ, Դատարանը հայտարարել է. «Այն գործում քննությունն իրականացնող դատավորները չկարողացան պատշաճ կերպով արձագանքել այն հայտարարությանը, որ ինչ-որ մեկը լսել է, թե ինչպես երդվյալներից մեկը, որի անձը հնարավոր էր պարզել, ասել է, որ ինքը ռասխս է: Իսկ տվյալ գործում դատավորն առնչվել է ռասիզմի համար երդվյալներին մեղադրելու փաստի հետ, որը, չնայած դրա անորոշությանը և ոչ հստակությանը, կարելի էր բովանդակային համարել: Տվյալ հանգամանքներում դատարանն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել, որոնք հաստատում էին, որ դատարանը հանդես է եկել որպես անկողմնակալ մարմին՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի լույսի ներքո, և առաջարկել է բավարար երաշխիքներ այդ կապակցությամբ ծագած ցանկացած կասկած վերացնելու համար»²:

Սակայն հետագայում **Սանդերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով** Դատարանը եկավ այն հետևողական՝ քանի որ դատավորը պատշաճ կերպով չարձագանքեց երդվյալների կողմից ռասիզմի նման դրսնորումներին, ապա տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում:

¹ Տե՛ս **Գրեգորին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով** 1997թ. փետրվարի 25-ի որոշումը:

² Տե՛ս **Գրեգորին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով** 1997թ. փետրվարի 25-ի որոշումը, էջ 49:

Ինչպես տեսնում ենք դատարանների անկախության եվրոպական մոտեցումները բավականին լուրջ են, և այս առումով էլ պատահական չենք համարում նշել, որ միջազգային այնպիսի հեղինակավոր կառույց, ինչպիսին Դատավորների միջազգային միությունն է, որը հիմնադրվել է 1953թ. Ավստրիայի Զալգրուրգ քաղաքում, որին ներկայումս անդամակցում են աշխարհի ավելի քան 70 երկրների դատավորների միություններ, իսկ 2005թ-ից անդամակցում է նաև ՀՀ դատավորների միությունը, իր գործունեության հիմնաքարը, ինչպես նաև անդամության նախապայմանը համարում է դատավորի անկախության գաղափարը:

Այդուհանդերձ, դատավորների անկախության խնդիրը մեր հանրապետությունում ամբողջովին լուծված համարել չի կարելի և այն հետագա կատարելագործման կարիք ունի:

ԲԱԺԻՆ 3

ՂԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական դատարանի պրակտիկան

Արդարադատության մատչելիության և թափանցիկության գլխավոր նախապայմաններից մեկը դատարաններում գործերի քննության հրապարակայնության ապահովումն է:

Դատարաններում գործերի քննության հրապարակայնությունն ապահովում է հասարակության ներկայացուցիչների մասնակցությունն արդարադատության իրականացմանը: Հրապարակայնության էությունն այն է, որ դատական նիստին կարող են ազատ ներկա լինել օրենքով նախատեսված տարիքի հասած յուրաքանչյուր անձ, ինչպես նաև լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Դատական քննության հրապարակայնություն նշանակում է նաև դատավարության արդյունքների հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով:

Արդարադատության ոլորտում հրապարակայնությունն ունի երկակի դեր: Նախ՝ այն ունի դաստիարակչական նշանակություն: Ներկա գտնվելով քրեական գործի քննության՝ հասարակության ներկայացուցիչների մոտ ձևավորվում է համոզմունք այն մասին, որ յուրաքանչյուր հանցագործություն բացահայտվում է, իսկ այն կատարող անձը միշտ ենթարկվում է պատասխանատվության ու արժանի պատժի: Հրապարակայնության պայմաններում պատժի անխուսափելիության մասին պատկերացումները հանցագործություն կատարած անձին ստիպում են ձեռնպահ մնալ հետագայում հանցագործություն կատարելուց: Երկրորդ՝ արդարադատությունը հասարակության անդամների համար դաշնում է մատչելի: Հասարակությունը, ներկա գտնվելով դատական նիստերին, գնահատական է տալիս երկրում քրեական գործերով արդարադատության իրականացման ձևին և մակարդակին: Այն հսկողության տակ է

դնում ինչպես դատարանի, այնպես էլ դատավարության մյուս մասնակիցների գործողությունները:

Ժողովրդի կամքը՝ որպես ցանկացած պետական իշխանության աղբյուր, իրավունք է տալիս նրան մասնակցելու դատական նիստերին, որպեսզի կարողանա իմանալ, թե նախ՝ օրենքը, որը կիրառվում է դատարանի կողմից, արտահայտո՞ւմ է իր կամքը, թե՝ ոչ, և ինչպես է այն կիրառվում: Դատարանն օրենքը կիրառողն է, հետևաբար, նախ՝ օրենքը պետք է լինի իրավական, իսկ նրա կիրառման ժամանակ ժողովուրդն իր մասնակցությանք պետք է այն վերահսկի: Ժողովուրդը կարող է այդ անել ինչպես անձանք, այնպես էլ իր կամքով ստեղծված քաղաքացիական հասարակության մյուս ինստիտուտների՝ մանուլի, իրավապաշտպան կազմակերպությունների և այլ միջոցներով:

Քաղաքացիների և լրատվության միջոցների մասնակցությունը դատական նիստին դատարանին և դատավարության մյուս մասնակիցներին պարտավորեցնում է լինել ավելի զգոն և դրսնորել պատասխանատվության բարձր զգացում: Դատարանը գործի քննությունն իրականացնում է օրենքով սահմանված կարգով, որովհետև դատարանի թույլ տված ամեն մի խախտում անմիջականորեն կարող է նկատվել դատական նիստին ներկա անձանց կողմից:

Դատարանում գործի իրապարակային քննությունն ունի նաև հոգեբանական նշանակություն, քանի որ վկայի և մյուս հարցաքնննվողների ցուցմունքներն ընկալվում են ոչ միայն դատարանի, դատավարության կողմերի, այլև ներկաների կողմից: Անմեղ անձի արդարացումը, ինչպես նաև մեղավորի դատապարտումը բարոյական և դաստիարակչական ուժեղ ազդեցություն է ունենում ներկաների վրա:

Դատական քննությունը նախագահող դատավորից է կախված այն հարցը, թե որքանով կապահովվի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում պարունակվող բոլոր երաշխիքների իրականացումը, այդ թվում՝ դատական քննության իրապարակայնությունը: Յուրաքանչյուր դատավոր պետք է դատական քննության սկզբում հիշի այս երաշխիքների պահպանությունն ապահովելու պատասխանատվության մասին և վերջում համոզվի, որ ինքն իրականացրել է այս պարտականությունները: Ստորև նշված են դատավորի պատասխանատվության որոշ յուրահատուկ օրինակներ:

Հատկապես քրեական գործերով դատավորը պետք է ապահովի մեղադրյալի պատշաճ ներկայացումը: Դատավորը պարտավոր է նաև պատշաճ կերպով ապահովել

ոչ պատշաճ մեղադրյալներին: Դատավորը կարող է մերժել վարույթի իրականացումը, եթե գտնի, որ քրեական ներկայացուցչությունը պահանջվում է, բայց դա հնարավոր չէ:

Դատավորը պարտավոր է ապահովել կողմերի հավասարության սկզբունքի իրականացումը, որը նշանակում է, որ բոլոր մասնակիցները պետք է ունենան պատշաճ հնարավորություն իրենց գործը ներկայացնելու համար այնպիսի պայմաններում, որոնք նրանց համար հակառակ կողմի նկատմամբ չեն առաջացնում էական անբարենպաստ պայմաններ: **Կրկմարը և այլոք ընդդեմ Զեխիայի Յանրապետության** գործով Դատարանը վճռել է, որ դատավարության կողմը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու դատարան ներկայացված ապացույցներին, ինչպես նաև հնարավորություն ունենա կարծիք հայտնելու դրանց առկայության, բովանդակության և հավաստիության վերաբերյալ՝ պատշաճ ձևով և պատշաճ ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում՝ գրավոր և ժամանակին¹:

Հաջորդ հարցը վերաբերում է դատավորի պարտականությանը, երբ մեղադրանքի կողմը չի ներկայանում դատաքննությանը: Եթե դատավորը միայն դեկավարվում է մեղադրական եզրակացության մեջ տեղ գտած փաստերով, դա չի դիտվում որպես կոնվենցիայի ուղղակի խախտում, բայց այն բավարար չէ և կարող է առաջացնել հետևյալ հիմնախնդիրները.

Օրինակ՝ արդյո՞ք պաշտպանությունը հնարավորություն ունեցել է ծանոթանալու եզրակացության բոլոր մասերին: Դատավորը պետք է համոզվի, որ մեղադրյալը մանրանասն տեղեկացված է իր դեմ առաջադրված մեղադրանքին: Դատավորը պաշտպանությանը պետք է տեղեկացնի նաև, թե ինչպիսի եզրակացության է ինքը հանգում մեղադրական եզրակացությունից²: Դա հատկապես տեղի է ունենում, եթե դրանք գլխավոր տեղ են զբաղեցնում որոշում կայացնելիս, որպեսզի հնարավոր լինի ապացուցելու այդ հետևությունների վրա հիմնված փաստարկները: Որպես օրինակ կարող է ծառայել **Պելիսիերը և Սասին ընդդեմ Ֆրանսիայի** գործը³: Այս գործով դիմողները մեղադրվել էին կողոպուտ կատարելու մեջ: Քրեական դատարանին

¹ Տե՛ս **Կրկմարը և այլոք ընդդեմ Զեխիայի Յանրապետության** գործով 2000թ. մարտի 3-ի որոշումը:

² Տե՛ս **Ֆ.Կ-Ա, Տ.Մ-Ծ և Կ.Դ-Ծ ընդդեմ Ավստրիայի**: Գանգատ թիվ 18249/91, որում Յանձնաժողովը 5(3) հոդվածի համաձայն՝ դիմողների գանգատը հայտարարեց անընդունելի, քանի որ նրանք անհապաղ չեն ներկայացել իրենց գործը ըննելու իրավասություն ունեցող դատավորին: Յետագայում գործը լուծվեց: 5(3) հոդվածում ասված է. «Պարագորաֆ 1.օ-ի դրույթների համաձայն՝ ձերքակալված կամ կպլանավորված ցանկացած անձ պետք է անհապաղ ներկայացվի դատավորին կամ օրենքով դատարանի իրավասություններ ունեցող այլ պաշտոնատար անձի, և պետք է ողջամիտ ժամկետում ունենա դատաքննության իրավունք կամ պետք է ազատվի մինչև դատաքննությունը»: Ազատումը կարող է պայմանավորված լինել դատարան ներկայանալու երաշխիքներով:

³ Տե՛ս **Պելիսիերը և Սասին ընդդեմ Ֆրանսիայի** գործով 1999թ. մարտի 25-ի որոշումը:

ներկայացված փաստարկը կապված էր այս մեղադրանքի հետ, և ըստ վերաքննիչ դատարան ներկայացված դատախազի վերաքննիչ բողոքի՝ դիմողները ոչ մի փուլում չեն մեղադրվել դատական մարմինների կողմից կողոպուտին օժանդակելու կամ հանցագելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ դիմողները տեղյակ չեն եղել, որ վերաքննիչ դատարանը կարող էր վերադարձնել հանցավոր կողոպտմանն օժանդակելու և հանցագելու մասին դատավճիռը: Այնուհետև նշել է, որ հանցավոր կողոպուտին օժանդակելու և հանցագելու մեղադրանքը հանցավոր կողոպտման մեղադրանքից տարբերվում էր ավելին, քան մասնակցության աստիճանն է, ինչպես առարկել է Կառավարությունը: Դատարանը վճռել է, որ վերաքննիչ դատարանն այն իրավունքն օգտագործելով, որով ինքն անխոսք ստիպված է եղել վերառակելու փաստերը, որի համար իրավասու էր, պետք է տրամադրեր դիմողներին իրենց պաշտպանության իրավունքները գործնական և արդյունավետ ձևով և, հատկապես, ժամանակին իրականացնելու հնարավորություն:

Այդ պատճառով Դատարանը գտել է կոնվենցիայի հոդված 6(3)ա-ի և բ-ի խախտում (մեղադրանքի մասին արագ տեղեկացվելու իրավունքը և պաշտպանությունը կազմակերպելու համար համապատասխան ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքը), ներառյալ 6(1) հոդվածով նախատեսված՝ արդարացի դատաքննության ընդհանուր իրավունքը:

Հաջորդ հարցն առաջանում է դատավորի պատասխանատվության հետ կապված, երբ մեղադրյալը ենթարկվում է վատ վերաբերմունքի մինչև դատավարությունն սկսվելը կալանքի տակ գտնվելու ընթացքում: Դատարանը նշել է, որ երբ անձը բողոքում է, որ ինքը ծայրահեղ վատ վերաբերմունքի է ենթարկվել ոստիկանության կամ պետության այլ ներկայացուցչի կողմից, 3-րդ հոդվածը, 1-ին հոդվածի հետ համատեղ, իրենց իրավասության շրջանակներում յուրաքանչյուրին կոնվենցիայով նախատեսված իրավունքներ և ազատություններ տրամադրելով՝ պետության ընդհանուր պարտականության հետ մեկտեղ, պահանջվում է արդյունավետ պաշտոնական քննություն: Քննությունը պետք է կարողանա հայտնաբերել պատասխանատու անձանց ու պատժել: Հակառակ դեպքում, տանջանքների խիստ կարևոր արգելումը գործնականում արդյունավետ չէր լինի, և պետության ներկայացուցիչների համար հնարավոր կլիներ ոտնահարել նրանց իրավունքները՝ իրենց հսկողության

սահմաներում փաստական անպատճելիությամբ¹: Իսկ Մելմոռումին ընդդեմ Ֆրամսիայի գործով² Դատարանը վճռել է, որ եթե անձին կալանավորելիս նա եղել է առողջ, սակայն ազատ արձակվելիս նրա առողջական վիճակը վատքարացել է, պետությունը պարտավոր է համոզիչ բացատրություն տալ, թե ինչպես են այդ վնասվածքներն առաջացել: Եթե նման բացատրություն չի տրվում, պարզ խնդիր է առաջանում՝ կապված 3-րդ հոդվածի հետ: Այս գործի հետ կապված պետք է նկատի ունենալ միջազգային այլ իրավական ակտերով նախատեսված պարտականությունները, ինչպիսին է տանջանքների և այլ դաժան, աննարդեալ կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ Միացյալ ազգերի կոնվենցիան: Այդ կոնվենցիան նախատեսում է, inter alia, որ յուրաքանչյուր պետություն պետք է ձեռնարկի արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական կամ այլ միջոցներ՝ իր իրավասության ներքո ցանկացած տարածաշրջանում տանջանքները կանխելու համար: Այս դրույթը որևէ բացառություն չի նախատեսում:

Դատավորը պարտավոր է անմեղության կանխավարկածն ապահովելու նպատակով անբարենպաստ լրատվական լուսաբանումից խուսափելու համար ընդունել համապատասխան որոշում: Այնուամենայնիվ, լրատվության միջոցներին լիովին հեռացնելու փոխարեն դատավորը պետք է պարզաբանի, թե նրանք ինչ կարող են լուսաբանել և ինչ չեն կարող:

Իրոք, գաղտնիք չէ, որ իրապարակային դատավարությունը և դրա լուսաբանումն այսօր օգնում են դատավորին վերակառուցելու իր վարքագիծը և վերացնելու նշված բացասական երևույթները: Իրավունքի փիլիսոփայության այս գաղափարներն են մասամբ ընկած Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հիմքում. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և իրապարակային դատաքննության իրավունք: Դատարանի որոշումը հայտարարվում է իրապարակավ, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում

¹ Տե՛ս Ասենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով 1998թ. հոկտեմբերի 28-ի որոշումը, էջ 102:

² Տե՛ս Մելմոռումին ընդդեմ Ֆրամսիայի գործով 1999թ. հուլիսի 28-ի որոշումը, էջ 87:

անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում *Եքրաքանին ընդդեմ Շվեդիայի* գործը, որով դիմումատուին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ «նա սպառնացել է քաղաքացիական ծառայողին՝ վերջինիս կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ»:

Դունքաց դատական քննության արդյունքում 1982թ. փետրվարի 9-ին Գյորենբուրգի առաջին ատյանի դատարանը դիմումատուին ճանաչել էր մեղավոր և նրան դատապարտել տուգանքի՝ 600 շվեդական կրոնի չափով: Դիմումատուն այս որոշումը գանգատարկել է Արևմտյան Շվեդիայի վերաքննիչ դատարան՝ պնդելով, որ ինքը չի կատարել քրեորեն պատճելի իրավախախտում հանդիսացող գործողություններ: Հուշաքերթի փոխանակումից հետո, այն հարցի վերաբերյալ, թե արդյոք պետք է լսել նոր վկաների, թե՝ ոչ, դիմումատուն պաշտոնապես պահանջել է գործի դունքաց բանավոր լսում՝ կողմերի մասնակցությամբ և տուժողի պարտադիր ներկայությամբ:

Վերաքննիչ դատարանը մերժել է նոր վկաներ հարցաքննելու պահանջը: Դեռ ավելին՝ դատախազի առաջարկությամբ դատարանը հրաժարվել է դունքաց դատական քննություն անցկացնելուց և 1982թ. նոյեմբերի 12-ին հաստատել առաջին ատյանի դատարանի որոշումը:

Դիմումատուն դիմել է Գերագույն դատարան՝ գանգատ ներկայացնելու թույլտվություն ստանալու միջնորդությամբ, սակայն 1983թ. մայիսի 3-ին նրա միջնորդությունը մերժվել է: Նույն թվականի հունիսի 20-ին դիմելով Եվրոպական դատարան՝ դիմումատուն նշել է, որ «վերաքննիչ ատյանում գործի քննությունը՝ առանց իր մասնակցության, հանդիսանում է արդարացի հրապարակային քննության նրա իրավունքի խախտում (6-րդ հոդված, կետ 1)»:¹

Եվրոպական դատարանը համամիտ է եղել դիմումատուի հետ՝ նշելով հետևյալը. «Այդ հոդվածն ակնհայտորեն կիրառելի է դիմումատուի դեմ հարուցված գործի նկատմամբ՝ ներառյալ քննությունը վերաքննիչ դատարանում, և սա չի վիճարկվում: Քրեական գործով վարույթը մեկ ամբողջություն է, և 6-րդ հոդվածով ընձեռվող

¹Տե՛ս Եվропейский суд по правам человека. Т.1, М., 2000, էջեր 582-583.

պաշտպանությունը չի դադարում առաջին ատյանի դատարանի կողմից՝ գործով որոշում կայացնելու հետ մեկտեղ: Դատարանի ձևավորված պրակտիկայի համաձայն՝ այն պետությանը, ուր գործում են վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, «ներկայացվում է օրենքի առջև պատասխանատվության ենթարկված անձանց համար նշված դատարաններում այդ հոդվածում պարունակվող երաշխիքներից օգտվելու հնարավորություն ընձեռելու պահանջը»:¹

Այս նախադեպը մեր համար կարևոր է երկու առումով. առաջին, որ կոնվենցիայի 6-րդ հոդվածում սահմանված հիմնարար երաշխիքները կիրառելի են դատական համակարգի բոլոր օղակներում, և երկրորդ՝ հրապարակայնությունը դիտարկվում է ոչ թե դատական նիստի դրնբացության, այլ բովանդակային առումով: Այլ կերպ ասած, եթե դրնբաց դատավարության ընթացքում հասարակությունը չպետք է ներկա գտնվի գործի հանգամանքների քննությանը (հատկապես, երբ վիճարկվում է փաստը), այլ պետք է միայն տեսնի, թե ինչպես է դատավորը գործը գեկուցում և հեռանում ու վերադառնում խորհրդակցական սենյակից, ապա այդպիսին չի կարող դիտվել հրապարակային դատավարություն: Դրապարակայնության բովանդակությունն այն է, որ հասարակությունը հնարավորություն է ունենում տեսնելու, թե բանավոր քննության ընթացքում ինչպես են հետազոտվում ապացույցները, ինչ փաստարկներ են բերվում և, վերջապես, դատարանն ինչպես է դրանք գնահատում:

Բերված օրինակում խոսքը վերաբերում էր նրան, որ դիմողը վիճարկում էր փաստը. նրա կարծիքով իր կատարածը քրեորեն պատժելի արարք չէր, և այդ պատճառով էլ պահանջում էր հրապարակային, բանավոր քննություն՝ տուժողի պարտադիր մասնակցությամբ: Այս գործով Եվրոպական դատարանն ուշադրություն է դարձրել մեկ կարևոր հարցի վրա ևս.

«Եթե վերաքննիչ գանգատը շոշափում է բացառապես իրավունքի հարցեր՝ մի կողմ թողնելով գործի փաստական հանգամանքները, ապա 6-րդ հոդվածի պահանջները կարող են պահպանվել նաև այն դեպքում, եթե դիմումատուին հնարավորություն չի տրվել անձամբ հանդես գալու վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանում (տես՝ ...Մոնելի և Մորիսի գործը և 1984թ. փետրվարի 22-ի որոշումը Սաքերի գործով): Վերջին դեպքում խոսքը վերաբերում էր այնպիսի ատյանի, որի առջև երբեւ չի դրվել գործի փաստերը բացահայտելու խնդիր, այլ նա միայն իրավունքի շոշափված նորմերը պետք է մեկնաբաներ:

¹ Տե՛ս նույն աշխատությունը, էջ 583:

... Յենց մեղքն էր հանդիսանում այն իիմնական հարցը, որի լուծումը պահանջվում էր վերաքննիչ դատարանից: Տվյալ գործի հանգամանքները և քննության արդարացիության սկզբունքը հաշվի առնելով՝ այն չէր կարող պատշաճ կերպով լուծվել՝ առանց իր կատարած գործողություններում քրեական հանցակազմի բացակայությունը պնդող դիմումատուի անձնական ցուցմունքների, ինչպես նաև տուժողի ցուցմունքների անմիջական գնահատման»:¹

Այսպիսով, Եվրոպական դատարանն ավելի լայն է մեկնաբանում հրապարակայնությունը՝ այն կապելով նաև ապացույցների հետազոտման անմիջականության սկզբունքի հետ:

Եվ այդ գործով Եվրոպական դատարանը վճռել է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, և միաձայն որոշել, որ «պատասխանող պետությունը պարտավոր է դիմումատուիմ՝ ի հատուցումն նրա կրած և կատարած ծախսերի, վճարել 112 500 (հարյուր տասներկու հազար հինգ հարյուր) շվեդական կրոն՝ հանած 24 216 (քսանչորս հազար երկու հարյուր տասնվեց) ֆրանսիական ֆրանկ և 57 (հիսունյոթ) սամտիմ»:²

Ահա այսպիսի գումար վճարեց Շվեդիայի կառավարությունը, քանի որ երկրի դատական օղակները խախտել էին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ չին անցկացրել հրապարակային դատավարություն:

Դատարանը վճռել է, որ անձը, որին առաջադրվել է քրեական մեղադրանք, պետք է իրավունք ունենա մասնակցելու դատարանում իր գործի քննությանը³: Յոդված 6(1) և 6(3)c-ը, իրենց առարկային և նշանակությանը համապատասխան, ենթադրում են մեղադրյալի մասնակցությունը դատաքննությանը:

Քրեական գործի քննության իրականացումը մեղադրյալի կամ կողմերից մեկի բացակայությամբ կարող է բույլատրվել որոշ բացառիկ հանգամանքներում, այն դեպքում, եթե պաշտոնական մարմինները, չնայած բոլոր ձեռնարկած կամ անհրաժեշտ միջոցներին, ի վիճակի չեն եղել տեղեկացնելու շահագրգիռ անձին դատական քննության անցկացման մասին⁴ կամ որոշ դեպքերում՝ կապված մասնակիցների հիվանդության հետ⁵:

¹ Տե՛ս Եվропейский суд по правам человека. Т.1, М., 2000, էջ 585:

² Տե՛ս Եվропейский суд по правам человека. Т.1, М., 2000, էջ 587:

³ Տե՛ս Եվրопейский суд по правам человека. Т.1, М., 2000, էջ 587:

⁴ Տե՛ս Եվропейский суд по правам человека. Т.1, М., 2000, էջ 587:

⁵ Տե՛ս Եվропейский суд по правам человека. Т.1, М., 2000, էջ 587:

Դատական քննության մասնակիցները կարող են հրաժարվել դատարանում հանդես գալու իրենց իրավունքից, բայց այդ դեպքում իրավունքից հրաժարվելը պետք է կատարվի ոչ երկիմաստ ձևով և «ապահովվի դրա նշանակությանը համաչափ նվազագույն երաշխիքներով»¹: Սակայն, եթե հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը հրաժարվել է դատաքննությանը մասնակցելու իր իրավունքից, նրա շահերը, միևնույն է, պետք է ներկայացվեն դատարանում²:

FCB-ն ընդդեմ Իտալիայի գործով³ իտալական դատարանը կրկնակի դատական քննություն էր իրականացնում դիմողի բացակայությամբ՝ չնայած նրա փաստաբանը հայտնել էր դատարանին, որ իր պաշտպանյալը ձերբակալված է արտասահմանում: Դատարանը նշել է, որ դիմողը ցանկություն չի հայտնել հրաժարվելու դատաքննությանը մասնակցելուց և չի ընդունել կառավարության ներկայացուցչի փաստարկն այն մասին, որ նա դիտավորյալ է օգտագործել դատաքննության ձգձգման տակտիկան՝ հրաժարվելով իտալական իշխանություններին տրամադրել իր հասցեն: Իտալական իշխանություններին հայտնի էր, որ դիմողի դեմ արտասահմանում հարուցված է քրեական գործ, և դատաքննության շարունակումն առանց հետագա քայլեր նախաձեռնելու փորձի, որոնք ուղղված էին իրադրության պարզաբանմանը, դժվար թե կարելի էր համատեղելի ճանաչել մանրակրկիտության հետ, որն անհրաժեշտ է պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովման գործում:

Վերաքննությանը մասնակցելու անձի իրավունքը կարող է կախված լինել դատաքննության բնույթից և ծավալից: Դատարանը գտել է, որ վերաքննիչ դատարանում մեղադրյալի մասնակցության հարցը այնքան վճռորոշ նշանակություն չունի, որքան դատաքննությանը նրա մասնակցելը: Այն դեպքում, եթե վերաքննիչ դատարանը զբաղվում է բացառապես իրավական հարցերի քննությամբ, ապա մեղադրյալի մասնակցությունն անհրաժեշտ չէ: Սակայն իրավիճակը փոխվում է, եթե վերաքննիչ դատարանը քննում է նաև գործի փաստական կողմը: Վերաքննությանը մեղադրյալի մասնակցության իրավունքի կապակցությամբ որոշում ընդունելիս՝ Դատարանը նկատի կունենա դիմողի համար ռիսկի աստիճանը («ինչն է նրա համար կարևոր»), թե փաստերի հայտնաբերման նպատակով վերաքննիչ դատարանը որքանով մեղադրյալի մասնակցության կարիքն ունի:

¹ Տե՛ս **Փուատրիմոլն ընդդեմ Ֆրանսիայի** գործով 1993թ. նոյեմբերի 23-ի որոշումը:

² Տե՛ս **Փելադրան ընդդեմ Սիրեռլանդների** գործով 1994թ. սեպտեմբերի 22-ի որոշումը, որով Դատարանն արձանագրել է 6(1) և 6(3) հոդվածների խախտում:

³ Տե՛ս **FCB-ն ընդդեմ Իտալիայի** գործով 1991թ. օգոստոսի 10-ի որոշումը:

Կրեմցովն ընդդեմ Ավստրիայի գործով¹ դիմողին չեն թույլատրել մասնակցել իրավունքի հարցերին վերաբերող դատական լսումներին, և Դատարանն ընդունել է, որ նրա մասնակցությունն անհրաժեշտ չի եղել, քանի որ նրա փաստաբանը կարողացել է մասնակցել լսումներին և հայտարարություններ անել նրա անունից: Այնուամենայնիվ, Դատարանը խախտում տեսնում է նրանում, որ դիմողին թույլ չեն տվել մասնակցելու դատավճռի դեմ բերված բողոքի քննությանը, որը նախատեսում էր պատժի խստացում՝ հատուկ ռեժիմի բանտում ցմահ ազատազրկում, ինչն ընդունվել էր այնպիսի վկայությունների հիման վրա, որոնք երդվալները հնարավորություն չեն ունեցել ստուգել: Դատարանը նշել է. քանի որ դիմողի, նրա մտադրությունների և դրդապատճառների բնույթի գնահատականը կարևոր դեր են կատարել որոշում ընդունելիս, ինչը վկայում էր, թե որքանով է դիմողը շահագրգիռ, անհրաժեշտ էր ապահովել նրա՝ փաստաբանի հետ մեկտեղ ներկայությունը և մասնակցությունը վերաքննիչ բողոքի քննությանը:

Հրապարակային դատավարության բաղադրիչն է կազմում դատական նիստերի լուսաբանումը մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների կողմից:

Եվրոպական դատարանը **Պրետոն և այլոք ընդդեմ Իտալիայի գործով նշել է.** «Թվում է, թե 6-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասության մեջ օգտագործվող տերմինը՝ «դատարանի որոշումը հայտարարվում է հրապարակավ», ենթադրում է, որ պահանջվում է որոշման բարձրաձայն ընթերցում:

...Սակայն Եվրոպայի խորհրդի անդամ շատ երկրներում ձևավորվել է այլ պրակտիկա՝ կարդալուց բացի, նրանց բոլոր դատարանների կամ դրանց մի մասի, հատկապես վճռաբեկ դատարանների որոշումները հրապարակելու համար, օրինակ՝ գրասենյակ հանձնելը, որը մատչելի է հանրության համար: Կոնվենցիայի հեղինակները չեն կարող անցնել այդ հանգամանքի կողքով...

Այդ պատճառով Դատարանը կաշկանդված է տեքստային մեկնաբանությամբ: Նա գտնում է, որ բոլոր դեպքերում դատական որոշման հրապարակումը պետք է գնահատվի պատասխանող պետության ներքին իրավունքին համապատասխան՝ նրա դատավարական համակարգի առանձնահատկությունների լույսի ներքո, 6-րդ հոդվածի առարկան և նպատակները հաշվի առնելով»:²

Տվյալ գործով Դատարանը դիմումատուի բողոքը համարել է անհիմն՝ նշելով, որ Դատարանի կարծիքով այս համատեքստում 6-րդ հոդվածի 1-ին կետով հետապնդվող

¹ Տե՛ս **Կրեմցովն ընդդեմ Ավստրիայի**, գործով 1993թ. սեպտեմբերի 21-ի որոշումը:

² Տե՛ս Եվропейский суд по правам человека. Т.1, М., 2000, № 432:

Նպատակն է՝ ապահովել հանրային վերահսկողությունը դատական իշխանության նկատմամբ և դրանով իսկ երաշխավորել արդարացի դատական քննության անցկացումը լիովին իրագործվում է, համենայնդեպս, վճռաբեկ վարույթի հետ կապված, որոշումը հանձնելու միջոցով։ Դա մատչելի է դարձնում որոշման ամբողջ տեքստը նույն այն չափով, որքանով և դրա հրապարակային ընթերցումը, մանավանդ որ վերջինս հաճախ սահմանափակվում է միայն որոշիչ մասի ընթերցմամբ։ Հետևաբար, վճռաբեկ դատարանի որոշման հրապարակային ընթերցման բացակայության փաստը տվյալ դեպքում կոնվենցիայի խախտում չի հանդիսանում¹։

Բերված նախադեպն արտացոլում է կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ոչ թե ձևը կամ տառը, այլ ոգին՝ այն իմաստով, որ ապահովում է դատական որոշման մատչելիության իրավունքը՝ անկախ դրա իրականացման ձևից։ Մատչելիությունը, ընդհակառակը, չեզոքացվում է, եթե, օրինակ, 500 մեքենագրական էջից բաղկացած դատավճիռը ընթերցվում է մի քանի օրվա ընթացքում։ Արդյո՞ք կարող են դատարանի դահլիճում գտնվող քաղաքացիները, այս դեպքում ընկալել դատավճռի տեքստն ամբողջությամբ։ Իհարկե՝ ոչ։

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը յուրաքանչյուր անձի համար երաշխավորում է հրապարակային դատական քննության իրավունք իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններն իրականացնելիս կամ իրեն առաջադրված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում։ Այնուհետև 6-րդ հոդվածում նշվում է, որ լրատվության միջոցներին և հասարակությանը կարող է չթույլատրվել ներկա լինել ողջ դատաքննությանը կամ դրա մի մասին՝ ելնելով ժողովողավարական հասարակությունում բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից, եթե դա պահանջվում է՝ ելնելով անչափահասների շահերից կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանության համար, կամ այն չափով, որքանով դա դատարանի կարծիքով խիստ անհրաժեշտ է հատուկ հանգամանքներում, եթե հրապարակայնությունը կվճասեր արդարադատության շահերին։

Դատաքննության հրապարակային բնույթն արդարացի դատավարության իրավունքի էական տարրն է։ Ինչպես նշել է Դատարանը *Աղսեմն ընդդեմ ԳԴՐ-ի գործով* «Դատական մարմինների առաջ դատաքննության հրապարակային բնույթը, որին հղում է կատարում 6-րդ հոդվածի 1-ին կետը, դիմողներին պաշտպանում է արդարադատության գաղտնի, առանց հասարակության հսկողության իրականացումից։

¹ Сեւ Европейский суд по правам человека. Т.1, М., 2000, № 433:

Դա նաև հանդիսանում է ինչպես վերադաս, այնպես էլ ենթադաս ատյանների դատարանների գործունեության նկատմամբ վստահության ամրապնդման միջոցներից մեկը: Արդարադատության իրականացման ընթացքը դարձնելով թափանցիկ՝ հրապարակայնությունը նպաստում է 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակին հասնելուն, այն է՝ արդարացի դատաքննության ապահովումը, որի երաշխիքը հանդիսանում է ցանկացած ժողովորակարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը՝ կոնվենցիայի լույսի ներքո¹:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջն իրականացնելու համար անհրաժեշտ է, որպես կանոն, ապահովել դատաքննության հրապարակայնությունն առաջին կամ վերաքննիչ ատյանի դատարաններում: Այնուամենայնիվ, տեխնիկական պատճառներով երբեմն կարող է չպահանջվել հրապարակային դատաքննությունը²:

Այն դեպքում, երբ հրապարակային դատական քննություն չի իրականացվել առաջին ատյանի դատարանում, այս դրությունը կարող է շտկվել վերադաս ատյանի դատարանում հրապարակային դատաքննության իրականացմամբ: Սակայն, եթե վերաքննիչ դատարանը չի քննում գործի կոնկրետ հանգամանքները կամ ի վիճակի չէ քննել դրա բոլոր կողմերը, ապա տվյալ դեպքում տեղի է ունենում 6-րդ հոդվածի խախտում: *Դյենեն ընդդեմ Ֆրանսիայի³* գործով Դատարանը նշել է. «Քանի որ տվյալ գործով կարգապահական մարմնի կողմից հրապարակային դատաքննություն չի իրականացվել, Վերջինս շտկված չի կարող համարվել այն միջոցով, որ բժշկական վերաքննիչ մարմնն իրականացրել է բաց դատական քննություններ, քանզի այն չի կարող դիտարկվել որպես լիարժեք իրավասություն ունեցող դատական մարմին, մասնավորապես, այն իրավասու չէ գնահատել, թե որքան է պատժի քննարկվող միջոցը համարժեք եղել կատարված արարքին: Պահանջվում են բացարիկ բնույթի դատողություններ հրապարակային դատաքննությունների բացակայությունն արդարացնելու համար, այն դեպքում, երբ դրանք չեն իրականացվել առաջին ատյանի դատարանի կողմից»⁴:

Գործի հրապարակային քննության իրավունքը, որպես կանոն, ներառում է դատարանում հանդես գալու իրավունքը՝ բացառությամբ հատուկ հանգամանքների⁵:

¹ Տե՛ս *Ախսենն ընդդեմ ԳԴՀ-ի* գործով 1983թ. դեկտեմբերի 8-ի որոշումը, էջ 25:

² Տե՛ս *Շովեր-Զգրագենն ընդդեմ Ըվեյցարիայի* գործով 1993թ. հունիսի 24-ի որոշումը, էջ 58 (հաշմանդամության բոշակ ստանալու դիմողի իրավունքը):

³ Տե՛ս *Դյենեն ընդդեմ Ֆրանսիայի* գործով 1995թ. սեպտեմբերի 26-ի որոշումը, էջ 34:

⁴ Տե՛ս *Սուալինգերը և Թուզոն ընդդեմ Ավստրիայի* գործով 1997թ. ապրիլի 23-ի որոշումը, էջ 51:

⁵ Տե՛ս *Ֆիշերն ընդդեմ Ավստրիայի* գործով 1995թ. ապրիլի 26-ի որոշումը, էջ 44:

Վերաքննիչ դատարանում բանավոր դատական քննություններ իրականացնելու համար ընդհանուր պահանջ գոյություն չունի: Օրինակ՝ *Ախսենն ընդդեմ ԳԴՀ-ի¹* գործով Դատարանը որոշել է, որ քրեական գործով դատաքննության ընթացքում բանավորությունն անհրաժեշտ չի եղել, երբ վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը բացառապես օրենքի հիման վրա: Սակայն այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը կոչված է քննել ինչպես փաստի, այնպես էլ իրավունքի հարցերը և որոշում ընդունել մեղադրվող անձի մեղավորության կամ անմեղության վերաբերյալ, բանավոր ընթացակարգով քննությունների իրականացումը հանդիսանում է անհրաժեշտություն²: Իսկ քաղաքացիական գործերի համար որոշվել է, որ բանավորությունը բողոքի քննության փուլում անհրաժեշտ չէ³:

Որոշ դեպքերում դիմողը կարող է հրաժարվել իրապարակային դատաքննության իր իրավունքից: Ինչպես հայտնել է Դատարանը *Յոկանսոնը և Ստուրեսոնն ընդդեմ Շվեդիայի* գործով՝ «Յանրահայտ է, որ տվյալ դրույթի ոչ տառը, ոչ էլ ոգին չեն կարող դիմողին խոչընդոտել իր սեփական ազատ կամահայտնությունից հրաժարվելուն, որն արտահայտված է ուղղակիորեն կամ անուղղակիորեն, այն է՝ իր գործի իրապարակային քննության իրավունքից հրաժարվելիս: Սակայն այդ իրավունքից հրաժարվելը պետք է իրականացվի ոչ երկիմաստ ձևով և չպետք է մտնի հակասության մեջ որևէ շահի հետ, ինչը հասարակական կարևորություն են ներկայացնում»⁴:

Ղևերն ընդդեմ Բելգիայի գործում⁵ դիմողը համաձայնել է ընդունել տուգանքը մուծելու ճանապարհով քրեական գործը լուծելու առաջարկը: Յակառակ դեպքում նա ստիպված կլիներ բախվել քրեական գործի քննության ընթացքում իր բիզնեսը փակելու անհրաժեշտության հետ: Դատարանը որոշել է, որ դատական քննությունից դիմողի հրաժարվելը, այսինքն՝ այն փաստը, որ դիմողը համաձայնել է մուծել տուգանքը, իրականացվել է հարկադրաբար, ինչը կարող է բնութագրվել որպես 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Յոկանսոնը և Ստուրեսոնն ընդդեմ Շվեդիայի վերոհիշյալ գործով Դատարանն ընդունել է, որ տեղի է ունեցել դիմողների լրելյան հրաժարում իրենց՝ իրապարակային դատաքննության իրավունքից, քանի որ նրանք խնդրանքով չեն դիմել դրա

¹ Տե՛ս *Ախսենն ընդդեմ ԳԴՀ-ի* գործով 1983թ. դեկտեմբերի 8-ի որոշումը, էջ 28:

² Տե՛ս *Երբատանին ընդդեմ Շվեդիայի* գործով 1988թ. մայիսի 26-ի որոշումը, էջ 32-33:

³ Տե՛ս *Ք-ն ընդդեմ Շվեյցարիայի* գործով որոշումը 41DR 242:

⁴ Տե՛ս *Յոկանսոնը և Ստուրեսոնն ընդդեմ Շվեդիայի* գործով 1990թ. փետրվարի 21-ի որոշումը, էջ 66:

⁵ Տե՛ս *Ղևերն ընդդեմ Բելգիայի* գործով 1980թ. փետրվարի 27-ի որոշումը, էջեր 51-54:

իրականացման համար, այն դեպքում, երբ այդպիսի հնարավորությունը հստակորեն ձևակերպված է Շվեդիայի օրենսդրությունում:

Դատարանը նշել է, որ բանտարկյալների կարգապահական զանցանքների վերաբերյալ քննությունը կարող է իրականացվել դռնփակ: **Քեմպբելը և Ֆելը ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով¹ Դատարանը նշել է, որ չի կարելի հաշվի չառնել այն փաստերը, որոնք վերաբերում են հասարակական կարգին և անվտանգության հարցերին, երբ նման քննությունն իրականացվում է դռնբաց: Դա աներևակայելի դժվարություններ կստեղծեր պետական իշխանության համար:

Դատարանը որոշել է, որ չնայած իրապարակային քննությունների իրականացման լիովին արգելումը չի կարող արդարացված լինել, այնուամենայնիվ, պրոֆեսիոնալ կարգապահական քննությունը, հանգանանքներից կախված՝ կարող է իրականացվել դռնփակ: Յրապարակային դատաքննության անհրաժեշտության հարցը որոշելիս՝ պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են մասնագիտական գաղտնիքի պահպանումը և այցելուների կամ հիվանդների մասնավոր կյանքի պաշտպանությունը²:

Դատարանը քննության է առել **Բայրամն ընդդեմ Միացյալ Թագավորության** գործը³, որը վերաբերում էր այն կանոնին, որ երեխաների խնամակալության հարցի վերաբերյալ որոշ դատաքննություններ պետք է իրականացվեն ինչպես առանց լրատվության միջոցների, այնպես էլ առանց հասարակության մասնակցության: Մինչդեռ երեխաներին վերաբերող նմանատիպ դատաքննությունները որոշ դատարաններում ենթադրում են լրատվության միջոցների և դատաքննությանը որպես կողմ չմասնակցող որոշ մերձավոր ազգականների մասնակցություն: 2001թ. ապրիլի 24-ի իր վճռում Դատարանը նշել է, որ որևէ խախտում տեղի չի ունեցել:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ասվում է, որ դատական որոշումը հայտարարվում է իրապարակավ: Տվյալ դրույթը չի ենթադրում այնպիսի բացառություններ, որոնք թույլ էին տրվում այն սկզբունքի կապակցությամբ, համաձայն որի՝ քննությունը պետք է իրականացվի իրապարակայնորեն (տես վերը): Այսպիսով, տվյալ դրույթն իր ավանդն է ներդնում արդարացի դատաքննության ապահովման գործում՝ դատական իշխանության նկատմամբ իրապարակային հսկողություն սահմանելով:

¹ Տե՛ս **Քեմպբելը և Ֆելը ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով 1984թ. հունիսի 28-ի որոշումը, էջ 87:

² Տե՛ս **Ալբերտ և Լե Կոնտեն ընդդեմ Բելգիայի** գործով 1983թ. փետրվարի 10-ի որոշումը, էջ 34 և **Դ-ը ընդդեմ Բելգիայի** գործով 1987թ. նոյեմբերի 30-ի որոշումը, էջ 54:

³ Տե՛ս **Բայրամն ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով 1999թ. սեպտեմբերի 14-ի որոշումը:

Դատարանը նշել է, որ հրապարակավ հայտարարումն անպայմանորեն չի նշանակում, որ դատարանում որոշումը պետք է միշտ բարձրաձայն ընթերցվի: *Պրետոն և այլոք ընդդեմ Իտալիայի* գործով Դատարանը նշել է, որ «նա գտնում է, որ բոլոր դեպքերում «դատական որոշման» հայտարարման ձևը պետք է գնահատվի պատասխանող պետության ներքին իրավունքին համապատասխան՝ նրա դատավարական համակարգի առանձնահատկությունների լույսի ներքո, հաշվի առնելով 3-րդ հոդվածի 1-ին կետի առարկան¹:

Տվյալ գործով Դատարանը հայտարարել է, որ, հաշվի առնելով վերաքննիչ դատարանի սահմանափակ իրավասությունը, նրա որոշումը դատական մատյանում գրանցելը, որը դրա ամբողջական տեքստը դարձրել էր հանրամատչելի, լիովին բավարարում է «դրա հրապարակավ հայտարարման» պահանջին:

Այնուհետև, Դատարանը նշել է, որ *Ախսենն ընդդեմ ԳԴՀ-ի* գործով² Գերազույն դատարանի կողմից ընդունված որոշման հրապարակավ հայտարարումն անհրաժեշտ չէր՝ հաշվի առնելով այն, որ ստորին ատյանի դատարանների որոշումները մինչ այդ արդեն հայտարարվել էին հրապարակավ:

Զուտերն ընդդեմ Ըվեյցարիայի գործով³ Դատարանը նշել է, որ վերաքննիչ գինվորական դատարանի որոշման հրապարակավ հայտարարումն անհրաժեշտ չի եղել, քանի որ հասարակության համար տվյալ որոշման մատչելիությունն ապահովվում էր այլ միջոցներով, նախնառաջ, դատական մատյաններից որոշման պատճենների ստացման հնարավորությամբ, նաև՝ շնորհիվ դատական որոշումների պաշտոնական հավաքածուի մեջ դրա հետագա հրատարակման:

Բոլոր վերոհիշյալ գործերը վերաբերում էին այն որոշումներին, որոնք ընդունվել էին վերին ատյանի դատարանների կողմից, և Դատարանը դրանցում որևէ խախտում չարձանագրեց: Սակայն Վերմերն ընդդեմ Ավստրիայի⁴ և *Հյուկսն ընդդեմ Ավստրիայի* գործերով⁵, որտեղ հրապարակավ չէր հայտարարվել ոչ առաջին ատյանի դատարանի, ոչ էլ վերաքննիչ դատարանի որոշումը, այդ որոշումների ամբողջական տեքստը մատչելի չի եղել հասարակությանը, դատական մատյաններում դրանք մատչելի են եղել միայն այն անձանց համար, ովքեր ունեցել են «օրինական շահեր», Դատարանն արձանագրել է 6-րդ հոդվածի խախտում:

¹ Տե՛ս *Պրետոն և այլոք ընդդեմ Իտալիայի* գործով 1983թ. դեկտեմբերի 8-ի որոշումը, էջ 26:

² Տե՛ս *Ախսենն ընդդեմ ԳԴՀ-ի* գործով 1982թ. հունիսի 29-ի որոշումը, էջ 32:

³ Տե՛ս *Զուտերն ընդդեմ Ըվեյցարիայի* գործով 1984թ. փետրվարի 22-ի որոշումը, էջ 34:

⁴ Տե՛ս *Վերմերն ընդդեմ Ավստրիայի* գործով 1997թ. նոյեմբերի 24-ի որոշումը:

⁵ Տե՛ս *Հյուկսն ընդդեմ Ավստրիայի* գործով 1997թ. նոյեմբերի 24-ի որոշումը:

Դատարանը խախտում է հայտնաբերել նաև **Քեմպելը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում¹**, որտեղ բանտում կարգապահական քննության ընթացքուն Հաճախորդների խորհրդի կողմից ընդունված որոշումը չի հայտարարվել հրապարակավ, ինչպես նաև միջոցներ չեն ձեռնարկվել տվյալ որոշման հրապարակավ հայտարարման համար:

Տեղին է հիշատակել, մասնավորապես՝ **Վաճ Մեխելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործը**, որի եռարյունը հետևյալն է.

Յուլանդիայի չորս քաղաքացիներ 1989թ. կալանավորվել են փոստատան վրա զինված կողոպուտ իրականացնելու համար, որի հետևանքով չորս ոստիկան վիրավորվել եր: Բոլոր մեղադրյալները ժխտել են և շարունակել են ժխտել իրենց մասնակցությունը հանցագործությանը: Շրջանային դատարանը բոլոր չորսին էլ ճանաչել էր մեղավոր և յուրաքանչյուրին դատապարտել տասը տարվա ազատազրկման:

Մեղադրանքները իիմնվել են *inter alia* ոստիկանության սպաների ցուցմունքներ բովանդակող ոստիկանական գեկույցների վրա, որոնք վերջիններս տվել են որոշակի համարների տակ, բայց մնացած առումներով՝ մնացել անանուն, ինչպես նաև վկաների ցուցմունքներ՝ ինչպես ոստիկան, այնպես էլ սովորական բնակիչներ:

Դիմումատունները բողոք են ներկայացրել վերաքննիչ դատարան... Պաշտպանական կողմը պահանջել է, որպեսզի ոստիկանները հարցաքննվեն բաց դատավարության ընթացքում: Վերաքննիչ դատարանը, սակայն որոշել է, որ բոլոր վկաներին առանձին-առանձին կհարցաքննի քննիչը:

Քննիչը երդմանը լսել էր քսան վկայի ցուցմունք, որոնցից տասնմեկի ինքնությունը պաշտպանական կողմին չէր հայտնվել, քանի որ նրանց հարցաքննության ժամանակ պաշտպանը և դատախազը գտնվելիս են եղել առանձին սենյակներում, որոնք և քննիչի աշխատասենյակի հետ միացվել են ձայնային կապի միջոցով:

Համարների տակ վկայություն տվածները՝ ոստիկանության սպաները, պնդել են, որ իրենց անունները գաղտնազերծելու դեպքում իրենք այլս չեն կարողանա պատշաճ ձևով կատարել իրենց պարտականությունները: Ավելին, նրանք բոլորը ցանկացել են մնալ անանուն՝ վախենալով իրենց և իրենց ընտանիքների դեմ պատժամիջոցներից: Նրանք բոլորը հաստատել են իրենց ցուցմունքները գործն ըստ եռարյան քննած շրջանային դատարանում:

¹ Տե՛ս **Քեմպելը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության գործում** 1984թ. հունիսի 28-ի որոշումը, էջ 92:

Իր պաշտոնական գեկույցում քննիչը հայտարարել է, որ իրեն հայտնի է անանուն վկաներից յուրաքանչյուրի անձը, և այն, որ նրանք եղել են տասնմեկ տարբեր անձինք։ Զեկույցում շարադրվել են այն պատճառները, որոնց հիման վրա վկաները ցանկացել էին մնալ անանուն։ Քննիչը պատճառները դիտել էր համոզիչ և բավարար, իսկ ցուցմունքները՝ վստահության արժանի։ Ինչպես պաշտպանական, այնպես էլ մեղադրանքի կողմը հնարավորություն են ունեցել հարցեր տալու։

... Հետագայում վերաքննիչ դատարանը մերժել է պաշտպանական կողմի միջնորդությունը՝ բաց դատավարությունում անանուն վկաներին կրկին հարցաքննելու վերաբերյալ, սակայն հարցաքննել է մի շարք վկաների, որոնց ինքնությունը գաղտնապահված չէր։

... Վերաքննիչ դատարանը բոլոր չորսին էլ ճանաչել է մեղավոր սպանության փորձի և կողոպտման մեջ և դատապարտել յուրաքանչյուրին 14 տարվա ազատազրկման¹։

Այս գործով Եվրոպական դատարանը գտավ, որ խախտվել է կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական քննության հրապարակայնության պահանջ՝ բերելով հետևյալ փաստարկները։

Դատարանի խնդիրը, կոնվենցիայի համաձայն ոչ թե այն է, որ գնահատական տա վկաների ցուցմունքներին, այլ այն, որպեսզի համոզվի, թե արդյոք դատաքննությունը, ընդհանուր առնամբ, եղել է արդար՝ ներառյալ նաև այն, թե ինչպես են ծեռք բերվել ապացույցները։

Սովորաբար, բոլոր ապացույցները պետք է ներկայացվեն հրապարակային դատական լսման ընթացքում, մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցությունն ապահովելու նպատակով։ Այս սկզբունքից կան բացառություններ, սակայն դրանք որևէ կերպ չեն կարող նսենացնել պաշտպանության հրավունքը. ընդհանուր կանոնի համաձայն՝ 6-րդ հոդվածի 1-ին և 3 (դ) կետերը պահանջում են, որպեսզի մեղադրյալին տրվի իր դեմ վկայող անձանց պնդումները վիճարկելու և նրանց հարցաքննելու համաչափ հնարավորություն՝ երբ նրանք ցուցմունք են տալիս դատարանում, կամ էլ հետագա փուլերում²։

Եվրոպական դատարանն իր այս որոշման մեջ հենվում է մեկ այլ նախադեպի վրա, որում նշվել է. «Այսպիսի հանգամանքներում արդարացի դատաքննության սկզբունքները պահանջում են նաև, որպեսզի համապատասխան դեպքերում

¹ Տե՛ս Եվропейский суд по правам человека. Т.2, М., 2000, էջեր 440-441։

² Տե՛ս նույն աշխատությունը, էջ 443։

պաշտպանական կողմի շահերը համադրվեն այն վկաների կամ զոհերի շահերի հետ, որոնք դատարան են կանչվել ցուցմունք տալու համար»:¹

Այս պատճառաբանությունից հետևում է, որ վերը նշված երկու արժեքներին Դատարանը տալիս է հավասար նշանակություն: Սակայն, նկատի ունենալով Եվրոպական դատարանի որոշումը հենց այս գործով, պետք է եզրակացնել, որ նախապատվությունը, վերջին հաշվով, թեկուզ՝ միջնորդավորված ձևով, տրվել է հրապարակայնության սկզբունքին: Դատարանը հստակ նշել է. «Պետք է հիշեցնել, որ մեղադրական դատավճիռը չպետք է բացառապես կամ որոշիչ կերպով հիմնվի միայն անանուն պնդումների վրա»:²

Այստեղից հետևում է, որ Եվրոպական դատարանը չի ժխտում «անանուն պնդումների» օգտագործումը դատավճորի տեքստում՝ պայմանով, որ այն ամբողջովին կամ որոշիչ կերպով չպետք է հիմնվի այդպիսի ապացույցների վրա: Այլ կերպ ասած՝ Դատարանը գտնում է, որ մեղադրական դատավճիռը հիմնականում և որոշիչ կերպով պետք է հենվի դատաքննությամբ հետազոտված ապացույցների վրա: Ի դեպ, ՀՀ քր. դատ. օր-ը (23-րդ հոդված) այս հարցում որևէ բացառություն չի նախատեսում՝ ամրագրելով, որ «դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման լնթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ»:

Դայաստանի Դանրապետության օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը գրեթե բառացիորեն արտացոլված է ՀՀ Սահմանադրությունում, ինչը ողջունելի է: ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմաբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Դանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության

¹ Տե՛ս նույն աշխատությունը, էջ 444:

² Տե՛ս նույն աշխատությունը, էջ 444:

միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել»:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ինչպես տեսնում ենք, չի բացարձականացնում դատական քննության հրապարակայնության սկզբունքը և նախատեսում է որոշակի սահմանափակումներ, որոնցից հետևում է, որ ամեն մի գործով դատական նիստն ամբողջությամբ կամ դրա մի մասը ոչ հրապարակային անցկացնելու հարցի լուծումը թողնվում է դատարանին: Վերջինս որոշում կայացնելիս պետք է հաշվի առնի պաշտպանվող սոցիալական արժեքների կարևորությունը՝ ինչպես անհատի, այնպես էլ հասարակության և պետության համար: Ամեն դեպքում, այդ որոշումը պետք է լինի պատճառաբանված:

Ոչ հրապարակային դատավարություն անցկացնելու միակ հիմքը հանգում է նրան, որ հրապարակայնությունը կարող է վճասել՝

1. բարոյականությանը.
2. հասարակական կարգին.
3. ազգային անվտանգությանը.
4. անչափահասների շահերին.
5. մասնավոր կյանքին.
6. արդարադատության շահերին:

Այս հիմքերն ունեն գնահատող բնույթ, բայց դրանցից յուրաքանչյուրի բացարձականացումը կարող է անդառնալի վճաս հասցնել արդարադատության շահերին:

Սակայն ՀՀ քր. դատ. օր-ի 16-րդ հոդվածը՝ չնայած վերնագրված է «Դատական քննության հրապարակայնությունը», իր բովանդակությամբ նեղացնում է հրապարակայնության հասկացությունը և չի համապատասխանում վերջինիս էությանը: Չնայած այն հանգամանքին, որ 2006թ. ՀՀ քր. դատ. օր-ում կատարվեցին փոփոխություններ, որի արդյունքում նոր բովանդակությամբ շարադրվեց 16-րդ հոդվածը, «հրապարակայնություն» հասկացությունը այդպես էլ մնաց շատ նեղ և չպարզաբանված:

ՀՀ քր. դատ. օր-ի 16-րդ հոդվածի համաձայն՝

1. քրեական գործերի դատական քննությունը բոլոր դատարաններում դրնբաց է, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի:

2. Դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել պետական և ծառայողական գաղտնիքների հետ առնչվող հանցագործությունների գործերով:

Դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ բացառիկ դեպքերում, եթե դա չի վնասի արդարադատության իրականացմանը կամ չի հանգեցնի դատավարության իրապարակայնության սկզբունքի չարդարացված սահմանափակմանը, դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել նաև՝

1) անձնական և ընտանեկան կյանքին, անձի պատվին և արժանապատվությանն առնչվող հանցագործությունների վերաբերյալ գործերով.

2) անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով.

3) քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերժավոր ազգականների պաշտպանության անհրաժեշտության դեպքում:

Դատարանը դռնփակ դատական քննություն կարող է անցկացնել նաև ազգային անվտանգության և հասարակական կարգի պաշտպանության նկատառումներով, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

3. Դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին դատարանի որոշումը կարող է կայացվել ամբողջ դատական քննության կամ դրա համապատասխան մասի վերաբերյալ: Դռնփակ դատական քննությունն անցկացվում է քրեական դատավարության նորմերի պահպանմամբ:

4. Դատարանների դատավճիռները և այլ վերջնական որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն: Դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանի որոշման հիման վրա կարող են հրապարակայնորեն հայտարարվել դատավճի կամ այլ վերջնական որոշման միայն ներածական և եզրափակիչ մասերը. չեն հրապարակվում այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ քր. դատ. օր-ի 16-րդ հոդվածը միայն որոշակիորեն նախատեսում է այն սահմանափակումները, որոնց առկայության դեպքում գործով դատական նիստն ամբողջությամբ կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու հարցի լուծումը թողնվում է դատարանին: Վերջինս այդ հարցը լուծելիս պետք է հաշվի առնի պաշտպանվող սոցիալական արժեքների կարևորությունը՝ ինչպես անհատի, այնպես էլ

հասարակության և պետության համար: Ամեն դեպքում, այդ որոշումը պետք է լինի պատճառաբանված:

Քանի որ հրապարակայնությունը վերաբերում է առաջին հերթին դատավարության մասնակիցների ներկայությանը դատական նիստին, ապա այստեղ առաջանում է երկու հարց. արդյո՞ք խախտվում է հրապարակայնության սկզբունքը, եթե, առաջին՝ անց է կացվում հեռակա դատավարություն, և երկրորդ՝ որոշակի պատճառներով ամբաստանյալը հեռացվում է դատական նիստերի դահլիճից:

ՀԽՍՀ 1961թ. քրեական դատավարության օրենսգիրքն ընդունում էր հեռակա դատավարության գաղափարը: Նշված օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝ ամբաստանյալի բացակայությամբ գործի քննությունը թույլատրվում էր երկու դեպքում. եթե ամբաստանյալը գտնվում էր ԽԽՍ սահմաններից դուրս և խուսափում էր դատարան ներկայանալուց կամ, եթե ամբաստանյալը ինքն էր միջնորդում իր բացակայությամբ քննել այնպիսի հանցագործության վերաբերյալ գործը, որի համար որպես պատիժ ազատազրկում չէր կարող նշանակվել:

Կարող ենք վստահաբար ասել, որ ՀԽՍՀ 1961թ. քրեական դատավարության օրենսգրքի գոյության 37 տարիների ընթացքում այդ նորմը Հայաստանում ոչ մի անգամ չի կիրառվել: Չենց այդ պատճառով էլ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգիրքը հրաժարվեց այդ ինստիտուտից և 302-րդ հոդվածով սահմանեց, որ դատական քննությունը կատարվում է ամբաստանյալի մասնակցությամբ, որի դատարան ներկայանալը պարտադիր է: Իսկ 303-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ամբաստանյալի չներկայանալու դեպքում գործի քննությունը հետաձգվում է:

Ուստաստանի Դաշնության նոր քրեական դատավարության օրենսգիրքը, որը կիրառության մեջ դրվեց 2002թ. հուլիսի 1-ից, պահպանեց հեռակա դատավարության գաղափարը. «Ամբաստանյալի բացակայությամբ դատական քննությունը կարող է թույլատրվել միայն այն դեպքում, եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության վերաբերյալ քրեական գործով ամբաստանյալը միջնորդում է տվյալ քրեական գործն իր բացակայությամբ քննելու մասին» (247-րդ հոդված): Յնարավոր է, որ ՌԴ-ում նման պրակտիկա գոյություն ունի: ճիշտ է, ՌԴ-ի քր. դատ. օր-ի նշված պահանջը չի հակասում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, քանի որ մեղադրյալն ինքն է հրաժարվում իրեն ընձեռված իրավունքների իրականացումից, սակայն առանձին

գործերով հեռակա դատավարությունը Եվրոպական դատարանի կողմից դիտվել է որպես կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:¹

Որոշակի բարդություն է իրենից ներկայացնում դատական նիստի ժամանակ ամբաստանյալին դահլիճից հեռացնելու խնդիրը: Նման անհրաժեշտություն առաջանուն է երկու դեպքում. երբ ամբաստանյալը խանգարում է դատական նիստը կամ խնդիր է առաջանուն տվյալ ամբաստանյալին հարցաքննել մյուս ամբաստանյալների բացակայությամբ: ՀՀ քր. դատ. օր-ի 336-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բացառիկ դեպքերում, երբ դա անհրաժեշտ է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, դատարանի պատճառաբանված որոշմանը ամբաստանյալը կարող է հարցաքննվել մյուս ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստի դահլիճ ամբաստանյալի վերադառնալուց հետո նրա համար ընթերցվում են դատական նիստի արձանագրության մեջ ընդգրկված, նրա բացակայությամբ հարցաքննված ամբաստանյալի ցուցմունքները և նրան հնարավորություն է ընձեռվում անհրաժեշտ ցուցմունքներ և հարցեր տալ իր բացակայությամբ հարցաքննված ամբաստանյալին:

Մեր օրենսգրքի այս հոդվածը նույնականացնում է կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված դատավարության հրապարակայնության սկզբունքին, քանի որ այն հետապնդում է մեկ նպատակ՝ ապահովել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը: Այսինքն՝ դա պայմանավորված է միայն արդարադատության շահով. մի հանգամանք, որը նախատեսված է հենց կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Պետք է նկատի ունենալ, որ նման ընթացակարգ օրենսդիրը սահմանում է միայն ամբաստանյալի հարցաքննության ժամանակ: Այլ խոսքերով՝ ամբաստանյալը չի կարող դահլիճից հեռացվել վկաների կամ տուժողների հարցաքննության ընթացքում կամ այլ ապացույցների հետազոտման ժամանակ:

Դատական քննության հրապարակայնությունն առաջին հերթին վերաբերում է ապացույցների հետազոտմանը: Սակայն վկաների, տուժողների և նրանց հարազատների անվտանգության տեսանկյունից բնավ պարտադիր չեն, որպեսզի ամբաստանյալն իմանա համապատասխան վկայի կամ տուժողի իսկական անուն-ազգանունը, ինչպես նաև վերջիններիս բնակության և աշխատանքի վայրը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 10.07.2003թ. «Լրատվամիջոցների կողմից քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու

¹Տե՛ս Европейский суд по правам человека, (Колоцца против Италии). Т.1, М., 2000, էջեր 493-497:

մասին» Հանձնարարականում՝ ուղղված Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին, ասված է. «Վկաների ինքնությունը չպետք է հրապարակայնացվի, բացառությամբ այն դեպքերի, երբ վկան նախապես տվել է իր համաձայնությունը, վկայի անձի հրապարակայնությունը հանրային կարևորություն ունի, կամ երբ վերջինս արդեն իսկ վկայություն է տվել հրապարակայնորեն: Վկաների անձը (ինքնությունը) երբեք չպետք է հրապարակայնացվի, եթե դա սպառնում է նրանց կյանքին կամ անվտանգությանը: Պատշաճ կարևորություն պետք է տրվի վկաների պաշտպանության ծրագրին, հատկապես կազմակերպված հանցավորության դեմ տարվող կամ ընտանիքի ներսում կատարված հանցագործություններին առնչվող քրեական դատավարություններում»:

Մեր օրենսդրությունն այս հարցում կատարելագործման կարիք ունի:

Համաձայն ՀՀ քր.դատ.օր-ի 358-րդ հոդված՝ դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե «դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա»:

Բայց, ամեն դեպքում, անանուն վկաների ինստիտուտի ներմուծման, ինչպես նաև վկաների պաշտպանության հարցերում մենք դեռևս շատ խնդիրներ ունենք:

Եվրոպական դատարանը քանից հայտարարել է, որ իր խնդիրը ոչ թե վկաների ցուցմունքները գնահատելու մեջ է, այլ նրանում, որ Եվրոպական դատարանը համոզվի՝ արդյոք դատական քնությունը, ընդհանուր առմանք, եղել է արդարացի և հրապարակային, թե՝ ոչ, ներառյալ նաև ապացույցների ստացման եղանակները¹:

Դատական պրակտիկայում հաճախ հրապարակայնության սկզբունքը խախտվում է ամբաստանյալի մասով՝ այն դեպքերում, երբ նա խանգարում է դատական նիստը և անհնար է դարձնում դատական քննության բնականոն ընթացքը:

ՀԽՍՀ 1961թ. քրեական դատավարության օրենսգիրքը հատուկ նորմ էր սահմանել նման դեպքերի համար, երբ ամբաստանյալը դատարանի որոշմամբ կարող էր հեռացվել դատական նիստի դահլիճից՝ նախազգուշացվելուց հետո կրկին դատական նիստի կարգը խախտելու համար: ՀՀ 1998թ. քր. դատ. օր-ը նման նորմ չէր պարունակում, ինչը, սակայն չէր նշանակում, որ դատական նիստը խանգարող ամբաստանյալը չէր կարող հեռացվել դատական նիստի դահլիճից: Նոր քր. դատ. օր-ի 65-րդ հոդվածը մեղադրյալի պարտականությունների շարքում թվարկում է նաև դատական նիստում կարգուկանոնի պահպանումը: Հետևաբար, եթե մեղադրյալն իր պարտականությունը չի կատարում, նրա նկատմամբ պետք է կիրառվի ներգործության

¹ Տե՛ս Վան Մեխելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործով 1997 թ. մարտի 18-ի որոշումը, էջ 50:

միջոց: Մյուս կողմից, նույն օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախագահողը ... ղեկավարում է դատարանի նիստը, միջոցներ է ձեռնարկում ապահովելու քրեական գործի արդարացի քննությունը..., ինչպես նաև դատարանի նիստին ներկա գտնվող անձանց պատշաճ վարքագիծը:

Ամեն դեպքում, տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար անհրաժեշտ է վերականգնել նախկին քրեական դատավարության օրենսգրքի 254-րդ հոդվածի համապատասխան դրույթները և կարգավորել դատական նիստում կարգը խախտող մեղադրյալի նկատմամբ ներգործության միջոցների կիրառման կարգը և հիմքերը:

Եվ ահա 2007 և 2009թ.թ. ՀՀ քր. դատ. օր-ում կատարված փոփոխությունների արդյունքում լուծվեց քննարկվող հարցը և ավելացվեց 314.¹-րդ հոդվածը հետևյալ բովանդակությամբ. «1. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, իրենց դատավարական իրավունքներից անբարեխզորեն օգտվելու կամ դատավարական պարտականությունները անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում դատարանն իրավունք ունի դատավարության մասնակիցների, քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ դատական սանկցիաները.

- 1) նախազգուշացում.
- 2) նիստերի դահլիճից հեռացնելը.
- 3) դատական տուգանք.
- 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:

2. Սանկցիան պետք է համաչափ լինի արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու դատարանի գործունեության բնականոն ընթացքը:

Նախազգուշացումը և նիստերի դահլիճից հեռացնելը կիրառվում են նույն դատական նիստում կայացվող դատարանի արձանագրային որոշմամբ:

3. Նիստերի դահլիճից հեռացումը չի կարող կիրառվել տվյալ պահին ցուցմունք տվող վկայի նկատմամբ:

4. Նիստերի դահլիճից հեռացնելու մասին որոշումն անհապաղ կամովին չկատարելու դեպքում կատարվում է հարկադիր կարգով Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի միջոցով:

5. Դատական տուգանքը կիրառվում է դատավարության մասնակիցների և գործին մասնակցող անձանց նկատմամբ: Դատական տուգանքը կարող է կիրառվել մինչև 100.000 դրամի չափով: Դատական տուգանքի չափը որոշվում է դատարանի հայեցողությամբ, սակայն բացի արարքի ծանրությունից, պետք է հաշվի առնվի նաև արարք կատարողի անձը: Դատական տուգանքը կիրառվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Դատական տուգանքը կիրառելու մասին որոշումը կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6. Ամբաստանյալի կողմից դատական նիստի կարգը խախտելու և նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու կամ նախագահող դատավորի կարգադրությունները չկատարելու դեպքում դատարանը կիրառում է նախազգուշացում: Միաժամանակ, նախագահող դատավորն ամբաստանյալին բացատրում է, որ դատական նիստի կարգը կրկին խախտելու և նիստի բնականոն ընթացքին կրկին խոչընդոտելու կամ նախագահող դատավորի կարգադրությունները չկատարելու դեպքում նա կարող է հեռացվել նիստերի դահլիճից:

Նույն դատական նիստում ամբաստանյալի կողմից դատական նիստի բնականոն ընթացքին կրկին խոչընդոտելը կամ նախագահող դատավորի կարգադրությունները չկատարելը հիմք է սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան կիրառելու համար, որի դեպքում գործի քննությունը շարունակվում է ամբաստանյալի բացակայությամբ, սակայն դատավճիռը հրապարակվում է ամբաստանյալի ներկայությամբ:

Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսենորելու դեպքում դատարանը ամբաստանյալի նկատմամբ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան կիրառում է առանց նախազգուշացման, և գործի քննությունը շարունակվում է ամբաստանյալի բացակայությամբ, սակայն դատավճիռը հրապարակվում է ամբաստանյալի ներկայությամբ կամ հրապարակումից հետո անհապաղ հանձնվում է նրան:

Սույն մասով նախատեսված կարգով ամբաստանյալը նիստերի դահլիճից հեռացվում է մինչեւ 10 օր ժամկետով:

7. Գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կիրառվում են բացառապես սույն հոդվածի առաջին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված

սանկցիաները: Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ:

Սույն հոդվածի առաջին մասի 4-րդ կետով նախատեսված դատական սանկցիան պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

8. Դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումը հրապարակման պահից ուժի մեջ է: Դատական տուգանք կիրառելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկել վերադաս դատարան հրապարակման պահից երեք օրվա ընթացքում:

9. Դատական սանկցիայի կիրառումն արգելք չէ սանկցիայի ենթարկված անձին օրենքով նախատեսված այլ պատասխանատվության միջոցների ենթարկելու համար»:

Նման նորմի սահմանումը, որը թույլ տվեց դատական նիստը խանգարող ամբաստանյալին հեռացնել դահլիճից, չի հակասում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նման վարքագծով մեղադրյալն ինքն է իրեն գրկում նշված հոդվածով սահմանված իր իրավունքներից օգտվելու հնարավորությունից: Հասկանալի է, որ մեղադրյալի դահլիճ վերադառնալուց հետո պետք է հրապարակվի դատական նիստի արձանագրությունը և նրան հնարավորություն տրվի բերելու իր փաստարկները: Այն դեպքերում, եթե մեղադրյալը ոչ պատշաճ վարքագիծ է դրսևորում դատավճռի հրապարակման ժամանակ, այն պետք է հրապարակվի մեղադրյալի բացակայությամբ, իսկ հրապարակումից հետո՝ նրան տրամադրվի դատավճռի պատճենը:

Իսկ այն դեպքում, եթե մեղադրյալը պահանջում է հրապարակային դատաքննությամբ ուսումնասիրել այս կամ այն ապացույցը, դատարանն այդ հարցը լուծելիս՝ ելակետ պետք է ընդունի ՀՀ քր. դատ. օր-ի 107-րդ հոդվածով սահմանված հանգանակների վերհանման անհրաժեշտությունը:

Դատական պրակտիկայում հաճախ հարցեր են առաջանում՝ կապված դատական նիստերի լուսաբանման ժամանակ օգտագործվող տեխնիկական միջոցների հետ (լուսանկարում, տեսա- և (կամ) կինոնկարահանում, ձայնագրում և այլն):

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն, ըստ էության, նշված հարցերը չի կարգավորում: Կարծում ենք, որ անհրաժեշտ է օրենսգրքի 16-րդ հոդվածը, որն ամրագրում է դատական քննության հրապարակայնության սկզբունքը, լրացնել Ուսուաստանի Դաշնության քր. դատ.օր-ի 241-րդ հոդվածի 5-րդ մասի ոգով՝ սահմանելով, որ «դռնբաց դատական քննությանը ներկա գտնվող անձինք իրավունք ունեն գրավոր նշումներ կատարելու: Լուսանկարում, տեսա- և (կամ) կինոնկարահանում

թույլատրվում է դատական նիստը նախագահողի կողմից՝ կողմերի համաձայնության դեպքում, եթե դրանով խոչընդոտներ չեն առաջանում դատական քննության համար։ Զայնագրության կատարումը չի թույլատրվում, եթե դրանով խոչընդոտներ են ստեղծվում դատական քննության համար։

Ո՞Դ քր. դատ. օրի այս նորմը, մեր կարծիքով, լիովին համապատասխանում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, քանի որ հավասարակշռված են ինչպես հանրության, այնպես էլ կողմերի և արդարադատության շահերը։ Նման նորմ անրագրված է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (2003) 13 Հանձնարարականում՝ ուղղված Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին, որի 14-րդ սկզբունքում ասված է. «Լրատվամիջոցների կողմից ուղիղ հեռարձակումը դատական նիստերի դահլիճից կամ նկարահանումը պետք է արգելվի, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բացահայտորեն թույլատրվում է օրենքի կամ համապատասխան պաշտոնատար անձանց կողմից։ Տեղեկատվություն հաղորդելու այդ ձևը չպետք է թույլատրվի, եթե դրանով ստեղծվում է քրեական դատավարության տուժողների, վկաների, կողմերի, երդվյալների կամ դատավորների վրա անցանկալի ներգործության լուրջ վտանգ։»

Նման նորմի բացակայության պատճառով է, որ հանրապետությունում գործող հեռուստաալիքները, վերջին տարիների ընթացքում, ամեն օր եթեր են արձակում, այսպես կոչված, «հասարակական հնչեղություն» ունեցող գործեր։ Խնդրում են ինձ ճիշտ հասկանալ. Ես ոչ թե դեմ եմ գործը եթերում լուսաբանելուն, այլ պարզապես պնդում եմ, որ նման լուսաբանման համար անհրաժեշտ է ունենալ նախագահողի թույլտվությունը և կողմերի համաձայնությունը։ Հանցագործություն կատարած անձը պետք է պատժվի, բայց այդ հեռարձակումները կարող են բացասաբար անդրադառնալ հատկապես մեղադրյալի հարազատների վրա։ Ի՞նչ մեղք ունի մեղադրյալի տասնամյա թոռնիկը, որ իր պապին ցույց են տալիս վանդակաճաղերի հետևում, իսկ դպրոցում էլ երեխային ասում են, որ իր պապին նախորդ օրը տեսել են հեռուստացույցով։

Դատական նիստի իրապարակայնությունը պահանջում է, որպեսզի իրապարակայնորեն հետազոտված ապացույցներն իրենց արտացոլումը գտնեն դատավճռում։ Հենց դատավճռով է, որ ինչպես քրեական, այնպես էլ քրեադատավարական օրենքները կիրառվում են կոնկրետ դեպքերում։ Եվ հասարակությունը կվստահի միայն այն դատավճռին, որն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված։ Դատարանն իրավունք չունի որևէ ապացույց, որը վերաբերում է ապացույցն առարկայի այս կամ այն հանգամանքների հաստատմանը կամ հերքմանը,

մատնել անուշադրության: Դրա համար պետք է ամեն ինչ անենլ, որպեսզի հրապարակվող դատավճիռները լինեն օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Միայն այդպիսի որակներ ունեցող դատական ակտը կարող է համապատասխանել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

Վերջինս հատուկ անդրադառնում է նաև դատավճռի հրապարակման դրույթությանը՝ նշելով, որ «դատարանի որոշումը հայտարարվում է հրապարակավ»: Այսպիսով, դատավճռի, ինչպես և դատական այլ որոշման հրապարակումը պետք է կատարվի դրույթության նիստում:

Մեր հանրապետությունում որոշակի պրակտիկա է ձևավորվել դատական որոշումների հրապարակային ընթերցման սահմանների առումով. եթե դատավճիռը մեծածավալ է, ապա ընթերցվում է միայն դրա «որոշեց» մասը: Համաձայն ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 19.07.2000թ. թիվ 28 որոշմամբ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 12.02.2000թ. թիվ 20 որոշումը լրացվեց 9-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«ՀՀ քր. դատ. օր-ի 373 հոդվածի համաձայն «Դատավճիռն ստորագրելուց հետո դատարանը վերադառնում է դատական նիստի դահլիճ, և նախագահողը հրապարակում է դատավճիռը: Ուստի դատավճռի հրապարակումը ամբողջովին, թե մասամբ յուրաքանչյուր անգամ որոշում է նախագահողը, և մասամբ հրապարակումը չի կարող դիտվել որպես քրեական դատավարության նորմի խախտում: Սակայն բոլոր դեպքերում դատավճռի ներածական և եզրափակիչ մասերի ամբողջովին հրապարակումը պարտադիր է»:

Ավելին, 2007թ. ՀՀ քր. դատ. օր-ում կատարված փոփոխությունների արդյունքում որոշակի հստակություն մտցվեց դատական ակտերի հրապարակման ժամկետների առումով: Մասնավորապես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 356-րդ հոդվածը լրացվեց նոր բովանդակությամբ՝ սահմանելով. «Ամբաստանյալի վերջին խոսքը լսելուց հետո դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ՝ դատավճիռ կամ որոշում կայացելու համար՝ հայտարարելով դատավճիռը կամ որոշումը հրապարակելու վայրը, օրը և ժամը»:

Հասկանալի է, որ նման ձևակերպումը դատավարական իրադրության մեջ որոշակիություն մտցնելով՝ կդառնար անարդյունավետ, եթե մեկ այլ փոփոխությամբ՝ ի դեմս ՀՀ քր. դատ. օր-ի 369-րդ հոդվածի առաջին մասի՝ չսահմանվեր, որ «Դատավճիռը կազմվում և հրապարակվում է երկշաբաթյա ժամկետում»:

Բացի այդ, մատչելի (ոչ գաղտնի) տեղեկատվությունը ֆիքսված է նյութական կրիչի վրա, և իրավասու անձինք (բոլոր նրանք, ովքեր իրավունք ունեին ներկա գտնվելու դատական նիստերի դահլիճում՝ դատարանի որոշման իրապարակման ժամանակ) իրավունք ունեն ընկալելու այդ նույն տեղեկատվությունը այլ ձևով, մասնավորապես՝ որոշման պատճենն ընթերցելու միջոցով»:¹ Մյուս կողմից էլ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նոր որակ է հաղորդում նաև դատական որոշումների մատչելիության պայմաններին: Յայտնի է, որ ՀՀ դատավորների միության, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի և այլ կազմակերպությունների կողմից պարբերաբար իրատարակվում են (նաև էլեկտրոնային տարբերակով) ՀՀ դատական ակտերի ժողովածուներ:

Նշված ծրագրերի իրականացումը հիմնվում է Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ երկրներին ուղղված «Իրավական տեղեկատվական-որոնողական համակարգերում դատական որոշումների ընտրության, մշակման, ներկայացման և արխիվավորման վերաբերյալ» N-R (95/11 Հանձնարարականի (ընդ. 11 սեպտեմբերի 1995թ.) հետևյալ պահանջների վրա.

«...բոլոր դատարանների պրակտիկայի վերաբերյալ լիովին տեղեկացված լինելը հանդիսանում է օրենքի արդարացի կիրառման հիմնական պայմաններից մեկը», որ՝

«... արդարադատության իրականացման համար չափազանց կարևոր է, որպեսզի դատական պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվության որոնողական համակարգերը լինեն օբյեկտիվ և ներկայացնեն զանազան», որ՝

«... համակարգչայնացված համակարգերն ավելի հաճախակի օգտագործվում են իրավաբանական հետազոտությունների համար և ... դատական որոշումների ածող թիվն ու բարդությունը պայմանավորում են այդ նոր մեթոդների առավել լայն կիրառումը», որ՝

«... տեղեկատվության այդ նոր միջոցները պետք է մատչելի լինեն հասարակայնության լայն շրջանակների և, հատկապես իրավաբանների համար», հետևաբար, անհրաժեշտ է.

«Զեռնարկել պատշաճ միջոցներ՝ ապահովելու բոլոր օգտագործողների ազատ մուտքն իրավական տեղեկատվական-որոնողական համակարգեր, որոնք բաց են հանրային օգտագործման համար»:

¹Տե՛ս **Խաչատրույան Դ.** Դատական իշխանությունը և մամուլը: Դատավորի սեղանի գիրք: Երևան, 2002, էջեր 197-198:

Հրապարակայնության սկզբունքն իր արտացոլումը ստացավ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Հրապարակայնությունն առավել լայն իր դրսերումն է ստանում ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերի բուն դատական քննության ընթացքում, քանի որ այս փուլում է դատարանն ըստ էության քննում և լուծում քրեական գործը, դատավճռում պատասխան է տալիս քրեական գործի բոլոր հիմնական՝ ամբաստանյալի մեղավորության և անմեղության, նրա նկատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու հարցերին: Դատական քննության փուլում դատարանը հրապարակայնության պայմաններում ուսումնասիրում և գնահատում է ներկայացված ապացույցները՝ մեղադրողի, ամբաստանյալի, նրա պաշտպանի, ինչպես նաև տուժողի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

Լուծելով դատական քննության փուլի առջև դրված խնդիրները՝ դատարանն իրականացնում է արդարադատություն, որը նրա բացառիկ սահմանադրական իրավունքն է: Ենտևաբար, դատական քննությունը արդարադատության իրականացման յուրահատուկ դատավարական ձև է:

Դատարանների կողմից գործերը քննելու ընթացքում առաջացող խոչնդուները հիմնականում կապված են դատարանների տեխնիկական հագեցվածության ցածր մակարդակի հետ՝ սկսած ոչ նորմալ շենքային պայմաններից, վերջացրած անհրաժեշտ սարքավորումների բացակայությամբ:

ԲԱԺԻՆ 4.

ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԸ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՑԹՈՒՄ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՐՈՎԵԼԻՄ

ԸՆԴԱԾՈՒՐ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է», և որպես այդպիսին Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է օրենքի գերակայության, անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման պարտականություն, այդ թվում՝ պետական մարմինների ինքնիրավ գործողություններից:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն. «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք»:

Քրեական գործի հարուցմանը, հանցագործության փաստի հաստատմանը, քրեական հետապնդման հարուցմանն ու իրականացմանն ուղղված դատավարական գործունեությունը կազմում է նախնական քննության հիմնական բովանդակությունը, որի իրականացման նպատակով դատախազը, քննիչը և հետաքննության մարմինն օժտված են լայն լիազորություններով: Նշված լիազորությունների իրականացումը, սակայն, ենթադրում է քրեական դատավարության ոլորտ ներգրավված անձի, հատկապես կասկածյալի և մեղադրյալի, իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումներ, ուստի տրամաբանական է, որ քրեադատավարական

օրենսդրությամբ նախատեսված են իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց անօրինական գործողություններից և որոշումներից անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության առանձահատուկ դատավարական ընթացակարգեր, որոնցից առավել կարևորվում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը:

Ընդգծելով դատական իշխանության ինքնուրույնությունը և անկախությունը՝ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է. «Դայաստանի Դանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարաններ՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան» (հոդված 91-րդ): Դարկ ենք համարում նշել, որ Դայաստանի Դանրապետությունում դատարանները կոչված են իրականացնել արդարադատություն ոչ միայն գործն ըստ էության քննելիս, այլ նաև մինչդատական վարույթում անձի իրավունքների և ազատությունների ապահովման նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

Դատարանին նման լիազորություններով օժտելը նպատակ է հետապնդում ապահովել արդարադատության մատչելիությունը և անձանց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունը: Բացի այդ, մինչդատական վարույթում իրականացվող դատական վերահսկողությունը կոչված է ապահովելու նախնական քննության օրինականությունը: Ուստի, ստորև քննարկվելու են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հետ կապված այնպիսի հարցեր, որոնք առնչվում են անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, վերջինիս և հանցագործության ու հանցանք կատարած անձի բացահայտման գործառույթների հարաբերակցությանը, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը սահմանող նորմերի կիրառմանը և այդ ընթացքում ծագող խնդիրների լուծմանը: Փորձ է արվել նաև ձևակերպել առաջարկություններ՝ ուղղված մինչդատական վարույթում անձի իրավունքների և

օրինական շահերի պաշտպանությանը, ինչպես նաև քրեական դատավարության այս փուլում դատարանի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Դատարանի դերը մինչդատական վարույթում

Դասարակական հարաբերությունների ինքնուրույն ոլորտ է հանդիսանում քրեական դատավարությունը, որտեղ անկախ և ուժեղ դատական իշխանության առկայությունը հատկապես կարևոր է: Դատաիրավական վերջին մի քանի բարեփոխումների լույսի ներքո մեր հանրապետությունում բարձրացվեցին դատական իշխանության դերն ու նշանակությունը, և կարևորվեց անձի իրավունքների դատական պաշտպանությունը:

Քրեական գործի քննության ընթացքում դատարանի գործունեությունն իրենից ներկայացնում է միասնական համակարգ, որն ուղղված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով՝ անրագրված խնդիրների իրականացմանը: Վերոնշյալ հոդվածի համաձայն.

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է ապահովելու համար

1) անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից.

2) անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ:

2. Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝

1) քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի.

2) ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի.

3) ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման»:

Գտնվելով քրեական գործով վարույթն իրականացնող մարմինների «բուրգի գագաթում»՝ դատարանն օժտված է լայն լիազորություններով ոչ միայն գործի քննության դատական, այլև մինչդատական փուլում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 5-րդ մասը քրեական գործով մինչդատական վարույթը

բնորոշում է որպես քրեական գործով վարույթ քրեական գործ հարուցելու հարցի լուծման պահից մինչև գործն ըստ էության քննելու համար դատարան ուղարկելը: Գործի քննության այս փուլում դատարանի առաջնահերթ խնդիրն է ապահովել դատավարությանը նաևնակցող անձանց իրավունքների իրացումը, պաշտպանել նրանց քրեական հետապնդման մարմինների անօրինական գործողություններից, կամ, վերահսկողություն իրականացնել նախնական քննության մարմինների գործունեության նկատմամբ¹:

Այսինքն, մինչդատական վարույթում դատարանը վերահսկողություն է իրականացնում օրենքների կատարման և քրեական դատավարության տվյալ փուլին նաևնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովման նկատմամբ: Քրեական դատավարության այս փուլում դատարանի գործունեությունը առավելապես կապված է նախնական քննության մարմինների գործողությունների օրինականության և որոշումների հիմնավորվածության նկատմամբ իրականացվող վերահսկողության հետ:

Դատական վերահսկողությունը՝ որպես իրավական գործունեության ինքնուրույն տեսակ, անհրաժեշտ է դիտարկել սոցիալական վերահսկողության տարատեսակ հանդիսացող դատավարական վերահսկողության լույսի ներքո: «Վերահսկողություն» հասկացությունը սահմանվում է որպես ստուգում կամ վերահսկողություն, հաշվետվության պահանջում², նոմինալ սահմանման համաձայն՝ վերահսկողությունը (ֆրանս. *contrôle*) ցուցակ է, որը վարվում է երկու օրինակով: Օժեղությունը մեկնաբանությամբ վերահսկողությունը ստուգումն է, ստուգման կամ հսկողության նպատակով իրականացվող մշտական դիտարկումը: Ստուգումը, ըստ լեզվաբանի, ենթադրում է որևէ բանի ճշմարտացիության մեջ համոզվելը, ստուգման կամ վերահսկողության նպատակով ուսումնասիրելը³: Յիմք ընդունելով վերոշարադրյալը՝ վերահսկողությունը կարող ենք սահմանել որպես գործառույթ, որը կապված է ստուգման, դիտարկման և համապատասխանեցման հետ:

¹Տե՛ս **Лазарева В. А.** Судебная власть и ее реализация в уголовном процессе. Самара: Самарск. ун-т, 1999. Теория и практика судебной защиты в уголовном процессе. Самара: Самарск. ун-т, 2000; **Ковтун Н. Н.** Судебный контроль в уголовном судопроизводстве России: Моногр. Нижний Новгород: Нижегородск. правовая акад., 2002; **Муратова Н. Г.** Система судебного контроля в уголовном судопроизводстве: вопросы теории, законодательного регулирования и практики. Казань: Ка уголовного процесса России: Моногр. Омск, Омск. гос. ун-т, 2004; **Володина Л. М.** Исторические проблемы с занск. гос. ун-т, 2004; **Азаров В. А., Таричко И. Ю.** Функция судебного контроля в истории, теории и практике судебного контроля в уголовном процессе, Казань 2004, էջեր 421-425; **Гуськова А. П.** Право на судебную защиту: история и современность, էջեր 429-433:

²Տե՛ս **Тарасов А. М.** Технология государственного (президентского) контроля: элементы эффективности // Право и политика. 2001. № 12, էջ 51:

³Տե՛ս **Ожегов С. И., Шведова Н. Ю.** Толковый словарь русского языка. 4-е изд., доп. М., Азбуковник, 1999, էջեր 292, 605:

Հասարակական, այդ թվում՝ իրավական նորմերով կարգավորվող հարաբերությունների վերահսկողության ֆունկցիան առկա է այն դեպքում, երբ իրավասու մարմինները և պաշտոնատար անձինք, օգտագործելով կազմակերպահրավական միջոցներ և ձևեր, պարզում են.

- համապատասխանում է արդյոք մարմինների և անձանց գործունեությունը օրենքին և նրանց առջև դրված խնդիրներին,
- կառավարվող օբյեկտների նկատմամբ կառավարման սուբյեկտների ներգործության արդյունքները,
- նպատակներից և դրանց հասնելու միջոցներից շեղումների առկայությունը,
- ինչ միջոցներ են ձեռնարկվել վերոնշյալ շեղումների կանխման և դրանց համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ¹:

Կառավարման ընդհանուր տեսությունը վերահսկողական գործառույթների իրականացումը դիտում է որպես կառավարման գործընթացի գլխավոր փուլերից մեկը, որի ընթացքում պարզվում են իրականացված միջոցառումների հետևանքները, և ստուգվում է սահմանված ձևաչափերին դրանց համապատասխանությունը, ինչի արդյունքում հնարավոր է ուրվագծել, թե վերահսկվող գործունեության կայունացմանը, ուղղմանն ու, ի վերջո, արդյունավետության բարձրացմանն ուղղված ինչ միջոցառումներ է անհրաժեշտ անցկացնել: Վերահսկողական գործունեության շրջանակներում դրսևորվում է «ուղղման» գործառույթը, որը հնարավորություն է տալիս փոփոխել իրավիճակը, «տեղադրել» այն քույլատրելի մոդելի շրջանակներում²: Վերոգրյալը հասկանալու համար վերլուծենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն. «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»: Վերոշարադրյալ հոդվածից բխում է, որ, սահմանելով քրեական դատավարությանը մասնակցող անձանց կողմից արդարադատության մատչելիության իրենց իրավունքի իրացման հնարավորությունը,

¹Տե՛ս **Беляев В. П.** Контроль как форма юридической деятельности и гарантия законности // Право и политика. 2004. № 2, էջ 17:

²Տե՛ս նույն աշխատությունը, էջ 17:

այսինքն, նախնական քննության մարմինների որոշումները դատալան կարգով բողոքարկելու հնարավորությունը, քրեական դատավարության օրենսգիրքը դատարանին հնարավորություն է ընձեռնում «շտկել» իրավիճակը, հայտնաբերել նախնական քննության մարմինների կողմից թույլ տրված խախտումները և ուղղել դրանք՝ այդպիսով ապահովելով քրեական դատավարության օրինականությունը, այսինքն, ինչպես նշվեց վերևում, «տեղադրել» այն թույլատրելի մոդելի շրջանակնեում:

Դատարանի քրեադատավարական գործումնեության սոցիալական էությունը առանձնահատուկ հասարակական հարաբերությունների կարգավորումն է քրեադատավարական իրավունքի նորմերի միջոցով: Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր իրավական կարգավորում, ի վերջո, «ավարտվում է» առանձնահատուկ ակտի կայացմամբ, որում անփոփում են իրավական նորմի կիրառման արդյունքները: Իրավակիրառումը քրեական դատավարությունում կոնկրետ գործի, իրավիճակի լուծումն է, օրենքի, ընդիհանուր իրավական նորմի կիրարկումը կոնկրետ անձանց և իրավիճակների նկատմամբ: Իրավակիրառման պրոցեսում իրավակիրառող սուբյեկտը միջամտում է իրավունքի և օրենքի իրացման բնական ընթացքին հետևյալ մի շարք դեպքերում՝

- առկա է վեճ սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների առկայության և ծավալի վերաբերյալ.
- եթե անհրաժեշտ է պարզել որևէ անձի իրավունքների կամ պարտականությունների գործողության պահը և դադարման փաստը.
- եթե անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնել իրավունքների ձեռք բերման և պարտականությունների սահմանման իրավաչափության նկատմամբ¹:

Հարկ ենք իամարում ընդգծել, որ քրեադատավարական հարաբերությունների կարգավորման նկատմամբ իրավակիրառողի (քննարկվող դեպքում՝ դատարանի) միջամտության վերոնշյալ դեպքերից առաջնը հանդիսանում է միջամտություն առկա կամ ենթադրյալ իրավական վեճի փաստացի լուծմանը, այսինքն՝ արդարադատություն «մաքուր ձևով», քանի որ դատարանի կողմից վերջնական որոշման կայացումը՝ լինի դա ամբողջ գործի կամ դրա առանձին կոնֆլիկտային իրավիճակի քննության կապակցությամբ, հանդիսանում է արդարադատության իրականացում: Ինչ վերաբերուն է վերոնշյալ դեպքերից երկրորդին, ապա, հիրավի, մինչդատական վարույթի նկատմամբ

¹Տե՛ս Проблемы общей теории права и государства: Учебник для вузов / Под общ. ред. акад. РАН, д-ра. юрид. наук проф. В. С. Нерсесянца. М., НОРМА, 2002, էջ 425:

դատական վերահսկողությունը սահմանող նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական դատավարության բոլոր մասնակիցները դատարանի համապատասխան որոշման կայացման պահից ձեռք են բերում որոշակի իրավունքներ և պարտականություններ: Բացի այդ, դատարանը վերահսկողություն է իրականացնում իրավունքների ձեռքբերման և պարտականությունների սահմանման իրավաչափության նկատմամբ՝ այդպիսով ապահովելով վերոնշյալ դեպքերից իրականացումը:

Իրավունքի կիրառումը կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի փուլի՝ գործի փաստական հանգամանքների վերհանում, իրավական հիմքի պարզում, գործի լուծում (իրավակիրառ ակտի կայացում): Յաճախ, առաջին փուլը՝ գործի փաստական հանգամանքների վերհանումը, կարող է իրականացվել մի մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, իսկ գործով վերջնական ակտ կայացվել մեկ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից:

Իրավակիրառ ակտը պետական-իշխանական ակտ է, որն իրականացվում է իրավասու սուբյեկտի կողմից կոնկրետ գործով՝ նպատակ ունենալով պարզել սուբյեկտիվ իրավունքների կամ իրավաբանական պարտականությունների առկայությունը կամ բացակայությունը և սահմանել դրանց չափը՝ համապատասխան իրավական նորմերի հիմքով¹: Իրավակիրառ ակտի առանձնահատկությունների շարքում ընդգծվում է դրա ապահովածությունը պետական հարկադրանքի միջոցներով: Յետևաբար, կարող ենք ասել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում նախնական քննության մարմինների կողմից դատարան ներկայացվող միջնորդություններն իրավակիրառ ակտ չեն հանդիսանում: Յետաքննության մարմինը, քննիչը, դատախազն այս դեպքում միայն խնդրում են դատարանին կիրառել օրենքի դրույթները: Իրավունքի կիրառման ակտի բոլոր, այդ թվում՝ պետական հարկադրանքի միջոցներով ապահովման հնարավորության հատկանիշներով օժտված է դատարանի համապատասխան որոշումը, այսինքն՝ հենց դատարանն է կայացնում քրեական դատավարության մասնակիցների համար որոշակի հետևանքներ (կալանավորում, իրավունքները սահմանափակող քննչական և դատավարական գործողությունների կատարում և այլն) առաջացնող դատավարական ակտ:

¹ Ст. Проблемы общей теории права и государства: Учебник для вузов / Под общ. ред. акад. РАН, д-ра. юрид. наук проф. В. С. Нерсесянца. М., НОРМА, 2002, էջ 428:

Մինչդատական և դատական վարույթներում քրեական դատավարության խնդիրների հրականացումը

ՀՀ Սահմանադրությունը, հանդիսանալով է ՀՀ իրավական համակարգի միջուկը, ամրագրում է անձի և պետության փոխհարաբերության սկզբունքները, սահմանում ազատության և անձնական անձեռնմխելիության նկատմամբ վերաբերմունքը և դրանով հանդերձ՝ հասարակության մեջ անձի իրավական պաշտպանվածության մակարդակը:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն. «Մարդը, նրա արժանապատվությունը, իմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու իմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու իմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Սահմանադրական այս դրույթն ուղենիշ է իրավական պետության ձևավորման և անձի իրավունքների և ազատությունների ապահովման¹, ինչպես նաև պետության կողմից այդ իրավունքները խախտելու կամ սահմանափակելու անթույլատրելիության ամրագրման համար²:

Մարդուն բարձրագույն արժեք հոչակած Սահմանադրությանն են համապատասխանեցվում հասարակական կյանքի կոնկրետ ոլորտ կարգավորող օրենքների բովանդակությունը:

Ստանձնելով իր քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման պարտականությունը՝ պետությունը ձևավորում է տարբեր պետական ինստիտուտներ և մարմիններ, սահմանում ընթացակարգեր, որոնք կոչված են հսկողություն իրականացնել հասարակության մեջ անձի իրավունքների և ազատությունների ապահովման նկատմամբ: Վերոնշյալ պարտականության իրականացման նպատակով հատկապես կարևորվում է Սահմանադրության մեջ քաղաքացիների իրավունքների և ազատությունների ամրագրման բնույթը և այդ

¹ Ст. 4 *Лукашев Е. А.* Права человека и формирование правового государства в условиях реформирования политического и экономического строя России / Общая теория прав человека/. М., 1996, № 76:

² Ст. 4 *Эбзеев Б. С.* Конституция. Правовое государство. Конституционный суд. Учебное пособие для вузов. М., 1997, № 92:

ոլորտում պետության խնդիրների սահմանումը՝ կապված, մասնավորապես, իշխանության և արդարադատության կազմակերպման հարցերի հետ:¹

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի իրապարակային քննության իրավունք:

Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հիմքում դրված սկզբունքները՝ անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը (9-րդ հոդված), անձի անձեռնմխելիությունը (11-րդ հոդված), անմեղության կանխավարկածը (18-րդ հոդված), մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում (23-րդ հոդված) և այլն վկայում են այն մասին, որ քրեական դատավարությունն ամբողջությամբ և դրա

¹ Ст. 36 *Петрова Г. Н.* Судебная защита конституционных прав граждан. Сборник «Судебная власть: надежды и реальность». М., 1993, № 32:

առանձին փուլերը, մասնավորապես, ինչպես նաև նախնական քննության մարմինների, դատարանի և քրեական դատավարության մասնակիցների փոխհարաբերությունները կառուցված են այնպես, որ ապահովվի ինչպես անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, այնպես էլ անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության մարմինների ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մաս):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը հստակ տարանջատում է քրեական հետապնդման, պաշտպանության և գործի լուծման գործառույթները (23-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչն իր արտացոլումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կառուցվածքում¹:

Վերոգրյալի իիման վրա կարող ենք արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, համապատասխանելով ՀՀ Սահմանադրության պահանջներին, էականորեն ամրապնդել է անձի դիրքը քրեական դատավարությունում: Այսինքն՝ ոչ միայն կասկածյալը, մեղադրյալը և պաշտպանն են հանդես գալիս որպես քրեական դատավարության շարժիչ ուժ, այլև քրեական դատավարության բոլոր մասնակիցները: Դա է վկայում, մասնավորապես, այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան ներկայացնելու իրավունք վերապահել է ինչպես կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, տուժողին, այնպես էլ քրեական դատավարության մասնակիցներին և այլ անձանց, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ հոդվածի իմաստով անձը քրեական դատավարությունում հանդես է գալիս որպես ակտիվ սուբյեկտ, ով ունի իր իրավունքների պաշտպանության մեխանիզմներ և ունակ է ազդելու գործով վարույթի օրինականության ապահովման վրա:

¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ բաժինը կրում է «Դատարան» վերտառությունը, իսկ 3-րդ բաժինը վերնագրված է «Կողմերը և քրեական դատավարությանը մասնակցող անձինք»:

Քրեական դատավարությունում անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունն առանձնակի կարևորություն ունի, քանի որ այստեղ խոսքը գնում է ոչ միայն հանցագործությունից անձի պաշտպանության մասին, այլև հանցանք կատարած անձանց իրավունքների պաշտպանության, քրեական դատավարության ոլորտ ներգրավված անձանց իրավունքները և ազատություններն ապահովող մեխանիզմների արդյունավետության և ժողովրդավարության մասին¹:

Քրեական դատավարության խնդիրների իրականացումն ապահովում է հատուկ լիազորություններով օժտված պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից, ովքեր կոչված են հանցավոր ուժնագործություններից պաշտպանել քաղաքացիների իրավունքները և ազատությունները, սեփականությունը, հասարակական կարգը և անվտանգությունը: Այդպիսի պետական մարմիններ և պաշտոնատար անձինք են դատախազը, քննիչը, հետաքրնության մարմինը, դատարանը, որոնց գործունեությունը հիմնված է օրենքի վրա, կարգավորվում է օրենքով և կազմում է քրեական դատավարության հիմնական բովանդակությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝

1) քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի.

2) ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի.

3) ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման»:

Վերոնշյալ մարմիններից և պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում գործում է պետության անունից ու իր իրավունքների և հանրային-իրավական պարտականությունների բնույթին համապատասխան իրականացնում է որոշակի դատավարական գործառույթ: Պետական մարմինները որոշում են կայացնում քրեական վարույթ սկսելու, քրեական գործի քննության ընթացքի և վերջնական լուծման վերաբերյալ, նշված վարույթի մեջ են ներգրավում քրեական

¹Տե՛ս Լукашева Е. А. Права человека и правовое государство. /Общая теория прав человека/. М., 1996, էջ 93:

գործին մասնակցող բոլոր անձանց և ապահովում են օրենքով երաշխավորված նրանց իրավունքների իրացումը, ինչպես նաև նրանց վրա դրված պարտականությունների կատարումը: Դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը և դատարանը պատասխանատու են գործի քննության ընթացքում իրենց կողմից կայացված որոշումների օրինականության և հիմնավորվածության համար: Նշված մարմինների և պաշտոնատար անձանց կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների իրականացումն ունի ինչպես որոշիչ, այնպես էլ կազմակերպական նշանակությունը, հանդիսանում է նախնական քննության և քրեական գործերի լուծման շարժիչ ուժ, սակայն քրեական դատավարության խնդիրների իրականացումը կարող է ապահովել միայն այն դեպքում, եթե այս մարմինների գործունեությունը կապված կլինի մեղադրանքի և պաշտպանության կողմում հանդես եկող բոլոր անձանց իրավունքների իրացման հետ: Նշված անձնինք են՝ տուժողը, մեղադրողը, քաղաքացիական հայցվորը, տուժողի և քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչը մեղադրանքի կողմում և կասկածյալը, մեղադրյալը, անչափահաս կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը պաշտպանության կողմում: Քրեական դատավարության այլ մասնակիցների թվին են դասվում վկան, փորձագետը, մասնագետը, թարգմանը և ընթերական:

Օրենքով նախատեսված դատավարական գործողությունների կատարումը՝ որպես քրեական դատավարության խնդիրների իրականացման միակ ձև, կապված է դատարանի, դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի, ինչպես նաև քրեական դատավարության այլ մասնակիցների կողմից իրենց իրավունքների իրացման և պարտականությունների կատարման հետ, ինչի արդյունքում նրանք քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված իրավահարաբերությունների մեջ են մտնում: Քրեական գործով վարույթի ընթացքում առաջացող իրավահարաբերությունները երկկողմ և բազմակողմ են, և դրանց կողմերից մեկի իրավունքները համապատասխանում են մյուսի՝ այդ իրավունքների իրացումն ապահովելու պարտականության հետ:

Քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձինք օրենքով ճանաչվում են քրեադատավարական գործունեության մասնակից, օժտվում են իրավունքների որոշակի ծավալով և կատարում են իրենց վրա դրված պարտականությունները: Յուրաքանչյուր սուբյեկտ իր իրավունքներն իրացնում է բացառապես քրեական գործով վարույթ իրականացնող մարմինների գործողությունների միջոցով: Քրեական դատավարությանը

մասնակցող անձանցից ոչ մեկը պետության ներկայացուցչի (քննիչ, հետաքննության մարմին, դատախազ, դատարան) հետ ուղղակի և կոնկրետ կապի շրջանակներից դուրս չի կարող իրացնել իր իրավունքները և կատարել իր վրա դրված պարտականությունները:¹

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց կողմից իրենց իրավունքների իրացումը հանդիսանում է ոչ միայն նրանց շահերի պաշտպանության եղանակ, այլև նպաստում է, ընդհանուր առմամբ, քրեադատավարական գործունեության օրինականության ապահովմանը: Այդ պատճառով քրեական դատավարության բովանդակությունը կազմում են քրեական դատավարությանը մասնակցող անձանց նպատակային գործողությունների համակարգը, որոնք իրականացվում են ինչպես գործով վարույթն իրականացնող պետական մարմինների, այնպես էլ այդ մարմինների և դատավարության այլ սուբյեկտների միջև առաջացող քրեադատավարական հարաբերություններում:²

Պետական մարմինները և պաշտոնատար անձինք, քրեական գործով վարույթն իրականացնելիս, պատասխանատվություն են կրում ոչ միայն իրենց կողմից կայացվող որոշումների օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության, այլ նաև քրեական դատավարությանը մասնակցող բոլոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, քրեական գործով վարույթն իր նշանակությամբ և սկզբունքներով ներկայացնելով որպես միասնական ամբողջություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 4-րդ կետը գործով վարույթը սահմանում է որպես քրեական դատավարական ընթացակարգ, որն սկսվում է քրեական գործի հարուցման հարցը լուծելիս և իր մեջ ներառում է գործով իրականացվող և ընդունվող դատավարական որոշումները և գործողությունները), այնուամենայնիվ չի բացառում դրա «տարանջատումը» մինչդատական և դատական վարույթների:

Մինչդատական վարույթի բովանդակությունն են կազմում գործի հանգամանքների վերհանման նպատակով դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի քննչական և այլ դատավարական գործունեությունը՝ կապված հանցանք կատարած անձի բացահայտման, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու և նրա մեղավորության հարցի լուծման համար գործը դատարան ուղարկելու հետ: Նշված

¹Տե՛ս **Божьев В. П.** Уголовно-процессуальные правоотношения. М., 1975, էջ 157:

²Տե՛ս **СтроговиЧ М. С.** Курс советского уголовного процесса. Т. 1., 1968, էջ 36:

գործունեությունն իրականացնելիս մինչդատական վարույթն իրականացնող մարմիններն իրավասու են օգտագործել դատավարական միջոցների ամբողջ «զինանոցը», այդ թվում՝ կատարել քննչական գործողություններ՝ կապված անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ: Թերևս այդ նկատառումով է ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը մինչդատական վարույթում դատարանին օժտել այնպիսի լիազորություններով, որոնք թույլ են տալիս վերջինիս ապահովել անձի և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացումը: Հանդիսանալով պետական իշխանության ինքնուրույն ճյուղ՝ դատարանն իրականացնում է մարդու պետական պաշտպանության, նրա իրավունքների և ազատությունների ապահովման գործառույթ¹:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն. «(...) Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

(...)

առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով (...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանուն քրեական գործը քննելիս»:

Օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, հետաքրննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմքությունները կարող են ներկայացվել դատարան:

Քրեական դատավարությունն արդարադատության իրականացման այլ ձևերից տարբերվում է մինչդատական վարույթի առկայությամբ, որի ընթացքում ձևավորվում են արդարադատության իրականացման համար անհրաժեշտ նախադրյալներ²:

¹ Ст. 4 Демидов И. Ф. Проблема прав человека в российском уголовном процессе (концептуальные положения). М., 1995, № 39:

² Ст. 4 Кобяков В. М. О стадийности уголовного судопроизводства и единстве уголовно-процессуальной формы. Свердловск, 1983, № 16; Михайленко А. Р. О сущности и значении стадии советского уголовного процесса. Саратов, 1977, вып. 114:

Այնուամենայնիվ, մինչդատական վարույթի ինքնուրույնությունը չի բացառում դատավարական երաշխիքների համակարգի ամբողջականությունը, որոնք կոչված են ապահովելու քրեական դատավարության վերջնական նպատակների իրականացումը: Նշված երաշխիքների հիմքում դրված են քրեական դատավարությունում անձի և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովող անկախ և արդար դատարանի վերաբերյալ ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային-իրավական դրույթներ:

Մինչդատական վարույթում դատարանին վերահսկողական և թույլատվական լիազորություններով օժտելն իր ազդեցությունն ունի ինչպես դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի գործունեության, այնպես էլ պաշտպանության կողմի մասնակիցների իրավունքների բովանդակության վրա, ինչը թույլ է տալիս ասել, որ մինչդատական վարույթի դատավարական ձևի մեջ առկա են մրցակցության որոշակի տարրեր:

Առաջին հերթին անհրաժեշտ է նշել, որ քրեական վարույթում մրցակցային տարրերի առկայությունն ապահովվում է մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծնան գործառույթների տարանջատմամբ: Այսպես, նախնական քննության մարմինների վրա դրված է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և իրականացնելու պարտականություն, և դրա հետ մեկտեղ ընդլայնվել են պաշտպանության կողմի գործառույթներ՝ ուղղված այն անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, ում նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում: Դատավարությանը մասնակցող անձանց իրավունք է վերապահվել ոչ միայն քննչական գործողությունների կատարման ընթացքում անձանք կամ ներկայացնելու միջոցով պաշտպանել իրենց իրավունքները, այլև ազդել գործի քննության օրինականության վրա՝ դատական կարգով բողոքարկելով դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի յուրաքանչյուր որոշում, գործողություն կամ անգործություն:

Քրեական դատավարության համար բնութագրական է այն, որ յուրաքանչյուր փուլն ունի իր խնդիրները, որոնցում ներառվում է նաև նախորդ փուլի խնդիրների իրականացման և վարույթի օրինականության ստուգումը: Նման վերահսկողությունն առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում, եթե վերապահվում է դատարանին, քանի որ վերջինիս գործունեությունը բնութագրվում է առանձնահատուկ

դատավարական ձևով և ունակ է հնարավորինս երաշխավորել դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների պաշտպանությունը: Այդիսի վերահսկողությունը քրեական գործերով իրականացվող դատավարության անբաժան մասն է կազմում: Դատարանի վերահսկողական գործառույթն ամրագրված է ինչպես քրեադատավարական օրենսդրության սկզբունքային և ընդիանուր դրույթներում, այնպես էլ կոնկրետ դատավարական ինստիտուտներում:

Դատարանի այս իրավունքը հանդես է գալիս որպես քրեական դատավարության նպատակների իրականացման անհրաժեշտ միջոց և դատարանի կողմից իր հիմնական դատավարական գործառույթի իրականացման պայման¹: Քրեական դատավարության որպես փուլերի բաժանված իրավական համակարգի համար բնական է յուրաքանչյուր հաջորդ փուլում նախորդ փուլի գործողությունների և արդյունքների նկատմամբ վերահսկողություն իրականացնելը: Յուրաքանչյուր հաջորդ փուլ հանդիսանում է վերահսկող նախորդի նկատմամբ, իսկ յուրաքանչյուր նախորդ փուլ նախապատրաստական է հաջորդ փուլի համար:

Դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի գործունեությունը դատական քննության համեմատ ունի նախնական բնույթ, իրականացվում է մինչև գործի դատական քննությունը (մինչդատական վարույթ), և, վերջին հաշվով, եթե տեսականորեն բացառենք գործի քննության դադարեցման դեպքերը, իրականացվում է դատարանի համար: Մինչդատական վարույթի ընթացքում նախնական քննություն իրականացնող անձինք կատարում են իրենց պարտականությունները՝ կապված ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու, ենթադրյալ հանցագործի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և իրականացնելու հետ: Այդ գործունեության արդյունքներով դատախազը գործն ուղարկում է դատարան ըստ Էության քննության առնելու համար, և ինքն էլ դատարանում պաշտպանում է անձին ներկայացված մեղադրանքը:

Քրեական հետապնդման հարուցում

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ «Դատախազություն օրենքով» նախատեսված դեպքերում և կարգով՝

1. հարուցում է քրեական հետապնդում.

¹Տե՛ս *Морицдкова Т. Г., Петрухин И. Л.* Оценка качества судебного разбирательства по уголовным делам. М., 1987, էջեր 21-22:

2. հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ.
3. դատարանում պաշտպանում է մեղադրանքը.
4. պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան.
5. բողոքարկում է դատարանի վճիռները, դատավճիռները և որոշումները.
6. հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:¹

ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն ՈԴ Սահմանադրության և քրեական դատավարության օրենսգրքի, ինչպես նաև մի շարք Եվրոպական (Ֆրանսիա, Իտալիա) և անգլոամերիկյան իրավական ընտանիքի երկրների, որտեղ դատախազությունը դիտվում է քրեական հետապնդում իրականացնող և ոչ թե հարուցող մարմին, ամրագրում է քրեական հետապնդման հարուցման գործառույթը՝ որպես դատախազության գործունեության հիմնական ուղղություն:

Դատախազության կողմից քրեական հետապնդման հարուցումը բավականին պարտավորեցնող գործառույթ է և ոչ թե լրացուցիչ տերմինաբանական տարբերակում, քանզի դրա հատուկ շեշտադրումը և երկրի բարձրագույն իրավաբանական ուժով օժտված ակտում ամրագրելու առանձնակի կարևորություն է տալիս քրեական դատավարության ոլորտ անձի ներգրավման պրոցեսին: Այլ կերպ ասած՝ քրեական հետապնդման հարուցման ինստիտուտի շնորհիվ է, որ քրեադատավարական պրոցեսում ի հայտ է գալիս ենթադրյալ հանցագործը:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի սկզբնական խմբագրության մեջ առկա ծևակերպումը՝ «Դատախազությունը»

1. օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հարուցում է քրեական հետապնդում», կարծես՝ արհեստականորեն սահմանագատում էր այս ֆունկցիան դատախազության մյուս լիազորություններից՝ ընդունվով դրա իրականացման հիմքերի ու կարգի օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն, մինչդեռ դատախազության գործունեության բոլոր ուղղությունների՝ և նախաքննության և հետաքննության նկատմամբ հսկողության, և դատարանում մեղադրանքի պաշտպանության, և պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման, և դատարանի վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման, և պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ հսկողության իրականացման հիմքերն ու կարգը սահմանվում են օրենքով: Նման ծևակերպման դեպքում ստացվում էր, որ բացառապես քրեական հետապնդման հարուցումն է, որ ենթակա է օրենսդրական կարգավորման, ինչը չէր հանապատասխանում իրականությանը: ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի գործող խմբագրությունը գերծ է այս թերությունից, քանի որ, ամրագրելով դատախազության գործունեության ուղղությունները, միաժամանակ սահմանում է, որ դրանց բոլորի իրականացման հիմքերն ու կարգը սահմանվում են օրենքով՝

«Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝

1. հարուցում է քրեական հետապնդում.

2. հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության նկատմամբ և այլն»:

Այն, որ քրեական հետապնդման հարուցման գործառույթը կապվում է քրեադատավարական պրոցես Ենթադրյալ հանցագործի ներգրավման հետ, կարծում ենք, կասկածների տեղիք չի տալիս. քրեական հետապնդման հարուցման հասկացության վերաբերյալ քրեադատավարական տեսության մեջ առկա գորեք բոլոր մոտեցումները դա են փաստում:

Նախնական քննության և քրեական հետապնդման հարաբերակցությունը

Նախնական քննության և քրեական հետապնդման գործառույթների հարաբերակցության հիմնահարցը քրեադատավարական իրավունքի տեսությունը ժառանգել է ԽՍՀՄ 1960թ. քրեական դատավարության օրենսգրքից, որն, ի դեպ, ընդհանրապես հրաժարվել էր «քրեական հետապնդում» հասկացությունից, և ակնհայտ է, որ նման իրավիճակում քրեական հետապնդման հարուցման պահի պարզաբանումը կարևորվում էր հատկապես, քանզի կոչված էր տարբերակելու նախնական քննության և քրեական հետապնդման գործառույթները:

Ինչպես նշվեց վերևում, քրեական հետապնդման հարուցմամբ քրեական դատավարության ոլորտ է ներգրավվում Ենթադրյալ հանցագործը: Սակայն, ինչ ընթացակարգով է անձը ներգրավվում քրեական դատավարության ոլորտ, արդյո՞ք քրեական հետապնդման հարուցումը հանգում է մեղադրանքի փաստաթղթային ձևակերպմանը, այսինքն՝ նույնացվում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացման հետ, և արդյո՞ք «մեղադրանք» հասկացությունը հանգում է զուտ գործի փաստական հանգանքների և արարքի քրեաիրավական որակման փաստաթղթային ձևակերպմանը:

Մեր քրեադատավարական դոկտրինան և պրակտիկան հակված են, կարծես, կոնկրետ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը (փաստաթղթային ձևակերպումը) դիտել ինչպես քրեական հետապնդման հարուցման, այնպես էլ մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրականացման սկիզբ: Դա է փաստում, մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 18-րդ կետը, որի համաձայն՝ քրեական հետապնդման հարուցումը քրեական հետապնդման մարմնի որոշումն է անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչ այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին:

Քակառակ դիրքորոշուման են հանգեցնում, սակայն, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի

(այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի “criminal charge” հասկացությանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) առանձին որոշումներում տրված մեկնաբանություններում առկա ձևակերպումները: Յարկ է նշել, որ Կոնվենցիայի իմաստով «մեղադրանք» հասկացությունը տարբերվում է վերջինիս վերաբերյալ ներպետական օրենսդրության մեջ առկա բնորոշումներից:

Մասնավորապես՝ Կոնվենցիայի իմաստով «մեղադրանք» հասկացության մեջ ներառվող չափանիշները հանգում են հետևյալին՝

- անձին ձերբակալելու մասին որոշման կայացում.¹
- անձի պաշտոնական իրազեկումն իր դեմ քրեական գործ հարուցելու մասին.²
- մաքսային խախտումների հետ կապված գործերով իրականացվող քննության ժամանակ անձի բանկային հաշիվների վրա արգելանք դնելը և իրեղեն ապացույցներ ներկայացնելու պահանջը³ և այլն:

Դևերն ընդդեմ Բելգիայի գործով Դատարանի որոշման համաձայն՝ «մեղադրանք» հասկացությանը պետք է տալ բովանդակային և ոչ թե ձևական նշանակություն:⁴ Այսինքն՝ մեղադրանքը դիտել որպես քրեական գործի շրջանակներում իրականացվող դատավարական գործողության կամ գործողությունների ամբողջության հետ՝ ուղղված անձի պաշտոնական իրազեկմանն այն մասին, որ կան Ենթադրություններ նրա կողմից քրեորեն պատճելի արարքի կատարման վերաբերյալ, և այդ իրազեկումը պետք է էականորեն ազդի տվյալ անձի կարգավիճակի վրա⁵: Յարցի նման կարգավորման պարագայում ստացվում է, որ մեղադրանքը համարվում է առաջադրված անձի իրավունքների սահմանափակմանն ուղղված առաջին դատավարական գործողության կատարման պահից: Այսինքն, եթե փորձենք այս մոդելը դիտարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանության շրջանակներում, կձախողենք, քանի որ կստացվի, որ նման պարագայում մեղադրանքի առաջադրումը շատ հաճախ նախորդում է որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացմանը, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրանքը պետք է առաջադրվի տվյալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի կողմից որոշումն ընդունելու պահից ոչ ուշ, քան 48 ժամվա-

¹ Տե՛ս Վեմիֆն ընդդեմ ԳԴԴ-ի գործով 27.06.1968թ. որոշումը:

² Տե՛ս Նոյմաստերն ընդդեմ Ավստրիայի գործով 27.06.1986թ. որոշումը:

³ Տե՛ս Ֆումկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով 25.02.1993թ. որոշումը:

⁴ Տե՛ս Դևերն ընդդեմ Բելգիայի գործով 1980թ. փետրվարի 27-ի որոշումը. կետեր 42, 44, 46:

⁵ Տե՛ս Հյուլա Մուլ, Կատарինա Խարծի, Ալեքսեևա Լ. Բ. " Европейская конвенция о защите прав человека и основных свобод" // "Право на справедливое судебное разбирательство". Прецеденты и комментарии. М., 2001, էջ 6:

ընթացքում, սակայն բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մեղադրյալի ներկայանալու կամ նրան բերման ենթարկելու օրը: Ուստի, իմաստային խճողում չառաջացնելու նկատառումից ելնելով, անհրաժեշտ է քրեական հետապնդման հարուցման սկիզբ դիտել ոչ թե անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացումը, այլ անձի իրավունքների և ազատությունների սահմանափակմանն ուղղված առաջին դատավարական գործողության կատարումը: Նման մոտեցման արդյունավետությունը հիմնավորվում է մի քանի առումներով, մասնավորապես, այն հարկադրում է քրեական հետապնդման մարմնին խուսափել չկշռադատված ու շտապողական քայլերից, գիտակցել անձի նկատմամբ քրեական հետապնդման հարուցման ինստիտուտի լրջությունը՝ այսպիսով, եթե ոչ բացառելով, ապա գոնե հնարավորինս կրծատելով քրեադատավարական գործունեության ընթացքում ընդհանրապես, և մինչդատական վարույթում մասնավորապես, անձի իրավունքների և ազատությունների անհիմն սահմանափակումները:

Խոսելով ՀՀ Սահմանադրության մեջ առկա ձևակերպման մասին՝ նշեցինք, որ այն հակադրվում է ՈԴ ինչպես Սահմանադրության, այնպես էլ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածներին:

ՈԴ-ում քրեական հետապնդման իրականացման ֆունկցիան դիտվում է դատախազության հիմնական՝ ՈԴ անունից իրականացվող ընդհանուր հսկողության ֆունկցիայից ածանցվող, իր բնույթով լրացուցիչ ֆունկցիա: Ընդհանուր հսկողությունը ՈԴ-ում համարվում է դատախազությանն ավանդաբար (սկսած 1722թ.) վերագրվող ֆունկցիա, որն առայսօր պահպանում է իր գոյությունն ու ապացուցում իր արդյունավետությունը՝ միաժամանակ կանխորոշելով դատախազության տեղն ու դերը պետական իշխանության մարմինների համակարգում: Ուստի, գերակայող այս ֆունկցիան ինքնին ենթադրում է դատախազության մնացյալ ֆունկցիաների, այդ թվում՝ քրեական հետապնդման իրականացումը:

Մեր հանրապետությունում իրավիճակն այլ է: Ինչպես նշվեց վերևում, ՀՀ-ում դատախազությունն իրականացնում է քրեական հետապնդման հարուցման և ոչ թե իրականացման գործառությունը:

Նախնական քննության և քրեական հետապնդման հարաբերակցության էության վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առկա մոտեցումն արտահայտված է օրենսգրքի 6-րդ հոդվածի 17-րդ կետում, որը քրեական հետապնդումը սահմանում է որպես այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով

նախատեսված դեպքերում տուժողը, նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը:

Խոսելով քրեական հետապնդման՝ որպես նախնական քննության մարմինների հիմնական գործառույթի մասին՝ անհրաժեշտ է նշել նաև, որ նրանց գործունեությունը միակողմանի բնույթ չի կրում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Այսպիսով, քրեական հետապնդման և նախաքննության հարաբերակցության հարցի կապակցությամբ կարող ենք արձանագրել, որ հանցագործության դեպքի և հանցանքի կատարման մեջ մեղավոր անձի բացահայտման նպատակով դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված միջոցների ձեռնարկումը հանցագործության քննության բովանդակությունն է կազմում, իսկ քրեական հետապնդումը հանդիսանում է նախնական քննության մաս¹:

Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը

ՀՀ Սահմանադրությունը յուրաքանչյուր անձի, անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, եթիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից երաշխավորում է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Իրավունք, որը ծագելով անձի ծննդով, նրան հնարավորություն է տալիս կատարելու այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները (ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված):

¹ Տե՛ս **Соловьев А. Б., Токарева М. Е., Халиулин Л. Г., Якубович Н. А.** Законность в досудебных стадиях уголовного процесса России, Кемерово, 1997, էջ 38:

Ազատությունը անձին տրված հնարավորությունն է մտածել և վարվել իր համոզմունքներին, հայացքներին և պատկերացումներին համապատասխան, ձգտել իրականացնել իր առջև դրված նպատակները և այդ ձևով օբյեկտիվ աշխարհում դրսնորել իր «Ես»-ը¹: Այն հասկացվում է ինչպես ֆիզիկական ազատության իմաստով, որն իր մեջ ներառում է անձնական ազատության մի շարք այլ կողմեր՝ անձնական անվտանգությունը, առողջությունը պահպանելը, տեղաշարժվելու ազատությունը, զբաղմունքի և բնակության վայրի ընտրության ազատությունը և այլն, այնպես էլ հոգեբանական, բարոյական ազատության իմաստներով²:

Թեև յուրաքանչյուր ոք ազատ է, և դա երաշխավորվում է Սահմանադրությամբ, սակայն դա չի նշանակում, որ այդ «ազատությունը» ունի բացարձակ բնույթ: Յուրաքանչյուր իրավական համակարգում (հատկապես քրեական դատավարությունում) անխուսափելիորեն առաջանում են այնպիսի իրավահճակներ, երբ անհրաժեշտ է լինում անձի ազատությունը և անձեռնմխելիությունը սահմանափակել³: Կարևոր այն է, որ այդ սահմանափակումը լինի բացարիկ, յուրաքանչյուր դեպքում սոցիալապես պայմանավորված և իրավաբանորեն հիմնավորված, որպեսզի այն առավել արդյունավետ լինի անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից:

Դատավարական հարկադրանքի միջոցների հասկացությունն ու էությունը

Դատավարական հարկադրանքի միջոցները, հանդիսանալով քրեադատավարական պրոցեսում հանրային և մասնավոր շահերի հարաբերակցության յուրօրինակ բարոմետր, հնարավորություն են տալիս որոշակի հետևություններ անել քրեադատավարական ձևի մասին:

Մարդկային պատմության զարգացման վաղ փուլերում, երբ քրեադատավարական պրոցեսը կրում էր առավելապես մրցակցային բնույթ, հարկադրանքի միջոցների կիրառման պրակտիկան նվազագույնի էր հասցված, դրանք կիրառվում էին առավելապես մեղադրող-տուժողի իրավունքների և օրինական շահերի վերականգնումն ապահովելու նպատակով և, որպես կանոն, գույքային բնույթ էին կրում, մեղադրյալի անձնական ազատությունը սահմանափակման հազվադեպ էր ենթարկվում:

¹ Տե՛ս **Петрухин И. Л.** Свобода личности и уголовно-процессуальное принуждение. М., 1985, էջ 6:

² Տե՛ս **Трунов И. Л. Айвар Л. К.** Применение мер пресечения в уголовном судопроизводстве. М., 2007, էջեր 7-19:

³ Տե՛ս **Антонио У. Бредли.** Доклад "Право на свободу и безопасность личности согласно Европейской конвенции по правам человека" // Бюллетеնь по правам человека, 1998, вып. 8, էջ156:

Յետագայում, ինկվիզիցիոն դատավարության զարգացման հետ մեկտեղ, ընդայնվեցին դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման շրջանակները՝ երբեմն նույնիսկ գերազանցելով արարքի համար նախատեսված պատժի սահմանները:

Զարգացման արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր իրավական պետության իրավական քաղաքականության բնագավառում առաջնային նշանակություն է տրվուն անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը և դրա ապահովման երաշխիքներին, քանի որ մարդու, նրա իրավունքների և ազատությունների նկատմամբ իրականացրած պետության քաղաքականությունից է, որ հնարավոր է որոշել տվյալ պետության իրական կողմնորոշումները: Այսինքն՝ մարդու իրավունքների պաշտպանությունը և դրա երաշխիքներն արտացոլում են պետության իրավական և սոցիալական բնույթը, ժողովրդավարության զարգացման մակարդակը, ինչպես նաև անձի իրավական վիճակը տվյալ երկրում¹:

Ժամանակակից հանրային-մրցակցային քրեական դատավարությունը իհմնված է հանրային և մասնավոր շահերի ներդաշնակ համադրման վրա: Անձի իրավունքները կարող են սահմանափակվել դատավարական հարկադրանքի միջոցներով, վերջիններս էլ, իրենց հերթին, կիրավուն են բացառապես այն դեպքում, երբ քրեական դատավարության նպատակների իրականացումն այլ միջոցներով ուղղակի անհնար է: Դատավարական հարկադրանքի միջոցների նվազագույն, անհրաժեշտ չափը սահմանելու համար օրենսդիրը ձգտում է սահմանափակել դրա առավելագույն սահմանները, ձգտում է հնարավորինս մանրամասն կանոնակարգել դրանց իրականացման իհմքերը, կարգն ու պայմանները: Դատավարական հարկադրանքի միջոցների օրենսդրական սահմանման ժամանակ նախապատվությունը տրվում է իրավական կարգավորման թույլատվական եղանակին՝ պաշտոնատար անձն իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքով: Դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման կարգի խախտումը հանգեցնում է ընդհուած մինչև քրեական պատասխանատվության:²

Քրեական դատավարության ընթացքում կատարվող գործողությունը դատավարական հարկադրանքի միջոց դիտելու համար անհրաժեշտ է, որ այն օժտված լինի հետևյալ առանձնահատկություններով.

¹Տե՛ս **Պուկասյան Յ. Յ. Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում:** Երևան, 2001, էջ 6:

²Տե՛ս **Смирнов А. В., Калиновский К. Б.** Уголовный процесс. 2-е издание. М., 2006, էջեր 231-232:

1. Հարկադրանքի միջոցներն ուղղված են անձի ազատ կամարտահայտության սահմանափակմանը, դրանք իրականացվում են անձի կամքին հակառակ: Այս կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ դատավարական հարկադրանքի միջոցները դատավարական այլ գործողություններից տարբերակելու հիմքում դրվում է հոգեբանական չափանիշը՝ սուբյեկտի վերաբերմունքն իր վրա դրված պարտականության իրականացմանը: Եթե նա այդ պարտականությունն իրականացնում է ինքնակամ, առանց կողմնակի միջամտության, ապա ակնհայտ է, որ հարկադրանքի միջոցի մասին խոսք լինել չի կարող:¹ Նման մոտեցումն ընդգծում է դատավարական հարկադրանքի միջոցների՝ միայն բացառիկ դեպքերում կիրառման անհրաժեշտությունը, երբ անձը հրաժարվում է իր վրա դրված պարտականություններն ինքնակամ իրականացնել կամ համոզման մեթոդի կիրառումն սպասված արդյունքի չի հանգեցրել: Այսպիսով, դատավարական հարկադրանքի միջոցների առանձնահատկություններից առաջինն այն է, որ դրանք ուղղված են սուբյեկտի կամքին հակառակ նրանց վրա դրված որոշակի պարտականությունների իրականացմանը:

2. Դատավարական հարկադրանքի միջոցները պետական հարկադրանքի տարատեսակ են հանդիսանում և իրականացվում են կոնկրետ գործով վարույթ իրականացնող պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից: Քրեադատավարական այլ սուբյեկտների կողմից նշված գործողությունների իրականացումը չի թույլատրվում:

3. Դատավարական հարկադրանքի միջոցները պետական հարկադրանքի այլ միջոցներից տարբերվում են նաև նրանով, որ դրանց իրականացման կարգն ու պայմանները սահմանված են բացառապես քրեադատավարական օրենքով: Նշված առանձնահատկությունը հենց հանդիսանում է այն քրեական պատժից, վարչական, կարգապահական, քաղաքացիաիրավական և հարկադրանքի այլ տեսակներից տարբերակման հիմք: Այլ կերպ ասած՝ քրեադատավարական հարկադրանքի միջոցները կարելի է բնորոշել որպես վարույթն իրականացնող մարմինների՝ քրեադատավարական իրավունքով նախատեսված գործողությունների և որոշումների ամբողջություն, որոնք ուղղված են քրեական դատավարության այլ մասնակիցների իրավունքների սահմանափակմանը:

4. Դատավարական հարկադրանքի միջոցներն անհրաժեշտ է տարբերակել քրեադատավարական սանկցիայից և քրեադատավարական

¹Տե՛ս **Петрухин И. Л.** Свобода личности и уголовно-процессуальное принуждение. М., 1985, էջեր 53-55:

պատասխանատվությունից: Սանկցիան հարկադրանքի՝ որպես նորմի դիսպոզիցիայի խախտման հետևանքի նորմատիվ բնորոշումն է: Դատավարական հարկադրանքի միջոցները կարող են կիրառվել պրեենտիվ (կանխարգելիչ) նպատակներով՝ առանց իրավունքի որևէ նորմի դիսպոզիցիայի խախտման: Օրինակ՝ քաղաքացիական հայցի ապահովումը գույքի վրա կալանք դնելու միջոցով: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ոչ բոլոր սանկցիաների իրականացումն է հարկադիր բնույթ կրում: Ընդհանուր առմամբ, սանկցիաները նախատեսում են քրեադատավարական պատասխանատվություն՝ ներգործություն դատավարական նորմերը խախտող անձի նկատմամբ, որը կապված է նրա գործողություններին տրված բացասական գնահատականի հետ, ուստի ակնհայտ է, որ նման պատասխանատվությունը չի կարող նույնանալ դատավարական հարկադրանքի միջոցների հետ:¹

Դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման ընդհանուր կանոն և սահման, կարելի է ասել, հանդիսանում է արդարադատության նպատակների իրականացումը, քրեական դատավարության սահմանված կարգի իրականացման, ինչպես նաև դատավճորի պատշաճ կատարման ապահովման անհրաժեշտությունը: Դատավարական հարկադրանքի միջոցները կիրառվում են բացառապես այն ժամանակ, երբ առկա է իրական խոչընդոտ քրեական գործի հետագա ընթացքի համար:

Դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման ընդհանուր պայմանների թվին են դասվում՝

- հարուցված քրեական գործի առկայությունը.
- դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման իրավասությամբ օժտված սուբյեկտի առկայությունը.
- այն անձի առկայությունը, որի նկատմամբ դատավարական հրակադրանքի միջոցը պետք է կիրառվի:

Հարուցված քրեական գործի առկայությունը դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման իրավական հիմքն է հանդիսանում, քանի որ այն ենթադրում է որոշակի հետևություն հանրորեն վտանգավոր արարքի առկայության մասին: Ելելով վերոգրյալից՝ կարելի է միանշանակ ասել, որ դատավարական հարկադրանքի միջոցները ենթակա չեն կիրառման՝

- հարուցված քրեական գործի բացակայության պայմաններում.
- գործով վարույթի դադարեցումից հետո:

¹Տե՛ս **Смирнов А. В., Калиновский К. Б.** Уголовный процесс. 2-е издание. М., 2006, Էջեր 232-233:

Ինչ վերաբերում է կասեցված գործով հարկադրանքի միջոցների կիրառմանը, ապա իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվում, որ կասեցված գործերով դատավարական հարկադրանքի միջոցների կիրառումը ևս անթույլատրելի է,¹ սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանությունն այս հարցում նի փոքր այլ է: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածը, սահմանելով քրեական գործի կասեցման հիմքերը, միաժամանակ նշում է, որ քրեական գործով վարույթը կարող է կասեցվել անհրաժեշտ հնարավոր բոլոր դատավարական գործողությունները կատարելուց հետո: Նույն օրենսգրքի 259-րդ հոդվածի համաձայն՝ քննիչի կողմից մեղադրյալի հետախուզում կարող է հայտարարվել ինչպես գործով նախաքննության կատարման ժամանակ, այնպես էլ քրեական գործով վարույթը կասեցնելու հետ միաժամանակ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մեղադրյալի հետախուզումը նրա գտնվելու տեղի բացահայտումն է, մեղադրյալին ձերբակալելը և վարույթն իրականացնող մարմնի տրամադրությանը հանձնելն է: Քննիչի որոշման հիման վրա, սույն օրենսգրքով սահմանված կարգով, հետախուզվող մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճրի կատարումն ապահովելու նպատակով: Ուստի ստացվում է, որ կասեցված գործով դատավարական հարկադրանքի որոշ միջոցների կիրառումն անթույլատրելի չէ:

Դատավարական հարկադրանքի միջոցների մասին պատկերացումն ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև դրանց դասակարգման հարցին, որն, ի դեպ, տեսական գրականության մեջ լայն քննարկումների առարկա է, քանի որ գոյություն չունի դատավարական հարկադրանքի միջոցների մեկ միասնական դասակարգման հիմք: Այսպես, ըստ բովանդակության դատավարական հարկադրանքի միջոցները լինում են ֆիզիկական և հոգեկան: Երկրորդ դեպքում՝ վարույթն իրականացնող մարմնի որոշման կատարումը կարող է կամավոր բնույթ կրել, սակայն դա չի նշանակում, որ նշված որոշումն ուղղված չէ սուբյեկտի իրավունքների սահմանափակմանը:

¹Տե՛ս **Смирнов А. В., Калиновский К. Б.** Уголовный процесс. 2-е издание. М., 2006, էջ 233:

Դատավարական հարկադրանքի միջոցները կապված են այն իրավունքների բնույթի հետ, որոնց սահմանափակմանն ուղղված են: Սահմանափակվող իրավունքի բնույթն է, որ հնարավորություն է տալիս դասակարգել դատավարական հարկադրանքի միջոցներն ըստ խստության աստիճանի:

Հարկադրանքի միջոցի բովանդակությունը և խստության աստիճանը, որն այլ կերպ ինտենսիվություն են անվանում, կանխորոշում են վերջինիս կիրառման ընթացակարգը, որի հիմքով դատավարական հարկադրանքի միջոցները դասակարգվում են երկու խմբի՝ դատավարական հարկադրանքի միջոցներ, որոնք կիրառվում են մրցակցային դատավարությունում և դատավարական հարկադրանքի միջոցներ, որոնք կիրառվում են ինկվիզիցիոն դատավարությունում: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատավարական հարկադրանքի բոլոր միջոցները պետք է կիրառվեն միայն դատարանի որոշմամբ, շահագրգիռ կողմի միջնորդության հիման վրա: Նշված կանոնից, հետևաբար նաև դատավարության մրցակցային ձևից շեղում հանդիսանում է այն, որ հարկադրանքի միջոցի կիրառումը հնարավոր է դառնում մեղադրանքի կողմի որոշմամբ: Դատավարության մրցակցային ձևից շեղում է հանդիսանում նաև այն, որ հարկադրանքի միջոցը կիրառվում է դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ: Քրեադատավարական պրոցեսի ներկայիս մողելի համատեքստում մաքուր մրցակցային դատավարության գոյությունը, այդ թվում նաև դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման որոշումների մասով, իրական չի թվում, քանի որ հանցավորության դեմ պայքարում ընդհանրապես և կոնկրետ հանցագործության քննության ժամանակ մասնավորապես, անխուսափելի են հանցագործության հետքերի պահպանմամբ, հանցանք կատարած ենթադրյալ անձի փախուստի կանխմամբ և այլնով պայմանավորված հարկադրանքի միջոցների անհետաձգելի կիրառման դեպքերը: Նշված դեպքերում անհրաժեշտ օպերատիվությունն ապահովվում է ինկվիզիցիոն դատավարության տարրերի կիրառմամբ, իսկ անձի իրավունքների ապահովման խնդրի լուծումը հնարավոր է դառնում ռետրոսպեկտիվ դատական վերահսկողության ինստիտուտի միջոցով:

Ըստ կիրառման հիմքերի՝ դատավարական հարկադրանքի միջոցները դասակարգվում են հետագա և կանխարգելիչ (պրևենտիվ) միջոցների: Հետագա հարկադրանքի կիրառման հիմքը քրեադատավարական իրավախախտումն է: Հարկադրանքի հետագա միջոցներն իրենց հերթին դասակարգվում են պատժիչ և վերականգնող միջոցների: Ի դեպ, հարկադրանքի պատժիչ միջոցները բնորոշ են պրոցեսուալ իրավունքի ճյուղերին:

Պատժիչ միջոցի կիրառման օրինակ է հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ գրավը պետության եկամուտ դարձնելը:

Հարկադրանքի վերականգնող միջոցների կիրառումն ուղղված է անձի սուբյեկտիվ իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման ապահովմանը: Ասվածի օրինակ կարող է հանդիսանալ, մասնավորապես, քրեադատավարական օրենքով նախատեսված պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը կոչված են ապահովելու կողմերի իրավահավասարությունը քրեադատավարական պրոցեսում:

Կախարգելիչ կամ պրևենտիվ հարկադրանքի միջոցների կիրառումն ուղղված է քրեադատավարական ընթացակարգի հնարավոր խախտումներից խուսափելուն, դրանք իրականացվում են անկախ իրավախախտման առկայությունից և հանդիսանում են պրևենտիվ-ապահովող միջոցներ: Հարկադրանքի նշված միջոցների կիրառման հիմքը քրեադատավարական օրենքի հնարավոր խախտումների մասին հիմնավոր կասկածի առկայությունն է:

Վերականգնող և կանխարգելիչ հարկադրանքի միջոցներն ընդունված է դասակարգել հետևյալ չորս խմբերի՝

1. ապացույցների ձեռք բերմանն ուղղված հարկադրանքի միջոցներ,
2. քաղաքացիական հայցի ապահովմանն ուղղված հարկադրանքի միջոցներ,
3. գործով դատական քննության ժամանակ դատարանում կարգուկանոնի ապահովմանն ուղղված հարկադրանքի միջոցներ,
4. կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովմանն ուղղված դատավարական հարկադրանքի միջոցներ: ¹

ՀՀ քրեադատավարական օրենսդրության իմաստով դատավարական հարկադրանքի միջոցները դասակարգվում են հետևյալ երեք խմբերի՝

1. կասկածյալի ձերբակալում,
2. խափանման միջոցներ,
3. դատավարական հարկադրանքի այլ միջոցներ: Վերջինս իր հերթին դասակարգվում է երկու ենթախմբի՝
 - դատավարական հարկադրանքի միջոցներ, որոնք կիրառվում են մեղադրյալի նկատմամբ,

¹Տե՛ս *Смирнов А. В., Калиновский К. Б.* Уголовный процесс. 2-е издание. М., 2006, էջ 235:

- դատավարական հարկադրամքի միջոցների, որոնք կիրառվում են տուժողի, վկայի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի, փորձագետի, մասնագետի, թարգմանչի, ընթերակայի նկատմամբ:

**Դատավարական հարկադրամքի միջոցների կիրառման ռանձնահատկությունները
«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»
Եվրոպական կոնվենցիայի ենթատեքստում**

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելն իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձերբակալունը կամ կալանավորունը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ. անձի օրինական կալանավորունը կամ ձերբակալունը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, եթե դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելն օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորունը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածունը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինենոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

գ. անձի օրինական կալանավորունը կամ ձերբակալունը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորունը կամ ձերբակալունը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով գրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Կոնվենցիայի իմաստով ազատության կանխավարկածը ներկայացվում է իմադերատիվ պահանջի տեսքով այն նպատակով, որպեսզի ազատությունից գրկվելը չտևի ավելի երկար, քան բխում է բացարձակ անհրաժեշտությունից և որպեսզի հնարավոր լինի դրա վերականգնումը այն դեպքերում, երբ անձն ազատությունից գրկվել է անհիմն: Բացի այդ, Կոնվենցիան պարտավորեցնում է այն անձանց, ովքեր որևէ մեկի գրկել են ազատությունից կրել դրա անհրաժեշտության ապացուցման պարտականությունը, հիմնավորել այն, որ իրավասությունները, որոնց սահմաններում կատարվել է տվյալ գործողությունը համապատասխանում են 5-րդ հոդվածում ամրագրված հիմքերից որևէ մեկին, ինչպես նաև այն, որ այդ իրավասությունները կարող են կիրառվել տվյալ կոնկրետ իրավիճակում:

Մեզ համար առավել հետաքրքրական է Կոնվենցիայի շրջանակներում կալանավորման՝ որպես անձի «ազատությունը» սահմանափակող բավականին խիստ հարկադրանքի միջոցի կիրառման առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Այսպես՝ Կոնվենցիայի իմաստով կալանավորումը պետք է կիրառվի «ծայրահեղ դեպքերում», կամ ինչպես նշում է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), այն արդարացված է միայն այն դեպքում, երբ պակաս խիստ միջոցառումներն անբավարար են համարվել անհատի կամ

հասարակական շահը պաշտպանելու համար, որը և պահանջել է տվյալ անձի մեկուսացումը (Վիտոլդ Լիտուան ընդդեմ Լեհաստանի գործով 2000 թվականի ապրիլի 4-ի վճիռը): Ուստի, կալանքը կիրառելու համար անհրաժեշտ են առավել հուսալի երաշխիքներ՝ հնարավոր սխալներից և չարաշահումներից խուսափելու համար:

Թերևս, մեր կարծիքով, այս է այն հիմնական պատճառը, որ Եվրոպական դատարանը մշակել է որոշակի չափանիշներ, որոնց պետք է բավարարի կալանքի կիրառումը:

Այսպես՝ ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ կալանքի սկզբնական կիրառման առնչությամբ գույություն ունի չորս կանխավարկած.

1. Ապացույցների ծանրակշիռ լինելն ինքնին բավարար չէ մեղադրյալին կալանավորելու համար: Դատարանը պետք է պատշաճ հարգանք ցուցաբերի անմեղության կանխավարկածի նկատմամբ և պատճառաբանված որոշման մեջ արտացոլի կալանքի կիրառմանը կողմ և դեմ բերվող բոլոր փաստարկները: Կալանքի կիրառման պատճառաբանությունը պետք է հիմնված լինի գործում եղած փաստերի վրա:

2. Պատժի ծանրությունն ինքնին բավարար չէ մեղադրյալին կալանավորելու համար, ոչ էլ դատարանը կարող է կալանավորման որոշումը հիմնավորել մեղսագրվող պատճառված վնասի չափով, այլ պետք է հաշվի առնի մեղադրյալի անձը բնութագրող տվյալները, քանի որ նպատակը ոչ թե վնասի հատուցումը, այլ դատական քննությանը մեղադրյալի ներկայությունը երաշխավորելն է:

3. Իրավասությունից թաքնվելու հավանականությունը, առանց մեղադրյալի դեպքում այն կիրառելու անհրաժեշտությունը հիմնավորող ապացույցների, նույնպես բավարար չէ:

4. Մեղադրյալի՝ նախկինում դատված լինելու բուն փաստն ինքնին բավարար չէ ազատ արձակելու միջնորդությունը մերժելու համար:

Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում ազգային դատարանները, քննարկելով կալանքի կիրառման հարցը, պետք է առաջնորդվեն իիշյալ չորս չափանիշներով:

Եթե բացակայում են այն պայմանները, որոնք մշակվել են Եվրոպական դատարանի կողմից որպես կալանավորման օրինականության և Կոնվենցիայի 5-րդ հոդվածին համապատասխանության չափանիշ, ուրեմն անձը չի կարող կալանավորվել, իետևաբար և պետք է ազատ արձակվի:

Դատարանի լիազորությունները մինչդատական վարույթում

Քրեական դատավարությունը դատական իշխանության իրականացման ձևերից մեկն է: Դատական իշխանությունը՝ որպես իրավական պետության հիմնական կառուցվածքային միավոր, չի կարող հանգեցվել կոնկրետ քրեական գործերի քննությանը:

Արդարադատության իրականացմանն ուղղված գործունեությունը խնդիրների և բովանդակության իմաստով առավել լայն, իսկ քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության առումով առավել բազմազան է դառնում, ինչն իր արտահայտությունն է գտնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարանն օժտված է լայն իրավական հնարավորություններով ոչ միայն բուն քրեական դատավարության պրոցեսում, այլ նաև մինչդատական վարույթում, քանի որ դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի գործողությունների և որոշումների առնչությամբ դատարանին վերապահված են վերահսկողական և թույլատվական լիազորություններ: Դատարանին, փաստորեն, հնարավորություն է ընձեռված կանխելու մինչդատական վարույթում օրինականության խախտումները և դրանով իսկ ապահովելու քրեական դատավարության սուբյեկտների և այլ անձանց իրավունքները և օրինական շահերը այն չափով, որ չափով դրանք խախտվել են պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողություններով և որոշումներով: Քրեական դատավարությունում դատարանի այս դերակատարությունը պայմանավորված է քրեադատավարական օրենսդրության մեջ ամրագրված սկզբունքներում արտահայտված սահմանադրական դրույթներով:

Քրեական դատավարության սկզբունքները ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված հիմնադրույթներ են, որոնց համաձայն՝ քրեական գործերի քննությունը և լուծումը պետք է իրականացվի արդարության, մարդասիրության, ժողովրդավարության և օրինականության վերաբերյալ համամարդկային պատկերացումներին համապատասխան:

Դատավարության սկզբունքները կանխորոշում են դրա խնդիրները, եռթյունը և բովանդակությունը, բնութագրում են դրա կարևորագույն հատկանիշները, դատավարական կարգավորման առարկան և մեթոդը: Դատավարության բոլոր սկզբունքները կոչված են ապահովելու դատավարության կազմակերպման այնպիսի ձև, որում կրացառվեն անօրինական և անհիմն մեղադրանքը, քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների խախտումները և կապահովվեն արդեն խախտված իրավունքների ժամանակին վերականգնումը:

Հասկանալով յուրաքանչյուր սկզբունքի նշանակությունը, դրանց փոխկապվածությունը և անձի իրավունքների պաշտպանությանը միտված լինելը՝ այստեղ կը նդգնավեն, սակայն, դրանցից մի քանիսը միայն, որոնք ազդել են քրեական դատավարության կառուցվածքի և դրանուն վարույթն իրականացնող մարմինների և քրեական դատավարությանը մասնակցող անձանց փոխհարաբերությունների վրա: Նշված սկզբունքների թվին են դասվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը, 11-րդ հոդվածով նախատեսված՝ անձի անձեռնմխելիությունը, 18-րդ հոդվածով նախատեսված՝ անմեղության կանխավարկածը, 19-րդ հոդվածով նախատեսված՝ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքն ու դրա ապահովումը և այլն:

Քրեադատավարական իրավունքի տեսության մեջ մրցակցային դատավարությունը բնութագրվում է դատարանից անկախ, երկու վիճող կողմերի առկայությամբ: Այդ կողմերից մեկն իրականացնում է մեղադրանքի (քրեական հետապնդման), մյուսը՝ պաշտպանության գործառույթ: Կողմերի մրցակցության անհրաժեշտ նախապայման է հանդիսանում նրանց հավասար դատավարական իրավունքներով օժտելը: Մրցակցային վարույթում դատարանի անկախությունը նշանակում է, որ այն չի կարող իրականացնել ոչ մեղադրանքի, ոչ պաշտպանության գործառույթ: Գործի քննության ժամանակ դատարանի խնդիրն է հանդիսանում ներկայացված մեղադրանքի քննությունը՝ վեճի լուծումը: Այդ ընթացքում դատարանն իրավասու չէ կողմերի գործառույթների իրականացումն ստանձնել, իսկ կողմերն էլ իրավունք չունեն միջամտել դատարանի կողմից իր գործառույթի իրականացմանը:

Մրցակցությունը՝ որպես քրեական դատավարության սկզբունք, հանդիսանում է դրա կազմակերպման ձև, հիմք և միջոց, վարույթի գոյության եղանակ: Լինելով դատական քննության կազմակերպման միջոց՝ մրցակցությունը միաժամանակ հանդիսանում է ապացույցների հետազոտման և գնահատման, դատավարության մասնակիցների կողմից սեփական կամ ներկայացվող շահերի պաշտպանության միջոց և գործունեության երեք ինքնուրույն ուղղությունների իրականացում: Այդ հանգամանքը պետք է հաշվի առնվի քրեական դատավարության ընթացքում, քանի որ ամբողջ վարույթը կառուցված է այնպես, որ դատական քննության ընթացքում ապահովվի նույն փաստերի վերաբերյալ դատավարության մասնակիցների տեսակետերի փոխազդեցությունը, հատումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև բախումը: Այս ընթացքում պետք է ապահովվի ապացուցման գործընթացի հետ առնչություն ունեցող

անձանց՝ ապացուցման ժամանակ քննարկվող բոլոր հարցերի կապակցությամբ սեփական տեսակետն արտահայտելու և օրինական միջոցներով և եղանակներով այդ տեսակետը պաշտպանելու հնարավորությունը: Այս իմաստով մրցակցությունն իրենից ներկայացնում է ապացույցների հետազոտման միջոց, դատավարության մասնակիցների կողմից իրենց իրավունքների իրացում և պարտականությունների կատարում¹:

Մրցակցության սկզբունքն իր արտացոլումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածում, որի համաձայն.

« 1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք:

3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը:

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ:

Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ:

6. Քրեական դատավարության ընթացքում կողմերն իրենց դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները և միջոցներն օրենքի շրջանակներում ընտրում են ինքնուրույն՝ անկախ դատարանից, այլ մարմիններից և անձանցից: Դատարանը, կողմի

¹ Ст. 3. Состязательность нужна, но какая. Законность. 1999. № 3, ч. 25; Панько Н. К. Состязательность судопроизводства и ее отражение в Конституции Российской Федерации. Юридические записки. Воронеж, 1999, ч. 135-142:

միջնորդությամբ, սույն օրենսգրքով սահմանված կարգով, աջակցում է նրան ձեռք բերելու անհրաժեշտ նյութեր:

7. Դատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը: Վճռաբեկ դատարանում գործի քննությանը ներկա գտնվելու իրավունք ունի բողոք բերած անձը:

8. Դատարանում քրեական գործի քննությանը կողմերի մասնակցությունը պարտադիր է: Դատարանում քրեական գործի քննությանը մեղադրանքի կողմը ներկայացնում է մեղադրողը»:

Այսպիսով, ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ մրցակցային դատարանը

- քննությանը է երեք իհմնական՝ մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման գործառույթների առկայությանը.
- նշված գործառույթներն անկախ են մեկը մյուսից.
- մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման ֆունկցիաները տարանջատված են դրանք իրականացնող քրեական դատավարության սուբյեկտների գործունեության ուղղություններով:

Մրցակցությունը ենթադրում է դատարանի առջև կողմերի դատավարական հավասարություն: Դա նշանակում է, որ նրանք օժտված են իրենց պնդումները և պահանջները իհմնավորելու, ինչպես նաև մյուս կողմի փաստարկները ժխտելու հավասար հնարավորություններով: Այն, ինչ իրավունք ունի անել դատախազը մեղադրանքը իհմնավորելու համար, նույնն իրավասու է անել պաշտպանության կողմն առաջադրված մեղադրանքը հերքելու համար: Այսինքն՝ մեղադրանքը և պաշտպանությունը՝ որպես ինքնուրույն դատավարական գործառույթներ, առանձնանում են և տարբերակվում դատարանի գործունեությունից:

Դատավարական գործառույթների տարբերակումը և դատարանի առաջ կողմերի իրավահավասարությունը բնավ չի ենթադրում մեղադրողի և մեղադրյալը փաստացի հավասարություն: Լինելով հավասար իրենց դատավարական իրավունքներով՝ նրանք իրավասու են միջնորդել դատարան կանչել իրենց կողմից նշված վկաներին և ձեռք բերել ապացույցներ, մասնակցել մյուս կողմի ներկայացրած ապացույցների հետազոտությանը, այնուամենայնիվ, մեղադրանքի և պաշտպանության կողմերը չեն կարող հավասարեցվել ապացույցնան պարտականության առումով:

Մինչդատական վարույթում պաշտպանության կողմը չի կարող ամբողջությամբ հավասարեցվել մեղադրանքի կողմի հետ, քանի որ դատավարական այս փուլի բոլոր որոշումները կայացվում են այն սուբյեկտի կողմից, ով քրեական դատավարության

օրենսգրքով սահմանված կարգով իրականացնում է քրեական հետապնդման գործառույթ: Այստեղ չի կարելի հաշվի չառնել այն հանգամանքը, որ իրենց անմեղությունն ապացուցելու պարտականությունից կասկածյալը և մեղադրյալը պաշտպանված են անմեղության կանխավարկածով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը»:

Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մեղադրյալի մեղքի և պատասխանատվությունը խստացնող հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները»:

Ուստի, տրամաբանական է այն, որ մեղադրանքի կողմի վրա ապացուցման պարտականություն դնելը, ելնելով հանցագործության բացահայտման և հանցանք կատարած անձի հայտնաբերման անհրաժեշտությունից, ուղեկցվում է մեղադրանքի կողմին մինչդատական վարույթում ապացույցների հավաքման առումով առավել լայն իրավունքների տրամադրմամբ¹:

Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի դատարանի դերը նրանցային վարույթում, դատարանը պե՞տք է արդյոք ակտիվ լինի և ի՞նչ ասել է՝ դատարանի ակտիվություն, կարո՞ղ է արդյոք դատարանի ակտիվությունը համատեղելի լինել նրանցության սկզբունքի իրականացման հետ:

Սխալ կլիներ միանշանակ պնդել, որ դատարանի պասիվությունը նրանցության կարևորագույն հատկանիշն է, իսկ դատարանի ակտիվությունը միշտ չէ, որ պետք է դիտել դատարանի կողմից գործի բազմակողմանի քննության և դատավճռի կայացման համար անհրաժեշտ ապացույցներ հավաքելու հետ կապված հետախուզական գործունեություն: Պատճառը, թերևս այն է, որ ակտիվությունը, որը կապված է քրեական հետապնդում հարուցելու կամ իրականացնելու հետ և ակտիվությունը, որը կապված է կողմերի հավասարության պահպանման և այդ սահմաններում ճշմարտության բացահայտմանն աջակցելու հետ, չի նույնացվում²: Սակայն դատարանի պասիվությունը պետք չէ ընկալել որպես դատարանի դահլիճում տեղի ունեցածի նկատմամբ վերջինիս անտարբերություն, և դատական պրոցեսի արդյունքների գուտ արտացոլում

¹ С্�в. у *Лазарева В. А.* Судебная власть и ее реализация в уголовном процессе. Самара, 1999, էջ 122:

² С্�в. у *Смирнов А. В.* Состязательный процесс. СПб, 2001, էջ 42:

դատավճռում: Այս իմաստով ՀՀ դատարանների համար առավել բնութագրական է այն, որ դրանք ազատված են իրենց ոչ բնորոշ՝ մեղադրանքի կողմից ներկայացված ապացույցներում առկա բացերի լիացման, գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու, քրեական գործ հարուցելու և այլ գործառույթների իրականացումից:

Չհանդիսանալով մեղադրանքի կամ պաշտպանության կողմ՝ դատարանը հետազոտում է ներկայացված նյութերը և այդ հետազոտության ընթացքում նա իրավասու է նաև սեփական նախաձեռնությամբ հարցեր տալ, նշանակել փորձաքննություններ, իրականացնել այլ դատավարական գործողություններ առկա ապացույցները ստուգելու համար¹:

Դատարանը կարող է և պետք է ակտիվ լինի և աջակցի իրենց իրավունքներն իրացնելիս կողմների հավասարության ապահովմանը: Դրա հետ մեկտեղ դատարանի ակտիվության դրսնորումը, որն ուղղակիորեն բխում է նրա լիազորություններից, պետք է այնպիսին լինի, որ դատարանն այդ ընթացքում հանդես չգա մեղադրանքի կամ պաշտպանության կողմում: Դա հատկապես կարևորվում է դատարանի կողմից միջնորդությունների լուծման ժամանակ: Չպետք է ստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ դատարանը մեղադրանքի կողմի միջնորդությունը բավարարի և առանց բավարար հիմքերի մերժի պաշտպանության կողմի միջնորդությունը, հատկապես այն դեպքում, երբ նախկինում այդ միջնորդությունը մերժվել է քննիչի կողմից:

Իրավամբ, մրցակցության սկզբունքին չի հակասում դատարանի կողմից այնպիսի հանգամանքների պարզումը, որոնք նրա կարծիքով բավականաչափ չեն հետազոտվել կողմների կողմից: Այն դեպքերում, երբ դատարանը գտնում է, որ որևէ հանգամանք չի պարզվել, այն պետք է իրավունք ունենա պարզել այդ հանգամանքը՝ ապահովելու համար գործի քննության արդարացիությունը և օբյեկտիվությունը: Եվ դա բնական է, քանի որ «արդարադատություն» հասկացությունն էթիմոլոգիական առումով նշանակում է «իրավացի» դատական քննություն, որն իրենում անփոփում է արդարությունը²:

Ասվածը, սակայն, չի նշանակում, որ դատարանը և կողմների ձգտումները միտված են գործով ճշմարտության բացահայտմանը: Օրենսդիրը դատարանին «ազատել» է այս պարտականությունից, ավելին՝ օրենքով նախատեսված դեպքերում կանխատեսվում է գործով դատարանի կողմից կայացվող ակտի բնույթը, այդպիսի դեպքերից են, մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դատախազի կողմից

¹ Տե՛ս *Луганская П. А.* Доказательства и доказывание в новом уголовном процессе. Российская юстиция. 2002, № 7, էջ 5:

² Տե՛ս *Мельник В. В.* Искусство доказывания в состязательном уголовном процессе. М., 2000, էջ 7:

մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանի՝ քրեական գործով վարույթը դադարեցնելը:

Ամբաստանյալի և պաշտպանի նպատակը գործով ճշմարտության վերհանումը չէ: Եթե դատախազը չի ապացուցում ամբաստանյալի մեղավորությունը, ապա վերջինս համարվում է անմեղ: Եթե դատախազը չի կարողացել ապացուցել ամբաստանյալի մեղքը կամ վերջինիս պաշտպանը ոչ կոմպետենտ է եղել, ապա չի նշանակում, որ դատարանը պետք է ստանձնի նրանց պարտականությունների կատարումը, յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է ձեռնպահ մնա ինչպես մեղադրական, այնպես էլ պաշտպանական բնույթի հարցադրումներից:

Դատարանի և կողմերի ակտիվությունը չպետք է հակադրվեն, փոխարինեն մեկը մյուսին: Եթե գործի շարժը կողմերի, առաջին հերթին՝ մեղադրանքի կողմի, ջանքերի արդյունք է, ապա գործի վարույթը՝ դատարանի հիմնական խնդիրն է: Դատարանն է կրում գործի քննության արդարությունն ապահովելու պարտականությունը: Դատական քննության արդարությունն ապահովում է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական նորմերով, որոնց թվին է դասվում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Նշված հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Դատավճիռը հրապարակվում է դրույթ նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջուն են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանուն գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:

Դատական քննության արդարությունը ենթադրում է նաև դատարանի կողմից գործի՝ ողջամիտ ժամկետում քննություն, այսինքն՝ առանց չհիմնավորված ձգձգումների, իսկ այն գործերով, որոնցով անձը գտնվում է կալանքի տակ, պետք է քննվեն առաջնահերթության կարգով¹: Դատական քննության վերոնշյալ պայմանների ապահովման պարտականությունը դրված է դատարանի վրա: Այդ պատճառով, եթե գործի քննության ընթացքում առաջանում են անհավասար կամ անարդար պայմաններ, որոնք հղի են գործի քննության միակողմանիությամբ, դատարանը պարտավոր է վերականգնել կողմերի իրավահավասարությունը, օգնել վերհանել գործի քննության համար եական նշանակություն ունեցող հանգամանքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի համաձայն. «Ապացույցները հավաքվում են հետաքննության, նախաքննության և դատական քննության ընթացքում՝ սույն օրենսգրքով նախատեսված քննչական և դատական գործողությունների կատարման ճանապարհով»:

Օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն.

¹ Ст. п. *Лебедев В. М.* Судебная власть в современной России. СПб, 2001, էջեր 123-125:

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, դեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Այսպիսով, դատարանի մասնակցությունն ապացույցների հավաքման և ստուգման գործընթացին չի հանգեցնում նրա՝ ապացուցման սուբյեկտ դառնալուն, քանի որ ապացույցներ հավաքելը դատարանի նրա պարտականությունը չի հանդիսանում և չի ձևավորում մեղադրանքի և պաշտպանության ապացուցողական բազան¹: Այլ կերպ ասած՝ մրցակցային դատավարության շնորհիվ դատարանը հանդես է գալիս որպես արդարադատություն իրականացնող մարմին, որը կոչված է իրականացնել գործի լուծման ֆունկցիա և ծանրաբեռնված չէ այլ խնդիրներով և պարտականություններով:

Անփոփելով՝ կարող ենք փաստել, որ գործող քրեադատավարական օրենսդրությունը նախատեսել է քրեական դատավարության այնպիսի ընթացակարգ, որի հիմքում դրված են մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետության սահմանադրական դրույթները: Բացի այդ, դատարանի վրա են դրված նաև նախնական քննության մարմինների գործողությունների և որոշումների օրինականության նկատմամբ դատական վերահսկողության և քննչական և դատավարական գործողությունների կատարման թույլտվություն տալու գործառույթը, եթե նշված քննչական և դատավարական գործողություններով սահմանափակվում են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները:

Մինչդատական վարույթում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավական հիմքերը

Քրեական դատավարությունն իրենից ներկայացնում է քրեական օրենքի և հանցանք կատարած անձանց պատժելու՝ պետության իրավունքի իրացման միակ ձևը: Որպես հանրային շահի պաշտպանությանն ուղղված պետական կամքի անմիջական կատարող հանդես են գալիս այն պետական մարմինները և պաշտոնատար անձինք, ում

¹Տե՛ս **Белкин А. Р.** Теория доказывания. М., 1999, էջ 26:

Վերապահված է օրենքով նախատեսված սահմաններում լուծել քրեական դատավարության խնդիրները: Նշված լիազորությունների իրականացումը կապված է քաղաքացիների մասնավոր կյանքին միջամտելու, նրանց իրավունքների և ազատությունների որոշ սահմանափակումների հետ:

Նախնական քննության իրականացման ժամանակ դատախազին, քննիչին և հետաքննության մարմնին վերապահված իրավունքները նրանց հնարավորություն են տալիս արգելել քաղաքացիներին օգտվել իրենց որոշ իրավունքներից կամ սահմանափակել այդ իրավունքները:

Անձի շահերի ոլորտ նրանց միջամտության բացասական հետևանքներն առավել ակնառու են հատկապես այն դեպքերում, երբ այդ միջամտությունն ուղեկցվում է քննչական գործողությունների կատարման կարգի չպահպանմամբ կամ ուղղակի խախտմամբ:

Իրավունքների և ազատությունների սահմանափակումները կարող են կապված լինել մեղադրյալի, կասկածյալի, ինչպես նաև վկայի, տուժողի և այլ անձանց նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառման հետ: Անձի իրավունքների սահմանափակումներ կարող են թույլ տրվել խուզարկությունների և առգրավումների, նամակագրությունը և հեռախոսային խոսակցությունները վերահսկելու ժամանակ և այլն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, հիմնվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանության մասին» պակտի 17-րդ, ինչպես նաև երկրի բարձրագույն օրենքի՝ ՀՀ Սահմանադրության, մի դրույթների վրա, ամրագրում է բնակարանի, գույքի անձեռնմխելիության և նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը:

Վերոնշյալ սկզբունքների կենսագործումն ապահովելու նպատակով օրենսդիրը նախատեսել է մի շարք երաշխիքներ, որոնք կոչված են կանխել նախնական քննության ընթացքում քաղաքացիների իրավունքների խախտումները: Այդպիսի երաշխիքներ ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով: Բնակարանի գննումը, այնտեղ դատավարական այլ գործողություններ կատարելը, ինչպես նաև տեխնիկական միջոցների գործադրմամբ մուտք գործելը այն գրադեցնող անձանց կամքին հակառակ՝ քրեական

դատավարության ընթացքում կարող են կատարվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի որոշմամբ»:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Քրեական դատավարության ընթացքում անձանց բանկային ավանդների և այլ գույքի վրա կալանք կարող է դրվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի որոշմամբ»:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, ինչպես նաև հետաքննության մարմնի և քննիչի գործողությունների և որոշումների օրինականության նկատմամբ վերահսկողության կարևոր ձև է հանդիսանում դատախազական հսկողությունը:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանք, մասնակցում է դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները: Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը կոչվում է մեղադրող»:

ՀՅ քրեադատավարական օրենսդրության իմաստով քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում (սկսած հանցագործության մասին հաղորդման ընդունումից մինչև գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելը) օրենքի պահանջների կատարման ստուգման առումով դատախազին վերապահված են բավականին լայն լիազորություններ, որոնց թվին են դասվում հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական դեկավարում (դատախազական հսկողություն) իրականացնելիս դատախազին վերապահված լիազորությունները:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական դեկավարում իրականացնելիս դատախազն իրավասու է նաև

- 1) իր իրավասության շրջանակներում հետաքննության մարմնից տեղեկություններ ստանալ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման և հանցագործությունների բացահայտման, անհայտ կորած անձանց և կորած գույքի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին.
 - 2) պահանջել փաստաթղթեր, նյութեր և գործեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքերի և դրանց առնչվող անձանց մասին.
 - 3) հետաքննության մարմնին պարտադիր գրավոր ցուցումներ տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման մասին՝ կապված քրեական գործով վարույթի հետ.
 - 4) դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով.
 - 5) իրաժարվել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, կարճել քրեական գործով վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը.
 - 6) հետաքննության մարմնին հանձնարարել իրականացնել ձերբակալման, բերման ենթարկելու, կալանավորման, այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ որոշումները.
 - 7) միջոցներ ձեռնարկել տուժողի, վկայի և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պաշտպանության համար.
 - 8) դիմել դատարան՝ սույն օրենսգրքով նախատեսված միջնորդություններով.
 - 9) ազատել առանց օրինական հիմքերի կամ առանց անհրաժեշտության ձերբակալված կամ կալանավորված անձանց.
 - 10) անհրաժեշտությունը վերանալու դեպքում վերացնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումները»:
- Դատախազական հսկողության առանձնահատկությունն այն է, որ այն ունի մշտական, անընդմեջ և օպերատիվ բնույթ: Դատախազը չպետք է սպասի, որ իրեն դիմում ներկայացվի օրենքի խախտման կապակցությամբ: Հետաքննության մարմնի և քննիչի գործողությունների օրինականության ստուգումը պետք է իրականացվի դատախազի նախաձեռնությամբ: Դատախազական հսկողության ակտիվ բնույթը արտահայտվում է, օրինակ, անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք

առաջադրելու, քրեական գործով վարույթը կարճելու, կասեցնելու վերաբերյալ որոշումների կայացման պահից 24 ժամվա ընթացքում դատախազին տեղյակ պահելու՝ քննիչի պարտականության մեջ:

Առանձին քննչական գործողություններ կատարելու համար դատախազի համաձայնությունն ստանալու, ինչպես նաև դատավարական փաստաթղթերի պատճենները վերջինիս ուղարկելու անհրաժեշտությունից բխում է նախնական քննության փուլում իրականացվող գործողությունների և կայացվող որոշումների օրինականությունն ստուգելու և համապատասխան դատավարական միջոցներ ձեռնարկելու՝ դատախազի պարտականությունը:

Քննիչի և հետաքննության մարմնի գործողությունների օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունն ապահովվում է նաև նրանց գործողությունների (անգործության) դեմ բերված բողոքների քննությամբ: Դատախազական հսկողությունը հետաքննության մարմնի և քննիչի գործունեության օրինականության և քաղաքացիների իրավունքների պաշտպանության ապահովման կարևոր միջոց է: Սակայն, գնահատելով քաղաքացիների իրավունքների երաշխավորման համար դատախազական հսկողության կարևորությունը, չպետք է մոռանալ, որ դատախազը շահագրգուված է գործի քննության արդյունքներով, ինչը կարող է խոչընդոտել դատավարությանը մասնակցող անձանց, հատկապես դատավարական առումով իր «հակառակորդները» հանդիսացող մեղադրյալի և նրա պաշտպանի բողոքների օբյեկտիվ քննությանը¹: Չի կարելի բացառել նաև զուտ մարդկային գործոնը: Յոգեբանների պնդմամբ, իրական մարդկային շփումներն առկա են քրեական գործով վարույթի յուրաքանչյուր փուլում և ենթարկվում են օբյեկտիվ սոցիալ-հոգեբանական այնպիսի օրինաչափությունների, որոնք կարող են չհամընկնել օրենքի պահանջների հետ, սակայն շարունակել գործել: Այսպես, նախնական քննության փուլում դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի միջև, ովքեր կապված են հանցագործության բացահայտման ընդհանուր խնդրով և պատասխանատվությամբ, ձևավորվում են յուրօրինակ փոխհարաբերություններ. դատախազն սկսում է ավելի շատ վստահել քննիչի և հետաքննության մարմնի, քան քաղաքացու փաստարկներին²:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացություն անել այն մասին, որ մինչդատական վարույթում անմեղության կանխավարկածի փոխարեն գործում է հակառակ՝

¹ Տե՛ս **Пилюк А.** Прокурорский надзор и состязательность в стадии предварительного расследования. Законность, 1999, № 9, էջ 34:

² Տե՛ս **Петрухин И. Л.** Материалы научной конференции "Судебная власть. Правосудие. Прокуратура". М., 1993, էջ 36:

մեղավորության կանխավարկածը, խոսքը հատկապես այն դեպքերի մասին է, երբ մեղադրյալը գտնվում է կալանքի տակ: Գաղտնիք չէ, որ կալանքի տակ գտնվող մեղադրյալի նկատմամբ նախնական քննության մարմնի կողմից ավելի հեշտ է ճնշում գործադրել, և շատ դեպքերում՝ նաև խոստովանական ցուցմունքներ կորզել¹:

Թերևս վերոգրյալ հանգամանքները հաշվի առնելով է, որ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում ձևավորվել է այն մոտեցումը, որի համաձայն՝ դատախազը, ում իրավասության մեջ է մտնում մեղադրական եզրակացության հաստատումը և դատարանում մեղադրանքի պաշտպանությունը, չի համապատասխանում «Մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով «պաշտոնատար անձ» հասկացությանը, ով կարող է օբյեկտիվ և անկողմնակալ լուծել հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձին ազատությունից զրկելու հետ կապված հարցեր²:

Նախնական քննության մարմինների անօրինական գործողությունների և որոշումների հետևանքները դուրս են գալիս քրեադատավարական հարաբերությունների շրջանակից և սահմանափակում են անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ահա այդ պատճառով է, որ վերոնշյալ գործողությունների և որոշումների օրինականության և իիմնավորվածության ստուգման հետաձգումը մինչև դատական քննության փուլ կարող է այնպիսի վնաս պատճառել, որի շտկումը հետագայում բարդ կամ անհնարին լինի: Բացի այդ, քանի որ նախնական քննության մարմինների գործունեությունն ուղեկցվում է ոչ միայն հանցագործության մեջ կասածվող կամ մեղադրվող անձանց, այլ նաև վկաների, տուժողների և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ, այն պահանջում է հետաքննության մարմնի և քննիչի գործողությունների օրինականության նկատմամբ անընդհատ արտաքին վերահսկողության առկայություն: Այդպիսի արտաքին վերահսկողություն է դատական վերահսկողությունը, որն իրականացվում է մինչդատական վարույթի փուլում և նպատակ է հետապնդում ապահովել քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, և դրանով իսկ դատական

¹ С্�в. Гуляев А., Зайцев О. Как сократить время содержания под стражей? Российская юстиция, 2002, № 7, էջ 43:

² Св. Европейское право в области прав человека. Практика и комментарии. М., 1997, էջ 393:

Վերահսկողությունը հանդես է գալիս որպես ամբողջ քրեական վարույթի օրինականության և արդյունավետության երաշխավոր:

Մինչդատական վարույթում քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունն արդարադատության իրականացման ձևերից մեկն է և անքակտելիորեն կապված է դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի գործողությունների և որոշումների օրինականության նկատմամբ իրականացվող վերահսկողության հետ: Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման նկատմամբ դատական վերահսկողության նորմատիվ բազան են կազմում ՀՀ Սահմանադրությունը, միջազգային-իրավական ակտերը, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը: Նշված ակտերի իմաստով դատարանի վրա դրված է նախնական քննության մարմինների կողմից իրականացվող՝ անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված դատավարական գործողությունների օրինականության նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի գործողությունների (անգործության) դեմ քրեական դատավարությանը մասնակցող անձանց կողմից բերված բողոքների քննության գործառույթը:

Դատական պաշտպանությունն անձի իրավական պաշտպանության՝ համաշխարհային պրակտիկայի կողմից մշակված կառուցակարգերից ամենաարդյունավետն է: Այդ արդյունավետությունը պայմանավորված է դատախազից, քննիչից և հետաքննության մարմնից դատարանի անկախությամբ և դատարանի գործունեության առանձնահատուկ ընթացակարգի առկայությամբ:

Մինչդատական վարույթում պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների և որոշումների նկատմամբ դատական վերահսկողության հասկացությունը և բովանդակությունը

Դատական վերահսկողության հասկացության, առարկայի և գործողության սահմանների, ինչպես նաև դատախազական հսկողության հետ վերջինիս հարաբերակցության գիտական մշակումը ոչ միայն տեսական, այլ նաև պրակտիկ նպատակներ է հետապնդում:

Նախնական քննության ընթացքում դատարանի կողմից իրականացվող գործունեությունը հետապնդում է միայն քաղաքացիների իրավունքների պաշտպանության, դրանց խախտումը կամ սահմանափակումը բացառելու նպատակ: Բանն այն է, որ այս փուլում քրեական դատավարությունն իրականացվում է նախնական

քննության մարմինների կողմից օրենքով նախատեսված դատավարական գործողությունների միջոցով և քաղաքացիների իրավունքների սահմանափակումը հնարավոր է վերջիններիս իրականացման ժամանակ: Թերևս այդ պատճառով է, որ քաղաքացիների իրավունքների պաշտպանության խնդիրը համընկնում է նախնական քննության մարմինների գործողությունների օրինականության և հիմնավորվածության ստուգման հետ: Իր դրսնորման ձևով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն արտահայտվում է նախնական քննության մարմինների առանձին գործողությունների և որոշումների օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացմամբ, սակայն դա բնավ չի նշանակում, որ դատարանը վեահսկողական գործառույթներ է իրականացնում հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի գործունեության նկատմամբ¹:

Դատարանն իրավունքի պաշտպանության և պահպանության մարմին է՝ անկախ այն հանգամանքից, թե ով՝ քաղաքացին, պաշտոնատար անձը, հասարակական կազմակերպության, թե օրենսդիր կամ գործադիր մարմինն է ոտնձգում այդ իրավունքի դեմ:

Վերոգրյալի հիման վրա չի կարելի, սակայն, քրեական գործով վարույթի ընթացքում առաջացող բոլոր, այդ թվում՝ դատարանի մասնակցությամբ ծագող իրավական հարաբերությունները դիտարկել մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման գործառույթների հարաբերակցության ենթատեքստում: Բողոքների քննության ընթացքում ծագող իրավական հարաբերությունների առարկա է հանդիսանում ոչ թե մեղավորության և պատժի, այլ կայացվող միջանկյալ որոշումների և կատարվող գործողությունների օրինականության և հիմնավորվածության հարցը:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն արդարադատության գոյության առանձնահատուկ ձև է²: ճիշտ է, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հանդիսանում արդարադատություն դասական իմաստով՝ հաշվի առնելով նրա վերջնական արդյունքը՝ գործի լուծումն ըստ էության³: Որոշման բողոքարկումը դատական կարգով նշանակում է դրա հետ անհամաձայնություն, վեծի առաջացում, որի լուծման իրավասությունը դատարանի բացառիկ իրավասությունն է: Նույն կերպ դատարանն արդարադատություն

¹ Ст.у *Лазарева В. А.* Теория и практика судебной защиты в уголовном процессе. Самара, 2000, Եջեր 70-71:

² Ст.у *Лазарева В. А.* Судебная власть. Судебная защита. Судебный контроль: понятие и соотношение. Самара, 1999, Եջեր 47, 57:

³ Ст.у *Колоколов Н. А.* Судебный контроль в стадии предварительного расследования: реальность, перспективы. Государство и право, 1998, № 11, Եջ 31:

է իրականացնում այն դեպքում, երբ դատարանի կողմից քննության է առնվում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը կամ այն դեպքում, երբ բողոքարկվում է նախնական քննության մարմնի որոշման կամ գործողության օրինականությունը: Նշված հարցերը դատարանի կողմից քննարկվում և լուծվում են օրենքով սահմանված կարգով, կողմերի մասնակցությամբ: Ինչ վերաբերում է առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ դատարանի թույլտվության ընթացակարգին, ապա այդ հարցերի քննության առանձնահատկությունը պայմանավորված է նախաքննական գաղտնիքի և քննության օպերատիվության պահպանման անհրաժեշտությամբ: Թերևս այդ պատճառով է, որ դատական նիստին մասակցելու իրավունք ունեն միայն դատախազը կամ քննիչը, իսկ պաշտպանության կողմն այդ իրավունքից զրկված է:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը, կարող ենք ասել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում իրականացվող դատական քննությունը, որոշ բացառություններով, պարունակում է արդարադատության տարրեր:

Անձի կալանավորման և առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ թույլտվություն տալով, ինչպես նաև նախնական քննության մարմինների գործողությունների և որոշումների դեմքերված բողոքները քննելով՝ դատարանը կարող է միջամտել նախնական քննության, գործի փաստական հանգամանքների վերիանման ընթացքին, իր որոշումներով ազդել նախնական քննության մարմինների վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանել է դատարանի թույլտվությամբ կատարվող քննչական գործողությունները, ինչպես նաև այդ թույլտվությունը տալու դատավարական ընթացակարգը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով, մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների օրինականության նկատմամբ դատական վերահսկողության իրականացումը բնավ չի նշանակում, որ վերջինս դատախազի լիազորություններն են իրականացնում: Քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանությունն առավել ապահով և արդյունավետ միջոց է, և դրա հետ մեկտեղ արդարադատությունը չի փոխարինում նախաքննության նկատմամբ դատախազական

հսկողությանը, իսկ դատական համակարգը չի կարող իրականացնել դատախազության դատավարական ղեկավարման գործառույթը¹:

Մինչդատական վարույթում դատարանի գործունեությունն էպիզոդիկ բնույթ է կրում և իրականացվում է ոչ թե դատարանի հայեցողությամբ, այլ դատավարությանը մասնակցող անձանց դիմումների կամ բողոքների առկայության պայմաններում: Դատական որոշումն անհրաժեշտ է օրենքով սահմանված դատավարական գործողությունների կատարման համար, մնացյալ դեպքերում նախնական քննության մարմիններն ինքնուրույն են: Այն, որ հետաքննության մարմնի և քննիչի կողմից որոշ քննչական գործողությունների կատարման թույլտվությունը տալիս է դատարանը, բնավ չի նշանակում, որ դատախազը պատասխանատու չէ այդ գործողությունների կատարման կապակցությամբ կայացվող որոշումների օրինականության և հիմնավորվածության համար: Կարելի է ասել, որ մինչդատական վարույթում դատարանը միայն օրենքով սահմանված դեպքերում է հետևում, որպեսզի նախնական քննության մարմինները դուրս չգան իրավական դաշտի սահմաններից: Այդ պատճառով, որքան ակտիվ լինի դատախազն իր լիազորությունների իրականացման ժամանակ, այնքան քիչ կլինեն դատավարության նասնակիցների կողմից դատարան բողոք ներկայացնելու առիթները:

Դատարանը վերահսկողություն չի իրականացնում նախնական քննության ընթացքի նկատմամբ: Այն չի միջամտում գործի քննությանը, քրեական դատավարության պրոցեսին, նույնիսկ բողոքարկվող որոշման կայացման կամ գործողության կատարման նպատակահարմարությանը: Այս հարցերը գտնվում են գործի քննություն իրականացնող մարմինների բացառիկ լիազորությունների սահմաններում: Անգամ որևէ քննչական գործողության անօրինականության դեմ բողոքի առկայության պայմաններում դատարանը չի անդրադառնում այդ քննչական գործողության կատարման անհրաժեշտության և նպատակահարմարության հարցը: Ահա այս պատճառով է, որ դատական վերահսկողությունը չի կարող դիտվել որպես նախնական քննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացում:

Արդարադատությունը հանդես է գալիս որպես հասարակության մեջ ծագող կոնֆլիկտների լուծման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, քաղաքացիական հասարակության և պետության շահերի պաշտպանության առավել վստահելի և քաղաքակիրք միջոց ոչ միայն դատավորների անկախության ուժով, այլ

¹ Ст. 4 **Шалумон М.** Судебный контроль и прокурорский надзор: не междоусобица, а взаимодействие. Российской юстиции, 2001, № 4, кг 15:

նաև շնորհիվ առանձնահատուկ դատավարական պրոցեսի, հստակ սահմանված կարգի և քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ձևի: Դատավարական ձևը պետական գործունեության իրավական ձևի տարատեսակ է, իսկ դրա արժեքն այն է, որ ստեղծում է քրեական գործով վարույթի մանրամասն կանոնակարգված, կայուն, իրավաբանորեն որոշակի, խիստ պարտադիր իրավական ռեժիմ, որը համապատասխանում է քրեական դատավարության խնդիրներին և սկզբունքներին¹:

Դատական ընթացակարգն այսչափ կարևորվում է այն պատճառով, որ վերջինիս համար սկզբունքային հանդիսացող շատ դրույթներ ունեն սահմանադրական նորմերի կարգավիճակ, ինչպես նաև ամրագրված են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային-իրավական ակտերում:

Դատական ընթացակարգի առանձնահատկությունը (իրապարակայնությունը, բանավորությունը, կողմերի հավասարությունը, մրցակցությունը և այլն), Վարույթն իրականացնող պետական այլ մարմինների գործունեության ձևերից ունեցած սկզբունքային տարբերությունները, հանրաճանաչ են և ինքնին ենթադրելի: Դատական քննության՝ օրենքով սահմանված ընթացակարգը հանդես է գալիս որպես արդարադատության ապահովմանն ուղղված գործունեության անբաժան մաս, այդ թվում՝ քրեական դատավարության մինչդատական փուլում: Դատական ընթացակարգում դրսենորվում է «ձևի և բովանդակության անբաժանելիությունը»²:

Դատական քննությունը լուրջ երաշխիք է ինքնիրավության դեմ³, արդար դատական որոշման կայացումն ապահովող միջոց, որի իրավունքն ունի յուրաքանչյուր մարդ և քաղաքացի:

Դատարանի կողմից իր վերահսկողական և թույլատվական լիազորությունների իրականացման՝ օրենքով սահմանված ընթացակարգը հիմնված է մրցակցության սկզբունքի վրա, սակայն հարցն այն է, թե որքանով է այդ մրցակցային սկզբունքը դրսենորվում:

Այսպես, կողմերի մասնակցությամբ իրականացված դատական քննության արդյունքում են լուծվում մեղադրյալի նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հետ կապված հարցերը, ինչպես նաև քննարկվում են նախնական քննության մարմինների որոշումների

¹ Ст. 1 Уголовно-процессуальное право Российской Федерации под ред. П. А. Лупинской. М., 1999, тезис 61-63:

² Ст. 14-16 **Якуб М. Л.** Процессуальная форма в советском уголовном судопроизводстве. М., 1981,

³ Ст. 33 **Зеленин С.** Совершенствовать надо не статус судей, а эффективность правосудия. Российская юстиция, 2002, № 1, тезис 33:

և գործողությունների դեմ ներկայացված բողոքները: Վերոնշյալ հարցերի և բողոքների քննարկումն իրականացվում է կողմերի հավասարության, բանավորության և իրապարակայնության սկզբունքների պահպանմամբ:

Դատական ընթացակարգի վերոնշյալ պայմանները թույլ են տալիս պաշտպանության կողմին կասկածի տակ դնել մեղադրանքի կողմից ներկայացրած ապացույցների թույլատրելիությունը, միջնորդության հիմնավորման համար դրանց բավարարությունը և դրանով իսկ նպաստել դատարանի կողմից հիմնավորված և արդարացի որոշումների կայացմանը: Դատական քննության բանավորությունը և իրապարակայնությունը հանդիսանում են անձի իրավունքների խախտման դեմ պայքարի գլխավոր գործիքներից մեկը:

Ինչ վերաբերում է նախնական քննության մարմինների կողմից առանձին քննչական գործողությունների կատարման թույլտվություն տալուն, ապա այդ հարցի քննարկումն իրականացվում է դռնփակ դատական նիստում, առանց այն անձանց մասնակցության, ում իրավունքներն ու օրինական շահերը սահմանափակվում են նշված որոշումներով, և դա արդարացված է այդ քննչական գործողությունների բնույթից և նշանակությունից ելնելով:

Համցանք կատարած անձի բացահայտման խնդրի առկայությունը մի կողմից և անօրինական ու չհիմնավորված մեղադրանքից և իրավունքների ու ազատությունների սահմանափակումից անձի պաշտպանության պարտականությունը մյուս կողմից մինչդատական վարույթում մրցակցության սկզբունքի ընդլայնման և կողմերի դատավարական հնարավորությունների հավասարակշռման անհրաժեշտությունն ավելի են խորացնում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը քրեական դատավարության յուրաքանչյուր մասնակցի օժտել է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և նախնական քննության մարմինների անօրինական և չհիմնավորված գործողությունների կանխման համար բավականին լայն հնարավորություններով: Վերոնշյալն առաջին հերթին վերաբերում է անձի՝ ձերբակալման, որպես մեղադրյալ ներգրավելու կամ մեղադրանք առաջադրելու պահից պաշտպան ունենալու իրավունքով, ինչպես նաև վկայի՝ փաստաբանի հետ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու իրավունքներին: Վկայի հարցաքննությանը փաստաբանի մասնակցությունը կոչված է ապահովելու հարցաքննության՝ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգի պահպանունը, կանխելու հարցաքննվողի նկատմամբ «խորթ»

մեթոդների կիրառումը, որոնց արդյունքում ստացված ոչ հավաստի տվյալները կարող են կիրառվել կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ: Վկայի՝ փաստաբան ունենալու իրավունքը կարևորվում է նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս իրավունքի նախատեսմամբ հնարավորություն է ստեղծվում կանխելու որպես վկա հարցաքննելու արդյունքում ստացված տվյալների օգտագործմամբ անձին հետագայում որպես մեղադրյալ ներգրավելու պրակտիկան¹:

Նախնական քննության փուլում մրցակցությունը դրսնորվում է նաև մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումներն ու գործողությունները դատական կարգով բողոքարկելու՝ դատավարության մասնակիցներին ընձեռված հնարավորության մեջ, որի իմաստով, պաշտպանության կողմն իրավասու է դիմում ներկայացնել, իսկ դատարանը պարտավոր է քննության առնել այդ դիմումը: Մինչդատական վարույթում մրցակցության դրսնորում է նաև, ինչպես նշվեց, մեղադրանքի և պաշտպանության կողմի միջև ծագած վեճը լուծող անկախ դատարանի առկայությունը, ինչպես նաև դատական նիստին մասնակցելու և իր շահերը պաշտպանելու՝ պաշտպանության կողմին ընձեռված հնարավորությունը:

Քրեական գործով մինչդատական վարույթ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության նկատմամբ դատական վերահսկողության շնորհիվ է, որ քրեական դատավարությունը հանցավորության դեմ պայքար իրականացնելուն ուղղված գործունեությունից վերածվում է «պատժչ մարմինների ինքնիրավությունից» անձի պաշտպանությանն ուղղված գործընթացի²:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելուն անել այն մասին, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն անձի իրավունքների և նախնական քննության մարմինների գործունեության մեջ թույլ տրված խախտումների կանխարգելմանն ուղղված դատական գործունեություն է, որն իրականացվում է օրենքով սահմանված կարգով, քրեական դատավարությանը մասնակցող անձանց դիմումների, բողոքների և միջնորդությունների հիման վրա:

**Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու
և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունների
քննությունը դատարանի կողմից**

¹ Տե՛ս **Алексеева Л. Б.** Практика применения Европейской Конвенции о защите прав человека и основных свобод Европейским Судом по правам человека. М., 2000, էջեր 107-108:

² Տե՛ս **Шадрин В. С.** Обеспечение прав личности и предварительное расследование в уголовном процессе. Государство и право, 1994, № 4, էջ 96:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով»:

Օրենսգրքը որպես խափանման միջոցի տեսակներ նշում է կալանավորումը, գրավը, ստորագրություն՝ չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, կազմակերպության երաշխավորությունը, հսկողության հանձնելը, հրամանատարության հսկողության հանձնելը:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածը սահմանում է խափանման միջոց կիրառելու կարգը, նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում»:

Օրենսգրքի համաձայն՝ կալանավորումը և գրավը կարող են կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ: Հսկողության հանձնելը կարող է կիրառվել միայն անչափահասի նկատմամբ: Հրամանատարության հսկողությանը հանձնելը կարող է կիրառվել միայն զինծառայողի կամ զինապարտի նկատմամբ՝ զորահավաքներ անցնելու ժամանակահատվածում:

Խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված: Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, եթե ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, եթե քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) Խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճոի կատարմանը»:

Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունը հիմք է տալիս դատողություն անել այն մասին, որ խափանման միջոցի եռթյունն այն է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից իր որոշմամբ կամ դատարանի թույլտվությամբ ձեռնարկվում են օրենքով նախատեսված միջոցներ՝ ուղղված կասկածյալի կամ մեղադրյալի այնպիսի վարքագծի չեզոքացմանը, որը կարող է հանգեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված հետևանքների առաջացմանը։ Խափանման միջոցի կիրառումը որևէ այլ նպատակ չի հետապնդում, անթույլատրելի է այն կիրառել որպես կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ճնշում գործադրելու միջոց։

Կալանավորումը հանդիսանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված խափանման միջոցներից ամենախիստը։

Կալանավորումը՝ որպես խափանման միջոց, իր բովանդակությամբ ննան է ազատազրկում և կալանավորում պատժատեսակներին, քանի որ երկու դեպքում ել հետապնդվում է հասարակությունից անձին մեկուսացնելու նպատակ, սակայն սրանք տարբեր իրավական ինստիտուտներ են, որոնք ունեն տարբեր սուբյեկտային կազմ, տարբեր նպատակներ են հետապնդում և տարբեր դատավարական ընթացակարգով են իրականացվում։ Կալանքը չի պարունակում պատժի տարբեր։ Կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառումը ոչ միայն որևէ կերպ չի կանխորոշում գործի քննության արդյունքում դատարանի կողմից նշանակվող պատժի տեսակն ու չափը, այլև չի բացառում արդարացման դատավճոի կայացումը։

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է անձի կալանավորման հիմքերը, հիմք ընդունելով քրեադատավարական այն սկզբունքը, որ «Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով» (11-րդ հոդվածի 2-րդ մաս)։

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի

նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները»: Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է. «Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում

- 1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը.
- 2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը.
- 3) տարիքը և առողջական վիճակը.
- 4) սեռը.
- 5) զբաղմունքի տեսակը.
- 6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը.
- 7) գույքային դրությունը.
- 8) բնակության մշտական վայրի առկայությունը.
- 9) այլ էական հանգամանքներ»:

Ջրեադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս խոսել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պայմանների և հիմքերի մասին: Այսպես՝ որպես կալանավորման պայմաններ հանդես են գալիս՝

- հարուցված քրեական գործի առկայությունը.
- անձին որպես մեղադրյալ ներգրավելը:

Կալանավորման հիմքերը թվարկված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում: Նշված հոդվածը կալանավորման հիմքերի մասին խոսելիս գործածում է «բավարար հիմքեր կամ ենթադրելու» արտահայտությունը, որն իրավաբանական գրականության մեջ մեկնաբանվում է որպես փաստական տվյալների ամբողջություն, որոնք հիմնավորված են գործով ձեռք բերված ապացույցներով և վկայում են անձի կողմից իր դատավարական պարտականությունները չկատարելու բարձր հավանականության մասին: Օրինակ, եթե խափանման միջոցն ընտրվում է այն մտավախությամբ, որ մեղադրյալը կարող է խուսափել քննությունից և դատից, ապա դրա կիրառման համար բավարար հիմք կարող է հանդիսանալ արտասահման մեկնելու նախապատրաստությունները վկայող ապացույցների առկայությունը, վարույթն իրականացնող մարմնի կանչով չներկայանալը և այլ: Այսինքն՝ խափանման միջոցներից յուրաքանչյուրի, այդ թվում՝ կալանավորման, կիրառման հիմքերն ունեն

«ապացուցողական-կանխատեսական» բնույթ և հնարավորություն են տալիս եզրակացություն անել ապագայում մեղադրյալի հնարավոր վարքագծի վերաբերյալ¹:

Օրենսդրական կարգավորման համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը կասկածյալին կամ մեղադրյալին հայտարարում է խափանման միջոց կիրառելու մասին իր որոշումը և անմիջապես նրան է հանձնում որոշման պատճենը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը տալիս է նաև կալանավորման հասկացությունը, այսպես, 137-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կալանավորումն օրենքով նախատեսված տեղերում և պայմաններում անձին կալանքի տակ պահելն է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությամբ:

Քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի առկայության դեպքում դատախազը համաձայնություն ստանալու միջնորդությամբ դիմում է համապատասխան մարմիններին»:

Դատարանի կողմից մեղադրյալին կալանավորելու հարցի քննարկումը հանդիսանում է արդարադատության իրականացման ձևերից մեկը, որի ընթացքում դատարանի առջև դրված է մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի առկայության կամ բացակայության հարցի վերաբերյալ մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև ծագած վեճը լուծելու խնդիր: Այս իրավիճակում, բնականաբար, մեղադրանքի կողմը գտնում է, որ մեղադրյալի կալանավորման համար առկա են օրինական հիմքեր, իր այս դիրքորոշումը հիմնավորում է դատական նիստի ընթացքում և խնդրում է դատարանին անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշում կայացնել: Պաշտպանության կողմը ներկայացնում է իր փաստարկները՝ հակադրելով դրանք մեղադրանքի կողմի փաստարկներին և խնդրում է դատարանին մերժել կալանքի միջնորդության բավարարումը:

Կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելու հարցը դատարանում սկսում է քննարկվել մեղադրանքի կողմի նախաձեռնությամբ, երբ վերջինս համապատասխան

¹Տե՛ս *Енікеев З.Д.* Проблемы эффективности мер уголовно-процессуального принуждения. Казань, 1982. № 8:

միջնորդություն է ներկայացնում դատարան: Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին:

Քննելով միջնորդությունը՝ դատավորը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու (...) կամ միջնորդությունը մերժելու մասին (...) (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մաս):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ և 285-րդ հոդվածի 5-րդ մասերի վերլուծությունից բխում է, որ անձին կալանավորելու վերաբերյալ որոշում կայացնում է դատարանը՝ այդպիսով հանդես գալով որպես անձին ազատությունից զրկող առաջնային մարմին: Կարծում ենք՝ նման մոտեցումը հակասում է «Մարդու իրավունքների և իմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածին: Այսպես՝ վերոնշյալ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան իետևայլ դեպքերում և օրենքով սահմանված կարգով. (...) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախորում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, եթե դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվուն նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար»:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

Նշված նորմը վերաբերում է անձի ազատության իրավունքի սահմանափակմանը, որի վերաբերյալ որոշում կայացվել է գործի նախնական քննության փուլում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան հաստատում է, որ պետք է լինի

սերտ կապ անձին ազատությունից գրկելու ձևի և այն ուղեկցող երաշխիքների միջև։ Կոնվենցիայի իմաստով՝ անձին ազատությունից գրկելուն ուղեկցող երաշխիքը ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձի՝ դատարան տարվելու իրավունքն է կամ իրեն ազատությունից գրկելու հարցի քննարկման կամ իր նկատմամբ հարուցված գործն ըստ էության լուծելու համար։ Վերոգրյալից հետևում է, որ անձին ազատությունից գրկելու նպատակներից մեկը նրան դատական իշխանություն իրականացնող մարմին տանելն է, այսինքն՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով՝ դատարանի առաջ կանգնող անձն արդեն գրկված է ազատությունից և դատարանը պետք է որոշում կայացնի նրան անազատության մեջ պահելը շարունակելու հիմնավորվածության և օրինականության վերաբերյալ¹։

Անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության բավարարումը կամ մերժումը ընդիանուր իրավասության դատարանի կողմից պետք է իրականացվի ազատությունից փաստացի գրկված (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով՝ ձերբակալված) անձին ազատությունից գրկելու օրինականության և հիմնավորվածության ստուգման ենթատեքստում։ Այսպես, եթե դատարանը միջնորդությունը քննարկելիս հետևության հանգի այն մասին, որ անձին ազատությունից գրկելը (ձերբակալելը) եղել է անհիմն և անօրինական, նա պետք է որոշում կայացնի անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և անձին անհապաղ ազատ արձակելու մասին։ Այդ դեպքում անձը հնարավորություն կստանա նաև պահանջելու փոխհատուցել ապօրինի ազատությունից գրկելու արդյունքում իրեն պատճառված վնասը։ Իսկ եթե դատարանը նախաքննության մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը քննելու արդյունքում հետևության հանգի, որ անձի ձերբակալումը եղել է օրինական և հիմնավորված, ապա նա պետք է որոշում կայացնի միջնորդությունը բավարարելու և անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին։

Հետևաբար, իհմք ընդունելով վերոգրյալը, կարծում ենք, որ կալանքը որպես խափանման միջոց նախաքննության փուլում կարող է կիրառվել միայն ազատությունից փաստացի գրկված (ձերբակալված) անձի նկատմամբ, նրան ազատությունից գրկելու օրինականության և հիմնավորվածության ստուգման շրջանակներում։ Անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս ընդիանուր իրավասության դատարանը չի կարող հանդես գալ որպես անձին ազատությունից գրկող առաջնային մարմին՝

¹ Տե՛ս *Լոկալ ընդդեմ իռլանդիայի* գործով 1961թ. հուլիսի 1-ի որոշումը (app. No 332/57), կետ 14:

այդպիսով հանդես գալով մեղադրանքի գործառույթ իրականացնելու դիրքերից, մինչդատական վարութում ընդհանուր իրավասության դատարանը պետք է հանդես գա որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին, որն օժտված է անկախությամբ ինչպես գործադիր իշխանությունից, այնպես էլ կողմերից¹:

Դարկ ենք համարում նշել նաև, որ համանման մոտեցում առկա է նաև ՈԴ Գերագույն դատարանի 1993 թվականի ապրիլի 27-ի «Զերբարակալման կամ կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման պրակտիկայի վերաբերյալ» որոշման մեջ: Սույն որոշման իմաստով «օրինականությունը» նշված խափանման միջոցը կիրառելու կամ կիրառման ժամկետը երկարացնելու կարգը կանոնակարգող՝ քրեադատավարական օրենսգրքի բոլոր նորմերի պահպանումն է, իսկ «հիմնավորվածությունը» ներկայացված, այդ թվում՝ անձը բնութագրող, նյութերում այնպիսի տեղեկությունների առկայություն, որոնք հիմնավորում են կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու անհրաժշտությունը²:

Խափանման միջոցի օրինականության մասին անհրաժեշտ է դատել ոչ միայն այն տեսանկյունից, թե որքանով է այն ապահովում քննությունից և դատից անձի չխուսափելը, այլև այն առումով, թե որքանով է անձի իրավունքների և օրինական շահերի սահմանափակումը համաչափ դրանց սահմանափակման իրական անհրաժեշտության հետ, որքանով է այն արդարացի³: Այսինքն, կալանավորման հարցի լուծման ժամանակ բավարար չէ միայն ստուգել կալանավորման՝ որպես խափանման միջոցի ընտրության՝ քրեադատավարական օրենքով սահմանված ընթացակարգի օրինականությունը, անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել փաստական տվյալներով միջնորդության հիմնավորվածությանը և մեղադրյալի կամ կասկածյալի փաստարկներին⁴:

Առավել բարդ և վիճահարույց հարցերից մեկն է այն, թե դատավորն արդյոք պետք է ստուգի անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու վերաբերյալ որոշման հիմքում դրված ապացույցների բավարարությունը, թե պետք է «վստահի» նրան, ինչ շարադրված է մեղադրանք առաջադրելու վերաբերյալ որոշման և կալանավորման միջնորդության մեջ: Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության

¹Տե՛ս Նեղմեսքերն ընդդեմ Ավստրիայի գործով 1968թ. հունիսի 27-ի որոշումը (արք. № 1936/63), կետ 24:

²Տե՛ս Сборник постановлений Пленума Верховного суда РФ 1961-1996. М., 1997:

³Տե՛ս Лукинская П. А. Законность и обоснованность решений в уголовном судопроизводстве. М., 1972, էջ 49:

⁴Տե՛ս Жданов А. Законность или обоснованность ареста? Российская юстиция. 1999, № 1, էջ 48:

օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «(...) Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը»: Օրենքի վերոշարադրյալ հոդվածում նշված՝ «հիմնավորվածությունը հաստատող նյութեր» հասկացության մեջ ներառվում են ձերբակալման արձանագրությունը, անձին որպես մեղադրյալ ներգրավելու վերաբերյալ որոշումը, կասկածյալի և մեղադրյալի հարցաքննությունների արձանագրությունները և այլն: Այսինքն՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանի կողմից որոշակի սահմաններուն իրականացվում է ապացույցների հետազոտություն առաջին հերթին համոզվելու համար, որ հանցանք կատարած անձն առնչություն ունի իրեն մեղսագրվող հանցագործության հետ: Անձին որպես մեղադրյալ ներգրավելու վերաբերյալ որոշման հիմնավորվածության հարցը հանդիսանում է անձի կալանավորման հարցի բաղկացուցիչ մաս, քանի որ եթե անձին որպես մեղադրյալ ներգրավելու վերաբերյալ որոշումը կայացվել է առանց անձին հանցագործության կատարման մեջ մեղադրելու համար բավարար հիմքերի, ապա կասկածի տակ է դրվում դատարանի կողմից անձի նկատմամբ կալանքի կիրառման հիմնավորվածությունը¹: Դատարանը չի կարող որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, եթե առկա է «մերկապարանոց մեղադրանք», որը հիմնավորված չէ կոնկրետ ապացույցներով: Դրա հետ մեկտեղ, սակայն, իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով դատարանը չպետք է անմիջականորեն հետազոտի մեղադրանքի հիմքուն դրված ապացույցները՝ դրանց արժանահավատությունը ստուգելու նպատակով: Այս իրավիճակում բավական է համոզվել նման ապացույցների առկայության և դրանց՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված լինելու փաստում:

Անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկման ժամանակ տրամաբանական է, որ դատարանը պետք է անդրադառնա նաև մեղադրյալի ձերբակալման օրինականությանը, մեղադրական ապացույցների ձեռք բերման դատավարական կարգը, հատկապես, նրա պաշտպանության իրավունքը պահպանված լինելուն: Նման մոտեցումը ոչ միայն իրավաչափ, այլ նաև անհրաժեշտ է: Բանն այն է, որ քրեական դատավարության այդ փուլում կարող է առկա չլինեն հանցագործության կատարման պատկերն

¹ Ст. Конституция Российской Федерации: Проблемный комментарий. Отв. ред. В. А. Четвернин. М., 1997, т.2, 157-158:

ամբողջությամբ վերհանող ապացույցներ: Շատ հաճախ նախաքննության մարմնի դատողությունները հիմնված են լինում առաջին մեղադրական ապացույցների վրա, որոնք ստացվել են գործի քննության սկզբնական փուլում օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում: Բացառված չեն նաև այն դեպքերը, երբ ձերբակալումը կամ կալանավորումը օգտագործվեն որպես կասկածյալի կամ մեղադրյալի վրա ճնշում գործադրելու միջոց¹: Վերոնշյալ, ինչպես նաև այլ հանգամանքների ուժով նախնական քննության մարմինների մոտ ավելի «հեշտ և արագ» ձևավորվում է ոչ ճիշտ պատկերացում անձին որպես մեղադրյալ ներգրավելու և կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող ապացույցների բավարարության հարցի վերաբերյալ:

Այնուամենայնիվ, պրակտիկայում բավականին հաճախ են կայացվում անձին կատանամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ ընտրված խափանման միջոցը երկարացնելու վերաբերյալ որոշումներ՝ կալանավորման հիմքերի օրենսդրական հիմքերի տառացի վերարտադրությամբ, առանց գործի փաստական հանգամանքների վկայակոչման²:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտելու վերաբերյալ միջնորդությունը վիճարկելիս մեղադրյալները (պաշտպանները) առավել հաճախ վկայակոչում են իրենց (իրենց պաշտպանյալների) անմեղությունը, այսինքն՝ անդրադառնում են որպես մեղադրյալ ներգրավելու վերաբերյալ որոշման չհիմնավորվածության հարցի³: Մեղադրանքի հիմնավորվածության ստուգման անհրաժեշտությունը նշանակում է, որ դատարանը պարտավոր է ստուգել է քննարկել պաշտպանության կողմի փաստարկները, այդ թվում՝ կապված անձի անմեղության և հանցանքի կատարման փաստը հիմնավորող ապացույցների բացակայության հետ⁴:

Դատարանը չի ստուգում ապացույցները դրանց արժանահավատության առումով: Այն միայն համոզվում է, որ անձը որպես մեղադրյալ ներգրավվել է որոշակի փաստական տվյալների հիման վրա: Վերոգրյալի հիման վրա կարելի է նաև դատողություն անել այն մասին, որ անձին կալանավորելու վերաբերյալ միջնորդության քննարկման ժամանակ դատարանը կարող է քննարկման առարկա դարձնել նաև անձին

¹Տե՛ս **Колоколов Н. А.** Права человека - высшая ценность закона. Российская юстиция. 1997, №1, էջ 17:

²Տե՛ս Альтернативный доклад по соблюдению РФ Международного пакта о гражданских и политических правах (предоставлен Комитету ООН по правам человека в связи с рассмотрением пятого периодического доклада РФ). М., 2003, էջ 30:

³Տե՛ս **Лебедев В. М.** Судебная защита свободы и личной неприкосновенности на предварительном следствии. М., 2001, էջ 40:

⁴Տե՛ս Постановление Пленума Верховного суда РФ от 27 апреля 1993г. «О практике судебной проверки законности и обоснованности ареста или продления срока содержания под стражей». Бюллетень Верховного суда РФ, 1993, №9:

մեղսագրվող հանցագործության որակյալ հատկանիշների առկայության կամ բացակայության հարցը, քանի որ օրենսդիրը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հարցը կապում է հանցագործության տեսակի հետ: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը»: Այդ պատճառով այն դեպքում, եթե արարքի որակնան ճշմարտացիության վերաբերյալ դատարանի կասկածներն էական են, դատարանն իրավասու է քննարկել կոնկրետ հանցագործության մեջ անձին կասկածելու կամ մեղադրելու համար բավարար հիմքերի առկայության հարցը, և դա չի կարող դիտվել որպես դատարանի միջամտություն անձի մեղքի հետ կապված հարցերի լուծմանը:

Անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության հիմնավորվածության հարցի բարդությունն այն է, որ կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման հիմքերն ինքնին ենթադրական բնույթ են կրում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մաս): Ուստի, տրամաբանական է, որ վերոնշյալ հիմքերի առկայության վերաբերյալ կալանավորման միջնորդություն ներկայացնող անձի սուբյեկտիվ կարծիքը պետք է հիմնավորված լինի հանցանքի կատարումից հետո մեղադրյալի վարքագծի վերաբերյալ գործուն առկա տվյալներով, որոնց հիման վրա հնարավոր կլինի ասել, որ նա կարող է թաքնվել քննությունից, շարունակել հանցավոր վարքագիծը և այլ¹:

Խափանման միջոց ընտրելու հիմքերն առավելապես ձևավորվում են՝ հաշվի առնելով կասկածյալի կամ մեղադրյալի անձնային հատկանիշները: Այդ պատճառով օրենսդիրը սահմանել է, որ խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության հարցի լուծման ժամանակ պետք է հաշվի առնվեն ոչ միայն վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, այլ նաև մեղադրյալի անձը, տարիքը, առողջական վիճակը և այլն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերոնշյալ տվյալների միջոցով է հնարավոր դառնում պարզել, որ մեղադրյալն ունի մշտական բնակության վայր, չի թաքնվի քննությունից կամ դատից, չի խոչընդոտի գործի քննությանը, չի շարունակի գրաղվել հանցավոր գործունեությամբ:

¹ Ст. 6 Бодров М. И. И законность, и справедливость. Советская юстиция. 1993, № 5, № 2-3; Чуяев А. И., Лукьянова Л. М. Судебная проверка законности и обоснованности ареста. Ульяновск, № 97:

Կասկածյալի և մեղադրյալի անձի վերաբերյալ տվյալներին կալանավորման վերաբերյալ միջնորդության քննության ժամանակ դատարանը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի: Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դրանք բացասաբար են բնութագրում անձին կամ վկայում են քննությունից թաքնվելու կամ հանցավոր գործունեությունը շարունակելու մասին: Մասնավորապես՝ այն, որ անձը հաճախակի ալկոհոլ է գործածում, խաղամոլ է, ընտանիք չունի և այլն չեն կարող վկայել հանցավոր գործունեությամբ զբաղվելու բարձր հավանականության մասին: Թվարկված հանգանանքները բնութագրում են անձի ընդհանուր սոցիալ-էթիկական հատկանիշները և ոչ թե կրիմինոգենությունը:

Այսպիսով՝ կարող ենք ամփոփել, որ կալանավորումը՝ որպես խափանման միջոց, պետք է կիրառվի ոչ միայն այն պատճառով, որ անձը կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն, այլ այն պատճառով, որ գործով ձեռք բերված տվյալներով հիմնավորվել է, որ անձը կարող է կատարել կամ կատարում է գործի քննությանը խոչընդոտող ոչ իրավաչափ գործողություններ¹: Վերոշարադրյալ եզրահանգումը հիմնավորող լրացուցիչ փաստարկ կարող է հանդիսանալ այն, որ հանցագործությունների որակման ժամանակ թույլ տրված սխալների կեսից ավելին կապված են «չափազանց խիստ» որակումների հետ: Այլ կերպ ասած՝ նախնական քննության փուլի սկզբում արարքը, որպես կանոն, որակվում է քրեական օրենսգրքի որակյալ հանցակազմով, որը, բնականաբար, ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսում, հետո միայն, գործի քննության ընթացքում արարքի որակումը մեղմացվում է:²

Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակն ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին:

Միջնորդություն հարուցելու որոշման մեջ շարադրվում են այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը: Միջնորդությունը քննարկելու, սակայն, դատավորն իրավունք ունի պահանջել միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացատրություններ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասեր):

¹ Տե՛ս **Կյուն Փ. Ի.** Принуждение в уголовном судопроизводстве. Красноярск, 1985, էջ 110:

² Տե՛ս **Назаров А. В.** Влияние следственных ошибок на ошибки суда. СПб, 2003, էջեր 112-113:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությանը կից ներկայացվող նյութերի ծավալը ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում: Թեև ենթադրելի է, որ մեղադրող կողմից ներկայացրած նյութերը պետք է ամբողջությամբ արտահայտվեն միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ որոշման մեջ՝ քրեական գործի նյութերի համապատասխան էջերի մատնանշմամբ: Անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությանը կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը օրենսդրությամբ նախատեսված չէ, սակայն այստեղ ևս կարելի է ենթադրություն անել այն մասին, որ այդ փաստաթղթերուն պետք է ներառվեն՝

- քրեական գործ հարուցելու վերաբերյալ որոշումը.
- ձերբակալման արձանագրությունը.
- որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը.
- կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննությունների արձանագրությունները.
- անձի ձերբակալումը և որպես մեղադրյալ ներգրավելը հիմնավորող փաստաթղթերը:

Վերոնշյալ փաստաթղթերից բացի, դատարան ներկայացվող նյութերում պետք է ներառվեն նաև՝

- մեղադրյալի անձը բնութագրող փաստաթղթեր աշխատանքի կամ ուսման և բնակության վայրերից.
- տվյալներ ընտանեկան դրության մասին.
- բժշկական փաստաթղթեր.
- դատվածության վերաբերյալ փաստաթղթեր և այլն¹:

Քննիչը և դատախազը դատարան նյութեր ներկայացնում են՝ ելնելով նախնական քննության գաղտնիության ապահովման անհրաժեշտությունից, այդ պատճառով կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ նախական քննության մարմինները նախընտրեն չհրապարակել առանձին ապացույցներ: Այս դեպքում դատարանը, դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասով, կարող է մերժել միջնորդության բավարարումը:

Անփոփելով վերոգրյալը՝ հարկ ենք համարում ընդգծել, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ օրինական և հիմնավորված որոշում

¹Տե՛ս Կомментарий к УПК РФ под ред. И.Л. Петрухина. М., 2002, էջ 173:

կարող է կայացվել միայն այն դեպքում, երբ քրեական գործի նյութերում իրենց դատավարական ամրագրումն են ստացել.

- փաստական տվյալներ, որոնք հիմնավորում են հանցագործության դեպքը և այն կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարված լինելը.
- փաստական տվյալներ այն մասին, որ բարձր է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ այլ կերպ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը.
- փաստական տվյալներ, որոնք կիմնավորեն կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այլ, առավել մեղմ խափանման միջոց ընտրելու անհնարինությունը:

Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը դատարանի կողմից քննելու կարգը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը»:

Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն. «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը:

Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին: Կարծում ենք, սակայն, որ ներկայացված միջնորդության վերաբերյալ պաշտպանության կողմից ծանուցման պարտականությունը պետք է դրվի մեղադրանքի կողմից վրա, քանի որ այդ դեպքում

խոսքը գնում է նախնական քննության մարմնի նախաձեռնությամբ, քրեական դատավարության միջդատական փուլում իրականացվող դատավարական գործողության մասին: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, որի համաձայն. «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը», նախաքննության մարմինը պարտավոր է մեղադրյալին բացատրել նրա իրավունքներն ու ապահովել այդ իրավունքների իրականացումը:

Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին:

Անազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քննության դատական նիստին նրա մասնակցության հարցը պետք է ապահովի վարույթն իրականացնող մարմինը:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է նաև, որ քննելով միջնորդությունը՝ դատավորը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին:

Որոշումը կայացնելու օրը դատարանը այն ստորագրությամբ հանձնում է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին, մեղադրյալին, պաշտպանին և տուժողին, իսկ դատական նիստին վերջիններիս չներկայանալու դեպքում՝ պատշաճ ձևով ուղարկում է նրանց: Որոշումը ենթակա է անհապաղ կատարման: Տվյալ խափանման միջոցն ընտրելու նպատակով հարուցված միջնորդությունը դատավորի կողմից մերժելու մասին որոշումից հետո նույն գործով նույն անձին կալանավորելու միջնորդությամբ կրկին դատարան դիմելը հնարավոր է միայն կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, եթե ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի

պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով»:

Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության նյութերը դատարան պետք է ներկայացվեն օրենքով սահմանված եռօրյա (72-ժամյա) ժամկետում: Սակայն պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ կալանավորման միջնորդությունը և դրան կից նյութերը դատարան են ներկայացվում ձերբակալման ժամկետի ավարտին մոտ, օրինակ, այն դեպքում, երբ անձին ձերբակալվածի կարգավիճակում պահելու ժամկետի ավարտին մնացել է 3 ժամ: Որոշ տեսաբաններ կարծիք են արտահայտում այն մասին, որ նման դեպքերում դատարանն իրավասու է կամ քննության չառնել միջնորդությունը կամ որոշում կայացնել անձին ազատ արձակելու վերաբերյալ: Պրակտիկան, սակայն, այն ուղղությամբ է զարգանում, որ միջնորդությունը դատարանի կողմից քննության է առնվում և ընդհանուր կարգով որոշում է կայացվում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի իմաստով դատարանն իրավասու է որոշում կայացնել կամ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կամ ներկայացված միջնորդությունը մերժելու մասին որոշում կայացնելու վերաբերյալ: Եթե մեղադրանքի կողմը չի հիմնավորում մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտությունը, ապա դատարանը պետք է որոշում կայացնի միջնորդությունը մերժելու վերաբերյալ, իսկ եթե միջնորդությունը հիմնավորված է, դատարանը պետք է համապատասխան որոշմամբ բավարարի այն:

Անձին կալանավորելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից մերժվելու դեպքում նախաքննության մարմինն իրավասու է նոր միջնորդություն ներկայացնել դատարան՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասը, որի համաձայն. «Տվյալ խափանման միջոցն ընտրելու նպատակով հարուցված միջնորդությունը դատավորի կողմից մերժելու մասին որոշումից հետո նույն գործով նույն անձին կալանավորելու միջնորդությամբ կրկին դատարան դիմելը հնարավոր է միայն կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրը չի նախատեսում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությանը և դրան կից ներկայացվող նյութերին մեղադրյալի և նրա պաշտպանի ծանոթանալու հնարավորություն: Օրենսդիրը նշում է միայն, որ նախնական քննության ավարտից

հետո քրեական դատավարությանը մասնակցող անձինք իրավունք ունեն ծանոթանալ գործի նյութերին: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 265-րդ հոդվածի համաձայն:

«1. Մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդում է մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցչներին և որոշում է գործի նյութերի հետ նրանց ծանոթանալու ժամանակը և տեղը:

2. Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին քննիչը ծանոթանալու համար գործը ներկայացնում է նրանց միջնորդության դեպքում, իսկ մեղադրյալին և պաշտպանին՝ անկախ միջնորդությունից:

3. Եթե մեղադրյալի պաշտպանը կամ տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը չի կարող ներկայանալ նշանակված ժամին, քննիչը ծանոթանալը հետաձգում է մինչեւ 5 օր ժամկետով: Տվյալ ժամկետում պաշտպանի կամ ներկայացուցիչի չներկայանալու դեպքում մեղադրյալին հնարավորություն է ընձեռվում իր համաձայնությամբ կամ նշանակմամբ ունենալու այլ պաշտպան, իսկ տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին՝ այլ ներկայացուցիչ»:

Մեր կարծիքով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարան ներկայացվող միջնորդությանը և դրան կից ներկայացվող նյութերին ծանոթանալու՝ մեղադրյալի և նրա պաշտպանի իրավունքը, քանի որ հակառակ մոտեցումը հակասում է մրցակցության սկզբունքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ինչպես նշվեց վերևում, առանձին բացառություններով նախատեսում է կալանավորման միջնորդության քննարկմանը մեղադրյալի մասնակցության պարտադիր լինելը: Այս կապակցությամբ, սակայն, հարց է ծագում. միջնորդության քննության ժամանակ, դատարանի կողմից կարո՞ղ են արդյոք մեղադրյալին հարցեր տրվել: Կարծում ենք՝ մեղադրյալին պետք է հնարավորություն տրվի կարծիք արտահայտել ներկայացված միջնորդության վերաբերյալ: Զի բացառվում նաև դատարանի կողմից նրան հարցեր տալու հանգամանքը: Սակայն դատարանի հարցերը պետք է վերաբերեն քննարկվող միջնորդությանը և դուրս չգան վերջինիս սահմաններից, ինչպես նաև կապված լինեն միջնորդությանը կից ներկայացված նյութերի, այդ թվում՝ մեղադրյալի անձը բնութագրող տվյալների հետ: Դատարանի

կողմից մեղադրյալին տրվող հարցերը կարող են կապված լինել ձերբակալման տեղի և ժամանակի, նրա ընտանեկան դրության հետ և այլն: Նման նոտեցումը, կարծում ենք, կիշտացնի միջնորդությանը կից դատարանին ներկայացված նյութերի հետազոտությունը, և վերջինս առավել հեշտությամբ կկարողանա կողմնորոշվել ներկայացված նյութերի բավարարության, թույլատրելիության և որոշում կայացնելիս կարևորվող այլ հարցերում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն.

«1. Մեղադրյալը քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմնի որոշման հիման վրա կալանքից ենթակա է ազատման, եթե՝

1) կարծվել է համապատասխան քրեական գործի վարույթը, կամ նրա նկատմամբ դադարեցվել է քրեական հետազնությունը.

2) դատարանը դատապարտյալին նշանակել է պատիժ, որը կապված չէ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ կալանքի հետ.

3) քրեական վարույթն իրականացնող մարմինը պարզել է անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության բացակայությունը.

4) լրացել և չի երկարացվել կալանավորման մասին որոշում կայացնելիս կալանքի տակ պահելու՝ դատարանի կողմից սահմանված ժամկետը.

5) լրացել է անձին կալանքի տակ պահելու սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը.

6) մուծված է անձին կալանքից ազատելու համար դատարանի կողմից նշանակված գրավը:

2. Սույն հոդվածի առաջին մասի 4-6-րդ կետերով նախատեսված դեպքերում անձին կալանքից ազատելու որոշում կարող է ընդունել նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի դեկավարը:

3. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում համապատասխանաբար՝ արդարացվածը կամ դատապարտյալը դատարանի կողմից կալանքից ազատվում է անմիջապես դատական նիստի դահլիճում: Սույն հոդվածի առաջին մասի 4-6-րդ կետերով նախատեսված դեպքերում, ինչպես նաև կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացնելու կամ փոխելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման պատճենը ստանալիս մեղադրյալին անմիջապես ազատում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի դեկավարը:

4. Կալանքից ազատված անձը չի կարող նորից կալանավորվել նույն մեղադրանքով, եթե չեն հայտնաբերվել նոր էական հանգամանքներ, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չեն մեղադրյալին կալանքից ազատելու պահին»:

Վերոշարադրյալ հոդվածից երևում է, որ դատարանի կողմից ընտրված խափանման միջոցից՝ կալանքից մեղադրյալը կարող է ազատվել քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմնի որոշման հիման վրա, եթե վերջինիս կողմից պարզվել է անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության բացակայությունը: Այս դեպքում խոսքը գնում է ոչ թե դատախազի կողմից դատարանի որոշման վերացման, այլ դատախազի կողմից գործով վարույթի ընթացքում որոշում կայացնելու լիազորության մասին: Նման իրավիճակներում դատախազն անձին ազատ է արձակում՝ նրա կալանավորումից հետո առաջացած իրավիճակի գնահատման արդյունքում: Խոսքն, իհարկե, այն դեպքերի մասին չէ, երբ անձի ազատ արձակումը պայմանավորված է ժամկետի սպառմամբ, այլ այն դեպքերին է վերաբերում, երբ գործի քննության արդյունքում ձեռք են բերվել տվյալներ անձին անազատության մեջ պահելու աննպատակահարմարության մասին, օրինակ, գործի քննությամբ պարզվել է, որ մեղադրյալը ոչ թե սպանություն է կատարել, այլ գործել է անհրաժեշտ պաշտպանության սահմաններում կամ քրեական գործով վարույթը կարճվել է անձի արարում հանցակազմի բացակայության պատճառով:

Օրենսդրական նման կարգավորումն արդարացված է և բխում է ինչպես անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման անհրաժեշտությունից, այնպես էլ քրեական դատավարություն իրականացնող մարմինների գործառույթների տարբերակման անհրաժեշտությունից: Այսպես, եթե քրեադատավարական օրենքը պարտադրեր քննիչին կամ դատախազին ընտրված կալանքը փոփոխելու միջնորդությամբ դիմել դատարան, ապա դրանով կսահմանափակվեր նախաքննական մարմինների ինքնուրույնությունը, քանի որ դա կգնահատվեր որպես մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործունեության նկատմամբ դատարանի կողմից հսկողության իրականացում: Բացի այդ, եթե օրենքը պարտավորեցներ նախաքննական մարմինն ընտրված կալանավորումը փոփոխելու միջնորդությամբ դիմել դատարան, ապա միևնույն է, դատարանը չէր կարող մերժել այդ միջնորդությունը, յուրաքանչյուր դեպքում այն պարտավորված էր լինելու բավարարել այն, այսինքն՝ կալանավորումը փոխարինել ավելի մեղմ խափանման միջոցով, որովհետև հակառակ դեպքում՝ դատարանը կվերածվեր մեղադրական գործառույթ իրականացնող մարմնի, քանի որ ստիպված էր լինելու հանդես գալ մեղադրանքի կողմի դիրքերից: Ահա, այս պատճառով,

կարծում ենք, իարցի օրենսդրական նման կարգավորումը տրամաբանական է: Օրենսդրական նման կարգավորումը բխում է նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի առանձնահատկությունից, քանի որ, ինչպես բազմիցս նշվել է վերևում, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն իրականացվում է բացառելու համար քրեական դատավարությունում անձի իրավունքների և ազատությունների անօրինական ու չիմնավորված սահմանափակումները, բնականաբար, եթե խոսքը գնում է քրեական դատավարության պրոցեսում մեղադրյալի վիճակի բարելավման մասին, ապա կարող ենք վստահ ասել՝ այդ դեպքում բացակայում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկան:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, կարող ենք եզրակացություն անել այն մասին, որ

- քննիչի և դատախազի վրա է դրված անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը հիմնավորելու պարտականությունը.
- անձին կալանավորելու անհրաժեշտությունը պետք է արտացոլվի դատարան ներկայացվող միջնորդության և դրան կից ներկայացվող նյութերում:

Վերոգրյալը նշանակում է, որ անձի կալանավորման անհրաժեշտությունը ձևակերպելու, այդ անհրաժեշտությունը դատարանում հիմնավորելու խնդիրը դրված է քննիչի և դատախազի առջև: Դատարանի խնդիրն է նախնական քննության մարմինների վերոնշյալ միջնորդության օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելը:

Մինչդատական վարույթում անձի ազատության իրավունքի սահմանափակման այլընտրանքները

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությամբ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը»:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Եթե մեղադրյալը բաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք, դատախազը դիմում է դատարան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու միջնորդությամբ: Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատարանի որոշումը գրավատուն կարող է բողոքարկել վերադաս դատարան»:

Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ գրավը «ոտնձգում է» ոչ այնքան մեղադրյալի կամ գրավատուի անձի, որքան գույքի դեմ, սահմանափակում է նրա ոչ թե անձնական, այլ տնտեսական իրավունքները: Գրավը անձին չի գրկում քրեական հետապնդման մարմիններից կամ դատարանից փախչելու կամ այլ կերպ խուսափելու ֆիզիկական հնարավորությունից: Այն մեղադրյալի գործողությունները սահմանափակում է բացառապես գույքային կորուստների սպառնալիքով: Գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ քննությունից կամ դատից մեղադրյալի չխուսափելու ապահովում է իրենց կամ այլ անձանց (գրավատուի) գույքային պատասխանատվության սպառնալիքով: Այս դեպքում պետական հարկադրանքն առկա է մեղադրյալի կողմից իր վրա դրված պարտականությունները չկատարելու կամ քրեական հետապնդման մարմիններից կամ դատարանից խուսափելու դեպքում նրա կամ այլ անձի (գրավատուի) գույքի կորստի իրական սպառնալիքի շնորհիվ: Նշված հանգամանքի պատճառով է, որ գրավ՝ որպես խափանման միջոց, նախատեսված է մեղադրյալի մոտ քննությունից չքաքնվելու բավականին լուրջ տնտեսական մոտիվացիա ստեղծելուն և դրանով իսկ իր կամ այլ անձի (գրավատուի) գույքային իրավունքների ու շահերի անձեռնմխելիությունն ապահովելուն:

Վերոշարադրյալը թույլ է տալիս հետևություն անել այն մասին, որ գրավը ոչ այնքան քրեական վարույթն իրականացնող մարմիններից մեղադրյալի խուսափելը կանխելուն, որքան նշված մարմիններից նրա չխուսափելուն ապահովելուն ուղղված հարկադրանքի միջոց է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ գրավի միջոցով մեղադրյալի չքաքնվելը ապահովում է ոչ թե ուղղակիորեն, ինչպես կալանավորման դեպքում է, այլ անուղղակիորեն՝ տնտեսական լծակների կիրառման միջոցով¹: Խափանման այլ միջոցների համեմատ գրավը հանդիսանում է վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց մեղադրյալի չխուսափելու ապահովող առավել արդյունավետ

¹Տե՛ս **Михаилов В. А.** Залог – мера пресечения в уголовном судопроизводстве. М., 1993, էջ 7:

միջոց, հատկապես բնակչության նվազ ապահովված խավի շրջանում, ում համար գույքի ցանկացած կորուստ միշտ անցանկալի է¹:

Իրավաբանական գրականության մեջ իրավացիորեն ընդգծվում է այն, որ գրավի կիրառումը՝

- ի տարբերություն կալանավորման, մարդասիրական մոտեցում է, քանի որ չի սահմանափակում անձի ազատության և անձոնմխելիության իրավունքը,
- խնամարկյալներին և ընտանիքի անդամներին չի գրկում կերակրողից,
- մեղադրյալներին գերծ է պահում հասարակական պարսավանքից և ձերբակալվածներին պահելու վայրերի բացասական ազդեցությունից²,
- գտնվելով ազատության մեջ՝ մեղադրյալներն առավել պատրաստակամ են լինում իրենց արարքի արդյունքում պատճառված վնասը հատուցելուն ուղղված գործողությունների կատարմանը,
- գրավի կիրառմամբ պետությունը խնայում է ձերբակալվածներին պահելու վայրերին հատկացվող գումարները,
- պետությունը հնարավորություն է ստանում «թերևացնել» ձերբակալվածներին պահելու վայրերը, բարելավել այնտեղ գտնվող անձանց պահելու պայմանները³:

Գրավի կիրառման բարդություններից մեկը դրա չափի որոշումն է, քանի որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է որոշի, թե ինչ գումար է գրավատուն մուծելու դատարանի դեպոզիտ, որպեսզի վերջինս չհայտնվի ծանր նյութական կացության մեջ, սակայն միաժամանակ այդ գումարը մեղադրյալի համար համես գա որպես լուրջ զսպող գործոն: Գրավի գումարը պետք է սահմանվի դատարանի հայեցողությամբ, սակայն ոչ թե հայեցողական ձևով, այլ քրեական վարույթն իրականացնող մարմիններից մեղադրյալի խուսափելը կանխելու անհրաժեշտությունից ելնելով: Քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելը բնավ պայմանավորված չէ գրավի գումարի չափով:

Միշտ չէ, սակայն, որ գրավը դիտվել է որպես ցանկալի խափանման միջոց: Այսպես՝ անցյալ դարի 20-ական թվականների, ինչպես նաև ԽՍՀՄ իրավագետների կողմից այն քննադատվում էր որպես սոցիալական անհավասարության խրախուսման

¹Տե՛ս **Розин Н. Н.** Уголовное судопроизводство. М., 1916, էջեր 366-367:

²Տե՛ս **Петрухин И. Л.** Неприкосновенность личности и принуждение в уголовном процессе. М., Наука, 1989, էջ 171:

³Տե՛ս **Трунов И. Л., Трунова Л. К.** Меры пресечения в уголовном процессе. – СПб. Юридический центр Пресс, 2003, էջ 187:

միջոց, հասարակության առավել վճարումակ խավերին տրված արտոնություն, որը չի կարող արդարացի լինել¹:

Ներկայում նույնպես գրավը հաճախ կիրառվող խափանման միջոցներից չէ, սակայն այլ պատճառով: Բանն այն է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինները նախընտրում են գործի քննության ընթացքում անձին անազատության մեջ պահել, թեև տվյալ իրավիճակում չարդարացված խիստ, սակայն նրա փախուստը կանխող լրացուցիչ երաշխիք ունենալու համար:

Նախնական քննության մարմինների որոշումների և գործողությունների դեմքերված բողոքների դատական քննությունը

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմքողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

¹ Ст. Уголовно-процессуальный кодекс РСФСР. Текст и постатейный комментарий /Под ред. М. Строговича, Д. Карницкого. М., 1926, №155-156; **Строгович М. С.** Новый проект уголовно-процессуального кодекса //Строгович М. Избранные труды. Т. 2. Гарантии прав личности в уголовном судопроизводстве. М., 1992, №30-31; **Лившиц Ю. Д.** Меры пресечения в советском уголовном процессе. М., 1964, №72-73; **Корнуков В. М.** Меры процессуального принуждения в уголовном судопроизводстве. Саратов, 1978, №54:

Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ մինչդատական վարույթում դատական վերահսկողության առարկա են հանդիսանում գործողությունների և որոշումների երկու տեսակ՝

1. Դատավարական որոշումներ և գործողություններ, որոնց բողոքարկումն ուղակիորեն նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով՝ հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հրաժարվելը, քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց նշված որոշումները բողոքարկելու իրավունքի վերապահումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանց արդյունքում դադարում են քրեադատավարական հարաբերությունները, ինչը կարող է էականորեն սահմանափակել քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

2. Մինչդատական վարույթն իրականացնող մարմինների այն որոշումներն ու գործողությունները, որոնք կարող են խախտել քրեական դատավարությանը մասնակցող անձանց սահմանադրական իրավունքներն ու ազատությունները կամ սահմանափակել ՀՀ ներպետական և միջազգային իրավունքով նախատեսված՝ դատարանի մատչելիության իրավունքը:

Այս երկրորդ խմբի որոշումների տարբերակումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը սպառիչ չի թվարկում մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով ստուգման ենթակա որոշումները և գործողությունները՝ սահմանափակվելով «սույն օրենսգրքով նախատեսված որոշումներ և գործողություններ» արտահայտությամբ:

Նախնական քննության մարմինների և որոշումների՝ դատական կարգով բողոքարկման սահմանները ճիշտ պատկերացնելու համար անհրաժեշտ է մեկնաբանել երկրորդ կետում նշված չափանիշները։ Այսպես՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում առկա է այն դեպքում, եթե նախնական քննության մարմնի գործողության կամ որոշման մեջ առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք թույլ չեն տալիս անձին դիմել դատարան իրենց խախտված իրավունքները և ազատությունները պաշտպանելու նպատակով կամ այնպիսի հանգամանքներ, որոնք թույլ չեն տալիս ժամանակին իրացնել անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը։ Երկրորդ կետում նշված մյուս չափանիշը քրեական դատավարությանը մասնակցող անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների

սահմանափակման հնարավորությունն է: Տվյալ դեպքում խոսքը գնում է սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հնարավորության մասին, այսինքն՝ չի պահանջվում, որ այդ սահմանափակումներն առկա լինեն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմնինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմնինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն»:

Վերոշարադրյալ հոդվածի վերլուծությունից երևում է, որ նախնական քննության մարմինների գործողությունների և որոշումների դեմ բերված բողոքը քննող դատավորն իրավասու է մինչդատական վարույթն իրականացնող մարմնից պահանջել բողոքն ըստ եռության քննելու համար անհրաժեշտ դատավարական և այլ փաստաթղթեր կամ դրանց պատճեններ: Օրենքում ուղղակիորեն նշված չէ, սակայն ենթադրվում է, որ դատարանը պետք է շահագրգիռ անձանց ուղարկի բողոքի պատճենը և նշանակի դատական նիստ: Եթե բողոքը ներկայացվել է կալանքի տակ գտնվող մեղադրյալի կողմից, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է միջոցներ ձեռնարկի դատական նիստին նրա մասնակցությունն ապահովելու համար, քանի որ ոչ ոք չի կարող գրկվել դատական նիստին անձանք մասնակցելու, միջնորդություններ և բացարկներ հայտնելու, դատավարությանը մասնակցող անձանց դիրքորոշումների և բողոքի քննության համար անհրաժեշտ նյութերին ծանոթանալու և բացատրություններ տալու իրավունքից:

Բողոքը դատավորի կողմից քննվում է միանձնյա, քննության սահմանները որոշվում են բողոքի սահմաններով: Քննության արդյունքում դատարանը

- բողոքը ճանաչելով հիմնավորված՝ որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին.

- գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մաս):

Մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների դեմ ներկայացված բողոքների քննության արդյունքում դատարանի կայացրած որոշումները կարող են բողոքարկվել վերաքննության, ապա վճռաբեկության կարգով:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունները և որոշումները կարող են սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկվել դատավարության մասնակիցների կողմից: Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանինը՝ վերադաս դատարան (...):»:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտում ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները

Ինչպես արդեն մատնանշվել է վերը ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

Համանման դրույթ է նախատեսված ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 14-րդ կետում, որի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը «(...) բացի սահմանադրական արդարադատության հարցերից, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյան է և կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը»:

ՀՀ Սահմանադրության և քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ դրույթների ուժով քրեադատավարական օրենսդրության զարգացման, պետական իշխանության մարմինների համակարգում դատարանի դերի և տեղի սահմանման, ինչպես նաև քրեական դատավարության ոլորտ ներգրավված անձանց իրավունքների

պաշտպանության հարցերի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի դերն ու նշանակությունը դժվար է գերազանահատել:

Վճռաբեկ դատարանի որոշումների միջոցով ոչ միայն ապահովում է օրենքի միատեսակ կիրառություն, այլև դրանք աջակցում են իրավունքի զարգացման ու կատարելագործմանը, ՀՀ Սահմանադրության, ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրության մեջ ամրագրված հիմնարար սկզբունքների կիրառմանը: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կարող են պետք է հաշվի առնվեն ոչ միայն իրավակիրառ մարմինների գործունեության ընթացքում, այլ նաև օրենսդրի կողմից նոր իրավական նորմերի և ինստիտուտների սահմանման ժամանակ:

Ստորև ներկայացված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները որոշակի խմբավորման են ենթարկվել: Առաջին հերթին ներկայացված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի, ապա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-139-րդ և 143-րդ հոդվածների կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2006-2009թթ. կայացված, մեր կարծիքով, առավել կարևոր որոշումները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ռ Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաբերիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ 105/07
Նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Աղամյան
դատավորներ՝ Ս.Ղազարյան
Ո.Համբարձումյան

ՎԲ-17/08

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ Դ.ՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ՂՈՒԿԱՅԱՆԻ Ս.ՕՐԱՆՅԱՆԻ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ Վ.ԱԲԵԼՅԱՆԻ Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
---	--

2008 թվականի մայիսի 23-ին

ք.Երևանում

Դռնբաց դատական նիստում, քննելով հավատարմագրված փաստաբան Արթուր Ղազարյանի միջոցով տուժողի իրավահաջորդ Անահիտ Այվազյանի ներկայացուցիչ Կարեն Թումանյանի բերած վճռաբեկ բողոքը թիվ 55200706 քրեական գործով Լոռու մարզի դատախազության քննիչ Ս.Մխիթարյանի 2006 թվականի հոկտեմբերի 3-ի «Քրեական գործը կարծելու նասին» որոշման 2-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ոստիկաններ Արամ Սահակյանի, Աշոտ Արգարյանի, Ռուսլան Մոսինյանի, Յրացյա Գրիգորյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու նասը հաստատելու վերաբերյալ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումն անփոփոխ թողնելու նասին ՀՀ վերաբերիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշման դեմ,

ՊԱՐՁԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Լոռու մարզի դատախազության քննիչ Ս.Միթրարյանը 2006 թվականի մարտի 6-ին Սեյրան Այվազյանի կողմից համագուղացիններին և ոստիկանության աշխատակիցներին մարմնական վնասվածքներ հասցնելու փաստի առիթով հարուցել է թիվ 55200706 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (երկու կամ ավելի անձանց սպանության փորձ) հատկանիշներով:

Ս.Այվազյանի քույրը՝ Անահիտ Այվազյանը, 2006թ. ապրիլի 11-ի քննիչի որոշմամբ թիվ 55200706 քրեական գործով ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

2006 թվականի հոկտեմբերի 3-ին քննիչը որոշում է կայացրել քրեական գործով վարույթ կարծելու մասին այն հիմքով, որ հանցանք կատարած անձը՝ Ս.Այվազյանը, մահացել է:

Նույն որոշմամբ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի չորս աշխատակիցների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է նրանց գործողություններում հանցակազմի բացակայության հիմքով:

2. «Թիվ 55200706 քրեական գործի վարույթը կարծելու մասին» քննիչի 2006թ. հոկտեմբերի 3-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդը բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազություն: 2006 թվականի նոյեմբերի 20-ի թիվ Դ-81 գրությամբ վերջինս պատասխանել է, որ որոշումը կայացվել է օրենսդրությանը համապատասխան:

2006թ. հոկտեմբերի 3-ի քննիչի որոշման դեմ տուժողի իրավահաջորդը բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազություն: 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ Դ-81 գրությամբ վերջինս հայտնել է, որ որոշումը վերացնելու հիմքեր չկան:

Քննիչի նույն որոշման դեմ տուժողի իրավահաջորդը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազության: ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետի տեղակալ Բ.Աղայանը 2007թ. հունվարի 19-ի թիվ 15-87-06 գրությամբ բողոք բերողին հայտնել է, որ կայացված որոշման օրինականությունը ստուգվել է ՀՀ գլխավոր դատախազությունում. որոշումն օրինական է, և այն վերացնելու հիմքեր չկան:

3. 2007թ. հունիսի 27-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանը բողոք է ներակայացրել Լոռու մարզի առաջին ատյանի դատարան՝ պահանջելով թիվ 55200706 քրեական գործի վարույթը կարծելու մասին քննիչի որոշման 2-րդ կետը վերացնել:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ. սեպտեմբերի 12-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի բողոքը մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը 2007թ. սեպտեմբերի 27-ին բերել է վերաբնիչ բողոք:

ՀՀ վերաբնիչ քրեական դատարանի 2007թ. հոկտեմբերի 23-ի որոշմամբ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի որոշումը բողնվել է անփոփոխ, իսկ վերաբնիչ բողոքն առանց բավարարման:

4. ՀՀ վերաբնիչ քրեական դատարանի 2007թ. հոկտեմբերի 23-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանը հավատարմագրված փաստաբան Ա.Ղազարյանի միջոցով վճռաբեկ բողոք է բերել:

2008 թվականի մարտի 4-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

5. Թիվ 55200706 քրեական գործով իրականացված նախաքննությամբ պարզվել է հետևյալը.

2006 թվականի մարտի 6-ին՝ ժամը 12.00-ից մինչև 17.00-ի սահմաններում, գտնվելով հոգեպես անհավասարակշիռ վիճակում, Ա.Այվազյանն իր մոտ գտնվող դանակով լոռու մարզի Օձուն գյուղում փորձել է սպանել նույն գյուղի բնակչներ Յ.Չորանյանին և Ե.Պետրոսյանին, ինչպես նաև ոստիկանության տեղամասային տեսուչ Վ.Բոյցյանին:

Այնուհետև ՀՀ ոստիկանության թումանյանի բաժնի պետի հրամանով ոստիկանության վեց ծառայողներ՝ Յ.Գևորգյանը, Ն.Նանինյանը, Ա.Սահակյանը, Ա.Աբգարյանը, Ռ.Մոսինյանը և Յ.Գրիգորյանը, Ա.Այվազյանին վնասազերծելու նպատակով հարկադրաբար բացել են նրա տան դուռն ու ներս մտել, սակայն նրան վնասազերծել չի հաջողվել: Այն ժամանակ, երբ ոստիկանների խումբը հեռանում էր, Ա.Այվազյանն իր տան պատշգամբում դանակով հարվածել է ՀՀ ոստիկանության ավագ տեղամասային տեսուչ Յ.Գևորգյանին: Վերջինիս վիրավորվելը տեսնելով՝ ՀՀ ոստիկանության չորս աշխատակիցներ՝ Ա.Սահակյանը, Ա.Աբգարյանը, Ռ.Մոսինյանը և Յ.Գրիգորյանը, իրենց հաշվեցուցակային զենքերից կրակել են Ա.Այվազյանի ուղղությամբ: Ալավերդու հիվանդանոց տեղափոխելիս ստացած հրազենային վնասվածքներից վերջինս մահացել է:

Ա.Այվազյանի ուղղությամբ Յ.Գրիգորյանը կրակել է մեկ անգամ, Ա.Սահակյանը՝ ութ, Ա.Աբգարյանը՝ երեք, և Ռ.Մոսինյանը՝ երեք:

6. Քրեական գործով տուժող Յ.Գևորգյանը հարցաքննվել է 2006թ. մարտի 7-ին (քրեական գործ, 46-րդ էջ), վկա Յ.Գրիգորյանը՝ 2006թ. մարտի 14-ին (քրեական գործ, 83-րդ էջ), վկա Ն.Նանինյանը՝ 2006թ. մարտի 15-ին (քրեական գործ, 89-րդ էջ), իսկ վկա Ա.Աբգարյանը՝ 2006թ. մարտի 16-ին (քրեական գործ, 92-րդ էջ):

7. Ա.Այվազյանի դիակի դատարժշկական փորձաքննություն իրականացրած փորձագետի եզրակացության մեջ նկարագրված հրազենային գնդակային տասը կրակողներից առաջացած վերքերից վեցն ունեցել են «հետևի առաջ» ուղղությունը (քրեական գործ, 276-րդ էջ):

8. Թիվ 55200706 «Քրեական գործով Վարույթը կարծելու մասին» 2006թ. հոկտեմբերի 3-ի քննիչի որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում նշված է. «... որոշեցի ... ՀՀ Ոստիկանության ԼՍՎ Ոստիկանության թումանյանի բաժնի ոստիկաններ Արամ Սահակյանի, Աշոտ Աբգարյանի, Ռուսլան Մոսինյանի, Յան Գրիգորյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել նրանց գործողություններում հանցակազմի բացակայության պատճառով»:

Վճռաբեկ բողոքի իիմքը, իիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ իիմքերի ու իիմնավորումների սահմաններում.

9. Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաբննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը և 175-րդ հոդվածը: Դատարանի հիմնավորումը, որ նախաքննության մարմինը թիվ 55200706 քրեական գործի շրջանակներում կատարել է քննություն և անհրաժեշտություն չի եղել առանձին քրեական գործ հարուցել Ա.Այվազյանին կյանքից զրկելու կապակցությամբ, անհիմն է: Բողոքի հեղինակը փաստարկում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «դեպքը» հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձություն է, որի կապակցությամբ իրականացվում է քրեական դատավարություն, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «քրեական գործը» քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթ է քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարթների կապակցությամբ:

Բողոքաբերը նշում է, որ դատարանը խախտել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածը: Դատարանի հիմնավորումը, թե ոստիկանության աշխատակիցների արարքուն բացակայում է հանցակազմը, անհիմն է, քանի որ տվյալ դեպքի համար հանցակազմի առկայության կամ բացակայության հարցի վերջնական լուծումը կարող է տեղի ունենալ տվյալ

ուղղությամբ առանձին քրեական գործի շրջանակներում՝ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննություն կատարելուց հետո: Իսկ քրեական գործ հարուցելու և նախաքննություն իրականացնելու համար առկա են հանցակազմի բոլոր հատկանիշները:

10. Ըստ բողոքի հեղինակի՝ անհիմն է նաև դատարանի այն հիմնավորումը, որ Ս.Այվազյանին կյանքից զրկել են նրա կողմից անօրինական բռնությունից՝ կատարված և կատարվող հարձակումից պաշտպանվելու և այն կանխելու համար, որ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ծառայողները գործել են անհրաժեշտ պաշտպանության վիճակում և նրանց կողմից Ս.Այվազյանի նկատմամբ անհրաժեշտ է եղել գործադրել իրազեն, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում (...):»:

Ըստ բողոքաբերի՝ տվյալ դեպքում ոստիկանության աշխատակիցների կողմից գենքի գործադրումը և դրանով մահ պատճառելը չի կարող դիտվել անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված, քանի որ անձի կյանքի համար վտանգավոր բռնություն կամ այդպիսի բռնության իրական սպառնալիք չի եղել:

Բացի այդ, նախաքննության մարմինը իր որոշմամբ չի նշել, թե ոստիկանության աշխատակիցների կողմից Ս.Այվազյանին կյանքից զրկելու արարքի հանցավորությունը բացառող հատկապես ո՞ր հանգամանքի առկայությամբ է իրավաչափ (անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, հանցանք կատարած անձին բռնելիս վճառ պատճառելու): Իսկ դատարանը իրավունք չուներ նույն հետևողականը հանգելու, քանի որ նախաքննության մարմինը տվյալ հանգամանքի ուղղությամբ նախաքննություն չի իրականացրել, և արարքի հանցավորությունը բացառող կոնկրետ հանգամանքի առկայությունը չի հիմնավորվել:

11. Բողոքի հեղինակը նշում է, որ խախտվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը: Անհիմն է դատարանի այն հիմնավորումը, որ քաց է թողնվել նախաքննության մարմնի որոշումը բողոքարկելու՝ օրենքով սահմանված ժամկետները, քանի որ գործով տուժողի իրավահաջորդը բողոքարկել է դատախազության քննիչի որոշումը, սակայն վերադաս դատախազը օրենսգրքով սահմանված կարգով 7 օրվա ընթացքում որոշում չի կայացրել, այլ բողոքը մերժել է գրությամբ:

Բացի այդ, նախաքննության մարմինը մեկ որոշմամբ երկու գործողություն է իրականացրել. կարծել է քրեական գործը և մերժել է քրեական գործի հարուցումը: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրը՝ բողոքը բերելու օրվա դրությամբ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկելու ժամկետի սահմանափակումներ չի նախատեսել: Այսինքն՝ բողոքի հեղինակը գտնում է, որ սույն գործով կիրառման է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին խմբագրությունը, որը չէր սահմանում գործով վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի իրավարկելը դատարան բողոքարկելու ժամկետ:

12. Ըստ բողոքի հեղինակի՝ խախտվել է նաև կյանքի իրավունք սահմանող ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի» 2-րդ հոդվածը, ինչպես նաև նույն կոնվենցիայի 13-րդ արձանագրության 1-ին հոդվածը: Մասնավորապես, անհիմն է դատարանի այն հիմնավորումը, թե ոստիկանության աշխատակիցները գործել են իրենց լիազորությունների շրջանակում և օրենքի հիման վրա:

13. Բողոքատուն փաստարկում է, որ խախտվել է նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը: Մասնավորապես, դատարանը չի կիրառել գործով կիրառման ենթակա՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի Մակարանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը՝ փաստական հանգամանքների տարբերության պատճառաբանությամբ:

14. Ելնելով վերօգրյալից՝ բողոքի հեղինակը խնդրում է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաբնիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ:

I. Առաջին ատյանի դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու իրավաչափությունը.

15. Բողոքը բերած անձը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է հետևյալ հարցը. Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը և քրեական վերաբեննիշ դատարանն իրավասու՞ է ին ըստ էության քննության առնել տուժողի իրավահաջորդ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքները, թե պարտավոր է ին մերժել այն ժամկետանց լինելու հիմքով:

16. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի՝

«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցիչ, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների (...) կողմից (...) կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնումը բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մինչև 2007թ. ապրիլի 7-ն ուժի մեջ եղած խնբագրության «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը բավարարելուց դատախազի հրաժարվել կարող է բողոքարկվել դատարան»:

17. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

(...):

18. Վճռաբեկ դատարանը համաձայնում է բողոքարերի այն հիմնավորմանը, որ տուժողի իրավահաջորդ Ա.Այվազյանի՝ դատախազությանն ուղղված բողոքը բավարարելուց հրաժարվելու հետևանքով ծագած իրավահարաբերությունները կարգավորվուն էն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մինչև 2007թ. ապրիլի 7-ն ուժի մեջ եղած խնբագրությամբ, որը չեղանակավոր է սահմանում դատախազի որոշման դատական բողոքարկման հատակ ժամկետ:

Սակայն Վճռաբեկ դատարանը չի ընդունում բողոքի հեղինակի այն մեկնաբանությունը, որ սույն գործով կիրառնան ենթակա օրենսդրությամբ սահմանված չեղանական դիմելու որևէ ժամկետային սահմանափակում: Վճռաբեկ դատարանը ճշշտ է համարում քրեական վերաբենիշ դատարանի այն հիմնավորումը, որ սույն գործով կիրառնան է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված՝ դատական բողոքարկման մեկանսյա ընդիհանուր ժամկետը:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքն առաջին ատյանի դատարան է բերվել միայն 2007թ. հունիսի 27-ին, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված դատական բողոքարկման մեկամսյա ժամկետը սույն գործով չի պահպանվել:

19. Այս պայմաններում գործի էությունը քննության առարկա դարձնելով՝ առաջին ատյանի և վերաբննիշ դատարանները դուրս են եկել մինչդատական վարութի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի ժամանակային շրջանակներից:

20. Դետևաբար՝ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը և քրեական վերաբննիշ դատարանն իրավասու չեն ըստ էության քննության առնելու տուժողի իրավահաջորդ Ա.Այվազյանի ներկայացուցիչ Կ.Թումանյանի բողոքները, այլ պարտավոր էն մերժել դրանք ժամկետանց լինելու հիմքով:

21. Վերը շարադրված հիմնավորումները բավարար են բողոքը մերժելու համար: Այնուհանդերձ, նկատի ունենալով, որ առաջին ատյանի և վերաբննիշ դատարանները սույն գործը քննության են առել ըստ էության և իրենց որոշումներում շարադրել են ըստ էության հիմնավորումներ, ինչպես նաև ելելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառությից՝ Վճռաբեկ դատարան անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

II. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումների կիրառելիությունը.

22. Այս կապակցությամբ բողոքի հեղինակը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է իետևյալ հարցը. քրեական վերաբննիշ դատարանը իրավասու՝ էր արդյոք մերժել Մականը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիմնավորումները սույն գործի նկատմամբ կիրառելն այն հիմքով, որ այդ գործի և քննության առարկա գործի փաստական հանգամանքները տարբերվում են:

23. Դամաձայն ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (նույնաբռնվանդակ իրավանորմ նախատեսված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով (...)») Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ բվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, եթե վերջինս ծանրակշիռ փաստարկների նատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

24. Մականը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում (27 սեպտեմբերի 1995թ., McCann v. The United Kingdom, գանգատ թիվ 18984/91) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ մեկ այլ անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար նյուս անձին կյանքից զրկելը պետք է լինի բացարձակ անհրաժեշտություն: Նույն վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է նաև, որ եթե չկա մեկ այլ անձին կյանքից զրկելու իրական սպառնալիք, ապա կյանքի իրավունքի նկատմամբ միջանորդությունը չի կարող իրավաչափ լինել (տես վճռի 148-րդ կետը):

25. Քրեական վերաբննիշ դատարանը սույն գործով գտել է, որ վերը նշված Մականի գործով վճիռը տվյալ գործով կիրառելի չէ, քանի որ երկու գործերի փաստական հանգամանքները տարբեր են:

26. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Դակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգանանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը եթե դրույթն իր բնույթով առավել կրնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգանանքների առավել մեծ ընդհանրություն:

27. Սույն գործով վերաբնիչ դատարանը պետք է լուծեր վերը նշված *Մականի* վճռի հիմնավորումներում բովանդակվող ընդհանրական և ոչ թե կոնկրետ դրույթների կիրառելության հարց: Ուստի սույն գործի ու *Մականի* գործի փաստական հանգանանքների նմանության աստիճանը պետք է որոշվեր այդ լույսի ներքո: Այսպես, թե՛ *Մականի* գործով և թե՛ քննության առարկա գործով պետության անունից գործող և որոշակի դեպքերում գենք կիրառելու լիազորություն ունեցող անձինք, ենթադրաբար անհրաժեշտ պաշտպանության վիճակում, հրագենի կիրառմանք կյանքից գրկել են ենթադրյալ վտանգի աղբյուր հանդիսացող անձին (անձանց): Այս պայմաններում սույն գործի և *Մականի* գործի փաստական հանգանանքների նմանությունը քանակապես և որակապես բավարար էր *Մականի* գործով վճռի հիմնավորումներում պարունակվող ընդհանրական դրույթները սույն գործի նկատմամբ կիրառելու համար:

28. Յետևաբար՝ քրեական վերաբնիչ դատարանը իրավասու չեր մերժել *Մականի* և այլոք ընդդեմ *Միացյալ Թագավորության* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիմնավորումները սույն գործի նկատմամբ կիրառելն այն հիմքով, որ այդ գործի և քննության առարկա գործի փաստական հանգանանքները տարբերվում են:

III. Ս.Այվազյանին կյանքից գրկելու փաստի առթիվ քննությունը

29. Ս.Այվազյանին կյանքից գրկելու փաստի առթիվ քննության իրավաչափության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նախ քննության է առնում հետևյալ հարցը. Ս.Այվազյանին կյանքից գրկելու փաստի առթիվ իրականացվե՞լ է արդյոք որևէ քրեադատավարական քննություն:

30. Յանաձայն ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Յետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգանանքները բացահայտելու համար»:

Յանաձայն ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի՝ «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքների առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին»:

2. Օրոշման մեջ պետք է նշվեն գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո գործի հետագա ընթացքը:

(...)»:

Յանաձայն ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրվող արարող անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վճառ: (...)»: Ըստ ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում

նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած (...) տուժողի իրավունքները և պարտականությունները»:

31. Քննության առարկա գործի նյութերի վերլուծությունը հնարավորություն չի տալիս միանշանակ պատասխան տալ այն հարցին, թե արդյոք Ս.Այվազյանին կյանքից գրկելու փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ և իրականացվել է նախնական քննություն:

Մի շարք հանգամանքներ վկայում են այն մասին, որ թիվ 55200706 քրեական գործը հարուցվել է Ս.Այվազյանի կողմից կատարված գործողությունների և ոչ թե նրան կյանքից գրկելու փաստի կապակցությամբ: Այսպես՝

ա) Թիվ 55200706 քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգործի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Երկու կամ ավելի անձանց սպանության փորձ), իսկ դա չի համապատասխանում Ս.Այվազյանին կյանքից գրկելու փաստի որևէ հնարավոր իրավաբանական որակնանը:

բ) Թիվ 55200706 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ լուծվել է նաև Ս.Այվազյանին կյանքից գրկելու փաստի կապակցությամբ քրեական գործի հարուցման հարցը. որոշվել է նրա ուղղությամբ կրակած ոստիկանների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել (տես վերը՝ 8-րդ կետ): Դրանից ուղղակիորեն հետևում է, որ Ս.Այվազյանին կյանքից գրկելու փաստի առթիվ քրեական գործ հարուցված չէր եղել:

32. Միևնույն ժամանակ որոշ հանգամանքներ վկայում են այն մասին, որ թիվ 55200706 քրեական գործը հարուցելու հիմք հանդիսացած փաստերի շրջանակը ներառել է նաև Ս.Այվազյանին կյանքից գրկելու փաստը, և այդ կապակցությամբ իրականացվել է նախնական քննություն: Այսպես՝ նշված քրեական գործը հարուցելու մասին որոշման նկարագրական մասում ամրագրված է, որ «Այվազյանը վնասազերծվել և մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Ալավերդու քաղաքային հիվանդանոց, որտեղ և մահացել է» (քրեական գործ, 1-ին էջ): Քննիչի 2006թ. ապրիլի 11-ի որոշմամբ Ս.Այվազյանի քույրը Անահիտ Այվազյանը, ճանաչվել է տուժողի իրավահաջորդ: Որոշման մեջ նշված է «... հանցագործությամբ քաղ. Սեյրան Այվազյանին պատճառվել է ֆիզիկական վնաս, մահ ...» (քրեական գործ, 163-րդ էջ):

Բացի այդ, քրեական գործով մի շարք ապացույցներ վերաբերել են Ս.Այվազյանին կյանքից գրկելու հանգամանքներին: Մասնավորապես.

ա) Ղեաքի վայրի գննության արձանագրությունը (քրեական գործ, 29-37-րդ էջեր),

բ) Ս.Այվազյանի դիակի և հագուստի գննության արձանագրությունը (քրեական գործ, 52-54-րդ էջեր),

գ) Ս.Այվազյանի դիակի դատարժշկական փորձաքննության եզրակացությունը (քրեական գործ, 273-276-րդ էջեր),

դ) Ս.Այվազյանի հագուստի դատաձգաբանական փորձաքննության եզրակացությունը (քրեական գործ, 314-317-րդ էջեր),

ե) Ս.Այվազյանի վրա կրակած և այդ դեպքին ականատես եղած ոստիկանների ցուցմունքները (Շ.Ս.Գևորգյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 46-51-րդ էջեր, Շ.Ե.Գրիգորյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 83-85-րդ էջեր, Ն.Վ.Նամինյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 89-91-րդ էջեր, Ա.Ս.Աբգարյանի ցուցմունքը՝ քրեական գործ, 92-96-րդ էջեր):

33. Այսպիսով, որոշակի հանգամանքներ վկայում են այն մասին, որ Ս.Այվազյանին կյանքից գրկելու փաստի կապակցությամբ, այնուամենայնիվ, որոշակի քրեադատավարական քննություն իրականացվել է:

34. Վճռաբեկ դատարանն այնուհետև քննության է առնում այն հարցը, թե Ս.Այվազյանին կյանքից գրկելու փաստի կապակցությամբ քննությունն արդյո՞ք պատշաճ է եղել:

35. *Ռամսահայը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործով վճռի* (15 մայիսի 2007թ., Ramsahai and others v. The Netherlands, գանգատ թիվ 52391/99) 324-րդ կետում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը սահմանել է. «Որպեսզի պայմանագրվող պետության պատասխանատվությունն առաջացնող մահվան կապակցությամբ նախաքննությունը համարվի «արդյունավետ»՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, առաջին հերթին անհրաժեշտ է, որ այդ նախաքննությունը լինի պատշաճ: Այն է նման նախաքննությունը պետք է կարողանա հանգեցնել պատասխանատու անձանց ինքնությունը պարզելուն եւ նրանց պատժին: Իշխանությունները պետք է իրականացնեն առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու համար պատահարի հետ կապակած ապացույցները: (...):»:

Ուամսահայի գործով վճռի 326-րդ կետում նշված է. « (...) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան հարցաքննվել են միայն դեպքից մի քանի օր անց և այդ ժամանակահատվածում նրանք հնարավորություն են ունեցել պատահարը թննարկել միմյանց և այլոց հետ»:

Ուամսահայի գործով վճռի 330-րդ կետում սահմանված է. «(...) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան դեպքից հետո չեն պահպել իրարից մեկուսի և չեն հարցաքննվել գրեթե երեք օր (...): Չնայած, (...) չկա որևէ ապացույց առ այն, որ նրանք գաղտնի համաձայնության են եկել միմյանց կամ Ամստերդամի ոստիկանական ուժերի իրենց գործընկերների հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության էական թերություն»:

36. *Ուամսահայի* գործն իր փաստական հանգամանքներով էապես նման է քննության առարկա գործին. Երկու գործերում էլ արարի հանցավորությունը ենթադրաբար բացառող հանգամանքներում ոստիկանները զենքի գործադրմամբ մահ են պատճառել ենթադրաբար հանցանք կատարած անձին: Երկու գործերի էական ընդհանրություն է նաև այն, որ ոստիկաններից բացի՝ զենք գործադրելու այլ անմիջական ականատեսներ չեն եղել:

Ուստի ՅՅ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) ուժով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սույն որոշման 35-րդ կետում նշված հիմնավորումները քննության առարկա գործով ենթակա են կիրառման:

37. Ս.Այվազյանի մահվան կապակցությամբ իրականացված քննության պատշաճությունը գնահատելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ գործով հարցաքննվել են դեպքին ականատես ոչ բոլոր ոստիկանները: Մասնավորապես, ոստիկանների կողմից Ս.Այվազյանի ուղղությամբ կրակելու պահին դեպքի վայրուն գտնված վեց ոստիկաններից երկուսը՝ Գ.Մելքոնյանը և Ռ.Մոսինյանը, չեն հարցաքննվել: Դա նշանակում է, որ վարույթն իրականացնող մարմինը չի իրականացրել առկա բոլոր ողջամիտ քայլերը՝ պահովելու Ս.Այվազյանին կյանքից զրկելու հետ կապված ապացույցները:

Ինչ վերաբերում է մյուս չորս ոստիկաններին, ապա Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նրանց հարցաքննության ժամկետները: Այսպես՝ վկա Յ.Գրիգորյանը հարցաքննվել է դեպքից 8 օր հետո, վկա Ն.Լանինյանը՝ 9 օր հետո, իսկ վկա Ա.Աբգարյանը՝ 10 օր հետո (տե՛ս վերը՝ 6-րդ կետը):

Այդ ընթացքում ոչինչ չի ձեռնարկվել նրանց միմյանցից մեկուսի պահելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած չկա որևէ ապացույց այն մասին, որ ոստիկանները գաղտնի համաձայնության են եկել միմյանց հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության էական թերություն:

Քննության պատշաճությունը գնահատելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն, որ բավարար չափով չի պարզվել Ս.Այվազյանի ուղղությամբ կրակոցներ արձակելու մեխանիզմը. մասնավորապես, համապատասխան գնահատականի չի արժանացել Ս.Այվազյանի վրա արձակված կրակոցների ուղղությունը: Այսպես, քննությանը ողջամիտ բացատրություն չի տրվել այն փաստին, որ Ս.Այվազյանի ուղղությամբ վեց կրակոց արձակվել է հետևից (տե՛ս վերը՝ 7-րդ կետը):

38. Նախորդ կետում շարադրվածն ինքնին բավարար է այն հետևողան համար, որ Ս.Այվազյանին կյանքից զրկելու փաստի կապակցությամբ քննությունը պատշաճ չի եղել:

Հաշվի առնելով սույն որոշման 15-20-րդ կետերում շարադրված հիմնավորումները և դեկավարվելով Յայաստանի Յանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Յայաստանի Յանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 408-րդ, 419-րդ, 421-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Բողոքը մերժել: Թիվ 55200706 քրեական գործով ՀՀ վերաբենիչ քրեական դատարանի 2007թվականի հոկտեմբերի 23-ի որոշումը բողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

նախագահող՝	Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
դատավորներ՝	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
	Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆ
	Ս.ՕՅԱՆՅԱՆ
	Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
	Վ.ԱՐԵԼՅԱՆ
	Ս.ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԾՈԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ Քրեական և գինվորական գործերով վերաքննիչ
դատարանի որոշումով
Գործ ՔԳՀ N-104/06
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Ա. Հովհաննիսյան

Գործ ՎԲ- 56/07

Ո Ռ Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

30 մարտի 2007 թվական

ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
դատավորներ

Տ. ՍԱՐԱԿՅԱՆԻ
Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Յ. ԱՍԱՏՐՅԱՆԻ
Մ. ՄԻՄՈՆՅԱՆԻ
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս. ՕՐԱՆՅԱՆԻ

քարտուղար

Ք. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

մասնակցությամբ բողոք բերող անձ

Է. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ

Դրույց դատական նիստում, քննության առնելով Եմնա Կիրակոսյանի վճռաբեկ բողոքը
ՀՀ Քրեական և գինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 22-ի
որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատճեթյունը.

Ենմա Կիրակոսյանի հայտարարության հիման վրա ոստիկանության Արաբկիրի բաժնում, նյութերի նախապատրաստման արդյունքում 2006 թվականի հունիսի 23-ին որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ ղեկավարվելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 37 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 37 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով։ Նշված որոշման դեմ ենմա Կիրակոսյանը 14.07.2006թ. բողոք է ներկայացրել Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան։ Առաջին ատյանի դատարանը 2006 թվականի օգոստոսի 04-ի որոշմամբ բողոքը մերժել է։

Առաջին ատյանի դատարանի որոշումը է Կիրակոսյանը բողոքարկել է ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաբննիչ դատարան։ Վերաբննիչ դատարանը 2006 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ բողոքը բողել է առանց քննության, նկատի ունենալով, որ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի պահանջի համաձայն հետաքրնության աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիկ հետախուզական գործողություններ իրականացնող մամինների որոշումների և գործողությունների դեմ բողոքներ կարող են ներկայացվել դատարան, ինչը և արվել է բողոքարերի կողմից, և ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը բողոքի հիման վրա կայացրած որոշումների հետագա բողոքարկում չի նախատեսում։

Ե.Կիրակոսյանը Վերաբննիչ դատարանի որոշման դեմ 28.08.2006թ. Վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 13.10.2006թ. որոշմամբ վերադարձվել է։ Ե.Կիրակոսյանը 22.02.2007թ. կրկին դիմել է Վճռաբեկ դատարան։

Վճռաբեկ բողոքը 2007 թվականի մարտի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ։

2. Գործի փաստական հանգամանքները.

Ենմա Կիրակոսյանը հայտարարություն է տվել ոստիկանության Արաբկիրի բաժին այն մասին, որ 27.04.2006թ. ժամը 16.00-ի սահմաններում, Երևան քաղաքի Կովկասյան փողոցի 78 տան բակում իր հարևաններ Օնիկ և Դուստրիկ Գրիգորյանները հարվածներ են հասցրել իր դեմքի և մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ։ Ոստիկանության Արաբկիրի բաժին կողմից նշանակվել են դատաքնչական փորձաքննություններ, որոնցով հաստատվել է, որ Ե.Կիրակոսյանը ստացել է վերին շրունքի արյունագեղում, որը առողջության թերթ վնասի հատկանիշներ չի պարունակում։

Ենմա Կիրակոսյանին ծեծի ենթարկելու դեպքի առիվ նյութերի նախապատրաստման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից հիմնավորվել է Օնիկ Գրիգորյանի կողմից Ե.Կիրակոսյանին դիտավորությամբ հարվածներ հասցնելու հանգամանքը, սակայն նկատի ունենալով, որ վերջինիս գործողություններով էական վնաս չի պատճառվել, ենթելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 37 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 37 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթներից, 23.06.2006թ. որոշում է կայացվել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին։

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով։

Ըստ բողոքի, առաջին ատյանի դատարանի որոշման դեմ 15-օրյա ժամկետում վերաբննիչ բողոք է ներկայացրել, որը Վերաբննիչ դատարանի կողմից բողնվել է առանց քննության՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը վերաբննիչ

բողոքարկում չի նախատեսում հիմնավորմամբ, որով թույլ են տրվել քրեական և դատավարական օրենքների խախտումներ:

Գտնելով, որ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու համար, նաև ստորադաս դատարանների կողմից սույն գործով թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի խախտումները կարող են առաջացնել ծանր հետևանքներ, Ենա Կիրակոսյանը խնդրում է բեկանել և ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 22.08.2006թ. որոշումը և գործը վերադարձնել վերաքննիչ դատարան՝ այլ կազմով քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

Դիմող Ենա Կիրակոսյանը, բողոքարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը, հիմնվել է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի վրա: Դամաձայն այդ հոդվածի 1-ին մասի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չփակելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»: Միևնույն ժամանակ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը չի ամրագրում առաջին ատյանի դատարանի որոշումը վերադաս դատարան բողոքարկելու հնարավորություն:

Այնուհետեւ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին նախնական քննություն իրականացնող մարմնի որոշումների դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածով, այլ նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 103 հոդվածով, 384 հոդվածով և այլն:

Մասնավորապես, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 103 հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ «Քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները և որոշումները կարող են բողոքարկել համապատասխան դատախազին, դատախազի որոշումները և գործողությունները՝ վերադաս դատախազին, դատարանին՝ վերադաս դատարան»:

Ըստ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 384 հոդվածի՝ «Սույն գլխի կանոններով («Գլուխ 46. Վերաքննիչ բողոք») բողոքարկման ենթակա են միայն դատարանի վերջնական որոշումները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»: Իսկ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 6 հոդվածի 10-րդ կետը «վերջնական որոշում» հասկացությունը սահմանում է որպես «քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության»:

Այսպիսով, վերաքննիչ բողոքարկման կանոններով վերանայման ենթակա որոշումը առնվազն պետք է համապատասխանի հետևյալ երկու չափանիշներին՝ կայացված լինի առաջին

ատյանի դատարանի կողմից, բացառի գործով վարույթը շարունակելը կամ գործը լուծելը ըստ եռթյան:

Ներկայացված նյութերից երևում է, որ ԵԿիրակոսյանը Վերաքննիչ դատարան է բողոքարկել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազության կողմից նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը: Բողոքարկված որոշումը բավարարում է վերը նշված երկու չափանիշներին էլ. այն կայացվել է առաջին ատյանի դատարանի կողմից և բացառում է գործով վարույթը շարունակելը:

Բացի այդ, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ « Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով: Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն »: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածը Վերաքննիչ դատարանի կողմից բողոքը բնելու հնարավորությունը չի բացառում:

Դետևաբար ԵԿիրակոսյանը իրավունք ուներ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը որևէ իրավական հիմք չուներ նրա վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլուխ կանոնները, ինչպես նաև այդ գլուխ հետ օրգանապես կապված 47-րդ գլուխ որոշ կանոններ չկիրառելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորության, վերաքննիչ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու իրավաչափության հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածով, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Եմնա Կիրակոսյանի բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի օգոստոսի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նոյն դատարան ըստ եռթյան քննելու համար:

Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող
Դատավորներ՝

S.ԱԱՐԱԿՅԱՆ
Դ.ԱՎԵՏԻՄՅԱՆ
Յ.ԱՍԱՏՐՅԱՆ
Մ.ՄԻՍՈՆՅԱՆ
Յ.ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ս.ՕՉԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի
ԵԿՂ/0111/11/08 որոշում
Նախագահող դատավոր՝ Ս. Համբարձումյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ք. ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Յ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս. ՕՉԱՆՅԱՆԻ
Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Լ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ

ք. Երևանում

29 հունիսի 2009 թվական

Դրոնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2009 թվականի մայիսի 13-ի որոշման դեմ «ԷՄԱԿ-Զորբորդ» ավտոտեխնապասարկում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչների բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի փետրվարի 25-ին «ԷՄԱԿ-Զորբորդ» ավտոտեխնապասարկում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ՀՀ ոստիկանություն դիմում է ներկայացրել այն մասին, որ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի

պետական կոմիտեի Շենգավիթի տարածքային ստորաբաժանման կողմից ՀՀ տնտեսական դատարանի 2007 թվականի մայիսի 31-ի վճռի հիման վրա իր սեփականության իրավունքի պետական գրանցում չի կատարվել:

Դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ ոստիկանության Շենգավիթի քննչական բաժնի քննիչ Կ.Շառոյանի 2008 թվականի մարտի 25-ի որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման պաշտոնատար անձ Եղուարդ Ներսեսի Կարապետյանի նկատմամբ հարուցվել է թիվ 11105608 քրեական գործը:

2. 2008 թվականի մայիսի 16-ին կայացվել է հարուցված թիվ 11105608 քրեական գործի վարույթը կարծելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը:

3. 2008 թվականի նոյեմբերի 28-ին «ԷՍԱԿ-Զորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ-ի կողմից նշված որոշումը բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին:

2008 թվականի դեկտեմբերի 12-ին Վերոնշյալ բողոքին ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Աշրաֆյանի կողմից պատասխան է ներկայացվել գրությամբ, որով բողոքարերին տեղեկացվել է, որ քննիչի կողմից կայացված որոշումն օրինական է, հիմնավորված, և այն վերացնելու հիմքեր չկան:

4. 2008 թվականի դեկտեմբերի 22-ին «ԷՍԱԿ-Զորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ-ն դատախազի վերոնշյալ գրությունը բողոքարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել այն: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում բողոքարերը լրացրել են իր բողոքը՝ խնդրելով վերացնել նաև քննիչի քրեական գործով վարույթը կարծելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2008 թվականի մայիսի 16-ի որոշումը և քննիչին հարկադրել վերսկսել տվյալ գործով վարույթը:

5. 2009 թվականի ապրիլի 15-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը բավարարել է բողոքը. որոշում է կայացրել քննիչի 2008 թվականի մայիսի 16-ի որոշումը և դատախազի 2008 թվականի դեկտեմբերի 18-ի գրությունը վերացնելու մասին և քննիչին պարտավորեցրել է վերսկսել թիվ 11105608 քրեական գործով վարույթը:

6. 2009 թվականի ապրիլի 23-ին ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Լ. Թադևոսյանը ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 15-ի որոշման դեմ վերաբերելի բողոք է բերել:

2009 թվականի մայիսի 13-ին ՀՀ վերաբնիչ քրեական դատարանը բավարարել է դատախազի բողոքը. բեկանել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 15-ի որոշումը, իսկ դատախազի 2008 թվականի դեկտեմբերի 12-ի գրության դեմ «ԷՍԱԿ-Զորրորդ» ՍՊԸ-ի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի բողոքը մերժել է՝ վերադասության կարգով բողոքարկման կարգը պահպանված չլինելու հիմքով:

7. 2009 թվականի մայիսի 25-ին «ԷՍԱԿ-Զորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ ներկայացուցիչները ՀՀ վերաբնիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել, որը 2009 թվականի հունիսի 16-ին ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ընդունվել է վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է եական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական համգանամբները.

8. 2006 թվականի օգոստոսի 1-ին Երևանի քաղաքապետի թիվ 1251-4 որոշմամբ Երևան քաղաքի Արին-Բերդի 1 նրբ., թիվ 1 հասցեում գտնվող շենք-շինությունների գբաղեցրած և

սպասարկման համար անհրաժեշտ 3.440.0 քմ մակերեսով հողանասը սեփականության իրավունքով փոխանցվել է «ԷՍԱԿ-Չորրորդ» ավտոտեխնապասարկում ՍՊԸ-ին: 2006 թվականի օգոստոսի 11-ին Երևան քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրվել է նաև Հ 2274-2006 հողանասի գլխավոր հատակագիծը: Քաղաքապետարանի այս որոշման հիման վրա «ԷՍԱԿ-Չորրորդ» ավտոտեխնապասարկում ՍՊԸ-ն դիմում է ներկայացրել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանում պետական գրանցում կատարելու համար, սակայն այն 2006 թվականի հոկտեմբերի 11-ին մերժվել է:

9. 2007 թվականի փետրվարի 27-ին «ԷՍԱԿ-Չորրորդ» ավտոտեխնապասարկում ՍՊԸ-ն դիմում է ներկայացրել ՀՀ տնտեսական դատարան ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման գործողություններն անվավեր ճանաչելու և պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջներով:

ՀՀ տնտեսական դատարանը 2007 թվականի մայիսի 31-ին վճիռ է կայացրել, որով բավարարվել է այս դիմումը. ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 2006 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 3373 ակտու անվավեր է ճանաչվել, և վերջինս պարտավորեցվել է գրանցել Երևան քաղաքի Արին-Բերդի 1 հոր. թիվ 1 հասցեում գտնվող 3.440.0 քմ. հողանասի և անշարժ գույքի նկատմամբ «ԷՍԱԿ-Չորրորդ» ավտոտեխնապասարկում ՍՊԸ-ի իրավունքը:

10. 2007 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ տնտեսական դատարանի կողմից տրվել է կատարողական թերոր, որը 2007 թվականի հոկտեմբերի 10-ին ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ժառայություն հարկադիր կատարման:

«ԷՍԱԿ-Չորրորդ» ավտոտեխնապասարկում ՍՊԸ ներկայացուցիչը դիմում է ներկայացրել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթի տարածքային ստորաբաժանում ՀՀ տնտեսական դատարանի 2007 թվականի մայիսի 31-ի վճիռ հիման վրա իր սեփականության իրավունքի պետական գրանցման համար, սակայն պետական գրանցում այդպես էլ չի կատարվել, ինչից հետո վերջիններս դիմել են ՀՀ ոստիկանություն:

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

11. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաբնիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 13-ի որոշումը խախտում է ՀՀ Սահմանադրության 31-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին լրացուցիչ արձանագրության 1-ին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածներով երաշխավորված իր սեփականության իրավունքը, ինչպես նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով երաշխավորված իր մյուս իրավունքները, որովհետև ՀՀ քրեական վերաբնիչ դատարանը, բավարարելով ՀՀ գլխավոր դատախազության վերաբնիչ բողոքը, իրեն գրկել է իր սեփականությունն ազատ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունից:

12. Բողոքաբերը գտնում է, որ ՀՀ վերաբնիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածները, քանի որ հաշվի չի առել, որ սույն գործով բացակայել են վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը:

13. Ըստ բողոքաբերի, ՀՀ քրեական վերաբնիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածները, քանի որ հաշվի

առել այն հանգամանքը, որ իրավասու պետական մարմինների գործողությունների արդյունքում ինքը զրկվել է իր իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

14. Բողոքաբերը նշում է, որ ՀՀ քրեական վերաբննիչ դատարանը չի կիրառել և սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ և 290-րդ հոդվածները, քանի որ «ԷՄԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ-ն, քննիչի որոշումը՝ դատախազին, իսկ վերջինիս գրությունն էլ դատարան բողոքարկելով, պահպանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ և 290-րդ հոդվածների պահանջները:

15. Ըստ բողոքաբերի, ՀՀ քրեական վերաբննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանզի սույն գործով չի կիրառել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն նախադեպային որոշումները, որոնք իր կողմից վկայակոչվել են ՀՀ քրեական վերաբննիչ դատարան ներկայացրած առարկություններում:

Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ քրեական վերաբննիչ դատարանի 2009 թվականի մայիսի 13-ի որոշումը, օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանն իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի ապրիլի 15-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացվել է երկու իրավական հարց, որոնցից առաջինը վերաբերում է նրան, թե Երևանի կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանն իրավասության առնել դատախազի գրության դեմ ներկայացված բողոքը:

17. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկող դատավարական ակտերի վերաբերյալ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է Մ.Ավետիսյանի վերաբերյալ 2009 թվականի հունիսի 29-ի ԵԿԴ/0019/11/09 որոշման 13-րդ կետում, որի համաձայն՝ « (...) Եթե դատախազին ներկայացված բողոքի կապակցությամբ նա որոշում չի կայացրել, այլ բողոքաբերին պատասխանել է ցանկացած այլ եղանակով, որը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ապա, եթե չեն անցել ներկայացված բողոքի կապակցությամբ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետները, այդ պատասխանների նկատմամբ չեն կարող կիրառվել ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի կանոններն ընդհանրապես, ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները մասնավորապես: Այլ կերպ ասած, եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանուր իրավասության դատարան պետք է բողոքարկի դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարագոր է անգործության»:

Սույն գործի նյութերից երևում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ բավարարել է դատախազի գրության դեմ բերված բողոքը (տես սույն որոշման 5-րդ կետը):

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը սույն գործով իրավասու չեր ըստ եռթյան քննության առնել դատախազի գրության դեմ ներկայացված բողոքը:

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է ՀՀ գլխավոր դատախազին ուղղված բողոքը, եթե այն կատարման է հանձնվել ՀՀ գլխավոր դատախազության ստորաբաժանման դեկանին, նախքան դատական կարգով բողոքարկելը ենթակա՝ է արդյոք կրկին բողոքարկման վերադատության կարգով:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ դատախազը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրան ենթակա դատախազներն են, նրանց տեղակալները և օգնականները:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Գլխավոր դատախազն իրականացնում է դատախազության ղեկավարումը»:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գլխավոր դատախազը վերադաս է բոլոր դատախազների նկատմամբ»:

Վերոշրադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված բողոքը վերադասության կարգով այլևս չի կարող բողոքարկվել, քանի որ ՀՀ գլխավոր դատախազին վերադաս դատախազ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ բողոքաբերը քննիչի որոշումը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազին, ում անունից հանդես է եկել ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Աշրաֆյանը (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

Այսինքն սույն գործով Ա.Աշրաֆյանը գործել է ՀՀ գլխավոր դատախազի կարգադրությամբ և նրա անունից, ուստի տվյալ դեպքում Ա.Աշրաֆյանի գրությունը իրավական առումով հավասարագոր է եղել ՀՀ գլխավոր դատախազի գրությանը: Այլ կերպ ասած սույն գործով բողոքաբերն արդեն բողոք ներկայացրել է ՀՀ գլխավոր դատախազին և սպառել է իր իրավունքների պաշտպանության այդ միջոցը՝ անկախ այն հանգամանքից, թե ով է հանդես եկել որպես ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարության կատարող:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված բողոքը, որը կատարման է հանձնվել ՀՀ գլխավոր դատախազության ստորաբաժանման ղեկավարին, ենթակա չէ կրկին բողոքարկման վերադասության կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, մասնավորապես՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը, ինչը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը:


ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: «ԷՄԱԿ-Չորրորդ» ավտոտեխսպասարկում ՍՊԸ-ի ներկայացուցիչների բողոքով երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի ապրիլի 15-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 13-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝
Դատավորներ՝

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ք.ԱՍԱՏՐՅԱՆ
Ե.ՂԱՆԻԵԼՅԱՆ
Հ.ՊՈՒԿԱՍՅԱՆ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
Ս.ՕՐԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Վճռաբեկ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԿԴ/0019/11/09
Նախագահող դատավոր՝ Ե. Դարբինյան

ԵԿԴ/0019/11/09

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս. ՕՉԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

29 հունիսի 2009 թվական

ք. Երևան

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական
դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի որոշման դեմ Մյասնիկ Հարութիկի Ավետիսյանի
բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2008 թվականի հոկտեմբերի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 2-րդ մասի և 38-314-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62216908 քրեական գործը:

2. 2008 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով քննիչ Ա.Մինասյանի որոշմամբ թիվ 62216908 քրեական գործի վարույթը կարճվել է, և Ա.Ավետիսյանի, Ա.Սաղաթելյանի ու Զ.Զարոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Վերը նշված որոշման դեմ 2009 թվականի հունվարի 19-ին Ա.Ավետիսյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով այն վերացնել:

2009 թվականի հունվարի 30-ին ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Զ.Թադևսյանի գորությամբ Ա.Ավետիսյանի բողոքը մերժվել է:

3. 2009 թվականի մարտի 4-ին Ա.Ավետիսյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ պահանջելով վերացնել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2008 թվականի դեկտեմբերի 29-ի որոշումը:

2009 թվականի մարտի 16-ի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը մերժել է Ա.Ավետիսյանի կողմից ներկայացված բողոքը:

4. Ա.Ավետիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի մայիսի 8-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

5. Վճռաբեկ բողոք է բերել Ա.Ավետիսյանը:

2009 թվականի հունիսի 16-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») բողոքն ընդունելու է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

6. 2009 թվականի հունվարի 30-ին ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Զ.Թադևսյանի գորությամբ Ա.Ավետիսյանի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ մինչ 2008 թվականի դեկտեմբերի 29-ի որոշման կայացումը քրեական գործը քննող քննիչի կողմից Ա.Ավետիսյանին պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, այն է՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով գործի վարույթի կարծում և քրեական հետապնդման դադարեցում չի բույատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը, սակայն Ա.Ավետիսյանը կարճման դեմ որևէ առարկություն չի ներկայացրել:

7. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մարտի 16-ի որոշմամբ Ա.Ավետիսյանի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ դատախազի որոշման պատճենն ստանալուց հետո 7 օրվա ընթացքում այն չի բողոքարկվել, հետևաբար չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը: Բացի այդ, Ա.Ավետիսյանը հնարավորություն է ունեցել մինչև քննիչի կողմից վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը առարկել դրա դեմ:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը փոփոխել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշման պատճառաբանությունները՝ արձանագրելով, որ բողոքաբերի կողմից պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված ժամկետները, սակայն քրեական գործի վարույթը

կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն ըստ էության օրինական է, և այն վերացնելու հիմքեր չկան:

Վճռաբեկ բողոքի հիմք, հիմնավորումները և պահանջ

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտնում է, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ ՀՀ վերաբննիչ քրեական դատարանի որոշումները կայացվել են դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, թույլ է տրվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Նա նշում է, որ դատարանը չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը, սխալ է կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածը և խախտել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատական քննության իր իրավունքը՝ անտեսելով դատական նիստը հետաձգելու մասին ներկայացված միջնորդությունը և դատական քննությունն անցկացնելով իր բացակայությամբ:

Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածը վերաբերում է դատախազի կողմից օրենքով սահմանված կարգով կայացրած որոշումներին, մինչդեռ այս պարագայում դատախազը իրեն պատասխանել է գորությամբ և իր բողոքի կապակցությամբ որոշում չի կայացրել:

Բողոքաբերը նշում է նաև, որ իրեն գորությամբ պատասխանելով՝ դատախազը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի պահանջները:

10. Բողոքաբերը նշել է նաև, որ դատաքննությունը հետաձգելու մասին 2009 թվականի մարտի 16-ին հեռախոսով արված իր միջնորդությունը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը անհիմն կերպով չի բավարարել՝ չնայած ինքը տեղյակ է պահել, որ այդ օրը տեղացած ձյան առատության պատճառով զրկված է եղել ժամանակին Երևան հասնելու հնարավորությունից:

Յիմք ընդունելով իր կողմից նշված հիմքերը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաբննիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանը, ելնելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառույթից, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ սույն գործի նյութերի վերանայման ընթացքում թույլ են տրվել դատավարական խախտումներ, անհրաժեշտ է համարուն սույն գործով արտահայտել մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ համանան գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

I. Հետագա դատական վերահսկողության առարկայի շրջանակները

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. քննիչի կողմից քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման վերանայման արդյունքում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից ի՞նչ դատավարական ակտ պետք է կայացվի, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով այդ ակտի նկատմամբ դատական բողոքարկման ի՞նչ ընթացակարգ է ենթակա կիրառման:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին ըննիշը կայացնում է պատճառաբանված որոշում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի,

մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների (...) կողմից (...) կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

2. Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

(...)

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

(...)»:

14.Վերոշարադրյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկման ենթակա են բացառապես քրեական հետապնդման մարմինների դատավարական գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատավարական գործողությունները գործով վարույթի ընթացքում սույն օրենսգրքով նախատեսված գործողություններն են:

Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ որոշումը քրեական գործով դատարանի որոշումներն են, բացի դատավճռից, ինչպես նաև մինչդատական վարույթի ընթացքում հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կայացրած որոշումներն են:

15. Ինչպես երևում է վերոշարադրյալ հոդվածներից, քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից ներկայացված գործյունները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով որոշում չեն հանդիսանում և հետևաբար չեն կարող առաջացնել նույն դատավարական հետևանքները, ինչ որոշումները:

Սույն գործի նյութերից երևում է, որ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումը մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետի պահպանմամբ բողոքարկվել է ՀՀ գլխավոր դատախազին, սակայն այլ բողոքի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազը Զ.Թաղենոսյանի կողմից որոշում չի կայացվել (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

16. Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս եզրահանգել, որ եթե դատախազին ներկայացված բողոքի կապակցությամբ նա որոշում չի կայացել, այլ բողոքարերին պատասխանել է ցանկացած այլ եղանակով, որը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ապա, եթե չեն անցել ներկայացված բողոքի

կապակցությամբ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետները, այդ պատասխանների նկատմամբ չեն կարող կիրառվել ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոնները ընդհանրապես, ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնները մասնավորապես: Այլ կերպ ասած, եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանրության դատարան կարող է բողոքարկվել դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարագոր է անգործության:

17. Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Զ.Թադևոսյանի 2009 թվականի հունվարի 30-ի գործումը որոշման փոխարեն չէր կարող Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանրության դատարանի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առարկա հանդիսանալ:

II. Դատական վերահսկողության կարգով դատական նիստին դիմողի մասնակցությունը

18. Սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացվել է նաև այն հարցը, թե առաջին ատյանի դատարանում բողոքաբերի բացակայությամբ իրականացված դատարնությամբ խախտվել են արդյոք նրա դատավարական իրավունքները, այն պարագայում, եթե գործով վարույթը կարճվել է վաղեմության ժամկետը լրանալու հիմքով:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը (...):»:

Տվյալ դեպքում գործի նյութերով հաստատված է, որ դիմող Մ.Ավետիսյանը դատական նիստին իր մասնակցությունը խոչընդոտող հանգամանքների՝ եղանակային վատ պայմանների մասին նախապես հայտնել է դատարանին, սակայն գործը քննող դատավորի կողմից այն հաշվի չի առնվել (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ելնելով սույն գործի առանձնահատկություններից, մասնավորապես՝ դիմողն իր բողոքում նշել է, որ մինչ գործի վարույթի կարծումը ինքը որպես մեղադրյալ չի հարցաքննվել և որ գրկած է եղել վաղեմության ժամկետների կիրաօնման վերաբերյալ իր դիմքորոշումը հայտնելու հնարավորությունից, դատավորը պետք է պարտադիր համարեր դիմողի ներկայությունը դատական նիստին:

Վճռաբեկ դատարանի այս դիմքորոշման հիմքում ընկած է այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարծում և քրեական հետապնդման դադարեցում չի բույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:

Վերոշարադրյալ հոդվածի վերլուծությունից երևում է, որ, չժխտելով, որ անձի կատարած արարքն իր մեջ պարունակում է հանցակազմի հատկանիշներ, վարույթն իրականացնող մարմինը կարող է նրան ազատել քրեական պատասխանատվությունից՝ հիմք ընդունելով այն, որ կատարված արարքը կորցրել է իր վտանգավորության աստիճանը: ՀՀ քրեադատավարական օրենքն այս հիմքով անձին քրեական պատասխանատվությունից

ազատելու պարտադիր նախապայման է դիտում նրա համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով:

Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով սույն քրեական գործի վարույթը կարծելու և Ս.Ավետիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելով՝ քննիչը դուրս է եկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի կիրառման թույլատրելի շրջանակներից, քանի որ գործի նյութերից երևում է, որ մեղադրյալը՝ Ս.Ավետիսյանը, ոչ իր ցուցմունքներում, ոչ էլ գրավոր այլ եղանակով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական գործի կարճման կապակցությամբ իր համաձայնությունը չի տվել:

16. Ուստի, իհմք ընդունելով վերոշարադրյալ դատողությունները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված բողոքը ենթակա է բավարարման, և սույն գործը պետք է ուղարկվի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Ելելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մյասնիկ Հարութիկի Ավետիսյանի բողոքի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի մարտի 16-ի և ՀՀ վերաբենիչ քրեական դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում իրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Դատավորներ՝	Յ.ԱՍԱՏՐՅԱՆ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ
	Յ.ՂՈՒԿԱՍՅԱՆ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
	Ս.ՕՅԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Վճռաբեկ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի
ԵԿՂ/0031/11/08 որոշում
Նախագահող դատավոր՝ Յ.Ասատրյան

ԵԿՂ/0031/11/08

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
Վ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՐԱՆՅԱՆԻ
Ա.ՄԿՐՏՈՒՅՑՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

2008 թվականի հուլիսի 25-ին

ք. Երևանում

դրոնբաց դատական նիստում, քննելով Վալերի Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատճենությունը.

1. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազ Մ.Քաղաքանի 2008 թվականի փետրվարի 29-ի որոշմանը հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ Վալերի Գրիգորյանի կողմից կեղծ փաստաթուղթ օգտագործելու փաստի առթիվ:

2. Քրեական գործ հարուցելու մասին որոշումը Վ.Գրիգորյանը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազին: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 2008 թվականի մարտի 21-ի որոշմանը բողոքը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. 2008 թվականի մարտի 31-ին Վ.Գրիգորյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով

պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազությանը վերացնելու քրեական գործ հարուցելու մասին որոշումը:

4. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Վ.Գրիգորյանի բողոքը մերժել է:

5. Վ.Գրիգորյանը վերաքննիչ բողոքը է ներկայացրել՝ խնդրելով բեկանել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշումը և բավարարել իր բողոքը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի մայիսի 6-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ դատարանի որոշումը բռնելով օրինական ուժի մեջ:

6. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով Վ.Գրիգորյանը բերել է վճռաբեկ բողոք:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ուղարկել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով բողոքը մերժել:

Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, 2008 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի ըննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

7. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Վալերի Գրիգորյանի բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «որոշումն օրինական է, դիմողի իրավունքներն ու օրինական շահերը չեն խախտվել, որոշումը վերացնելու հիմքերը չկան»:

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի մայիսի 6-ի որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի ապրիլի 14-ի որոշումը բռնել է օրինական ուժի մեջ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա պատճառաբանելով սխալ պատճառաբանված, սակայն գործն ըստ էռթյան ճիշտ լուծող դատական ակտը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա չի կարող լինել, քանի որ այդպիսի որոշման՝ դատական կարգով բողոքարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ հոդվածով նախատեսված չէ:

Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքը բերած անձը գտնում է, որ որոշումը կայացվել է ՀՀ Սահմանադրության և դատավարական իրավունքի խախտումներով. վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնարանությունը հակասում է օրենքի տարին և կամայական է. քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական կարգով բողոքարկումն իրավաչափ է, քանի որ այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա հանդիսանում է դատական վերահսկողության առարկա. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասը մեկնարանելով և կիրառելով որպես վերաքննիչ բողոքը մերժելու հիմք՝ վերաքննիչ դատարանը անհիմն կերպով սահմանափակել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իրավունքը:

Բողոքը բերած անձը գտնում է նաև, որ քրեական գործը հարուցվել է առանց օրինական առիթի և բավարար հիմքերի:

10. Վճռաբեկ բողոքը բերած անձը պահանջում է վերանայել վերաքննիչ դատարանի դատական ակտը և դատախազին պարտավորեցնել վերացնելու իր նկատմամբ կայացված՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. ՔՅԱՆԵԼՈՎ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՆՉՎԱԾ ՀԻՄՔԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԸ ԳՄՆՈՒՄ Է, ՈՐ ԲՈՂՈՔԸ ՊԵՏՈՒՅ Է ՆԵՐԺԵԼ ԻԵՏԼԿԱԼ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ.

ՀՅ ՎԵՐԱԲԵՆԻՑ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ, ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒցԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ՝ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ, ԻՐ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԻՄՆԱՎՈՐԵԼ Է ԻԵՏԼԿԱԼ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ. «ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱԿԱՏՈՄԱՄԲ ԴԱՏՈՒԱԿԱՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՏՐՎԱԾ ԵՆ ՀՅ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏՈՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 39-ՐԴ ԳԼԽՈՒՄ, ՈՐԻ ՄԵՋ Է ՆԵՐՋԱՌՎԱԾ ՆԱև ՕՐԵՆՍԳՐԻ 290-ՐԴ ՀԻԴՎԱԾԸ»:

ՆՉՎԱԾ ԳԼԽԻ 278-ՐԴ ՀԻԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է, ՈՐ «ԴԱՏԱՐԱՆԸ, ՍՊԼՅԱ ՕՐԵՆՍԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՎՔԵՐՈՒՄ և ԿԱՐԳՈՎ, ՔՆՆՈՒՄ Է ԻԵՏՈՎԱԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՔՆՆԻՀՅԻ, ԴԱՏՈՒԱԽԱԳԻ և ՕՎԵՐԱՏԻՎ-ԻԵՏՈՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄՆԵՐՈՒՆ ԻՐԱՎԱԿԱՆԱԳՑՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔԸ»:

ՕՐԵՆՖԻ ԲՐՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԻց ԻԵՏԼՈՒՄ Է, ՈՐ ՄԻՆՉԴԱՏՈՎԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԻԵՏՈՎԱԲՆՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆԱԳՑՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՇ ԲՐԼՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԱՐՈԴ ԵՆ ԲՈՂՈՔԱՐԿՎԵԼ ԴԱՏԱՐԱՆ: ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ցԱՆԿԸ ՕՐԵՆՍԴԻՐԸ ՆԱԽԱՏԵՏԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏՈՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ ՄԻ շԱՐՔ ՀԻԴՎԱԾՆԵՐՈՒՄ, ԱՅդ ԹՎՈՒՄ ՆԱև 290-ՐԴ ՀԻԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍՈՒՄ, ՈՐԻ ՀԱՄԱԴԱՅՆ՝ ԴԱՏԱՐԱՆ ԿԱՐՈԴ ԵՆ ԲՈՂՈՔԱՐԿՎԵԼ ՀԱՄԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱԴՐՈՒՄՆԵԼՈՒ, ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒցԵԼՈՒ ԻԵՏՈՎԱԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ, ՔՆՆԻՀՅԻ և ԴԱՏՈՒԱԽԱԳԻ ԻՐԱՎԱՐՎԵԼԸ, ԻՆՉՎԵՍ ՆԱև ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԼԿԱՏԵՑՆԵԼՈՒ, ԿԱՐԾԵԼՈՒ ԼԿԱՄ ՔՐԵԱԿԱՆ ԻԵՏՈՎԱԲՆՈՒՄԸ ԴԱՏՈՎԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ՝ ԴԱՐՁՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՏԵՎԱԾ ԴԵՎՔԵՐՈՒՄ: ԽԱԿ ՄՈՒՅՆ ՀԻԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՕՐԵՆՍԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՏԵՎԱԾ ԴԵՎՔԵՐՈՒՄ: ԽԱԿ ՄՈՒՅՆ ՀԻԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՕՐԵՆՍԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՏԵՎԱԾ ԴԵՎՔԵՐՈՒՄ: ԽԱԿ ՄՈՒՅՆ ՀԻԴՎԱԾԸ 182-ՐԴ ՀԻԴՎԱԾԸ ՈՒՆԵցող ԱՆԴԱՆՑ ՀՐՋԱՆԱԿԸ, և ԱՌՋԱԴԱՐՈՒՄ ՊՎԱՅՄԱՆ՝ ՈՐ ՆՐԱՆՑ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՊԵՏՈՒՅ Է ԲԱՎԱՐԱՐՎԱԾ ՀՅԻՆԵՆ ԴԱՏՈՒԱԽԱԳԻ ԿՈՂՄԻՑ»:

Այստեղից ԻԵՏԼՈՒՄ Է, ՈՐ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԴԱՏՈՎԱԿԱՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌՋԱԿԱ ՀԻ ԿԱՐՈԴ ԼԻՆԵԼ, ԲԱՆԻ ՈՐ ԴԱՏՈՎԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՅԴԱՓԻՍԻ ՈՐՈՇՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ՈՇ ՀՅ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏՈՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 290-ՐԴ ՀԻԴՎԱԾԸ, ՈՇ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆՈՂ 182-ՐԴ ՀԻԴՎԱԾԸ և ՈՇ ԷԼ ՈՐԱԿ ԱՅԼ ՀԻԴՎԱԾԸ ՆԱԽԱՏԵՏԵՎԱԾ ՀԻ»:

12. ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԸ ԳՄՆՈՒՄ Է, ՈՐ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԴԱՏՈՎԱԿԱՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՐՈՏԻՑ ԲԱԳՈՒԵԼԸ ՄԻԱՅՆ ԱՅՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆԲ, ՈՐ ՀՅ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏՈՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ ՈՐԱԿ ՀԻԴՎԱԾԸ ԱՆԴԱՆՑ ՀՐՋԱՆԱԿԸ ՀԱՄԱԴԱՅՆ՝ ՈՐ ԱՅՆ ԿԱՐՈԴ Է ԲՈՂՈՔԱՐԿՎԵԼ ԴԱՏՈՎԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ, ԹԵՐԻ Է:

ՀՅ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏՈՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 290-ՐԴ ՀԻԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻց ԻԵՏԼՈՒՄ Է, ՈՐ ԴԱՏՈՎԱԿԱՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌՋԱԿԱ ԿԱՐՈԴ ԵՆ ԼԻՆԵԼ ԻԵՏՈՎԱԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՔՆՆԻՀՅԻ, ԴԱՏՈՒԱԽԱԳԻ և ՕՎԵՐԱՏԻՎ-ԻԵՏՈՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄՆԵՐՈՒՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ: ԱՆԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ԽԱՅՄՈՒՄ ԵՆ ԱՆԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ: ԱՆԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ԽԱՅՄՈՒՄ ԻԵՏՈՎԱԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՔՆՆԻՀՅԻ, ԴԱՏՈՒԱԽԱԳԻ և ՕՎԵՐԱՏԻՎ-ԻԵՏՈՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄՆԵՐՈՒՆ ԻՐԱՎԱԿԱՆԱԳՑՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏՈՎԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԱՌՋԱԿԱ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆ ՈՒՂՂԱԿԻՒՐԵՆ ԲԺՈՒՄ Է ՀՅ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 19-ՐԴ ՀԻԴՎԱԾԸ ԱՆՐԱԳՐՎԱԾ՝ ԴԱՏՈՎԱԿԱՆ ՊՎԱՉՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻց, ՀԱՄԱԴԱՅՆ ՈՐԻ՝ «ՅՆԻՐԱԲԱՆՅՈՒՐ ՈՔ ՈՒՆԻ ԻՐ ԽԱՅՄՈՒՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ... ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊՎԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ, ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԲՐԼՈՐ ԱՓԱԿԱՆՉԵՐԻ ԱՓԱԿԱՆՄԱՆԲ, ԱՆԿԱԽ և ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՈՂՋԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԻՐ ԳՈՐԾԻ ԻՐԱՎԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»:

Ինչը ենթադրում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը նույնպես կարող է դատական բողոքարկման առարկա լինել, եթե այն խախտում է անձի իրավունքները և օրինական շահերը: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասին, որում թվարկվում են բողոքարկման ենթակա որոշումները, որի վրա հիմնվելով, վերաքննիչ դատարանը հիմնավորել է իր որոշումը, ապա այն 290-րդ հոդվածի 1-ին մասի համեմատ կրում է լրացուցիչ բնույթ, քանի որ նրանում օգտագործվում է «նաև» շաղկապը, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ նրանում սպառիչ չի թվարկված դատական կարգով բողոքարկամ ենթակա որոշումները:

Այսպիսով՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե քրեական դատավարության օրենսգրքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման ուղղակի դեպք և կարգ սահմանված չէ, սակայն այդ որոշումները և գործողությունները խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, ապա ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի ուժով դրանք ենթակա են դատական կարգով բողոքարկման:

13. Քանի որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված բողոքարկման ենթակա որոշումների շարքում, ուստի, որպեսզի մինչդատական վարույթի ընթացքում քրեական գործ հարուցելու մասին որոշումը լինի դատական բողոքարկման առարկա, ապա պետք է պարզել, թե քրեական գործ հարուցելու մասին որոշումը խախտում է անձի իրավունքները և օրինական շահերը, թե ոչ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործը հարուցվում է՝ քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի (արարքների) կապակցությամբ, այլ կերպ՝ փաստի առթիվ, և որևէ անձի համար քրեական դատավարությունում այն իրավական որևէ հետևանք չի առաջացնում, ուստիև՝ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ քրեական դատավարությունում որևէ մեկի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում:

Այսպիսով՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա լինել չի կարող, քանի որ քրեական դատավարությունում քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ անձի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում:

15. ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի պնդումն այն մասին, որ վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշմամբ սահմանափակվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իր իրավունքը, անհիմն է, և հետևանք այն բանի, որ նա սխալ է մեկնաբանում ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

16. Վերոհիշյալ հոդվածի 1-ին մասում ամրագրված որևէ իրավունք վերաքննիչ դատարանը չի խախտել այն պարզ պատճառով, որ ինչպես նշվեց վերևում, քրեական գործը հարուցվում է փաստի առթիվ և քրեական դատավարությունում անձի համար այն իրավական որևէ հետևանք չի առաջացնում, հետևաբար որևէ անձի իրավունքները և օրինական շահերը քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ չի խախտվում, իսկ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում խոսվում է «խախտված իրավունքները վերականգնելու» մասին:

17. Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ դրույթին (իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար

հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը, ապա այս իրավունքը վերաբերում է քրեական գործի դատական քննության փուլին, և իր այդ իրավունքից Վալերի Գրիգորյանը կկարողանա օգտվել, եթե քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվի դատարան ըստ էռության քննելու համար:

18. Նկատի ունենալով, որ քրեական գործ հարուցվում է «քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի (արարքների) կապակցությամբ», և այդ որոշումը որևէ անձի համար իրավական որևէ հետևանքը չի առաջացնում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է նաև բողոքաբերի այն պնդումը, թե «քրեական գործը հարուցվել է անձի դեմ, ինչի հետևանքով Վալերի Գրիգորյանը փաստացիորեն հայտնվել է կասկածյալի կարգավիճակում»:

Նախ՝ սույն գործով քրեական գործ հարուցելու մասին որոշման եզրափակիչ մասում ուղղակիորեն նշված է, որ քրեական գործը հարուցվել է, ոչ թե անձի դեմ, այլ քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրաբար կատարված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի կապակցությամբ, այսինքն՝ փաստի առիվ, ինչպես պահանջում է օրենքը:

Այսպես՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման եզրափակիչ մասում գրված է. «Վալերի Գրիգորյանի կողմից կեղծ փաստաբուղք օգտագործելու փաստի առիվ հարուցել քրեական գործ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով»:

Երկրորդ՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի՝ կասկածյալ կարող է ճանաչվել այն անձը՝

- 1) որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով.
- 2) որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված:

Այսպիսով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը հստակ տալիս է այն հիմքերը, որոնց հիման վրա անձը դառնում է կասկածյալ, և դրանց մեջ քրեական գործ հարուցելու մասին որոշումը չի նշվում:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսդրության իմաստով քրեական գործ հարուցելու հիմնական նպատակը ոչ թե անձին դատավարական կարգավիճակ տալիս է, այլ օրինական քննության համար քրեադատավարական հիմք ստեղծելն է, որը հնարավորություն է տալիս արդյունավետ քննություն իրականացնելու նպատակով օգտագործել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր իրավական գործիքները՝ քննչական գործողություններ, դատավարական հարկադրանքի միջոցներ և այլն:

20. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վճռաբեկ բողոքում նշված հիմքերով օրենքի եական խախտում թույլ չի տրվել, ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա Վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

21. Քննվող բողոքի կապակցությամբ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի չափանիշների, քրեական դատավարությունում քրեական գործ հարուցելու փուլի նշանակության վերաբերյալ հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Վալերի Գրիգորյանի վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 6-ի որոշում բողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Դատավորներ՝

Արխագահող՝

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ս.ՕՅԱՆՅԱՆ

Ա.ՄԿՐՏՉՈՒՅՅԱՆ

Վ.ԱԲԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Վճռաբեկ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
քրեական վերաքննիչ դատարանի որոշում
ԵԿՂ/0050/11/08
Նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան

ԵԿՂ/0050/11/08

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ
քարտուղար

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ր.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՉԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա.ԱԲՐԱՅԱՄՅԱՆԻ

2008 թվականի նոյեմբերի 28-ին

ք.Երևանում

դրնբաց դատական նիստում, քննելով «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ, Վճռաբեկ դատարանուն հավատարնագրված փաստաբան Արա Զոհրաբյանի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. «Պիցցա Դի Ռոմա» ՍՊ ընկերության ղեկավար անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու փաստի առթիվ 2007 թվականի հոկտեմբերի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

2. ՀՅ կառավարության առընթեր հարկային պետական ծառայության քննչական բաժնի քննիչի 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ կալանք է դրվել «Պիցցա Դի Ռոմա» ՍՊԸ հանրային սննդի սպասարկման գործնեություն իրականացնող օբյեկտների, այդ թվում նաև Խորենացի փողոցի թիվ 43 հասցեում «Նարեկ» ՍՊ ընկերությանը պատկանող անշարժ գույքի վրա:

3. 2008 թվականի ապրիլի 29-ին Ընկերությունը դիմում է ներկայացրել ՀՅ գլխավոր դատախազին, խնդրելով վերացնել քննիչի կողմից 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը՝ «Նարեկ» ՍՊ ընկերությանը պատկանող ք.Երևան, Խորենացի 43 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը:

2008 թվականի ապրիլի 29-ի դիմումի կապակցությամբ ՀՅ գլխավոր դատախազությունը որևէ պատասխան չի ներկայացրել:

4. 2008 թվականի հունիսի 9-ին Ընկերությունը դիմում-բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով վերացնել քննիչի կողմից 2007 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը՝ «Նարեկ» ՍՊ ընկերությանը պատկանող ք.Երևան, Խորենացի 43 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա դրված կալանքը:

5. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի հունիսի 26-ի որոշմամբ առանց քննության է բողել «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցչի բողոքը:

6. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցչի:

7. «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՅ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ օրինական ուժի մեջ է բողել գույքի վրա կալանք դնելու մասին որոշման դեմ «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցչի բողոքը առանց քննության թողմելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի որոշումը:

8. ՀՅ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշման դեմ Վճռաբեկ բողոք է բերել «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցչի Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանը:

9. Վճռաբեկ դատարանը 2008 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

10. Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ուղարկվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

11. ՀՅ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 03.05.2006 թվականին տրված թիվ 2112823 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Կենտրոն համայնքի Ս.Խորենացի փողոցի թիվ 43 շենքը սեփականության իրավունք պատկանում է «Նարեկ» ՍՊ ընկերությանը:

12. «Նարեկ» ՍՊ ընկերությունը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ս.Խորենացի փողոցի թիվ 43 հասցեում գտնվող անշարժ գույքի մի մասը 26.12.2006 թվականի վարձակալության պայմանագրով վարձակալության է հանձնել «Պիցցա Դի Ռոմա» ՍՊ ընկերությանը:

13. 2008 թվականի փետրվարի 26-ին «Նարեկ» ՍՊ ընկերության և «Պիցցա Դի Ռոմա» ՍՊ ընկերության միջև կնքվել է համաձայնագիր անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին:

14. 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՅ ԿԱ ԱԳԿ ՊԿ տարածքային ստորաբաժանումը թիվ ԵԼ-86 գրությամբ մերժել է «Նարեկ» ՍՊ ընկերությանը սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի տրամադրումը, քանի որ ՀՅ ԿԱ ՀՊԾ քննչական բաժնի կողմից

06.11.2007 թվականին կալանք է դրված Մ.Խորենացի փողոցի թիվ 43 հասեռում գտնվող անշարժ գույքի վրա:

15. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի հունիսի 26-ի որոշմամբ «Նարեկ» ՍՊ ընկերության ներկայացուցչի բողոքը թողել է առանց քննության՝ գործի նախաքննությունն ավարտված լինելու պատճառաբանությամբ:

16. ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը 2008 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

Վճրաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Վճրաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

17. Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը:

Այդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ յուրաքանչյուր անձ, ուն իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի գործողություններով և որոշումներով՝ դրանք բողոքարկելու իրավական հնարավորություն է վերապահվում անկախ այն հանգանաքից, թե քրեական գործը ինչ փուլում է գտնվում: Նշված հոդվածով նախատեսված խախտումները կարող են կատարվել բացառապես քրեական գործի մինչդատական վարույթի շրջանակներում, իսկ եթե գործն անցել է դատական քննության փուլ, նշված հոդվածում թվարկված սուբյեկտները չեն կարող իրենց որոշումներով ու գործողություններով խախտել դատավարության մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի առաջին մասը չպետք է պայմանավորել բացառապես մինչդատական վարույթի ընթացքում բողոքարկման հնարավորությամբ: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության համար կարևոր է միայն, որ խախտումը տեղի ունեցած լինի մինչդատական փուլում:

18. Բողոք բերած անձը գտնում է, որ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Այդ հոդվածի համաձայն՝ բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու, կամ եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոքը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը հստակ և սպառիչ սահմանել է, թե մինչդատական վարույթ իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումները որքան ժամկետում կարող են բողոքարկվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան: Ուստի, վերաբնիչ դատարանի այն հետևությունը, որ մինչդատական վարույթի դատական վերահսկողությունը սահմանափակված է մինչդատական վարույթի ժամկետներով, իսկ տվյալ դեպքում քրեական գործով մինչդատական վարույթն ավարտված է, չի հանապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին:

19. Բողոք բերած անձը նշում է, որ անհիմն է դատարանի այն պատճառաբանությունը, թե քանի որ գործը գտնվում է քրեական դատարանում, վերջինն է իրականացնելու գույքի վրա կալանք դնելու որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգում:

Ընդհանուր իրավասության դատարանը սխալ հետևություն է արել այն մասին, որ Երևանի քրեական դատարանն է իրավասու դատական ստուգման ենթարկելու գույքի վրա կալանք դնելու որոշման օրինականություն և հիմնավորվածությունը: Ինչպես Երևանի քրեական դատարանը, այնպես էլ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, համաձայն օրենքի, հանդիսանում են առաջին ատյանի դատարաններ, ուստի քրեական դատարանը չի կարող ունենալ և չունի օրենքով նախատեսված լիազորություն՝ նույն ատյանի մեկ այլ դատարանի դատական ակտը վերանայելու համար: Այդպիսի լիազորությանը օրենքի համաձայն օժտված է վերաբնիչ դատարանը, որը չկատարելով իր պարտականությունը՝ հրաժարվել է արդարադատության իրականացումից:

20. Խախտվել է ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը:

Բողոք բերած անձը գտնում է, որ գործի քննության մինչատական վարույթի ընթացքուն ընդունված և օրենքի ուժով դատական ստուգման ենթակա որոշումների դեմ բերված բողոքները չեն կարող առանց քննության թողնվել գործի նախաքննությունն ավարտված լինելու պատճառաբանությամբ, քանի որ բողոքն առանց քննության թողնելու նման հիմք օրենքով նախատեսված չէ: ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ բողոքը ճանաչելով հիմնավորված, դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելով՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի հիմնավար բերված բողոքի քննության արդյունքում դատարանը որևէ այլ որոշում կայացնելով՝ առաջին ատյանի դատարանը դուրս է եկել իրեն օրենքով վերապահված լիազորությունների շրջանակից, իսկ վերաքննիչ դատարնն էլ անհիմն կերպով օրինական ուժի մեջ է թողել նշված որոշումը:

21. Վերոգրյալի հիմնավար բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել ՀՅ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի մեկնարանության մասին.

22. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ- հետախուզական գործողությունների իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չփական դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտամի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Նշված հոդվածի իմաստով դատական կարգով բողոքարկման ենթակա են մինչատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունները և որոշումները, որոնք կայացվել են մինչև գործն ըստ էության լուծելու համար դատարան ուղարկելը: Սահմանելով հետագա դատական վերահսկողություն մինչատական վարույթի նկատմամբ՝ ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը հետաքննության և նախաքննության մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման որևէ սահմանափակում չի նախատեսում՝ կապված գործի քննության դատավարական փուլի հետ: Այսինքն՝ ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի հիմաստով, նախաքննության ավարտված լինելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացնող մարմինների՝ ՀՅ քրեադատավարական օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների դատական բողոքարկման համար:

Ենթելով վերագրյալից՝ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում ՀՅ վերաքննիչ քրեական դատարանի որոշման մեջ առկա այն մոտեցմանը, որի համաձայն՝ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը սահմանափակված է մինչատական վարույթի ժամկետներով (...)»: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բարձրացված հարցի վերաբերյալ ՀՅ վերաքննիչ քրեական դատարանի դիրքորոշումը ՀՅ քրեադատավարական օրենսդրությամբ չնախատեսված ժամկետային սահմանափակման է ենթարկում նախական քննության մարմինների որոշումների և գործողությունների դատական բողոքարկման իրավունքը՝ դրանով իսկ հակասելով ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասին, որը բողոքը մերժելու կամ դրա վերաբերյալ մեկ ամսվա

ընթացքում պատասխան չստացվելուց հետո վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան բողոք ներկայացնելու մեկամսյա ժամկետից բացի որևէ այլ ժամկետ չի սահմանում:

II. Սինդրատական վարույթն ավարտված լինելու դեպքում անշարժ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգումը քրեական դատարանի իրավասությանը վերապահելու իրավաչփության մասին.

23. ՀՅ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններն են ընդհանուր իրավասության դատարանները և մասնագիտացված դատարանները: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ մասնագիտացված դատարաններն են քրեական դատարանները, քաղաքացիական դատարանները և վարչական դատարանը:

ՀՅ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաբերնության կարգով:

ՀՅ օրենսդրության նշված կարգավորումից հետևում է, որ ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված դատարանները հանդիսանում են նույն ատյանի դատարանի տարեր օղակներ: Մասնագիտացված դատարանները, հանդիսանալով առաջին ատյանի դատարանի հիմքուրույն օղակ, իրավասու չեն նույն ատյանի այլ օղակի՝ ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված որոշումների օրինականության ու հիմնավորվածության դատական ստուգում իրականացնել: Եթևարաքար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՅ քրեական վերաբերնից դատարանի՝ վերաբերնից բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման մեջ արտահայտված նոտեցումն այն մասին, որ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված ակտի օրինականության ու հիմնավորվածության դատական ստուգում գործի դատական քննության փուլում պետք է իրականացվի Երևանի քրեական դատարանի կողմից, հակասում է ՀՅ ներպետական օրենսդրությանը: Նշված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումն արտահայտել է Ա.Դավայանի վերաբերյալ գործով 28.11.2008թ. որոշման մեջ:

III. Գոյքի վրա կալանք դնելու վերաբերյալ որոշման դեմ բերված բողոքը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից առանց քննության թողնելու իրավաչփության մասին.

24. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի հոդվածի ինաստով դատարանը պարտավոր է բողոքի քննության արդյունքներով կայացնել կամ ներկայացված բողոքը մերժելու կամ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու մասին որոշում, մինչեւ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է ներկայացված որոշումն առանց քննության թողնելու մասին որոշում, ինչը Վճռաբեկ դատարանի կարծիքով հանդիսանում է ՀՅ քրեադատավարական օրենսդրության խախտում: Սույն գործով քրեական վերաբերնից դատարանը կայացրել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշումն անփոփոխ թողնելու մասին որոշում՝ առանց հաշվի առնելու այն հաճամանքը, որ վերջինս դուրս է եկել իր իրավասության շրջանակներից և կայացրել է ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասով չնախատեսված որոշում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշումն անփոփոխ թողնելու մասին որոշում՝ առանց հաշվի առնելու այն հաճամանքը, որ վերջինս դուրս է եկել իր իրավասության շրջանակներից և կայացրել է ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասով չնախատեսված որոշում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 26.06.2008թ. որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս ՀՅ քրեական վերաբերնից դատարանը պարտավոր էր քննության առնել այն փաստը, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է ՀՅ քրեական դատավարության օրենսդրությամբ չնախատեսված որոշում, և իր որոշմանը վերացներ և ոչ թե անփոփոխ թողներ վերջինս: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՅ վերաբերնից քրեական դատարանը պարտավոր է անդրադառնար այն հարցին, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, կայացնելով բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում, չի

գործել որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասի հմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Նշված հարցի վերաբերյալ մարդու իրավունքների Եվրոպական դատարանն իր դիրքորոշումն արտահայտել է Սոկուրենկոն և Ստրիգունն ընդդեմ Ռուսական գործով (20 հուլիսի 2006թ., գանգատներ թիվ 29458/04 և 29465/04) որոշման մեջ, որում նշվում է, որ այն դատարանը, որը որոշումը կայացրել է օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանն անցնելով՝ գանգատարկվող վարույթի կապակցությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման հմաստով, չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան:

25. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանները սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ են տվել դատավարական իրավունքի խախտումներ: Այդ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ դրանք հիմք են սույն գործով կայացված դատական ակտերն ամբողջությամբ բեկանելու և գործը քննած առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

26. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշումները ամբողջությամբ պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

27. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 26-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 18-ի որոշումը ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում իրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝	Ա.ՄԿՐՏՉԻՄՅԱՆ
Դատավորներ՝	Դ.ԱՎԵՏԻՄՅԱՆ
	Հ.ՌՈՒԿԱՍՅԱՆ
	Ս.ՕՐԱՆՅԱՆ
	Ս.ՍԱՐԳՍՅԱՆ
	Վ.ԱԲԵԼՅԱՆ
	Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Վճռաբեկ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԱՎԴ/0022/06/08
նախագահող դատավոր՝ Ա. Յովհաննիսյան

ԱՎԴ/0022/06/08

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Յ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ս.ՕՐԱՆՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

2008 թվականի հոկտեմբերի 31-ին
քերևանում

դրսքաց դատական նիստում, քննելով հավատարմագրված փաստաբան Ն.Ավետիսյանի միջոցով մեղադրյալ Ասլան Յովհաննեսի Ավետիսյանի վճռաբեկ բողոքը Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշումների դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

- Նախաքննության մարմնի կողմից 2008 թվականի մարտի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը:
- Ա.Ավետիսյանը 2008 թվականի մարտի 7-ին ձերբակալվել է, 2008 թվականի մարտի 8-ին ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:
- 2008 թվականի մարտի 8-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Վ.Զարությունյանը Ա.Ավետիսյանի նկատմամբ կալանավորումը որպես

խափանման միջոց ընտրելու միջնորդություն է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 8-ի որոշմամբ բավարարվել է քննիչ Վ. Զարությունյանի միջնորդությունը, Ա. Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ երկու ամսի ժամանակով և մերժվել է Ա. Ավետիսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու՝ պաշտպան Հ. Մնացականյանի միջնորդությունը:

4. Որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Ա. Ավետիսյանի շահերի պաշտպան Լ. Սիմոնյանը՝ պահանջելով որոշում կայացնել Ա. Ավետիսյանի նկատմամբ ընտրված կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և կալանքից ազատելու մասին:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մարտի 8-ի որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

5. 2008 թվականի ապրիլի 28-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Վ. Զարությունյանը մեղադրյալ Ա. Ավետիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է մասնակի, Ա. Ավետիսյանի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու է մեկ ամսի ժամանակով և մերժվել է Ա. Ավետիսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու՝ պաշտպան Լ. Սիմոնյանի միջնորդությունը:

6. Որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Ա. Ավետիսյանի շահերի պաշտպան Լ. Սիմոնյանը՝ պահանջելով որոշում կայացնել Ա. Ավետիսյանի նկատմամբ ընտրված կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և կալանքից ազատելու մասին:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշմամբ ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

7. 2008 թվականի մայիսի 27-ին նախաճննական մարմնի կողմից կայացվել է որոշում Ասլան Ավետիսյանի նկատմամբ առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով նոր մեղադրանք առաջադրելու մասին:

8. Ա. Ավետիսյանի շահերի պաշտպան Լ. Սիմոնյանը 2008 թվականի հունիսի 3-ին միջնորդություն է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան մեղադրյալ Ա. Ավետիսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու մասին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանն Ա. Ավետիսյանի շահերի պաշտպան Լ. Սիմոնյանի 2008 թվականի հունիսի 3-ի միջնորդությունը թողել է առանց քննության նկատի ունենալով, որ մինչդատական վարույթն ավարտվել է, և Ա. Ավետիսյանի վերաբերյալ գործն արդեն իսկ ուղարկվել է դատարան:

9. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշման դեմ մեղադրյալ Ա. Ավետիսյանը հավատարմագրված փաստաբան Ն. Ավետիսյանի միջոցով վճռաբեկ բողոք է բերել:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2008 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները:

10. 2008 թվականի մարտի 8-ին Ա.Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և ՀՀ քրեական օրենսգրքի 225 հոդվածի 2-րդ մասով նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2008 թվականի փետրվարի 19-ին կայացած Յայաստանի Յանրապետության Սահմագահի ընտրություններում նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի պարտություն կրելուց հետո, վերջինիս և նրա մի խումբ համախոհների կողմից ներգրավվելով երկրում ներքաղաքական իրավիճակն ապակայունացնելուն ուղղված օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպված իրապարակային լայնածավալ միջոցառմանը, նրանց ուղղորդմամբ և հրահրմանբ անմիջական նախակցություն է ունեցել Երևան քաղաքում 2008 թվականի մարտի 1-ից սկսած Երևանի քաղաքապետարանի շրջակայքում և կենտրոնական փողոցներում հրագենի, պայթուցիկ նյութերի և այլ հարմարեցված առարկաների գործադրմանը իրականացված սպանությունների, բռնությունների, ջարդերի, հրկիզումների, գույքի ոչնչացման և իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով կազմակերպված զանգվածային անկարգություններին:

11. 2008 թվականի մայիսի 27-ին նախաքննական մարմնի կողմից կայացված որոշմամբ Ասլան Ավետիսյանի նկատմամբ առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, այն բանի համար, որ թեև մեղադրյալ Ա.Ավետիսյանը ներկա է գտնվել զանգվածային անկարգություններին, սակայն անմիջական նախակցություն չի ունեցել դրանց, այլ զանգվածային անկարգությունները դադարեցնելու վերաբերյալ ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին ակտիվութեն չենթարկելու, վերջիններիս նկատմամբ բռնություն գործադրելու կոչեր է արել:

12. Նախաքննության մարմինը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ /գ.թ. 38, 39/ նշել է, որ Ա. Ավետիսյանը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով: Այսինքն՝ քննիչը սահմանափակվել է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով /Խափանման միջոց կիրառելու հիմքերը/ նախատեսված խափանման միջոց կիրառելու 1-ին և 2-րդ հիմքերը թվարկելով, սակայն այդ հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացրել: Իսկ դատարանները կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու որոշում են կայացրել՝ հիմնվելով միայն քննիչի միջնորդության մեջ բերված հիմնավորումների վրա:

Դատական ստուգման արդյունքում ՀՀ վերաբննիչ քրեական դատարանի կողմից 2008 թվականի մայիսի 19-ին կայացված որոշմամբ, որով անփոփոխ է թողնվել ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի՝ Ա. Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումը, որպես հիմնավորում ուղղակիրեն նշվել է կալանքի տակ պահելու հիմքերի /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 1,2-րդ կետեր/ և պայմանների /հիմնավոր կասկածի առկայություն, ծանր հանցագործություն, որի համար նախատեսվում է 3-8 տարի ժամկետով ազատազրկում/ առկայությունը:

Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաբննիչ քրեական դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

Բողոքատում գտնում է, որ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշումը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, որի համաձայն՝ քննիչը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու

միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ պետք է շարադրի այն շարժադրմերը և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտությունը: Քննիչն իր միջնորդությունը հիմնավորող որևէ նյութ չի կցել գործին, իսկ դատարանները, հիմնվելով նախաքննական մարմնի սուբյեկտիվ կարծիքի վրա, այն բավարարել են:

Քննիչի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության վրա հիմնված՝ դատարանների այն հետևողությունը, որ «գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օրյեկտիվ հետազոտման, ինչպես նաև նախաքննության ավարտման համար անհրաժեշտ է մեկ ամիս ժամանակ», անհիմն է, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ դա քննիչի պարտականությունն է և ոչ թե մեղադրյալին կալանքի տակ պահելու հիմք: Բացի այդ, քննիչն իր որոշման մեջ չի նշել որևէ հիմք, թե Ասլան Ավետիսյանը, ազատության մեջ գտնվելով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված ինչ անօրինական գործողություններ կարող են կատարել և ինչպես կարող են խոչընդոտել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օրյեկտիվ քննությանը:

Դատարանների որոշումները չեն համապատասխանում նաև նմանատիպ գործերով Եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումներին:

14. Բողոքատուն նաև գտնում է, որ դատարանները կալանքը որպես խափանման միջոց կիրառելու և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումներ կայացնելիս անհիմն են մերժել Ա.Ավետիսյանի նկատմամբ կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունները: Ըստ բողոքի՝ գրավը հանդիսանում է կալանքի այլընտրանքային խափանման միջոց, և կալանքը հիմնավորող հիմքերի պատճառաբանությամբ չի կարող կալանքից գրավով ազատելը մերժվել կամ ճանաչվել անթույլատրելի:

Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումներում կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունները մերժելիս դատարանների կողմից չի նշվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածում սպառչ թվարկված որևէ հիմք, որն իրավունք կտար Ասլան Ավետիսյանին գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի:

15. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի՝ Ա.Ավետիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին և այն անփոփոխ բողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշումները և որոշում կայացնել Ասլան Ավետիսյանին կալանքից ազատելու մասին:

Սերժելու դեպքում բողոքատուն խնդրել է Ասլան Ավետիսյանին կալանքից գրավով ազատելը ճանաչել թույլատրելի և սահմանել գրավի չափը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների որոշումների օրինականանությունը և հիմնավորվածությունը:

16. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Սարդուն կարելի է ազատությունից գրկել կամ նրա ազատությունը սահմանափակել միայն օրենքով սահմանված կարգով և հետևյալ դեպքերում՝

(...)

3) հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում, կամ երբ դա անհրաժեշտ է նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(...)

Սարդուն կարելի է կալանավորել միայն դատարանի որոշմանը (...):

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ ...»:

Դամաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի (...) մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում»:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակն ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժադրմերը և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտությունը: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը»:

18. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Ավետիսյանի կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումներում թե առաջին ատյանի և թե վերաքննիչ դատարանները բավարարվել են միայն օրենքով նախատեսված կալանավորման հիմքերի օրենսդրական ձևակերպումների շարադրանքով, և իրենց որոշումները չեն պատճառաբանել փաստական հանգամանքների հիման վրա կատարված ողջամիտ ենթադրություններով:

Մինչդեռ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, ՀՅ Սահմանադրությամբ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք (ՀՅ Սահմանադրության 4-րդ հոդված): Ուստի մարդու այդ հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրությները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակագրելու անթույլատրելիության սկզբունքներից:

19. Նշված սկզբունքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը: Յակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքը կլինի պատրանքային, իսկ հիմնական իրավունքը փաստացի կրովանդակագրկի:

20. Այսպիսով, ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում բվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևողաբար նշում են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա:

21. Բացի ՀՅ Սահմանադրությունից և ՀՅ քրեական դատավարության օրենսգրքից, Վճռաբեկ դատարանի՝ 19-րդ և 20-րդ կետերում ներկայացված մոտեցումները բխում են նաև Սարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևակերպված իրավական դիրքորոշումից:

Մասնավորապես, Եվրոպական դատարանը Յազսինն ու Սամինն ընդդեմ Թուրքիայի /8 հունիսի 1995թ. Yagci and Sargin v.Turkey, գանգատ թիվ 16419190, կետ 52 / գործով վճռում նշել է. «Դատարանն անշուշտ ոչ մի դեպքում թույլատրելի չի համարի որևէ դատական որոշում, որը հիմնված կլինի ստանդարտ ձևակերպումների վրա, առանց արդարադատությունից թաքնվելու վտանգի առկայության պատճառների որևէ պարզաբանման»:

Մեկ այլ գործով վճռում Եվրոպական դատարանը գտել է, որ «....անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք ներպետական դատարանները հաստատել և համոզիչ կերպով ներկայացրել են այնպիսի կոնկրետ փաստեր, որոնք հիմնավորել են իրենց կողմից արված հետևողաբար առաջարկության բացահայտմանը կամ կատարել նոր հանցագործություն: ...Ներպետական իշխանությունների պարտականությունն է

կալանքի ժամկետի երկարացման հիմքերին համապատասխանող կոնկրետ փաստերի առկայությունն ապացուցելը:» /տես Մամեդովայի գործով Վճռի կետեր 73, 75/:

22. Դետևաբար՝ մեղադրյալ Ա.Ավետիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը պահպանած լինելու համար բավարար չէր օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ էր կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևողուները հիմնավորել գործի փաստական տվյալներով:

Ընդ որում անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, ինչպես նաև կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է հաստատվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն, և որը պետք է բխի անձի՝ ազատությունից գրկելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից:

II. . Կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը բացառապես նրան մեղսագրվող հանցագործության ծանրությամբ և քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորելու իրավաչափության մասին.

23. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի՝ խափանման միջոց կարող է կիրառվել «միայն այն դեպքում, եթե քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը բարցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց

5. խոչընդոտել դատարանի դատավճոի կատարմանը»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Խսափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1. վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը.

2. կասկածյալի կամ մեղադրյալի անձը.

3. տարիքը և առողջական վիճակը.

4. սեռը.

5. գրադարձի տեսակը.

6. ընտանեական դրությունը և խնամարկյալների առկայությունը.

7. գույքային դրությունը.

8. բնակության մշտական վայրի առկայությունը.

9. այլ էական հանգամանքներ»:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում օգտագործվող «խափանման միջոցի կիրառում» հասկացությունը տարածվում է ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանքի ժամկետը երկարացնելու նկատմամբ: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի սահմանում կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերը կանոնակարգող հատուկ նորմ: Ուստի անձին կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումն անհրաժեշտ է հիմնավորվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված հիմքերով, ինչպես նաև անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված հանգամանքները:

25. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումներում սահմանվել են կալանքի ժամկետի երկարացման հիմքերի առավել կոնկրետ չափանիշներ:

Մասնավորապես, մի շարք գործերով եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «... թեև անձին սպառնացող պատժի խստությունը հանդիսանում է փախուստի դիմելու կամ նոր հանցանք կատարելու հավաճականությունը զնահատելու կարևոր տարր, ազատությունից զրկելը երկարաձգելու անհրաժեշտությունը չի կարող գնահատվել բացառապես վերացական տեսանկյունից՝ հաշվի առնելով միայն հանցագործության ծանրությունը» /տես. *Mamedova v. Russia*, 1 հունիսի 2006թ. վճիռը, գանգատ թիվ 7064/05/ կետ 74, *Panchenko v. Russia* 2005թ. փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 45100/98, կետ 102, *Ilijkov v. Bulgaria*, 2001թ. հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33977/96, կետ 81/

Բացի այդ, եվրոպական դատարանը, *Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի գործով* /1 հունիսի 2006թ. *Mamedova v. Russia*, գանգատ թիվ 7064/05/ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «... հիմնավոր կասկածի շարունակական առկայությունն առ այն, որ կալանավորված անձը կատարել է հանցագործություն, հանդիսանում է անհրաժեշտ պայման կալանքի ժամկետի երկարացման օրինականության համար: Այնուհանդերձ, որոշակի ժամանակ անց դա դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե դատական իշխանությունների կողմից ներկայացված մյուս հիմքերը շարունակե՞լ են արդյոք արդարացնել ազատությունից զրկելը: Եթե նման հիմքեր եղել են, «համապատասխան» և «բավարար», ապա դատարանը պետք է պարզի նաև, թե քննությունն իրականացնելիս իրավասու մարմինները դրսկորե՞լ են արդյոք «պատշաճ ջանասիրություն»:

26. Կալանքի ժամկետի երկարացման վերաբերյալ օրենսդրական և նախադեպային կանոնակարգման համադրման և մեկնաբանման հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

ա) շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսկորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը.

Իսկ հնչ վերաբերում է անձին մեղսագրվող հանցանքի ծանրությանը, ապա թեև այն էական նշանակություն ունի ազատության մեջ գտնվող մեղադրյալի դրսկորվող վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, սակայն այդ հանգամանքը պետք է գնահատվի

գործում առկա մնացած, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում մատնանշված համգամանքների համատեքստում: Այդ առումով կարող է թնոնության առկա դառնալ նաև դեռևս չկատարված բննչական գործողությունների բնույթը, դրանց օբյեկտիվության վրա մեղադրյալի կողմից ազդեցություն գործելու հնարավորությունը:

27. Այսպիսով, Ա.Ավետիսյանի կալանքի ժամկետը երկարացնելիս ստորադաս դատարանները պարտավոր էին բավարար փաստերի ներքո հիմնավորված ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված մեկ կամ մի քանի հիմքի առկայությունը: Բացի այդ, բավարար չափով պետք է հիմնավորվեր տվյալ գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինների «պատշաճ ջանասիրությունը» և դրա հիմնան վրա բավարար փաստերի ներքո հիմնավորեր նոր քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը:

28. Այնուամենայնիվ, յուրաքանչյուր գործով կալանքի տևողությունը կարող է արդարացվել միայն այն դեպքում, երբ կան հասարակական շահի իրական պահանջների հատուկ հատկանիշներ, որոնք ինքնուրույնաբար, չվտանգելով անմեղության կանխավարկածը, գերակշռում են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով երաշխավորված անձի ազատության և անձեռնմխելության իրավունքը:

29. Այս չափորոշիչներով գնահատելով Ա.Ավետիսյանի կալանքի ժամկետի տևողությունը երկարացնելու գործընթացը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն չի համապատասխանել անձի ազատության և անձեռնմխելության իրավունքին վերաբերող ինչպես երկրի ներքին օրենսդրության, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայի հիմնարար պահանջներին:

III Գրավի կիրառմամբ անձին կալանքից ազատ արձակելու հարցի քննարկման պահանջը և գրավի անթույլատրելիության դեպքերի մեկնաբանումը.

30. Վճռաբեկ բողոք բերած անձն այս առումով Վճռաբեկ դատարանի առջև ըստ էության բարձրացրել է հետևյալ հարցը. ընդհանուր իրավասության դատարանն իրավունք ունե՞՞ր արդյոք Ա.Ավետիսյանին կալանքից գրավով ազատելը մերժել ու դա ճանաչել անթույլատրելի՝ կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորված լինելու պատճառաբանությամբ:

31. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի. «Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Նետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմից միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»:

Նոյն հոդվածի 5-րդ մասի համաձայն.«Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան»:

32. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմից բխում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս ՀՀ իրավասու դատարանները լիազորված են քննարկել դատարնությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այդպիսի միջոց է գրավը /Տես Վճռաբեկ դատարանի Տարոն Ռազմիկի Հակոբյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-115/07 որոշումը (կետ 3.1)/:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ, Վճռաբեկ դատարանի որոշումներով, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով ամրագրված է, որ դատարանը կարող է կալանքի փոխարեն կիրառել գրավը՝ որպես այլընտրանքային խափանման միջոց:

33. Ինչպես երևում է Ա.Ավետիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաբերնից քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի

որոշումներից, գրավի կիրառումը մերժվել է այն նույն հիմքով, որով հիմնավորվել է կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման անհրաժեշտությունը:

34. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում՝ պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա, ինչը սույն գործով բացակայում է:

35. Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում բողոքի հեղինակի այն պնդումը, որ դատարանն իրավունք ունի մեղադրյալին գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածում նշված դեպքերում:

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի վերաբերյալ արված իրավական մեկնաբանություններում չի արգելվում չնշված առանձին դեպքերում անձին երաշխիքով ազատ արձակելը ճանաչել անթույլատրելի. մասնավորապես, եթե առկա է անձի կողմից թաքնվելու կամ գործով ծշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտելու վտանգ, կամ եթե դա անհրաժեշտ է հանցագործությունը կանխելու կամ հասարակական կարգի պահպանությունն իրականացնելու համար:

36. Այդ առումով Եվրոպական կոնվենցիային չի հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթը, որ դատարանը, համապատասխան շարժադրմերը շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը առանձին դեպքերում ճանաչել անթույլատրելի: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքով գրավից ազատելու կոնկրետ դրսևումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքով գրավից ազատելու իրավական հիմքերի սպառիչ թվարկման նշանակություն: Մեղադրյալի անձը հայտնի չլինելը, նշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևումներ են, որոնք թվարկված են ոչ սպառիչ:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը:

37. Հետևաբար, առաջին ատյանի և վերաբնիչ դատարանները չեն խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ շարադրելով այլ շարժադրմեր:

IV Սույն որոշման իրավական արժեքը.

38. Սույն որոշման 16-րդ-29-րդ կետերից երևում է, որ բողոքում նշված հիմնավորումները բավարար են բողոքարկված դատական ակտություններու համար:

Սակայն բողոքարկված դատական ակտերը եղել են ժամանակավոր, դրանք կորցրել են իրենց իրավական նշանակությունը: Ուստի Վճռաբեկ դատարանի սույն որոշումը կայացնելու պահին դրանք իրավաբանորեն դադարել են գոյություն ունենալուց:

39. Բացի այդ, գործի նյութերից երևում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատարանի կողմից 2008 թվականի հուլիսի 16-ին կայացվել է դատավճիռ, որով Ասլան Ավետիսիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 6 ամիս ժամկետով, որն Ա.Ավետիսիսյանն ամբողջությամբ կրել է: Պատիժը կիրառելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առել Ա.Ավետիսիսյանին անազատության մեջ պահելու ողջ ժամանակահատվածը:

40. Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկված դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ դրանք այլևս իրավաբանորեն գոյություն չունեն, ինչպես նաև Ա.Ավետիսիսյանի նկատմամբ քրեական վարույթի ողջ

համատեքստում չեն հանգեցրել նրան անազատության մեջ ավելի երկար պահելուն, քան դատարանի դատավճռով սահմանված ժամկետն է:

41. Բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Ելելով վերոգրյալից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ռ Ո Ծ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ասլան Յովհաննեսի Ավետիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և կալանքը գրավով փոխարինելու անթույլատրելի ճանաչելու մասին Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի մայիսի 2-ի որոշումն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաբենիչ քրեական դատարանի 2008 թվականի մայիսի 19-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշված պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում իրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Մախազահող՝ դատավորներ՝	Ա.ՄԿՐՏՉՈՒՄՅԱՆ Դ.ՎԵՏԻՍՅԱՆ Ր.ՂՈՒԿԱՍՅԱՆ Ս.ՕՐԱՆՅԱՆ Ս.ՍԱՐԳՍՅԱՆ Վ.ԱԲԵԼՅԱՆ
---------------------------	--



ՎԲ-115/07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱԲԵՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ քրեական գործերով
վերաքննիչ դատարանի որոշում
Քրեական գործ թիվ 29100407
կայացրած դատարանի կազմը
նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան
դատավորներ՝ Կ.Ղազարյան, Մ.Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

13 հուլիսի 2007թվական

ք. Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Յ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Մ.ՄԻՍՈՆՅԱՆԻ
Ս.ՕՐԱՆՅԱՆԻ

քարտուղար

Ք.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

դատախազներ

Գ.ՄԱՐԿՈՍՅԱՆԻ
Ա.ՄԵԼքՈՆՅԱՆԻ

Դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը մեղադրյալ Տարոն Ռազմիկի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխելու և Տ.Հակոբյանին կալանքից գրավի կիրառմամբ ազատելու մասին ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Նախաքննության մարմնի կողմից 2007 թվականի փետրվարի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է քրեական գործ այն փաստի առթիվ, որ 2007 թվականի փետրվարի 6-ին՝ ժամը 05-ի սահմաններում, Տարոն Ռազմիկի Հակոբյանը դյուրավար հեղուկի օգտագործմամբ հրկիզման եղանակով դիտավորությամբ ոչնչացրել և վնասել է Աշտարակ-Գյումրի ավտոճանապարհի 10-րդ կիլոմետրին հարող Աղձք գյուղի տարածքում տեղակայված և Վարթկես Հագոփյանին պատկանող «Պանդոկ» ռեստորանային համալիրի երկու շենքերը՝ իրենց հարմարություններով և կահավորված գույքով, ինչպես նաև առանձին կառույց աշխատանքային գրասենյակը՝ տուժողին պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 42 միլիոն դրամի գույքային վճար:

Տ.Հակոբյանը 2007 թվականի փետրվարի 6-ին ձերբակալվել է, և 2007 թվականի փետրվարի 9-ին նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ բավարարվել է Արագածոտնի մարզային քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Գ.Առաքելյանի հարուցած միջնորդությունը, և Տ.Հակոբյանի նկատմամբ որպես խափաննան միջոց է ընտրվել կալանքը՝ երկու ամիս ժամկետով՝ մինչև 2007 թվականի ապրիլի 6-ը:

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշմամբ բավարարվել է ՀԿԳ ավագ քննիչ Գ.Առաքելյանի հարուցած միջնորդությունը, և հաշվի առնելով Տ.Հակոբյանին վերագրվող արարքի բնույթը, հանրային վտանգավորությունը՝ Տ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամսով՝ նկատի ունենալով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար են մեղադրյալի նկատմամբ խափաննան միջոց ընտրելու համար:

Այդ որոշման դեմ Տ.Հակոբյանի շահերի պաշտպան Զ.Փոստանջյանի կողմից բերվել է վերաբնիչ բողոք, որում նա խնդրել է մեղադրյալի նկատմամբ կալանավորման փոխարեն ընտրել այլընտրանքային խափաննան միջոց՝ կիրառել գրավ՝ պատճառաբանելով, որ քննիչի միջնորդությունը հաստատող ապացույցներ առաջին ատյանի դատարանին չեն ներկայացվել, դատարանությանը չի մասնակցել պաշտպանը, դատարանը չի քննարկել կալանքը գրավով փոխարինելու նպատակահարմարության հարցը, կալանքի ժամկետը երկարացվել է՝ միայն հաշվի առնելով արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված մյուս հանգամանքները, որով խախտվել է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթները, համաձայն որոնց՝ գրավի կիրառումը չի կարող կախվածության մեջ դրվել հանցագործության ծանրության աստիճանից:

ՀՀ քրեական վերաբնիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշմամբ Տ.Հակոբյանի շահերի պաշտպան Զ.Փոստանջյանի վերաբնիչ բողոքը բավարարվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրվող Տ.Հակոբյանի նկատմամբ որպես խափաննան միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխվել է, և Տարոն Հակոբյանը կալանքից ազատվել է գրավի կիրառմամբ: Գրավի չափ է սահմանվել մեկ միլիոն դրամը:

ՀՀ քրեական վերաբնիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշումը պատճառաբանվել է այն հանգամանքներով, որ Տ.Հակոբյանը նախկինում արատավորված և դատված չի եղել, բնութագրվում է դրականորեն, ունի մշտական բնակության վայր և աշխատանք, ամուսնացած է, խնամքին են երկու անչափահաս երեխաներ, ըստ ապրանքագիտական փորձաքննության՝ պատճառված նյութական վճար կազմում է ոչ թե 42 միլիոն դրամ, այլ 16,5 միլիոն դրամ, վնասված օբյեկտի պատկանելության հարցը վիճարկվում է քաղաքացիական դատավարության կարգով, մեղադրյալը չի թաքնվի վարույթ իրականացնող մարմնից, Տ.Հակոբյանի հետագա պատշաճ վարքագիծը և գրավի կիրառման անհրաժեշտությունը երաշխավորում են գյուղապետարանն ու ավագանին, ինչպես նաև ՀՀ Աժ մի շարք պատգամավորներ: Վերոգրյալի հիման վրա վերաբնիչ դատարանը

հետևություն է արել, որ կոնկրետ դեպքում մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի է և բխում է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներից:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Մ.Սարգսյանը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշման դեմ բերել է վճռաբեկ բողոք:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2007 թվականի մայիսի 22-ի որոշմամբ բողոքը ընդունել է վարույթ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված հիմքերով:

2. Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկներոր և հիմքերը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտում. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավի կիրառումը թույլատրվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար կալանավորված մեղադրյալների համար, մինչդեռ քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցներով. S. Դակուրյանին մեղադրանը է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որը ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համարվում է ծանր հանցագործություն:

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը հիմնվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վրա: Մինչդեռ բողոքի հեղինակի կարծիքով՝ Կոնվենցիայի վերլուծությունը վերաքննիչ դատարանին նման հետևության հանգելու հնարավորություն չի ընձեռնում:

Բողոք բերած անձը մատնանշում է, որ վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ մեղադրյալ S. Դակուրյանը թշնամական հարաբերությունների մեջ է տուժող Վ. Զագոփյանի հետ, և բավարարված չլինելով համապատասխան գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հաստատման վերաբերյալ հարցի քաղաքացիական վարչության լուծմամբ (ՀՀ քաղաքացիական գործերով վերաբերնի դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 7-ին օրինական ուժի մեջ մտած վճռով, որը ուժի մեջ է թողնվել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 2006 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ՝ նշված շինությունները սեփականության իրավունքով պատկանում են Վ. Զագոփյանին՝ դիտավորությամբ հրկիցել է այն, իսկ առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, չի զղացել կատարածի համար, ավելին՝ օգնության եկած անձանց թույլ չի տվել հանգընել հրդեհը և նախաքննության ընթացքում տուժողին պատճառված վնասը հատուցելու փորձ չի արել, և այդ կապակցությանը միմյանց միջև հաստատված թշնամական հարաբերություններից ելնելով ու գտնվելով ազատության մեջ, կարող է կատարել այլ ծանր հանցագործություն:

Վերոգրյալի հիմնան վրա բողոքի հեղինակը եզրահանգում է, որ նախաքննության նարմնի նման հիմնավորումը բխել է և պայմանավորված է եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջներից. S. Դակուրյանը, ազատության մեջ գտնվելով, կարող է խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց և խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

Բողոքատուն փաստարկում է նաև, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված է, որ S. Դակուրյանը զցում է կատարվածի համար: Մինչդեռ նշված եզրահանգումը գործի տվյալներով հիմնավորված չէ վերաբերնի դատարանի այն հետևությունը, որ մեղադրյալը չի թաքնվի վարույթն իրականացնող մարմնից, և որ նրա հետագա պատշաճ վարքագիծը և գրավի կիրառման անհրաժեշտությունը երաշխավորում են Ուժանի գյուղապետարանը և ՀՀ Ազգային ժողովի մի շարք պատգամավորներ: Պատգամավորների կամ գյուղապետարանի նման միջամտությունը բողոքի հեղինակը համարում է միջամտություն արդարադատության իրականացնանը:

Բացի այդ, վերաքննիչ դատարանի որոշման մեջ չի նշվել, թե մեղադրյալի հետագա պատշաճ վարքագիծը և գրավի կիրառման անհրաժեշտությունը ինչով են պայմանավորված:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է քեկանել ՀՀ քրեական վերաբերնիշ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշումը մեղադրյալ Տ.Զակորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխելու և Տ.Զակորյանին կալանքից գրավի կիրառմամբ ազատելու մասին, և օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշմանը Տ.Զակորյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքի ժամկետը երկարացնելու մասին:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը աետք է բավարարել հետևյալ պատճառաբանություններով.

3.1. Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար մեղադրվող անձանց գրավի կիրառմամբ կալանքից ազատ արձակելու հմարավորությունը.

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի՝ գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, եթե ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ «Գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեքը երեք, այլ արժեքը երեք ծևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով»:

Այսպիսով, ՀՀ ներքին օրենսդրության հիման վրա՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար գրավի կիրառումն անթույլատրելի է, իսկ Տ.Զակորյանին մեղադրանը եր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության համար, որն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի՝ ծանր հանցագործություն է:

Մինչդեռ ՀՀ քրեական վերաբերնիշ դատարանը գտել է, որ «կոնկրետ դեպքով մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի է և բխում է մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից»:

Համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Սույն հոդվածի 1-ին մասի (c) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր որ անհապաղ տարկում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատարանության իրավունք կամ մինչև դատարանությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատարանության ներկայանալու երաշխիքներով»:

Խնդրո առարկա հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նոտեցումը հստակ արտահայտված է սույն գործին փաստական և իրավական առումներով նման Կաբալերոն ընդդեմ Միացյալ Թագավորության (Caballero v. THE UNITED KINGDOM, Application no. 32819/96, 08.02.2000թ.) և Էս Բի Սի Սի ընդդեմ Միացյալ Թագավորության (S.B.C. v. THE UNITED KINGDOM, Application no. 39360/98, 19.06.2001թ.) գործերով վճիռներում: Դրանցում Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ այն պայմաններում, եթե գրավի կիրառմամբ անձին ազատ արձակելու հարցի քննարկման հնարավորությունը որոշակի գործերով ի սկզբանե արգելված է օրենսդրությամբ, ապա մինչդատական վարույթի ժամանակ կալանքի հարցի լուծման նկատմամբ դատական վերահսկողության ննան սահմանափակումը կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում է (տե՛ս Կաբալերոյի գործով վճռի §§18-21-ը, Էս Բի Սի գործով վճռի §22-ը և §23-ը):

Այսպիսով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմից բխում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս ՀՀ իրավասու դատարանները լիազորված են քննարկել դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա այդպիսի միջոց է գրավը:

Ըստ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Հետևաբար՝ «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմը ՀՀ իրավունքի բաղկացուցիչ մասն է, և ՀՀ իրավասու դատարանները, անկախ անձին մեղսագրված հանցագործության ժանրության աստիճանից, լիազորված են քննարկել մեղադրյալին գրավի կիրառմանը կալանքից ազատ արձակելու հնարավորության հարցը:

3.2. ՀՀ քրեական վերաբենիչ դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը.

Քրեական վերաբենիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշումը բեկանելու մասին վճռաբեկ բողոքի պահանջը բավարարելու կամ մերժելու հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանն ըստ էության պետք է պատասխանի հետևյալ հարցին. արդյոք Տ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխելու և Տարոն Շակոբյանին մեկ միլիոն դրամ գրավի կիրառմանը կալանքից ազատելու մասին ՀՀ քրեական վերաբենիչ դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշումն օրինական է և հիմնավորված՝ թե՝ ոչ:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քնննան նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցիչ, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին»: Նույն հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ քննելով միջնորդությունը՝ դատավորը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմից միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցը որոշելիս դատարանն իրավունք ունի ճանաչել մեղադրյալին գրավով ազատելու հնարավորությունը և նշանակել գրավի գումարը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաբենիչ դատարանի կողմից»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դատական ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին.

2) որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին.

3) բողոքն առանց բավարարման թողնելու մասին»:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքում, եթե նիստին ներկայացված չեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութեր, դատարանը որոշում է կայացնում տվյալ խափանման միջոցը վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին»:

Ինչպես երևում է վերը մեջբերված իրավադրույթներից՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցերում առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի իրավասությունն էականորեն տարբերվում է: Առաջին ատյանի դատարանը լիազորված է քննիչի կամ դատախազի միջնորդության հիման վրա ըստ եռթյան լուծում տալ մեղադրյալին կալանավորելու (կալանքի ժամկետը երկարացնելու) կամ կալանքից ազատ արձակելու հարցին: Մասնավորապես՝ առաջին ատյանի դատարանը, ինչպես տվյալ միջնորդությունը քննարկելիս, այնպես էլ հետագայում, լիազորված է կալանքը փոխարինելու դրա այլընտրանքային խափանման միջոց գրավով:

Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածին համապատասխան՝ վերաքննիչ դատարանն իրավասու է միայն իրականացնելու որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում:

Ընդ որում, այս գործունեությունն իրականացնելիս ՀՀ քրեական վերաքննիչ դատարանն իրավասու չէ դեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ բաժնի դրույթներով, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 384-րդ հոդվածի հիման վրա այդ բաժնի դրույթներով պետք է դեկավարվել միայն առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումների՝ գործն ըստ եռթյան լուծող, վարույթն սկսելը կամ դրա շարունակվելը բացառող որոշումների բողոքարկման և դրանց դատական վերանայման պարագայում: Խսկ մեղադրյալին կալանավորելու կամ չկալանավորելու, կալանքի ժամկետը երկարացնելուց հրաժարվելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման և բողոքի քննության կարգը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով ստացել է առանձին օրենսդրական կանոնակարգում:

Հետևաբար՝ մեղադրյալին կալանավորելու կամ չկալանավորելու, կալանքի ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման և բողոքի քննության ընթացքում վերաքննիչ դատարանն իրականացնում է ոչ թե գործի անբողջ ծավալով ըստ եռթյան քննություն (վերաքննություն), այլ ավելի սահմանափակ գործունեություն՝ համապատասխան որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում:

Մասնավորապես՝ եթե բողոքարկվել է մեղադրյալին կալանավորելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը, վերաքննիչ դատարանն իրավասու չէ անդրադառնալ կալանքը գրավով փոխարինելու հարցին: Մինչդատական վարույթի ընթացքում առաջին ատյանի դատարանի կայացրած՝ անձի կալանավորման կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշման բողոքարկման դեպքում կալանքը գրավով փոխարինելու հարցի լուծման լիազորությամբ օրենսդիրը վերաքննիչ դատարանին չի օժնել: Օրենքի այս մեկնաբանությունը հիմնված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասի վրա, որը սահմանում է քննարկվող գործերով դատական ստուգման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումների սպառիչ ցանկը, և այն չի ներառում ստորադաս դատարանի որոշման փոփոխումը և ստորադաս դատարանի ընտրած խափանման միջոց կալանքի փոխարեն գրավի կիրառումը:

Այսինքն՝ օրենսդիրն անձին կալանավորելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման՝ վերադասության կարգով դատական ստուգման առարկայի մեջ գրավի հարցի լուծումը չի ներառել: Փոխարենը, այդ դեպքերում պաշտպանության կողմն ազատ է ցանկացած պահի կալանավորված անձին գրավով ազատելու (կալանքը գրավով փոխարինելու) միջնորդություն հարուցել առաջին ատյանի դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մաս), քանի որ գրավը կիրառվում

է միայն այն դեպքում, եթե առկա է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս):

Մինչդեռ գործի նյութերից երևում է, որ ոչ մեղադրյալ Տ.Հակոբյանը և ոչ էլ նրա պաշտպանն առաջին ատյանի դատարանին չեն դիմել մեղադրյալին կալանքից գրավով ազատելու միջնորդությամբ, այլ նույն պահանջով բողոք են ներկայացրել ՀՀ քրեական վերաբերնից դատարան:

Հետևաբար՝ Տ.Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու որոշումը ՀՀ քրեական վերաբերնից դատարանը կայացրել է այն պայմաններում, եթե օրենքով լիազորված չէր նման որոշում կայացնելու: Ուստի դրանով վերաբերնից դատարանը թույլ է տվել օրինականության սկզբունքի խախտում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդված), ինչը քրեադատավարական օրենքի էական խախտում է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ և 398-րդ հոդվածներ) և որոշումը բեկանելու հիմք:

Ինչ վերաբերում է մեղադրյալ Տ.Հակոբյանի կալանքի ժամկետը երկարացնելու օրինականությանը և հիմնավորվածությանը, ապա այդ հարցը վերաբերնից դատարան ներկայացված բողոքի պահանջի առարկա չի հանդիսացել, հետևաբար՝ չի վիճարկվել, այն դուրս է նաև վճռաբեկ դատարանում քննարկվող գործի քննության սահմաններից:

Դաշվի առնելով վերը նշված հանգանանքներ՝ դատարանը գտավ, որ ՀՀ քրեական վերաբերնից դատարանի որոշումը պետք է բեկանել և օրինական ուժ տալ Տ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշմանը:

Այդ պայմաններում մեղադրյալ Տ.Հակոբյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց գրավը ենթակա է վերացման, իսկ որպես գրավ մուծված մեկ միլիոն ՀՀ դրամը ենթակա է վերադարձման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ խափանման միջոց գրավի կիրառման հարցով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ելելով վերը շարադրված հիմնավորումներից և դեկավարվելով ՀՀ

Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրվող Տարոն Ռազմիկի Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշումը փոփոխելու և Տարոն Հակոբյանին 1 միլիոն դրամ գրավի կիրառմամբ կալանքից ազատելու մասին ՀՀ քրեական վերաբերնից դատարանի 2007 թվականի մայիսի 2-ի որոշումը, և օրինական ուժ տալ Տ.Հակոբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու մասին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 27-ի որոշմանը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող
Դատավորներ՝

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Դ.ԴՈՒԿԱՍՅԱՆ
Մ.ՄԻՍՈՆՅԱՆ
Ա.ՕՉԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վճռաբեկ դատարան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
ԼՂ/0197/06/08
Վերաքննիչ քրեական դատարանի որոշում
քրեական գործ թիվ ԼՂ/0197/06/08
նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)	Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
նախակցությամբ դատավորներ	Յ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
	Ս.ՕՐԱՆՅԱՆԻ
	Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
	Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
	Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. ՀՀ ոստիկանության քայլ Լոռու մարզի քննչական բաժնում 2008թ. ապրիլի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 53102008 քրեական գործը:

Լոռու մարզի քննչական բաժնի ավագ քննիչի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ Տիգրան Վահրամյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներգրավվել է որպես մեղադրյալ:

2008թ. օգոստոսի 30-ին Տ.Վահրամյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ բավարարվել է քննիչի միջնորդությունը, և Տ.Վահրայանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ երկու ամիս ժամկետով:

2. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ բավարարվել է պաշտպանի միջնորդությունը Տ.Վահրայանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը գրավով փոխարինելու մասին: Որպես գրավի առարկա է սահմանվել 1.000.000 /նեկ միլիոն/ ՀՀ դրամը:

3. Որոշման դեմ վերաբերիչ բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազության դատախազը՝ խնդրելով վերացնել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ Տ.Վահրայանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ որոշումը:

ՀՀ քրեական վերաբերիչ բողոք է ներկայացրել Լոռու մարզի դատախազության դատարանի 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումը բողոքվել է օրինական ուժի մեջ:

4. ՀՀ քրեական վերաբերիչ դատարանի 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2008թ. նոյեմբերի 3-ի որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները

5. Տ.Վահրայանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Ֆրեդո և ընկերներ» ՍՊԸ-ի տնօրեն, «Վորլդ Վիժն ինտերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի Ստեփանավանի տարածքային զարգացման ծրագրի /ՏԶԾ/ ղեկավար, իր վաղեմի ծանոթ Վահագն Ալֆրեդի Գրիգորյանից 2007թ. կեսերին տեղեկանալով նույն թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հիշյալ մասնաճյուղի կողմից կազմակերպվելիք «Տավարաբուծության զարգացումը Ստեփանավանի ՏԶԾ հանայնքներում» ծրագրի շրջանակներում շուրջ 32 մլն դրամով 110 գլուխ հղի կովերի մատակարարնան մրցույթի մասին, Վ.Գրիգորյանի հետ նախնական համաձայնությամբ, իր ղեկավարած ընկերության և այլ անձանց անուններից բազմաթիվ կեղծ փաստաթղթեր, այդ թվում իր մորաքրոջ դուստր անհատ ձեռնարկատեր Յերմինե Ղուկասյանի կողմից իր 110 գլուխ կովեր մատակարարվելու, դրանք «Ֆրեդո և ընկերներ», «Օազիս Սիթի» և «Վահան և Տիգրան» ՍՊԸ-ին հանձնելու վերաբերյալ կեղծ ակտեր և այլ փաստաթղթեր կազմելու միջոցով, խարեւության և վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել են հիշյալ մասնաճյուղի առանձնապես խոշոր չափերի՝ 32.285.000 ՀՀ դրամը, որը ծախսել են իրենց կարիքների համար:

6. Քննիչի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Տ.Վահրայանը ներգրավվել է որպես մեղադրյալ:

Քննիչի նույն օրվա որոշումներով նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և միջնորդություն է ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը դատարանի նույն օրվա որոշմամբ բավարարվել է:

7. 2008թ. սեպտեմբերի 8-ին Տ.Վահրայանի պաշտպան Ի.Գագարովան դիմել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Տ.Վահրայանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին: Տ.Վահրայանն ինքնակամ ներկայացել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշված միջնորդության քննարկմանը և մասնակցել է իր նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ դատական նիստին: Նիստի ընթացքում հայտնաբերվելով

ոստիկանության աշխատակցի կողմից՝ S.Վահրայանը բերման է Ենթարկվել ոստիկանության Լոռու մարզային վարչություն:

8. 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է պաշտպանի միջնորդությունը և S.Վահրայանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինել է գրավով:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

9. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. օգոստոսի 30-ի որոշմամբ բավարարվել է S.Վահրայանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը, և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել 2 ամիս ժամկետով կալանքը: Օգոստոսի 30-ի որոշման մեջ դատարանը նշել է, որ «S.Վահրայանի հանցանքը հիմնավորված է իր և վկաների ցուցմունքներով, կազմված կեղծ փաստաթղթերով ու այլ ապացույցներով»:

10. 2008թ. սեպտեմբերի 8-ին S.Վահրայանի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով S.Վահրայանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոխարինել գրավով:

11. 2008թ. սեպտեմբերի 17-ին S.Վահրայանն ինքնական ներկայացել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, որտեղ հայտնաբերվել և բերման է Ենթարկվել ոստիկանության Լոռու մարզային վարչություն՝ ի կատարումն Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ 2008թ. օգոստոսի 30-ի որոշման:

12. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասը, S.Վահրայանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը փոխարինվել է գրավով:

13. Դատական ստուգման արդյունքում ՀՀ քրեական վերաբերնիշ դատարանը 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ անփոփոխ է քողել ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումը:

Վճռաբեկ բողոքի պահանջը, փաստարկները և հիմքերը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոք բերած անձը գտնում է, որ նախաքննության ընթացքում S.Վահրայանն ամեն կերպ փորձել է խոչընդոտել քննությանը, խեղաթյուրել ճշմարտությունը և այդ նպատակով ուղղորդել վկաներին: 2008թ. օգոստոսի 30-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել S.Վահրայանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավվելու մասին: Սույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացվել դատարան: Դատարանը, հիմնավոր համարելով մեղադրյալ S.Վահրայանի հանցանքն ու հաստատելով, որ նա թաքնվել է ու խուսափում է քրեական վարույթն իրականացնող մարմնից, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանավորումը:

15. 2008թ. սեպտեմբերի 17-ին նույն դատարանը նույն դատավորի նախագահությամբ մեղադրյալ S.Վահրայանի պաշտպանի միջնորդության հիման վրա անդրադարձել է S.Վահրայանի խափանման միջոցին և կալանքը փոխարինել է գրավով, որով փաստորեն հակասել է իր իսկ կողմից 2008թ. օգոստոսի 30-ին կայացրած որոշմանը:

16. Մեղադրյալ Տ.Վահրայանի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հանգամանքի առավել քան բավարար հիմնավորում էր նրա՝ հետախուզման մեջ գտնվելը, իսկ դատարանը հետախուզման մեջ գտնվող անձի նկատմամբ այլ խափանման միջոց ընտրելով, ամբողջությամբ հակասել է իր իսկ կողմից դեռևս 2008թ. օգոստոսի 30-ին կայացրած որոշմանը:

17. ՀՀ քրեական վերաբերնից դատարանը, քննության առնելով առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված բողոքը, այն թողել է օրինական ուժի մեջ, մինչդեռ սույն քրեական գործով ձեռք բերած նյութերը բավարար հիմք են տալիս Ենթադրելու, որ մեղադրյալ Տ.Վահրայանը կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութեր բացընելու կամ կեղծելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու ճանապարհով:

18. Բողոք բերած անձը գտնում է, որ Տ.Վահրայանի գործով կայացրած դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ դատարանների կողմից օրենքի միատեսակ կիրառման և «ապագայում արդարացի պատիժ նշանակելու համար»:

19. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Լոռու մարզի ընդիանուր իրավասության դատարանի սեպտեմբերի 17-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ քրեական վերաբերնից դատարանի 2008թ. հոկտեմբերի 9-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

I. Մինչդատական վարույթի ընթացքում անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցի դատական քննարկմանը նրա մասնակցությունը.

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին. մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցի դատական քննարկմանը մեղադրյալի մասնակցության միակ եղանակը նրան դատարան տանելու է, թե մեղադրյալը կարող է նաև ներկայանալ ինքնակամ:

21. ՀՀ Սահմանադրության 6-րդ մասի համաձայն՝ «(...) Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը (...):»:

22. Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կրնվենցիալի (այսուհետ՝ Կրնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից գրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, եթե դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետի դրույթներին համապատասխան՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով

(...)»:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Զերբակալվածը, վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, ենթակա է ազատման,

եթե (...) լրացել է ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել»:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «(...) ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի (...):

24. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված «անհապաղությունը» ՀՅ քրեական դատավարության իմաստով ձերբակալման եռօրյա ժամկետն է, որից հետո անձը կան ազատ է արձակվում, կան մինչդատական վարույթ իրականացնող մարմնի միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվում է կալանավորումը:

25. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝

«Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի նասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը: Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին»:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունից բխում է, որ «տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն» կոնվենցիոնալ պահանջը ՀՅ ներպետական իրավունքում արտացոլված է դատարանում կալանավորման միջնորդության քննարկմանը վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվող մեղադրյալի մասնակցությունն ապահովելու՝ այդ մարմնի պարտականության մեջ:

26. Այնուհանդերձ, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված «տարվում է» արտահայտությունը մեկնաբանելով՝ ինչպես Կոնվենցիայի, այնպես էլ ՀՅ ներպետական օրենսդրության տրամաբանության ենթատեքստում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալի ներկա գտնվելը դատարանում կարող է տեղի ունենալ ինչպես նախաքննության մարմնի կողմից նրան հարկադրաբար դատարան տաճելով, այնպես էլ դատական նիստին մեղադրյալի ինքնական ներկայանալով: Կալանավորման հարցի քննարկմանը մեղադրյալի մասնակցությունն ազատությունից գրկելու օրինականության ապահովման հիմնական երաշխիքն է, որը չի կարող արիեստականորեն նեղացվել՝ ելնելով դատարանում անձի ներկայությունը ապահովելու դատավարական եղանակներից:

27. Հետևաբար՝ մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցի դատական քննարկմանը մեղադրյալը կարող է մասնակցել նաև ինքնական ներկայանալով: Այսինքն՝ S.Վահրամյանը, իր նկատմամբ խափանման միջոցի դատական քննարկմանը ինքնական ներկայանալով (տես սույն որոշման 11-րդ կետը), գործել է օրինականության սահմաններում:

28. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի նաև հետևյալ հարցին. Եթր հետախուզման մեջ գտնվող անձը հայտնվում է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ, նա պետք է արդյոք անհապաղ տարվի դատավորի մոտ:

29. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(...) քննիչի որոշման հիմնան վրա, սույն օրենսգրքով սահմանված կարգով, հետախուզվող մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց»:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին»:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման նախորդ կետում նշված իրավադրույթները, հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ

խափանման միջոցի ընտրության առումով, չեն բխում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ դատավորի մոտ անհապաղ տարբելու պահանջից: Նշված իրավանորմերը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն են տալիս անձի նկատմամբ ազատությունից գրկելու հետ կապված խափանման միջոց ընտրել անձի բացակայության պայմաններում՝ առանց հնարավորություն ընձեռելու, որ հետախուզման արդյունքուն հայտնաբերված անձը ներկայանա դատարան, և անձի կալանավորման հարցի քննարկումը տեղի ունենա իր ներկայությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեադատավարական օրենքում ամրագրված նման կարգավորումը, կհակասի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին և կոպտորեն կխախտի անձի ազատության իրավունքը, եթե հետախուզման մեջ գտնվող անձի ի հայտ գալուց հետո նա անհապաղ դատարանի առջև չներկայացվի:

31. Սույն որոշման նախորդ կետում Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը հիմնվում է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Այսպես, անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմանը՝ Եվրոպական դատարանը *Հաղենտը ընդդեմ Լեհաստանի* գործով վճռում նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը չի նախատեսում որևէ հնարավոր բացառություն այն պահանջից, որ անձը ձերբակալվելիս կամ կալանավորվելիս պետք է բերվի դատավորի կամ այլ պաշտոնյայի մոտ (Ladent v. Poland, 2008թ., գանգատ N 11036/03, կետ 75): *Գարաբաևն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանը դիրքորոշումը հետևյալն է. այն, որ դատարանը հեռակա որոշում է կայացրել անձին կալանավորելու մասին այն պայմաններում, եթե անձը թաքնվում էր արդարդատությունից և գտնվում էր միջազգային հետախուզման մեջ, չի հակասում Կոնվենցիայի դրույթներին: Սակայն Թուրքմենստանից դիմումատուի վերադառնալուց և Ռուսաստանում ձերբակալվելուց հետո, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա, նա պետք է անհապաղ հասցեր դատավորի մոտ (Garabaev v. Russia, 2007թ., բողոք N 38411/02, կետ 101):

32. Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ ձերբակալված կամ կալանավորված անձանց ազատությունից գրկելու նկատմամբ դատական վերահսկողությունը կարևորագույն երաշխիք է ընդդեմ ազատությունից գրկված անձի նկատմամբ վատ վերաբերմունքի և իրավակիրառ մարմնիների կողմից իշխանության չարաշահման (տե՛ս McKay v. The United Kingdom, 2006թ., գանգատ N 543/03, կետ 32):

Վճռաբեկ դատարանը ևս կարևորում է քրեական դատավարության շրջանակներում ազատությունից գրկված անձին անհապաղ դատարան ներկայացնելու երաշխիքային նշանակությունը:

33. Յիմք ընդումելով ՅՅ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև ազատությունից գրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՅՅ ներպետական օրենդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: Դա հնարավորություն կտա նվազեցնել կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Քայաստանի Քանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը:

34. Յետևաբար՝ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ S.Վահրայանի՝ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ նրա ի հայտ գալուց հետո անհապաղ դատավորի մոտ տարվելու համար: Այդ հանգամանքը չէր կարող ազդել նաև S.Վահրայանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու խնդրանքի իրավունքի իրացման վրա:

II. Տարածության մեջ կատարման պահանջանքի կատարումը.

35. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ հարցը հետևյալն է. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, կայացնելով Տ.Վահրայանի նկատմամբ ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ որոշում, հակասել է արդյոք նախկինում իր կայացրած կալանավորման որոշմանը:

36. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը և գրավը կարող են կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ (...):»:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ (...): Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմից միջնորդությամբ (...):»:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը:»

Նետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմից միջնորդությամբ վերանայել գրավի անրույշտրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»:

37. Նախորդ կետում մեջքերված իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ գրավը, լինելով կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կարող է կիրառվել միայն այն մեղադրյալի նկատմամբ, որի նկատմամբ առկա է խափանման միջոց կալանք ընտրելու մասին դատարանի որոշումը:

Այս պարագայում եթե Վճռաբեկ դատարանն ընդունի, որ Տ.Վահրայանին կալանավորելու և կալանքը գրավով փոխարինելու մասին դատական ակտերի միջև առկա է հակասություն, ապա դրանով գործնականում անհնարին կրաքանչի խափանման միջոց գրավի կիրառման հնարավորությունը՝ ընդհանուր իրավասության դատարաններին կաշկանդելով իրենց կայացրած կալանավորման որոշումներով: Մինչդեռ անձի ազատության կանխավարկածը և մինչդատական վարույթի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը կարող են երաշխավորված լինել միայն այն պայմաններում, երբ կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս դատարանը ազատ լինի:

38. Ուստի բողոք բերած անձի պնդումն այն մասին, որ առկա է հակասություն Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած կալանավորման և գրավի մասին որոշումների միջև, անհիմն է և չի բխում ոչ ներպետական իրավունքից, ոչ էլ դրա մասը կազմող միջազգային իրավունքի նորմերից: Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դրսևորած նոտեցումն իրավաչափ է ինչպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, այնպես էլ ՀՅ ներպետական օրենսդրության ինաստով:

III. Տ.Վահրայանին կալանավորելու որոշումը և նրա անմեղության կանխավարկածը.

39. Սույն գործով Վճռաբեկ դատարանն ըստ էության պետք է պատասխանի նաև հետևյալ հարցին. խախտվել է արդյոք Տ.Վահրայանի անմեղության կանխավարկածը, երբ նրան կալանավորելու մասին դատական ակտում նրա հանցանքը հիմնավորված է համարվել:

40. ՀՅ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝

«Դանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ նտած դատավճռով:»

(...)»

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ նտած դատավճռով:»

(...)

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետեւությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

(...)

5. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր»:

41. Վճռաբեկ դատարանն իր մտահոգությունն է արտահայտում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացվող դատական ակտերում, մասնավորապես S. Վահրապյանին կալանավորելու որոշման մեջ անձի մեղավորության հարցերի քննարկման կապակցությամբ (տես սույն որոշման 9-րդ կետը): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դա սահմանադրական և քրեադատավարական կարևորագույն սկզբունքի՝ անմեղության կանխավարկածի խախտում է:

42. Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս առաջադրված մեղադրանքում անձի մեղավորության հարցը քննարկման առարկա դարձնելով՝ խափանման միջոցը ծեռք է բերում պատժիչ նպատակ: Մինչեւ խափանման միջոցը կիրառման նպատակով տարրերվում է պատժից:

Խափանման միջոցի կիրառման նպատակը քրեական գործի մինչդատական և դատական քննության ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, ինչպես նաև դատավճռի կատարումն ապահովելն է: Մասնավորապես, կալանքի, որպես խափանման միջոցի, կիրառման վարույթը միտված չէ առաջադրված մեղադրանքի վերաբերյալ փաստական տվյալների հավաքմանը, ստուգմանն ու գնահատմանը: Այդ վարույթի նշանակությունն այն է, որ քննարկվի և լուծվի կալանավորված անձին հասարակությունից ժամանակավորապես մեկուսացմելու և հսկողության ներքո պահելու անհրաժեշտության հարցը՝ ելելով գործի քննության շահերից:

Այլ կերպ՝ կալանավորման նպատակն է նախաքննության և դատական քննության բնականոն գործընթացի ապահովումը, քրեական գործի բնականոն քննությանը մեղադրյալի (կասկածյալի) դիմակայության կանխումը, դատավարական գործընթացին մեղադրյալի մասնակցության ապահովումը, ոչ թե նրան պատժելը կատարած հանցանքի, քննության ընթացում դրսնորած ոչ պատշաճ վարքագիծի համար:

43. Խափանման միջոցի մասին որոշումն ընդունվում է, եթե գոյություն ունեն այդ որոշումը պարտադրող հանգանաքներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մաս), և եթե այդ հանգանաքները վերանում են, ապա քննիչը (դատարանը) մինչև գործն ըստ էտության լուծելը պարտավոր է այդ որոշումը վերացնել: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա (տես Ա. Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008թ. հոկտեմբերի 31-ի որոշման 20-րդ կետը):

Հակառակ դրան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ անձի հանցագործությունը հիմնավորված ճանաչելը հիմք է պատիժ կիրառելու համար: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ հանցագործության մեջ անձի մեղավորությունը պետք է հաստատվի «ողջամիտ ենթադրություններից» շատ ավելի բարձր ապացուցողական չափանիշով՝ վերաբերելի փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

44. Այսպիսով, S. Վահրապյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս նրա հանցանքը հիմնավորված ճանաչելով՝ դատարանը խափանման միջոցին հաղորդել է պատժի տարրեր, ինչն արգելված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով: Նետևաբար՝ S. Վահրապյանին կալանավորելու մասին դատական ակտում նրա հանցանքը հիմնավորված համարելը նրա անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքի խախտում է:

45. Սույն որոշման 40-44-րդ կետերից բխում է, որ կալանավորումը, լինելով մեղադրյալի (կասկածյալի) դատավարական պատշաճ վարքագիծն ապահովող միջոց, կրելով

ժամանակավոր և պայմանական բնույթ, չի կարող կանխորոշել հետագայում անձի մեղավորությունը մեղսագրված արարքում, առավել ևս նշանակվող «արդարացի պատիժ»:

46. Այսպիսով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, անփոփոխ թողնելով Տ.Վահրայանի վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումը, դատական ակտը բեկանելու հիմք հանդիսացող նյութական կամ դատավարական օրենքի խախտում թույլ չի տվել: Հետևաբար, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը, հաշվի առնելով սույն որոշման մեջ բերված պատճառաբանությունները, պետք է թողնել անփոփոխ, իսկ բերված բողոքն առանց բավարարման:

47. Սույն գործով բողոքարկված դատական ակտերը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառում ապահովելու սահմանադրական գործառույթի, ինչպես նաև իրավունքի զարգացման օրենսդրական գործառույթի իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Վերոգրյալի հիման վրա և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգործի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը


Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Տիգրան Մայիսի Վահրայանի վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Հայագահող՝
դատավորներ՝

Ա.ՄԿՐՏՉՈՒՅՑԱՆ
Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Յ.ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ս.ՕՐԱՆՅԱՆ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆ
Վ.ԱԲԵԼՅԱՆ
Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Վճռաբեկ ՂԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ՀՅՇՐԴՆ/0106/01/08
Նախագահող դատավոր՝ Յ.Ասատրյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ՂԱՆԻԵԼՅԱՆԻ
Ր.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՐԱՆՅԱՆԻ

2009թ. ապրիլի 10-ին

ք. Երևանում

դրնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Վարդան Մեսրոպի Մինասյանի պաշտպաններ Ռ.Սահակյանի, Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի վճռաբեկ բողոքը ՀՅ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատճենունը

1. 2007թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 18-ի սահմաններում, անհայտ անձի կողմից, ապօրինաբար պահվող հրազենով, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, դիտավորությամբ Որբերտ Մայիսի Վարդապետյանի, Վահագն Ռազմիկի Հովհաննիսյանի և Գևորգ Լևիկի Ստեփանյանի վրա կրակոցներ արձակելու, դրա հետևանքով Գ.Ստեփանյանին կյանքից զրկելու, իսկ Ռ.Վարդապետյանի և Վ.Հովհաննիսյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու փաստի առիվ ՀՅ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 20114307 քրեական գործը:

2. 2007թ. դեկտեմբերի 22-ին Վ.Մինասյանը ձերբակալվել է:

3. 2007թ. դեկտեմբերի 25-ին Վ.Մինասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՅ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2007թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 16-ի սահմաններում, Աբովյան քաղաքի Բարեկամության փողոցում երթևեկության ընթացքում ձայնային ազդանշաններ տալու պատճառով բազմաթիվ անձանց ներկայությամբ վիճաբանել է

Ո.Վարդապետյանի հետ, որի ընթացքում նրանք մոտ 10 րոպե շարունակ, միմյանց նկատմամբ բռնություն գործադրելով, քաշքշել են իրար և տվել փոխադարձ հայհոյանքներ՝ այդ կերպ դիտավորությամբ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և արտահայտելով բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ: Այնուհետև, շարունակելով խուլիգանական գործողությունները, մի կողմից Վ. Մինասյանը, նրա ընկեր Յ. Թանդարյանը, Ս.Արդուխանյանը և ինքնությունները չպարզված անձինք, իսկ մյուս կողմից Ո.Վարդապետյանը, նրա ընկեր Գ.Ստեփանյանը, Վ.Յովիաննիսյանը և ինքնությունները չպարզված անձինք վիճաբանության հանգամանքները պարզաբանելու նպատակով հավաքվել են Արովյան-Զրաբեր ավտոճանապարհի 4-րդ կմ հատվածի հարևանությամբ գտնվող «Կանալ» կոչվող տարածքում և վիճաբանել միմյանց հետ:

Խուլիգանության ընթացքում «Կանալ» կոչվող տարածքում Վ. Մինասյանը, գործադրելով իր մոտ պահվող «Բայկալ-442» մոդելի «ХРМ 7568» համարի հրազեն հանդիսացող ատրճանակն ու «Սայգա-12С» մոդելի «H04431605» համարի որսորդական, ողորկափող ինքնալիցը կարարինը, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կրակոցներ է արձակել Ո. Վարդապետյանի և Վ. Յովիաննիսյանի վրա նրանց սպանելու դիտավորությամբ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել: Վ.Մինասյանի արձակած կրակոցներից Վ. Յովիաննիսյանի և Ո.Վարդապետյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս:

4. 2007թ. դեկտեմբերի 25-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի որոշմամբ Վ.Մինասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

5. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. փետրվարի 18-ի, 2008թ. ապրիլի 18-ի, 2008թ. նայիսի 16-ի, 2008թ. հուլիսի 17-ի և 2008թ. սեպտեմբերի 17-ի որոշումներով մեղադրյալ Վ.Մինասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացվել է:

6. 2008թ. հուլիսի 4-ին որոշում է կայացվել Վ.Մինասյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: 2008թ. օգոստոսի 13-ին Վ.Մինասյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով:

7. 2008թ. հոկտեմբերի 1-ին Վ.Մինասյանի և մյուսների վերաբերալ քրեական գործը մեղադրական եղանակացությամբ ուղարկվել է ՀՀ հյուսիսային քրեական դատարան:

8. 2008թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ հյուսիսային քրեական դատարանը որոշում է կայացրել քրեական գործն ըստ մեղադրանքի Վարդան Մինասյանի ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով ընդունել վարույթ: Նշված որոշմամբ Վ.Մինասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

9. ՀՀ վերաբերնիշ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ պաշտպանների վերաբերնիշ բողոքը՝ առանց բավարարման:

10. ՀՀ վերաբերնիշ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել Վ.Մինասյանը և նրա պաշտպաններ Ռ.Սահակյանը, Լ.Սահակյանը և Ե.Վարոսյանը: Բողոքը Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 9-ի որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ընդունվել է վարույթ: Ներկայացված վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի բննության համար եական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

11. ՀՀ հյուսիսային քրեական դատարանի՝ քրեական գործը վարույթ ընդունելու վերաբերյալ 2008թ. հոկտեմբերի 15-ի որոշմամբ Վ.Մինասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը հետևյալ պատճառաբանությամբ. «(...) նկատի ունենալով, որ դեռևս 07.10.2008թ.-ին լրացել է Վարդան Մեսրոպի Մինասյանին կալանավորման տակ պահելու

ժամկետը, ուստի գործը վարույթ ընդունելու հետ միաժամանակ պետք է լուծել նաև նրա նկատմամբ խափանման միջոցի հարցը»:

12. ՀՀ վերաբնիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի որոշումն անփոփոխ է թողնվել այն պատճառաբանությամբ, որ «Եվրոպական դատարանի այս (Ձեսիուսն ընդդեմ Լիտվայի գործով որոշման մեջ արտահայտված) իրավական դիրքորոշման լույսի ներքո գնահատելով Հյուսիսային քրեական դատարանի 15.10.2008թ. որոշման՝ մեղադրյալ Վարդան Մինասյանին կալանքի տակ պահելու կարգադրությունը, Վերաբնիչ դատարանը գտնում է, որ դրա «անօրինական» լինելու մասին պաշտպանների փաստարկները հիմնավորված չեն, քանի որ Վ.Մինասյանի՝ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում կարող էր տեղի ունենալ հակառակ պարագայում, եթե դատարանը նման կարգադրություն չաներ, և մեղադրյալը շարունակաբար գտնվեր կալանքի տակ՝ դատարանության ընթացքում»:

13. ՀՀ վերաբնիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման մեջ նշվում է նաև, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ գլխի դրույթները, որոնք կարգավորում են ստացված քրեական գործը դատական քննության նախապատրաստելու ընթացքում իրականացվող դատավարական գործողությունները, սահմանում է, որ այդ փուլում բոլոր հարցերը քննարկվում են և դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են դատավորի կողմից՝ առանց դատավարության մասնակիցների ներկայության և առանց դատական նիստ հրավիրելու: Նշված գլխում սահմանված չէ որևէ ընթացակարգ, որը դատարանին հնարավորություն կտար մեղադրյալին մասնակից դարձնելու որոշման կայացմանը»:

Իսկ նյութերից երևում է, որ դատարանը կայացված որոշումը տրամադրել է պաշտպանական կողմին, որոնք օգտվել են այն բողոքարկելու, դրա դեմ իրենց փաստարկներն ու հիմնավորումները ներկայացնելու հնարավորությունից: Այսինքն, պաշտպանական կողմը զրկված չի եղել Վարդան Մինասյանի կալանավորման օրինականությունը արդյունավետ կերպով վիճարկելու իրավունքից»:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոք բերած անձը, վկայակոչելով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ Ձեսիուսն ընդդեմ Լիտվայի (JĘCIUS v. LITHUANIA, 2000թ., գանգատ N 34578/97) գործով որոշումը, նշում է, որ 2008թ. հոկտեմբերի 7-ից սկսած՝ Վ.Մինասյանը ապօրինաբար գտնվել է անազատության մեջ:

Վ.Մինասյանին կալանքի տակ պահելու ժամկետը լրացել է 2008թ. հոկտեմբերի 7-ին, և այդ օրը նա պետք է ազատ արձակվեր, սակայն նա մինչև 2008թ. հոկտեմբերի 15-ը գտնվել է անազատության մեջ՝ առանց օրենքով սահմանված կարգով դատարանի կողմից կայացված որոշման: Վ.Մինասյանի նկատմամբ խափանման միջոցի ընտրության հարցը լուծվել է ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի՝ քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ, ինչն ըստ բողոքաբերի հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ և ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ, 11-րդ հոդվածի 5-րդ և 142-րդ հոդվածի 4-րդ մասերի խախտում:

15. Բողոքաբերը նշում է, որ ՀՀ հյուսիսային քրեական դատարանը քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելիս չէր կարող Վ.Մինասյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրել: Քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելիս ՀՀ հյուսիսային քրեական դատարանը չէր կարող ծանոթ լինել քրեական գործի նյութերին և դրանց ծանոթանալու հնարավորություն կստանար միայն քրեական գործը վարույթ ընդունելուց հետո: Բողոքաբերը նշում է նաև, որ ՀՀ հյուսիսային քրեական դատարանը Վ.Մինասյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց է ընտրել այն պայմաններում, եթե ծանոթ չի եղել վերջինիս կողմից կատարված դեպքին առնչություն ունենալու հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության մասին վկայող որևէ փաստաթղթի:

16. Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շաբթ նախադեպային որոշումներ՝ բողոքաբերը նշում է, որ ազգային դատական մարմինները պարտավոր են հաշվի առնել բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ են պարզելու համար, թե կա արդյոք հասարակական շահ, համապատասխան և բավարար պատճառ, որը, հաշվի առնելով անմեղության կանխավարկածը, արդարացնում է նահանջը անձի ազատության իրավունքի հարգանքից: Անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ հիմքերը պետք է հիմնավորված լինեն կոնկրետ փաստացի նյութերով, տվյալներով, մինչդեռ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ առաջին ատյանի դատարանը ընդդեմ դատարանի չի նշել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու որևէ հիմք:

17. Բողոքաբերը նշում է, որ Վ.Մինասյանի նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցը լուծելիս ՀՀ հյուսիսային քրեական դատարանը պարտավոր էր ապահովել պաշտպանական կողմի հնարավորությունը արդյունավետ կերպով վիճարկելու Վ.Մինասյանի կալանավորնան օրինականությունը, ինչը չի կատարել:

18. ՀՀ հյուսիսային քրեական դատարանը հաշվի չի առել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կալանավորումը վերացնելու բավարար հիմք չի համարել այն հանգամանքները, որ Վ.Մինասյանը դատվածություն չունի, արտավորված չի եղել, ունի բարձրագույն իրավաբանական կրթություն, ամուսնացած է, խնամքին ունի երեք անչափահաս երեխա, կին և տարեց մայր, ունի մշտական բնակության վայր, աշխատանք:

19. Վկայակոչելով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ /2006/13 հանձնարարականի 21-րդ կանոնը, որի համաձայն՝ անձին կալանավորելու մասին դատական իշխանության ցանկացած որոշում պետք է լինի պատճառաբանված, բողոքաբերը նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ ՀՀ հյուսիսային քրեական դատարանն իր որոշման պատճառաբանական մասում օրենքով սահմանված կարգով չի քննարկել խափանման միջոցի հիմնավոր կամ անհիմն լինելը, չի պատճառաբանել իր որոշումը: Արդյունքում դատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ չկա հիմնավոր կասկած, որ Վ.Մինասյանն առնչություն չունի իրեն մեղսագրվող արարքի հետ, հաշվի չի առնվել, որ բացակայում են նրան կալանավորելու հիմքերը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոքաբերը խնդրել է Վ.Մինասյանի կալանավորումը որպես խափանման միջոց վերացնել և նրան կալանքից ազատ արձակել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

20. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե ՀՀ հյուսիսային քրեական դատարանն իրավասու՞ էր արդյոք Վ.Մինասյանի նկատմամբ խափանման միջոցի ընտրության հարցը լուծել քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

I. Դատական քննության նախապատրաստության փուլում անձի կալանավորման հարցը:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «(...) Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացվում է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 291-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարան մուտք եղած քրեական գործը դատավորները սահմանված կարգով իրենց վարույթ են ընդունում, որի մասին կայացվում է որոշում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

1) դատական քննություն նշանակելու մասին.

2) քրեական գործի վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին.

3) քրեական գործի վարույթը կասեցնելու մասին.

4) գործը մեղադրողին վերադարձնելու մասին.

(...)

6) գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին.

7) ինքնաբացարկի մասին»:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի համաձայն՝ «Որոշումներ կայացնելու հետ միաժամանակ, բացի գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշումից, դատարանը պարտավոր է քննել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում»:

22. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի վերոնշյալ հոդվածների վերլուծությունից երևում է, որ անձի վերաբերյալ քրեական գործը դատարան ուղարկելու դեպքում, եթե մինչդատական վարույթում անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը չի վերացվում, ապա դրա ժամկետի ընթացքը կասեցվում է, և անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ընտրված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու մասին դատարանի որոշման բացակայության պայմաններում անձը շարունակում է գտնվել անազատության մեջ մինչև քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը 15-օրյա ժամկետում կայացնի ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը և վերջիններիս կայացնան հետ մեկտեղ լուծի խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, իսկ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում՝ դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը: Այլ կերպ՝ ՀՅ քրեադատավարական օրենսդրության նշված կարգավորումից բխում է, որ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ անձի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել և անձը շարունակաբար կարող է գտնվել կալանքի տակ՝ առանց դատավարական հիմքի, այն է՝ խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշման:

II. Քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշմամբ անձի կալանքի հարցի լուծումը.

23. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով»:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս (...):»:

24. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով. (...) գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար, (...):

25. Ձեսիուսն ընդդեմ Լիտվայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետից բխում է, որ անձի կալանքի հիմնավորումը սոսկ այն փաստով, որ գործը փոխանցվել է դատարան, չի կարող հանդիսանալ «օրինական» հիմք անձի կալանքը շարունակելու համար (JĘCIUS v. LITHUANIA, 2000թ., գանգատ N34578/97, կետ 63):

Նշված վճռի 68-րդ կետում Եվրոպական դատարանն այն մոտեցումն է արտահայտել, որ Լիտվայի նախկին քրեական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 6-րդ կետը (որի բովանդակությունն ամբողջովին համապատասխանում է ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությանը), չի կարող օրինական հիմք լինել կալանքի կիրառման համար: Կալանքի ժամկետը սկզբունքորեն «օրինական է», եթե այն հիմնված է դատարանի որոշման վրա (JĘCIUS v. LITHUANIA, կետ 68):

26. Յաշվի առնելով Զեսիուսն ընդդեմ Լիտվայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացրած հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրողի կողմից գործը դատարան ուղարկված լինելու հիմքով անձին կալանքի տակ պահելու ժամկետի կասեցումն անձի ազատության իրավունքի անօրինական սահմանափակում է: Ուստի ՀՀ քրեադատավարական օրենքի 138-րդ հոդվածի 3-րդ մասում առկա կարգավորումը հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ և 136-րդ հոդվածի 2-րդ մասերին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, եթե կալանքի երկանյա ժամկետի ավարտին մնացել է 15 օրից քիչ ժամանակ, այսինքն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկի կայացման ժամկետից պակաս ժամանակ, նախաքննական մարմինը գործը դատարան ուղարկելու հետ միաժամանակ պետք է լուծի նաև անձի կալանքի հարցը, այն է՝ պետք է անձին ազատ արձակի, եթե վերացել են նրան կալանքի տակ պահելու հիմքերը, կամ դատարանին միջնորդություն ներկայացնի կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ, եթե առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերը:

27. Յետնաբար՝ ՀՀ հյուսիսային քրեական դատարանն իրավասու էր քրեական գործ վարույթ ընդունելու մասին որոշման կայացման հետ մեկտեղ լուծել Վ.Մինայանի կալանքի հարցը, քանի որ դա բխում է կոնվենցիայով նախատեսված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ապահովման անհրաժեշտությունից:

III. Բողոքաբերի մյուս փաստարկները.

28. Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում բողոքաբերի անդումն այն մասին, որ Վ.Մինայանի նկատմանը խափանման միջոցի հարցը լուծելիս ՀՀ հյուսիսային քրեական դատարանը չի ապահովել պաշտպանական կողմի հնարավորությունը արդյունավետ կերպով վիճարկելու Վ.Մինայանի կալանավորման օրինականությունը, և իր համաձայնությունն է արտահայում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008թ. դեկտեմբերի 23-ի որոշման մեջ արտահայտված դիրքորոշման հետ (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

29. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ ՀՀ հյուսիսային քրեական դատարանը հաշվի չի առել, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կալանավորումը վերացնելու բավարար հիմք չի հանարել Վ.Մինայանի ինքնությունը բնութագրող հանգամանքները, ապա գործի նյութերից երևում է, որ վերաքննիչ դատարանն անդրադարձել է այդ հարցին և արդյունքներով հանգել է ճիշտ հետևության (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի մեկնաբանության վերաբերյալ իր դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արտահայտել է Ասլան Ավետիսյանի գործով 2008թ. հոկտեմբերի 31-ին կայացված ԱՎԴ/0022/06/08 որոշման մեջ):

30. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական քննության նախապատրաստության փուլում անձի կալանավորման հարցի կապակցությամբ սույն գործով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ուստի, ելնելով վերոգրյալից և դեկավարվելով Յայաստանի Յանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Յայաստանի Յանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Կարդան Մեսրոպի Մինայանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին ՀՀ հյուսիսային քրեական դատարանի 2008թ. հոկտեմբերի 15-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի

2008թ. դեկտեմբերի 23-ի որոշումը Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններով թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում իրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դատավորներ՝	<hr/> <hr/> <hr/> <hr/> <hr/>	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ Ե.ՂԱՆԻԵԼՅԱՆ Ր.ՂՈՒԿԱՍՅԱՆ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ Ս.ՕՐԱՆՅԱՆ
---	-------------------------------	---

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ 2009 թվականի դեկտեմբերի 7-ին քաղաքացիներ Ա.Զեյնալյանի, Ա.Սարգսյանի և Կ.Ռուբինյանի, Մ.Դանիելյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից կայացվել է ՍՊԸ-844 որոշումը:

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐՍԱՆԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆԻ, Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ Կ. ՌՈՒԲԻՆՅԱՆԻ,
Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ ՀՈՐՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐՍԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՏԱՍԽԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

7 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Յ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի,
Մ.Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի, Յ. Նազարյանի (գեկուցող),

մասնակցությամբ՝ դիմումներ Ա.Զեյնալյանի, Մ.Դանիելյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա.Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի և 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրսքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Ա.Զեյնալյանի, Ա.Սարգսյանի և Կ.Ռուբինյանի, Մ.Դանիելյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ՝ Ա.Զեյնալյանի՝ 01.06.2009թ., Ա.Սարգսյանի և Կ.Ռուբինյանի՝ 09.11.2009թ., Մ.Դանիելյանի՝ 17.11.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով՝ սահմանադրական դատարանի 17.11.2009թ. ՍՊԸ-101 և 24.11.2009թ. ՍՊԸ-106

աշխատակարգային որոշումներով վերոհիշյալ դիմումներով գործերը միավորվել են և քննվել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողների գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐՁԵՑ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան» վերտառությամբ 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերը սահմանում են.

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմքողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

.....

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելով՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին»:

2. Վիճարկելով վերոնշյալ նորմերի սահմանադրականությունը՝ դիմողները գտնում են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը ծևակերպված է այնքան անորոշ, «ոչ միանշանակ, ոչ հստակ», որ դատարանները դրանք ընկալում և կիրառում են որպես հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից դրսնորած անգործության դատական կարգով բողոքարկման կարգ: Այդ անորոշությունը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, «ուստի՝ վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության իրավական որոշակիության սկզբունքներն ամրագրող՝ 1-ին, 3-րդ, 6-րդ և 43-րդ հոդվածներին»: Ըստ դիմող Ա. Զեյնայանի՝ «Դատարանների՝ դատական ակտերով վերոգրյալ նորմին տրված մեկնաբանությունից հետևում է, որ անձը կարող է ոստիկանության ոչ իրավաչափ անգործությունից ՀՀ Սահմանադրությանը և Կոնվենցիայով երաշխավորված «դատական պաշտպանություն» հայցել միայն այն պայմանով, եթե ոստիկանության ոչ իրավաչափ անգործությունից դատախազության (որպես դատարանից տարբերվող «պետական այլ մարմնի») առջև «իրավական պաշտպանության նիջոցը» սպառել է, ու այդ նիջոցը եղել է անարդյունավետ: Դատարանի կողմից օրենսգրքի դրույթին տված մեկնաբանությունը կամ, եթե խնդրո առարկա դրույթը հենց այդպես ու այդ նպատակով էլ գրված է, հակասում է... ՀՀ Սահմանադրության 18, 19, Կոնվենցիայի 6, 13 հոդվածներին»: Դիմողի կարծիքով, հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների դրսնորած անգործության դեմ դատական պաշտպանության իրավունքն իրացնելու համար «միջանկյալ օղակ նախատեսելը չի բավարարում՝ իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունքի չափանիշին, ինչը՝ ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչն է»: Դիմողը եզրակացնում է, որ ՀՀ «Քրեական դատավարության»

օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 6, 43-րդ հոդվածներին կամ ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի՝ «, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, «անգործության» մասով հակասում է ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վերաբերյալ նույնարուվանդակ փաստարկներ են ներկայացրել նաև դիմողներ Ա.Սարգսյանը, Կ. Ռուբինյանը և Մ.Դանիելյանը: Բացի դրանից, դիմողներ Ա.Սարգսյանը և Կ. Ռուբինյանը գտնում են, որ ՀՀ «Քրեական դատավարության» օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասով սահմանված պաշտոնատար անձանց գործողություններից և որոշումներից դատական պաշտպանություն հայցելու «սուրսիդիար» սկզբունքի վերացնելու դեպքում ի հայտ կգա շահերի իրական բախում՝ մրցակցություն, նախաքննության մարմին-դատախազություն-դատարան, որտեղ՝ պաշտպանության միջոցի արդյունավետության տեսակետից, ընտրությունը կկատարի դիմողը /բողոք բերողը, ինչն անխուսափելիորեն կիրարի էվոլյուցիան... կրաքարանա թե՛ նախաքննության մարմնի որոշումների, թե՛ դատարանների որոշումների որակը, և վերջապես՝ դատարանի անկախությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողներ Ա.Սարգսյանը և Կ.Ռուբինյանը գտնում են, որ վերջինիս «...վարույթն իրականացնող մարմնի պարտականության» դրույթի պատճառով, թույլ չի տրվում ապահովել «անձի խախտված իրավունքների լիարժեք և ամրողական վերականգնում»: Հետևաբար՝ այդ դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը երաշխավորող 18 և 19 հոդվածներին:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում խոսք է գնում միայն գործողությունների և որոշումների բողոքարկման հնարավորության մասին, սակայն դիմումատուն չի ներկայացրել որևէ փաստարկ առ այն, որ տվյալ նորմի իրավակիրառ պրակտիկայուն դատարանները իրաժարվում են քննել հետաքննության մարմինների աշխատակիցների, քննիչների, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից դրսեւրված անգործության դեմ բերված բողոքները: Պատասխանող կողմը գտնում է, որ այդ նորմում որոշակիության սկզբունքը չի խախտվել և միանշանակորեն բողոքները կարող են բերվել և պետք է քննության առնվեն ինչպես գործողության, այնպես էլ անգործության դեմ: Հետևաբար, վիճարկվող նորմի և ՀՀ Սահմանադրության 1, 3, 6 և 43 հոդվածների միջև որևէ հակասության մասին խոսք չի կարող գնալ:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը սահմանում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունների և կայացրած որոշումների բողոքարկման հերթականությունը, և դատախազական հսկողության իրականացումն այդ գործընթացում «պաշտպանության իրավունքն իրականացնելու համար միջանկյալ օղակ» գնահատվել չի կարող, քանի որ «և դատախազական հսկողությունը, և դատական հսկողությունը միջանց լրացնող ինստիտուտներ են», հետևաբար, ինչպես գտնում է պատասխանողը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության առնչությամբ պատասխանող կողմը գտնում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր կատարման ենթակա են ցանկացած սուբյեկտի կողմից և դրանց չկատարման համար օրենքով սահմանված են պատասխանատվության հանապատասխան միջոցներ: Այսինքն՝ այն դեպքում, եթե դատարանը որոշում է կայացնում պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու անձի իրավունքների և ազատությունների խախտումը, ապա վարույթն իրականացնող մարմնինը չի կարող չկատարել դատարանի որոշումը, հակառակ դեպքում տվյալ պաշտոնատար անձը ենթարկվելու է

պատասխանատվության, այդ թվում՝ քրեական գործությունը հետևաբար, առաջարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

4. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ.

- մինչդատական վարույթում հետաքրննություն և նախաքրննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտի սահմանադրական բովանդակությանը, օրենսդրական կարգավորմանն ու նշանակությանը,

- մինչդատական վարույթում դատական վերահսկողության և դատախազական հսկողության գործառույթների բովանդակությանը, դրանց տարանջատմանը և սահմանադրորեն թույլատրելի շրջանակներին, հաշվի առնելով նաև դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները,

- հետաքրննություն և նախաքրննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկային՝ այնքանով, որքանով առնչվում է դիմումի առարկային:

5. Մինչդատական վարույթում հետաքրննություն և նախաքրննություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ինստիտուտը (ՀՀ քր. դատ. օրենսգրքի 278 հոդվածի 2-րդ մաս, 290 հոդված) որպես քրեական վարույթում անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջոց կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրության ինչպես 18 և 19 հոդվածներում, այնպես էլ 3, 14, 14.1, 16, 17 և անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքի գերակայությունն արտացոլող բազմաթիվ սյլ հոդվածներում ամրագրված նորմերի կենսագործումը: Այն կոչված է ապահովելու անձի ինչպես սահմանադրական, այնպես էլ օրենքով երաշխավորված այլ իրավունքները, ազատությունները՝ վերոհիշյալ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց անօրինական (անիրավաչափ) որոշումներից ու գործողություններից և իրացվում է արդարադատական առանձնահատուկ գործառույթ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության միջոցով: Վերջինս դրսուրվում է նաև քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ հետաքրննության մարմնի, քննիչի կամ դատախազի միջնորդությունները քննելու միջոցով (ՀՀ քր. դատ. օրենսգրքի 278 հոդվածի 1-ին մաս, 282 հոդված):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, վերջինիս՝ «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությունը կրող 39-րդ գլխի նորմերի, համալիր վերլուծությունը վկայում է, որ հետաքրննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) ստուգելու արդյունքում պարզել անձի (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) իրավունքների և ազատությունների խախտման փաստը և կայացնել համապատասխան որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտունը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

Սույն գործով դիմող կողմի ներկայացրած փաստարկների տեսանկյունից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի

սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարևոր այդ նորմերով կարգավորվող քրեադատավարական հարաբերությունների ինչպես սուբյեկտների շրջանակը, այնպես էլ՝ **օբյեկտը**, ելնելով վերոհիշյալ հոդվածի և օրենսգրքի այլ նորմերի համակարգային բովանդակությունից, ինչպես նաև քրեական գործերով արդարադատություն իրականացնելիս դատարանի ընդհանուր լիազորություններից (ՅՅ քր. դատ. օրենսգրքի 41 հոդված): Մասնավորապես՝ վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքրքրության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դատավարության մասնակիցները և այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով: Հիշյալ հոդվածի նույն մասի համաձայն՝ քրեական գործերով մինչդատական վարույթում որպես դատական բողոքարկման անմիջական օբյեկտ (առակա) են հետաքրքրության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ ՅՅ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները, այսինքն՝ այնպիսի որոշումներ ու գործողություններ, որպիսիք հատկապես մատնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում: Միաժամանակ, ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը նվիրված 39-րդ գլուխ 278 հոդվածը (որը վերաբերում է դատական վերահսկողության ոլորտին) սահմանում է (մաս 2), որ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքրքրության մարմինների քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

Նշվածին զուգահեռ, օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասը նախատեսում է նաև հետաքրքրության, նախաքրքրության մարմինների, դատախազի դատական բողոքարկման ենթակա լրացուցիչ այլ գործողություններ ու որոշումներ: ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ բաժնի («Քրեական գործով մինչդատական վարույթ») հոդվածների, 290 հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի իմաստով մինչդատական վարույթում դատական բողոքարկման ենթակա են իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց այն որոշումները և գործողությունները, որպիսիք կայացվել են այդ սուբյեկտների՝ օրենսգրքի 53, 55 և 56 հոդվածներում նախատեսված իրենց ընդհանուր լիազորությունների շրջանակներում: Իսկ օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասը որպես առանձնահատուկ իրավակարգավորում սահմանում է, որ «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքրքրության մարմնի, քննիչի և դատախազի իրավարկելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

Այսուհենդեմ, ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի համաձայն՝ դատարանը, ի թիվս քրեական գործերով ընդհանուր այլ լիազորությունների, իրավասու է «...քննել և լուծել հետաքրքրության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները»: Այսպիսով, մինչդատական վարույթում օրենսդիրը դատարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների և գործողությունների օրինականության, այլև՝ անգործության վերաբերյալ բողոքները, իսկ «...և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը բացարապես վերաբերում է հետաքրքրության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումներին, հետևաբար՝ ՅՅ քրեական օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման շրջանակներում չեղ կարող վերագրվել նաև հիշյալ մարմինների անգործությանը:

6. Դիմողներն իրենց փաստարկներում առաջ են քաշում իրավակիրառական պրակտիկայում ձևավորված այն մոտեցումը, համաձայն որի՝ ՅՅ քրեական դատավարության

օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի դրույթները դատարանների կողմից ընկալվում են որպես նաև քրեական վարույթ իրականացնող մարմինների անգործության դեմ դատական բողոքարկման կարգ, ի հաստատումն որի սահմանադրական դատարան են ներկայացրել ՀՀ ոստիկանության անգործության դեմ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում քննված բողոքի վերաբերյալ կայացված որոշումը և այն ՀՀ վերաբենիչ քրեական դատարանում, ՀՀ վճրաբեկ դատարանում բողոքարկվելու արդյունքում կայացված որոշումները:

Դատական այդ ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ ոստիկանության անգործության դեմ բողոքը քննության է առնվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի հիմքերով և մերժվել այդ նորմում նախատեսված դատախազական բողոքարկման կարգը դիմողի կողմից չպահպանվելու պատճառաբանությամբ: Գործում առկա դատական նման այլ ակտերի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ դատարանները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմի դրույթները մեկնաբանել են նույնակերպ՝ մերժելով անձանց բողոքներն այն դեպքերում, եթե չի պահպանվել քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները և անգործությունը նախօրոք դատախազին բողոքարկելու պահանջը: Գործնականում դատական պրակտիկան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առնչությամբ «գործողություն» եզրույթը հավասարապես վերաբերել է նաև անգործությանը:

7. Ելենով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վերաբերյալ դիմող կողմից հարցադրումներից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այդ նորմի հրավական բովանդակությունը բացահայտել նաև ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին մասում, 18 և 19 հոդվածներում, 91 հոդվածի 1-ին մասում և 103 հոդվածում ամրագրված նորմատիվ պահանջներին համապատասխանության ու դրանց կատարման համար բավարար երաշխիքներ պարունակելու տեսանկյունից՝ այնքանով, որքանով ըստ վիճարկվող նորմի տառացի բովանդակության՝ հետաքրնության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները և գործողությունները ենթակա են ինչպես դատախազական հսկողության, այնպես էլ դատական վերահսկողության: Այս առումով վիճարկվող նորմի իրավակարգավորումից դուրս է հետաքրնության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց և դատախազի անգործության վերաբերյալ բողոքների քննությունը: Դատարն իրավասու է այդպիսի բողոքները քննել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթում բողոքարկման (դատախազական և դատական) հնստիտուտի իրավակիրառման շրջանակներում «գործողություն» և «անգործություն» եզրույթները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մինչդատական վարույթի իրավակարգավորման շրջանակներում նույնարովանդակ մեկնաբանվել չեն կարող: Պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք (այդ թվում՝ քրեական վարույթ իրականացնող մարմիններն ու պաշտոնատար անձինք) ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասի նորմատիվ պահանջի համաձայն՝ իրավասու են կատարելու միայն գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «անգործություն» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում, սույն գործի առարկայի շրջանակներում, պետք է ընկալվի որպես հետաքրնության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց և դատախազի՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ «անգործություն» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում, սույն գործի առարկայի շրջանակներում, պետք է ընկալվի որպես հետաքրնության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց և դատախազի՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորությունների (որոշումների ընդունում, իրենց լիազորություններից բխող գործունեության իրականացում) չկատարում: Վերջինս նույնպես կարող է առաջացնել իրավական հետևանքներ, պատճառ դառնալ մարդկանց սահմանադրական իրավունքների խախտման: Դետևաբար, նման անգործության դատական բողոքարկման նպատակը և ոչ իրավաչափ գործողության դատական բողոքարկման նպատակը

Նույնական են՝ հետապնդում են իրավունքների պաշտպանության համանձան խնդիր: Այլ բան է, որ օրենսդիրը կարող է սահմանել դրանց բողոքարկման տարրեր ընթացակարգեր, սակայն մեկը մյուսով կլանելու և նման իրավակիրառական պրակտիկա ձևավորելու հանգամանքը վկայությունն է այն բանի, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առկա խմբագրությունն իր մեջ անորոշություն է պարունակում և կիրառվում է իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության շրջանակներում:

8. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին մասում նախատեսված դատական բողոքարկման կարգին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հետաքրնության, նախաքրնության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները և գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հետևյալ նախապայմանների դեպքում:

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները և օրինական շահերը,
- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Վերջինիս դեպքում հետևում է, որ անձը դատախազի որոշումը կամ գործողությունը բողոքարկելիս պետք է դիմի նաև վերադաս դատախազին: իսկ իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ նախապայմանի առաջադրումը վիճարկվող նորմի իրավակարգավորման շրջանակներում խոչընդոտ չի կարող հանդիսանալ անձի բողոքն ըստ եռության քննելու համար:

Այսպիսով, ինչպես վկայում էվիճարկվող նորմի իրավական բովանդակությունը, անձն իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իրավունքն իրացնելիս նախ պարտավոր է դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում, այսինքն՝ արդարադատության մատչելիության իր իրավունքն իրականացնել իրավական պաշտպանության մեկ այլ միջոցի նախապես գործադրման պայմանով:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով, մասնավորապես՝ ՍՊՕ-652, ՍՊՕ-665 և ՍՊՕ-690, բազմից անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, կարևորելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ միաժամանակ կարևորել է միջազգային պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում: Այդ կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների (այդ թվում՝ ձևական), կարող է իրավաչափորեն ներառել նաև օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արտադատական միջոցն սպառելու պայման:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնարարանության շրջանակներում այդպիսի պարտադիր պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի անգործությամբ խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, և նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրաբարվական բովանդակությունից: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների ու ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: ՀՀ Սահմանադրության և օրենքների հիման վրա այդպիսի համարժեք միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պարտականությունն է:

ՀՀ Սահմանադրության 5, 91 և 103 հոդվածների նորմերին համապատասխան ՀՀ-ում դատական իշխանությունն ու դատախազությունը սահմանադրաբարվական ինստիտուտցիոնալ անկախ համակարգեր են՝ բաժանված պետական իշխանության այլ (օրենսդիր, գործադիր) մարմիններից, և գործում են Սահմանադրությանը ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

ՀՅ դատական իշխանության սահմանադրաբարավական դերի և բովանդակության բացահայտման ու գնահատման խնդիրներին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում:

ՀՅ Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Քրեական գործերով մինչդատական վարույթում դատախազի լիազորությունները սահմանված են ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 53 հոդվածում, ինչպես նաև «Դատախազության մասին» ՀՅ օրենքի 25 հոդվածում, որոնցում պարունակվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ, ի ապահովումն սահմանադրական վերոհիշյալ պարուականության կատարման, մինչդատական վարույթում հսկողություն իրականացնելիս դատախազը պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար («Դատախազության մասին» ՀՅ օրենքի 25 հոդվածի 3-րդ մաս), օժտված է այնպիսի լիազորություններով, որոնք կոչված են դեկավարելու (ուղղորդելու) հետաքննության մարմնի, քննիչի դատավարական գործունեությունը, ինչպես նաև լուծելու վերջիններիս որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները. «Քացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին» (օրենսգրքի 53 հոդվածի 9-րդ կետ): Վերորպվարկյալ գործառույթները դատախազն իրականացնում է հիշյալ հոդվածում նախատեսված իր լիազորությունների շրջանակներում բողոքում հիմնավորված օրինախախտումները վերացնելու նպատակով դեկավար ցուցումներ և այլ հանձնարարություններ տալով հետաքննության մարմնին, քննիչին կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում վերացնելով նաև վերջիններիս որոշումները:

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինչպես դատախազը, այնպես էլ դատարանն իրավասու են քննելու վերոհիշյալ մարմինների, այդ թվում նաև դատախազի՝ ՀՅ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր լինելու դեմ բերված բողոքները: Սակայն տարբեր են այդ բողոքների քննության արդյունքում խախտված իրավունքի վերականգնման եղանակները, ձևերը և իրավական հետևանքները, մասնավորապես, դատական վերահսկողությունն իրականացվում է անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականության մասին որոշման կայացմամբ: Նշելաբար, դրանով է պայմանավորված նաև ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ մասի նորմատիվ պահանջը, որին համապատասխան բողոք քննելու արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե հետաքննության մարմնին, քննիչին և օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես տեղի ունի դատախազական հսկողության դեպքում, այլ այդ մարմինների ու պաշտոնատար անձի կողմից թույլ տրված օրինախախտումը վերացնելը և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելը պարտավորեցնելով, որը բխում է դատական իշխանության սահմանադրաբարավական բովանդակությունից և դրան համապատասխան՝ ՀՅ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատարանի լիազորություններից: Սույն գործում առկա ԵԿՂ/007/11/09 գործով, վերոհիշյալ նորմի իրավական բովանդակության այդպիսի մեկնաբանում տվել է նաև ՀՅ վերացնելիք քրեական դատարանն իր՝ 08.05.2009թ. որոշմամբ: Այսպիսով, սահմանադրական դատարանը ոչ թե ժխտում է հանրային իշխանության մարմինների, պաշտոնատար անձնաց որոշումների ու գործողությունների օրինականությունը վիճարկելու արտադատարանական (տվյալ դեպքում՝ դատախազին բողոքարկելու) կարգը՝ որպես ՀՅ Սահմանադրության 18 հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման միջոց, այլ կարևորում է վերջինիս և վիճարկման դատական միջոցի՝ իրավական բովանդակության, դրանց կիրառման հիմքերի (դեպքերի), օրենքով այնպիսի հստակեցումը, որը սույն գործի առարկայի շրջանակներումլինի միակերպ ընկալելի ինչպես դիմող, այնպես էլ իրավակիրառող սուբյեկտների համար, ընդգրկելով նաև սույն որոշմամբ կարևորված այն առանձնահատկությունները, որոնք հատուկ են դատախազական հսկողությանն ու դատական վերահսկողությանը: Իրավակարգավորման

այսպիսի եղանակը կկողմնորոշի քրեական դատավարության մասնակիֆցներին և շահագրգիռ այլ անձնաց առավել արդյունավետ ձևով իրականացնել Սահմանադրության 18 հոդվածում երաշխավորված իրենց իրավունքը:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՀՀ օրենսդրական օրեգացումների ընդհանուր տրամաբանությունը (մասնավորապես՝ արտահայտված ՀՀ սահմանադրական դատարանի 16 հունվարի 2007թ. ՍԴՈ-673 որոշման մեջ, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասում), գտնում է, որ այն դեպքում, եթե պետական մարմինը (տվյալ դեպքում քրեական վարույթ իրականացնող) կամ պաշտոնատար անձն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, դատարանը ստուգում է, թե արդյո՞ք տվյալ մարմնի կողմից ակտն ընդունելը կամ այն ընդունելը մերժելը, գործողությունը կատարելը կամ անգործություն դրսւորելն իրականացվել են օրենսդրությանը համապատասխան:

Այսպիսով, քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող, իրավանորմերի համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների ընդհանուր նպատակի (որպես իրավապահ գործունեություն), սակայն տարբեր առանձնահատկությունների մասին, հետևաբար, պատասխանող կողմի փաստարկն այն մասին, թե «... և դատախազական հսկողությունը, և դատական հսկողությունը մինչանց լրացնող ինստիտուտներ են», չի բխում սույն գործով վեճի առարկայից և այդ գործառույթների սահմանադրահրավական բովանդակությունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթի շրջանակներում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների ու անգործության դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաև որպես համակարգային ամբողջություն, որը պայմանավորված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրահրավական բովանդակությամբ և երաշխիք է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով նախատեսված անձանց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար:

Ենթելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով՝ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի «... և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» դրույթը, դատական պրակտիկայում դրան տրված՝ նաև «անգործությանը» վերագրվող բովանդակության մասով, որով գործնականում նույն հոդվածի 2-րդ մասի վրա տարածելով 1-ին մասում նախատեսված պայմանն ու նման մեկնաբանությամբ դիմողների նկատմամբ կիրառելով հոդվածի 1-ին մասը սահմանափակվել են մարդու՝ դատարանի մատչելիության և արդար դատարմնության սահմանադրական իրավունքները, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է ուժի մեջ և մտնում իրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՅՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԲԱԺԻՆ 5.

ՀԱՆՉԱՎԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻԶԱՋՎԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱԿԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էքստրադիցիան (լատ. *extraditio*) մի պետությունից մյուս օտարերկրյա պետությանը հանձնումն է իր քաղաքացուն կամ օտարերկրյա քաղաքացուն¹: Հաճախ էքստրադիցիան և հանձնումն օգտագործվում են որպես հոմանիշներ:

Որպես կանոն, հանցանք կատարած անձանց հանձնումն իրականացվում է համապատասխան պետությունների միջև կնքված երկկողմանի պայմանագրերի կամ բազմակողմ կոնվենցիաների հիման վրա: Այդպիսի կոնվենցիայի օրինակ է «Հանձնման մասին» 1957թ. Եվրոպական կոնվենցիան, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերը պարտավորվում են միմյանց հանձնել այդ կոնվենցիայի դրույթների և պայմանների համաձայն հանձնման ենթակա բոլոր այն անձանց, ում դեմ հայցող կողմի իրավասու մարմինները գործ են հարուցել, կամ որոնք հետախուզվում են վերոհիշյալ մարմինների կողմից դատավճոի ի կատար ածման կամ կալանավորման նպատակով (հոդված 1): Հանձնումը կարող է իրականացվել նաև առանց պայմանագրի, եթե դա նախատեսված է հանձնման վերաբերյալ պահանջ ստացած պետության օրենսդրությամբ: Հանցանք կատարած անձանց հանձնումը պետության իրավունքը և ոչ թե պարտականությունն է: Այն պարտականություն է դառնում միայն քրեական գործերի կապակցությամբ փոխադարձ իրավական օգնության վերաբերյալ պետությունների միջև կնքված երկկողմանի պայմանագրերի առկայության դեպքում:

Ժամանակակից սահմանադրությունները, որպես կանոն, արգելում են իրենց քաղաքացիների հանձնումն օտարերկրյա պետությանը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 30.1 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Դին ժամանակներում՝ մինչև 17-րդ դարի վերջը, էքստրադիցիան բացառիկ երևույթ էր և կիրառվում էր միայն քաղաքական հանցագործների, հերետիկոսների և փախստականների նկատմամբ:

¹ Сл-у Большой юридический словарь, под ред. А. Я. Сухарева, В. Д. Зорькина, В. Е. Крутских. М., ИНФА-М, 1999, էջ 774:

Դեռևս Եգիպտական փարավոն Ռամզես 2-րդը խեթերի թագավոր Խաթուշիլ 3-րդի հետ կնքած պայմանագրում նախատեսել էր. «Եթե որևէ մեկը փախչի Եգիպտոսից և գնա խեթերի Երկիր, ապա խեթերի թագավորը նրան չի պահի իր Երկրում և կվերադարձնի Ռամզես 2-րդի Երկիր»: Փախուստի հանգամանքն ինքնին եղել է հանձնման հիմք: Պայմանագիրն ապահովել է նաև հարցման ենթակա անձանց անվտանգությունը. «Նրանց մահապատժի Ենթարկելիս չեն վճարի նրանց աչքերը, շրջունքները և ոտքերը»¹:

Հանձնման ինստիտուտը զարգացավ մարդու իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարացման պատմական գործընթացին համապատասխան:

Այսօր հանձնման ինստիտուտը հատուկ նշանակություն է ծեռք բերել: Միջազգային գործընթացների շնորհիվ շատ Երկրների սահմաններ դարձել են «քափանցիկ», կատարելագործվել են հաղորդակցման միջոցները: Դա էականորեն հեշտացնում է մի պետության տարածքում հանցանք կատարած անձանց այլ պետությունում թաքնվելու ճանապարհը: Նոր պայմաններն ակտիվորեն օգտագործվում են կազմակերպված հանցավորության կողմից, որը միջազգային բնույթ է կրում:

Կազմակերպված հանցավորությունը, որը սպառնալիք է ներկայացնում այնպիսի հանցագործությունների կատարման առումով, ինչպիսիք են փողերի «լվացումը», ահաբեկչությունը, բմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, էական ազդեցություն է թողնում ազգային տնտեսության և պետական ապարատի վրա:

Ժամանակակից հանցավորությունը տարածքային սահմաններ չունի: Այդ իսկ պատճառով հանցավորության դեմ պայքարում էական նշանակություն է ծեռք բերում պետությունների համագործակցությունը:

Սուրինգն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանը նշում է. «Տանջանքների և անմարդկային վերաբերմունքի արգելքը, ինչպես նաև արդարացի դատական քննության իրավունքը կարող են հիմք հանդիսանալ հանձնումը մերժելու համար: Դրա հետ միաժամանակ, քանի որ աշխարհում տեղաշարժը հեշտանում է, և հանցավորությունն ավելի մեծ միջազգային թափ է ստանում, պետությունների համար առավել կարևոր է դառնում, որ կասկածվող իրավախախտողները, որոնք փախել են արտասահման, Ենթարկվեն դատի»²:

¹ Տե՛ս Լукаսյկ Ի. Ի., Հայով Ա. Բ. Выдача обвиняемых и осуждаемых в международном уголовном праве, М., 1998, էջ 30:

² Տե՛ս Սուրինգն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1989թ. հուլիսի 7-ի որոշումը:

Մեր օրերում հանձնման ինստիտուտի դերի բարձրացման մասին վկայում են նոր օրենքների ընդունումը, միջազգային պայմանագրերի կնքումը, միջազգային կազմակերպությունների կողմից համապատասխան բանաձևերի ընդունումը:

Հանձնումը՝ որպես պետությունների միջև քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու տեսակ, կարգավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ: Այս ինստիտուտի կարգավորմանը նվիրված քրեադատավարական նորմերը հիմնված են միջազգային պայմանագրերում ամրագրում ստացած պայմանների վրա: Որոշ երկրներում, կարևորելով այս ինստիտուտի դերը, հատուկ օրենսդրական ակտեր են ընդունվել հանձնման մասին, իսկ շատ երկրներում այս ինստիտուտը կարգավորող նորմերը տեղ են գտել Սահմանադրության մեջ, քրեական և քրեադատավարական օրենսդրություններում:

Տարբեր երկրներում հանձնման ինստիտուտը տարբեր կերպ է կարգավորվում: Գոյություն ունի հանձնման ինստիտուտի նորմերի համակարգի երկու հիմնական տեսակ՝ **Եվրոպական և անգլո-ամերիկյան**:

Առաջինը բնորոշ է ռումանագերմանական իրավունքի երկրներին՝ ոչ միայն մայրցամաքային Եվրոպայի և լատինաամերիկյան երկրներին, այլև Եվրոպական երկրների նախկին գաղութներին, բացի բրիտանականից:

Երկրորդը բնորոշ է «ընդհանուր իրավունքի» երկրներին:

Առաջինը հիմնվում է հստակ որոշված մի շարք սկզբունքների վրա, ինչպիսիք են՝

- երկակի հանցավորությունը (այսինքն՝ հարցում ներկայացրած և հարցումը կատարած կողմերի օրենսդրությամբ այդ արարքները պետք է համարվեն քրեորեն պատժելի):
- նաև ազիտացումը (հանձնման կապակցությամբ իրականացվող գործողությունների համապատասխանությունը որոշակի պահանջների, օրինակ՝ կախված սանկցիայի տեսակից և չափից).

- սեփական քաղաքացիներին չհանձնելը:

Երկրորդ տեսակը հիմնված է այդ սկզբունքների անխախտելիությունը չընդունելու վրա: Դրա հիմնական խնդիրն է պատժի անխուսափելիության ապահովումը նույնիսկ պայմանագրերի և օրենքների «լիբերալ» մեկնաբանման ճանապարհով:

Ի տարբերություն «մայրցամաքային իրավունքի» երկրների՝ «ընդհանուր իրավունքի» երկրներում հանձնումը թույլատրվում է միայն պայմանագրի առկայության դեպքում: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ որոշակի դեպքերում թույլատրվում է նաև սեփական քաղաքացիների հանձնումը՝ այն թողնելով կողմերի հայեցողությանը: Օրինակ՝ Կանադայի և Նիդերլանդների միջև 1998թ. կնքված հանձնման պայմանագիրը նախատե-

սում է, որ հանձնումը չի կարող մերժվել բացառապես հանձնվող անձի քաղաքացիության հիմքով (3-րդ հոդ. 1-ին մաս):

Միևնույն համակարգում գտնվող երկրների միջև հանձնում իրականացնելիս պետությունները ղեկավարվում են ներպետական օրենսդրությամբ, իսկ եթե այդ հարցերը չեն կարգավորվում ներպետական օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերը:

Տարբեր համակարգեր ունեցող երկրների միջև հանձնման հարցերը կարգավորելիս առաջնահերթությունը տրվում է երկողմ պայմանագրերին, որոնցում երկրները սահմանում են համապատասխան բացառություններ և վերապահումներ:

Հանձնման ինստիտուտի երկու տեսակներն ել ունեն իրենց դրական և բացասական կողմերը: Այսպես, Եվրոպական համակարգն ապահովում է հանձնման օրինականությունը և հանձնվողի իրավունքները: Դրա հետ միասին հանցագործին պատժից խուսափելու հնարավորություն է տալիս:

Անգլո-ամերիկյան համակարգը նվազեցնում է ընդհանուր սկզբունքների դերը և դատարանին իրավունքը է վերապահում յուրաքանչյուր գործ քննել՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները՝ նպատակ ունենալով ապահովել հանցավորի կողմից պատժի կրումը:

Սեփական քաղաքացիներին հանձնելու առանձնահատուկ դիրքորոշումը պայմանավորված է «ընդհանուր իրավունքի երկրների» կողմից տարածքային իրավագորության սկզբունքի ընդունման հանգամանքով: Այդ սկզբունքի համաձայն՝ դատարանն իրավագորություն ունի միայն այն անձանց նկատմամբ, որոնք հանցանք են կատարել այդ դատարանի պետության տարածքում: Դրա արդյունքում այդ պետության քաղաքացին, որը հանցագործություն է կատարել արտասահմանում և վերադարձել է իր երկիր, կարող է անպատճ մնալ:

«Ընդհանուր իրավունքի» երկրների համար երկակի հանցավորության սկզբունքը համարվում է պայմանագրային և ոչ թե ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունք: Ելելովք քրեական իրավունքի ընդհանուր սկզբունքից՝ «Զկա պատիժ առանց օրենքի»՝ հանձնումը չի կարող արդարացվել, եթե հանձնող կամ պահանջող պետության իրավունքն այդ արարքը չի համարում հանցագործություն:

Հայաստանի Հանրապետությունը գնացել է հանձնման ինստիտուտին վերաբերող նորմերի խառը համակարգի ընտրության ճանապարհով՝ ներառելով թե՛ Եվրոպական, թե՛ անգլո-ամերիկյան համակարգին բնորոշ տարրեր:

Այսպես, ՀՅ քր. դատ. օրի 487-րդ հոդվածը վերաբերում է Երկակի հանցավորության և մասնագիտացման սկզբունքներին: Նշված հոդվածի համաձայն՝ հանցագործություն կատարած անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից խնդրանք ստանալու դեպքում Հայաստանի Հանրապետության դատարանը, դատախազը, քննիչը, հետաքրնության մարմինը միջոցներ են ձեռնարկում սույն օրենսգրքի 479-րդ հոդվածով սահմանված կարգով խնդրանքում նշված անձի հանձնման քույլտվություն ստանալու և քրեական պատասխանատվության ենթարկելու կամ նրա նկատմամբ դատավճիռն ի կատար ածելու նպատակով այդ անձին օտարերկրյա պետությանը հանձնելու ուղղությամբ:

Քրեական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքներով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար նախատեսվում է պատիժ ազատազրկման ձևով՝ մեկ տարուց ոչ պակաս ժամկետով:

Դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար անձը դատապարտվել է ազատազրկման՝ վեց ամսից ոչ պակաս ժամկետով:

Սեփական քաղաքացիներին չհանձնելու սկզբունքն իր արտացոլումն է գտել ՀՅ քր. դատ. օրի 488-րդ հոդվածում, որի համաձայն՝ անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքի կատարումը մերժվում է, եթե խնդրանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանձնմանը: Սակայն Սահմանադրության 30.1 հոդվածից բխում է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով կարող են նախատեսվել Հայաստանի Հանրապետության քաղաքացուն օտարերկրյա պետությանը հանձնելու դեպքեր:

Հետևաբար, հանձնման մասին պահանջը քննարկելիս կամ Հայաստանի Հանրապետության տարածքում հանցագործություն կատարած անձին հանձնելու մասին պահանջը այլ պետությանը ներկայացնելիս պետք է հանգանառեն պարզել հանձնման ենթակա անձի քաղաքացիությունը:

Միջազգային պայմանագրերով նախատեսված են հանձնման ենթակա անձանց իրավունքների պաշտպանության համապատասխան երաշխիքներ:

Սակայն շատ հաճախ հակասություններ են առաջանում «Մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի և

հանձնման հետ կապված այլ միջազգային պայմանագրերի միջև։ Այս հարցի կապակցությամբ Եվրոպական դատարանն արտահայտել է իր կարծիքը Սուբրինգն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, որտեղ դատարանը սահմանել է. «Չնայած հանձնման բարի նպատակներին, որը կոնվենցիայով արգելված չէ, այն չի կարող ամբողջությամբ կամ մասամբ անդամ պետություններին ազատել հանձնման հետևանքով առաջացած հետևանքներից»։ Եվրոպական դատարանը համանման մոտեցում է դրսնորել նաև Մամատկուլովն ու Ասկարովն ընդդեմ Թուրքիայի գործով, որտեղ դատարանը սահմանել է «Կոնվենցիայի և դատարանի որոշումները կատարելու նպատակով, Բրիտանական կառավարությունը ստիպված է եղել հրաժարվել Միացյալ Նահանգների առջև ունեցած իր պարտավորություններից։ Այդ կերպ դատարանը կոնվենցիայի և հանձնման վերաբերյալ պայմանագրերի միջև հակասությունները լուծում է կոնվենցիայի օգտին»¹։

Հանձնում իրականացնելիս հիմնականում խնդիրներ են առաջանում կոնվենցիայի 3-րդ հոդվածի կապակցությամբ, որի համաձայն. «Ոչ ոք չետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային, կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, կամ՝ պատժի»։ Խոշտանգումների արգելման իրավունքը բացարձակ իրավունք է և բացառությունների չի կարող ենթարկվել։ Այս սկզբունքը արտահայտվել է Եվրոպական դատարանի կողմից մի շարք գործերի կապակցությամբ։ Օրինակ՝ Շամակը և այլոք ընդդեմ Ռուսաստանի և Վրաստանի գործով դատարանը սահմանեց. «Քանի որ ազգությամբ չեւենների իրավական պաշտպանության վիճակը վերջին ժամանակներս էականորեն վատացել է, անձի հանձնումը կարող է հանգեցնել կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման»²։

Խոշտանգումների, դաժան, անմարդկային վերաբերմունքի ենթարկվելու վտանգը պետք է իրական լինի։ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված իրավունքի խախտման համար պատասխանատվություն կարող է առաջանալ ոչ միայն այն դեպքում, եթե իրական վտանգ գոյություն ունի պետական մարմինների կողմից համապատասխան վերաբերմունքի առաջանալու համար, այլև այն դեպքում, եթե հանձնման ենթակա անձանց նման վտանգ է սպառնում ոչ պետական մարմինների կողմից։ HRL-ն ընդդեմ ֆրանսիայի գործով, եթե իրական հիմքեր կային ենթադրելու, որ անձը կարող է ենթարկվել խոշտանգումների մասնավոր անձանց կողմից, դատարանը սահմանեց, որ հաշվի առնելով 3-րդ հոդվածի պահանջները, չի կարելի բացառել այն դեպքերը, որ իրական

¹Տե՛ս Սամաթկուլովն ու Ասքարովն ընդդեմ Թուրքիայի գործով 2005թ.փետրվարի 4-ի որոշումը։

²Տե՛ս Շամակը և 12 այլ անձինք ընդդեմ Վրաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գործով 2005թ. ապրիլի 12-ի որոշումը։

Վտանգ կա, որ անձը կարող է ենթարկվել խոշտանգումների այլ անձի կամ անձանց կողմից: Սակայն այդ դեպքում անհրաժեշտ է պարզել, որ այդպիսի վտանգն իրական է, և պետական մարմինները չեն կարող ապահովել դրանց պաշտպանությունը»¹:

Հանձնման ընթացքում շատ հաճախ խնդիրներ են առաջանում կոնվենցիայի 13-րդ հոդվածի կապակցությամբ, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք, ում սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք: Հանձնման հետ կապված գործերում այս իրավունքը ենթադրում է պայմանագրի կողմ հանդիսացող անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ սահմանված համապատասխան նորմերի առկայություն, որը հանձնման ենթակա անձանց հնարավորություն կտա դիմելու պետական իշխանության մարմիններին, առաջին հերթին՝ դատարաններին, որոնք օժտված են այդ կապակցությամբ որոշումներ կայացնելու իրավասությամբ և գլխավորը՝ անձին պետք է իրական հնարավորություն տրվի օգտվելու այդ հնարավորությունից: Շամասը և այլոք ընդդեմ Վրաստանի գործով, դատարանը 13-րդ հոդվածի խախտում գտավ այն հիմքով, որ Վրաստանի օրենսդրությունը հանձնման ժամանակ չուներ հանձնման ընթացակարգի բողոքարկման հստակ ընթացակարգ, բացի այդ, նույնիսկ եթե դիմուններին, Վրաստանի օրենսդրության համաձայն, տեսականորեն տրվել է այդ հնարավորությունը, գործնականում նրանք գրկված էին նման հնարավորությունից, քանի որ նրանք տեղեկացվել էին հանձնման որոշման մասին պատահաբար և շատ ուշ: Այս կապակցությամբ հանձնման ենթակա անձանց իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածում ամրագրված այն դրույթը, որ հանձնման ենթակա անձն իրավունք ունի բողոքարկել հանձնման վերաբերյալ որոշումը: Հանձնման թույլտվություն կամ հանձնելը մերժելու վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինն ընդունված որոշման մասին տեղեկացնում է այն անձին, որի նկատմամբ կայացվել է որոշումը և բացատրում է այն բողոքարկելու նրա իրավունքը: Այդ որոշումները կարող են բողոքարկվել վերաբննիշ դատարան որոշումները՝ վճռաբեկ դատարան այն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում: Վերաբննիշ և վճռաբեկ դատարանները գործը քննում և դրա վերաբերյալ որոշում են կայացնում բողոքը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում:

¹Տե՛ս **HRL-Ա ընդդեմ Ֆրանսիայի** գործով 1997թ.ապրիլի 29-ի որոշումը:

Հանձնման օրինականության հարցը քննելիս դատարանը չի լուծում անձի մեղավորության հարցը՝ սահմանափակելով միայն հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշման՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և միջազգային պայմանագրերին համապատասխանելիության հարցի ստուգմամբ։ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 491-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի կալանավորման մասին ՀՀ իրավասու դատարանի որոշումը պետք է կայացվի հանձնման ենթակա անձի ներկայությամբ։ Եթե կալանավորման մասին ՀՀ իրավասու դատարանի որոշումը կայացվել է առանց հանձնման ենթակա անձի ներկայության, նրա բացակայության կամ ներկա գտնվելուն խոչընդոտող այլ պատճառով, ապա նախքան այդ անձի հանձնումն իրականացնելը նա պետք է հնարավորություն ունենա բողոքարկելու դատարանի որոշումը վերադաս դատարան։

Հանձնման ինստիտուտի գարգացումը մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ օրինաչափ գործընթաց է։ Սակայն դրա հետ միաժամանակ պետք է հաշվի առնել հարցի մյուս կողմը՝ պայքարը հանցավորության դեմ։ Մարդու իրավունքների պաշտպանությունը չպետք է խոչընդոտ համդիսանա պատժի անխուսափելիության սկզբունքի իրականացման համար։ Այս մոտեցումն արտահայտել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով։

Հանձնման ենթակա անձանց իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք է քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածում ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ եթե անձը ՀՀ դատարանի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի իրավասությանն է հանձնվել նրա նկատմամբ քրեական հետապնդում սկսելու կամ շարունակելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար, ապա առանց հանձնումը թույլատրած համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության այդ անձը չի կարող քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել մինչև նրա հանձնելը կատարած այն հանցագործության համար, որով նա չի հանձնվել։ Այսինքն՝ անձը կարող է ձերբակալվել, քրեական պատասխանատվության ենթարկվել միայն այն հանցագործությունների համար, որոնք նախատեսված են հանձնման մասին պահանջում, և երկրորդ՝ անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ հանցագործությունների համար միայն հանձնող պետության համաձայնության դեպքում։ Եթե կան ապացույցներ, որոնք վկայում են տվյալ անձի կողմից այլ հանցագործություններ կատարելու մասին, ապա հանձնման մասին նոր միջնորդություն է ներկայացվում։

Առանց հանձնումը թույլատրած օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնության հանձնված անձը չի կարող հանձնվել նաև երրորդ պետության:

Սակայն հանձնումը թույլատրած օտարերկրյա պետության իրավասու մարմնի համաձայնությունը չի պահանջվում, եթե հանձնված անձը, լինելով օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, իր նկատմամբ ՀՀ տարածքում համապատասխան դատավարական գործողությունների կատարումն ավարտելուց, իսկ նրան դատապարտելու դեպքում՝ պատիժը կրելուց կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով պատժից վաղաժամկետ ազատվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, չի լրում ՀՀ տարածքը, կամ լրելուց հետո նա ինքնակամ վերադառնում է այնտեղ: Նշված ժամկետի մեջ չի հաշվարկվում այն ժամանակը, որի ընթացքում հանձնված անձն իրենից անկախ հանգամանքներով չէր կարող լրել ՀՀ տարածքը:

Դանձնելու նպատակով անձին կալանավորելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 491-րդ հոդվածի համաձայն՝ անձին հանձնելու վերաբերյալ խնդրանքին կից նրան կալանքի վերցնելու մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի որոշման առկայության դեպքում խնդրանք ստացած ՀՀ դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը սույն օրենսգրքով սահմանված կարգով միջոցներ են ձեռնարկում հանձնման ենթակա անձին կալանավորելու համար, եթե հնարավոր չեն համարում խնդրանքի կատարումն առանց դրա: Տվյալ դեպքում անհրաժեշտ է համարվում նաև Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 491-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում անձի կալանավորման մասին Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումը պետք է կայացվի հանձնման ենթակա անձի ներկայությամբ:

Եթե կալանավորման մասին Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի որոշումը կայացվել է առանց հանձնման ենթակա անձի ներկայության, նրա բացակայության կամ ներկա գտնվելուն խոչընդոտող այլ պատճառով, ապա նախքան այդ անձի հանձնումն իրականացնելը նա պետք է հնարավորություն ունենա բողոքարկել դատարանի որոշումը վերադաս դատարան:

Օտարերկրյա պետության իրավասու մարմնի միջնորդությամբ անձը կարող է ՀՀ-ում կալանավորվել նաև մինչև հանձնելու մասին խնդրանքն ստանալը: Կալանավորված անձը պետք է ազատ արձակվի, եթե նրան հանձնելու խնդրանքը չի ստացվել կալանքի վերցնելու օրվանից 30 օրվա ընթացքում: «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցի-

այի համաձայն՝ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հայցող կողմի իրավասու մարմինները կարող են պահանջել հետախուզվող անձի ժամանակավոր ձերբակալություն։ Ընդ որում, հայցվող կողմի իրավասու մարմինները գործը կլուծեն իրենց օրենսդրության համաձայն։ Կոնվենցիան սահմանում է, որ ժամանակավոր ձերբակալությունը կարող է դադարեցվել, եթե ձերբակալումից հետո 18 օրվա ընթացքում հայցվող կողմը չի ստացել հանձնման վերաբերյալ հարցումը և 12-րդ հոդվածում նշված փաստաթղթերը։ Ամեն դեպքում այդ ժամանակահատվածը ձերբակալման օրվանից չպետք է գերազանցի 40 օրը։ Ժամանակավոր ձերբակալման ընդհատում չի բացառվում ցանկացած ժամանակ, բայց հայցվող կողմը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները հետախուզվող անձի փախուստը կանխելու համար։ Կոնվենցիայի 16-րդ հոդվածի առնչությամբ Հայաստանի Հանրապետությունը վերապահում է կատարել, ըստ որի՝ ժամանակավոր կալանավորումը ամեն դեպքում դադարեցվելու է կալանավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում հանձնման մասին հարցումը և 12-րդ հոդվածում նշված փաստաթղթերը չստանալու դեպքում (հոդված 492):

Անձը կարող է ձերբակալվել առանց օտարերկրյա պետության իրավասու մարմնի միջնորդության կամ հանձնելու մասին խնդրանքի, եթե սույն օրենսգրքով նախատեսված հիմքեր կամ կասկածելու, որ նա հանցագործություն է կատարել այն օտարերկրյա պետության տարածքում, որի հետ ՀՀ-ը կապված է փոխադարձության կարգով քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու պայմանավորվածությամբ։ Այդ պետության իրավասու մարմնի կողմից հանձնելու մասին խնդրանք ներկայացվելու դեպքում անձը ենթակա է հանձնման։ Զերբակալված անձը պետք է ազատ արձակվի, եթե սույն օրենսգրքով ձերբակալման համար սահմանված ժամկետը լրանալու պահի դրությամբ համապատասխան օտարերկրյա պետության իրավասու մարմնից նրա հանձնման մասին խնդրանքը կամ մինչև խնդրանքն ուղարկելը կալանավորման մասին միջնորդությունը չներկայացվի։

Քանի որ իրավակիրառ պրակտիկայում հանձնման ենթակա անձին կալանքի տակ պահելու հետ որոշակի խնդիրներ են առաջանում, ներկայացնենք դրանցից մի քանիսը։

Առաջին հիմնահարցը վերաբերում է հանձնման ենթակա անձի՝ իր նկատմամբ ընտրված խափանման միջոցը հաստատելու, փոփոխելու կամ վերացնելու համար դատարանի առջև կանգնելու իրավունքի իրագործման հետ։

Եվրոպական դատարանում ծևավորված պրակտիկայի համաձայն՝ կալանավորման օրինականությունը և հանձնման օրինականությունը տարբերակվում են, սակայն անհրաժեշտ է նշել, որ կալանավորման օրինակության հարցը քննության առնելիս, հանձն-

ման օրինականությունը նույնպես պետք է քննության առնվի, մասնավորապես՝ այն դեպքում, երբ ներպետական իրավունքի համաձայն՝ կալանավորման օրինականությունը կախված է հանձնման օրինականությունից: Յարկ է նշել, որ մինչև հանձնումը կամ արտաքսումն իրականացնելը ներպետական մակարդակով պետք է քննության առնվի կալանավորման օրինականության հարցը, քանի որ այդ քննության արդյունքներով է պայմանավորված հանձնման կամ արտաքսման օրինականությունը: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կարող է վիճարկվել նմանատիպ հանգամանքներուն անձի կալանավորման օրինականությունը, և եթե կալանավորումն անօրինական է, ապա անձը պետք է անհապաղ ազատ արձակվի¹:

Ինչ վերաբերում է մեղադրյալի պարտադիր մասնակցությունը նախատեսելուն, ապա այն համապատասխանում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի, ինչպես նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 9-րդ հոդվածի պահանջներին, որոնց համաձայն. «Յուրաքանչյուր ձերբակալված կամ կալանավորված անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որին օրենքով պատկանում է դատական իշխանության իրականացման իրավունք, և որն ունի օրենքով դատական քննություն վարելու կամ ազատելու իրավունք»:

1679թ. մայիսի 26-ին Անգլիայում ընդունված «Habeas corpus act»-ով նույնպես սահմանվում էր, որ համապատասխան պաշտոնատար անձը, ով որևէ մեկին ձերբակալել կամ կալանավորել է, պարտավոր է 3 օրվա ընթացքում ձերբակալվածին կամ կալանավորվածին հանձնել լորդ-կանցլերին կամ դատավորին և միաժամանակ հավաստել ձերբակալման կամ կալանավորման իրական պատճառները: Դատավորը պարտավոր է քննել և լուծել խափանման միջոցի հարցը՝ կամ սահմանել կալանք, կամ անձին ազատել գրավով: Կալանավորման հիմքեր չգտնելով՝ դատարանը պարտավոր է կալանավորվածին ազատ արձակել²:

Ֆրանսիայի օրենսդրության համաձայն՝ հանձնման նպատակով կալանքի միջնորդության քննարկմանը պարտադիր մասնակցում է մեղադրյալը: Իրականացվում է, այսպես կոչված, «մրցակցային վիճաբանություն», այսինքն՝ ազատությունների և արգելանքների դատավորը պետք է իր մոտ իրավիրի դատախազին, մեղադրյալին, պաշտպանին (եթե

¹ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը/ Վ.Հ.Չովիաննիսյան, Զ.Գ.Ղուկասյան, Լ.Ս.Յակոբյան.-Եր.: Տիգրան Մեծ, 2005, էջ 124:

² Տե՛ս Черниловский З. М. Хрестоматия по всеобщей истории государства и права. М., 1996, էջ 161:

նա մասնակցում է գործին մեղադրյալի ցանկությամբ) և լսի նրանց կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ (պաշտպանը ելույթ է ունենում վերջում)¹:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի համաձայն՝ դատական նիստին, որպես կանոն, պետք է ներկա գտնվեր անազատության մեջ գտնվող մեղադրյալը: Դա նշանակում է, որ մեղադրյալի մասնակցությունը դատական նիստին պարտադիր չէր: Մեղադրյալի բացակայությամբ իր նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցը լուծելու վերաբերյալ դրույթը չէր համապատասխանում վերը նշված միջազգային կոնվենցիաների դրույթներին: Մեղադրյալի պարտադիր մասնակցությունը նախատեսվեց միայն 2006թ. հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2006թ. մայիսի 25-ի Հայաստանի Հանրապետության օրենքով ավելացվել է նոր դրույթ, ըստ որի՝ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է միջնորդությունը ներկայացրած անձի և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Փաստորեն, եթե գործին մասնակցում է պաշտպան, ապա օրենքը պարտադիր է համարում հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանին ծանուցելը, սակայն վերջինիս մասնակցությունն ապահովելը պարտադիր չէ, քանի որ ՀՀ քր. դատ. օր-ի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունում նշվում է, որ ժամանակին ծանուցված պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քնննանը:

Ինչպես երևում է, օրենսդիրը նվազագույնի է հասցրել մեղադրյալների «հեռակա» կալանավորման դեպքերը՝ բացառություն նախատեսելով միայն հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի կալանավորման համար, քանի որ որոշում կայացնելու նման ընթացակարգն ամբողջությամբ չի երաշխավորում քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված անձի իրավունքները: Մեղադրյալը նման դեպքերում գրկվում է իրեն առաջադրված մեղադրանքի օրինականության և իիմնավորվածության վերաբերյալ իր կարծիքն արտահայտելու հնարավորությունից:

Այս առումով տեսության մեջ արտահայտվել են տարբեր մոտեցումներ: Այսպես, Բ.Յա.Գավրիլովն առաջարկել է փոփոխություններ կատարել ՈՂ քր. դատ. օր-ում և քն-

¹ Ст’я Гуценко К. Ф., Головко Л. В., Филимонов Б. А. Уголовный процесс западных государств. М., 2002, тջեր 354-355:

նությունից թաքնված կասկածյալներին և մեղադրյալներին կալանավորել՝ նրանց հնարավորություն տալով կալանավորումից անմիջապես հետո կանգնել դատարանի առաջ¹:

Իսկ, Ա. Կրուգլիկովի և Ի.Դիկարևի կարծիքով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալներին ձերբակալելուց կամ մեղայականով ներկայանալուց հետո նրանց անհապաղ պետք է բացատրվի կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման բողոքարկման իրավունքը՝ ապահովելով դրա իրագործման ռեալ հնարավորությունը²:

Քննարկվող հարցին անդրադարձել է Եվրոպական դատարանը Գարաբակն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում, որտեղ նշել է. «Այն, որ դատարանը հեռակա որոշում է կայացրել անձին կալանավորելու մասին այն իրավիճակում, եթե անձը թաքնվում է արդարադատությունից և գտնվում է միջազգային հետախուզման մեջ, չի հակասում Կոնվենցիայի դրույթներին: Սակայն 2003թ. փետրվարի 1-ին դիմումատուի՝ Թուրքմենստանից վերադառնալուց և Ռուսաստանում ձերբակալվելուց հետո, նա պետք է անհապաղ հասցեր դատավորի մոտ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն: Նա դատարանին է ներկայացվել 2003թ. մարտի 19-ին, այսինքն՝ 1 ամիս 19 օր հետո: Այդիսի ձգձգումը անհամատեղելի է 5-րդ հոդվածի 3-րդ կետի հետ»³:

Հետևաբար, կարծում ենք՝ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ քր. դատ. օր-ում՝ նախատեսելով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալներին անհապաղ դատարանին ներկայացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը և գտնում ենք, որ նախ պետք է ապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը, հետո միայն 4-րդ կետը:

Իրականացման մեխանիզմը:

Այսպիսով, հանձնման ենթակա անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է այն, որ կալանքի վերցված անձն իրավունք ունի անհապաղ կանգնելու դատարանի առջև իր նկատմամբ ընտրված խափանման միջոցը հաստատելու, փոփոխելու կամ վերացնելու համար:

Եվրոպական դատարանում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ «անհապաղության» գնահատումն իրականացվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի առարկայի և նպատակի լույսի ներքո: Եվրոպական դատարանն ուշադրության է առնում Կոնվենցիայի

¹ *Տե՛ս Գաբրիլօվ Բ. Յ.* Новеллы уголовного процесса на фоне криминальной статистики // Российская юстиция, 2003, № 10, էջ 7:

² *Տե՛ս Կրուցլիկով Ա., Դիկարև Ի.* О сущности проблемах избрания судей меры пресечения в виде заключения под стражу в отсутствие обвиняемого. // Уголовный процесс, 2006, № 1, էջ 90:

³ *Տե՛ս Գարաբակն ընդդեմ Ռուսաստանի դաշնության* գործով 2007թ.հունիսի 7-ի որոշումը:

համար 5-րդ հոդվածի կարևորությունը՝ ամբողջությամբ վերցրած. այն ամրագրում է մարդու ամենահիմնարար իրավունքներից մեկը, մասնավորապես՝ առանձին անձի ազատության դեմ պետության կամայական ոտնագություններից պաշտպանությունը։ Գործադիր իշխանության նմանատիպ միջամտության վրա դատական վերահսկողությունը հանդիսանում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետում բովանդակվող երաշխիքի կարևոր տարր, որը կոչված է նվազագույնի հասցնել կամայականության վտանգը։

Եվրոպական դատարանի կարծիքով թեև անհապաղության աստիճանը պետք է որոշվի յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունը հաշվի առնելով, այդ առանձնահատկություններին տրվող նշանակությունը չի կարող հասնել այնպիսի աստիճանի, եթե վնասվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով երաշխավորված իրավունքի էռությունը, այսինքն՝ եթե փաստացի առոչինչ է դարձվում պետության՝ անհապաղ ազատ արձակելն ապահովելու կամ անհապաղ դատական մարմնին ներկայացնելն ապահովելու պարտավորությունը։

Բրոուգանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 4 օր և 6 ժամ կալանքի տակ պահելու ժամկետը դուրս է գալիս Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին մասով թույլատրելի խիստ ժամկետային շրջանակներից։ Դատարանի կարծիքով տվյալ գործի առանձնահատկություններին այնպիսի նշանակություն տալը, որը կարդարացներ կալանավորման այդքան երկարատև ժամկետը՝ առանց դատավորի կամ դատական գործառույթներ իրականացնող այլ պաշտոնատար անձի մոտ տանելու, կլիներ «անհապաղ» բարի պարզ նշանակության բավականին լայն մեկնաբանություն։ Եվրոպական դատարանի կարծիքով նմանատիպ մեկնաբանումն էապես կթուլացներ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի դատավարական երաշխիքները, ի վճար առանձին անձի և կունենար այդ հոդվածով պաշտպանվող իրավունքի էռությունը քայլայող հետևանքներ¹։

Աքսոյն ընդդեմ Թուրքիայի գործի քննության ժամանակ Եվրոպական դատարանի կարծիքով միանգամայն ակնհայտ է, որ 14 կամ ավելի օր ժամկետը, որի ընթացքում դիմող Աքսոյը պահվել է կալանքի տակ՝ չունենալով դատավորին կամ դատական այլ պաշտոնատար անձին ներկայանալու հնարավորություն, չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետում նախատեսված «անհապաղ» պահանջին²։

¹ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն։ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը/Վ.Զ.Նովիշաննիսյան, Զ.Գ.Ղուկասյան, Լ.Ս.Յակոբյան.-Եր.: Տիգրան Մեծ, 2005, էջ 167։

² Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն։ Մարդու իրավունքների Եվ-

Հաջորդ հիմնահարցը կապված է հանձնման ենթակա անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հետ:

Քիշների 2002թ. հոկտեմբերի 7-ի կոնվենցիայի 73-րդ հոդվածը վերաբերում է հանձնման ենթակա անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելուն: Ըստ այդ հոդվածի. «Սույն կոնվենցիայով սահմանված ժամկետում անձի հանձնումը խոչընդոտող հանգամանքներ ի հայտ գալու դեպքում հայցող Պայմանավորվող կողմի իրավասու արդարադատության հիմնարկը, որի վարույթում է գտնվում քրեական գործը, ներպետական օրենսդրության համաձայն՝ լուծում է հանձնվող անձի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ հարցը և հայցվող Պայմանավորվող կողմի արդարադատության հիմնարկին ուղարկում է այդ մասին որոշման՝ պատշաճ կերպով հաստատված պատճենը»:

Քննարկվող հարցին անդրադարձել է Երևանի Էրեբունի և Նորբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը¹:

20.05.2005 թվականին դատարանի որոշմամբ ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդ. 2-րդ մասի 6-րդ կետով, 235 հոդ. 1-ին մասով և 258 հոդ. 3-րդ մասի 4-րդ մասով թիվ 12204592 քրեական գործով մեղադրյալ՝ Վարդեն Մովսեսի Սամվելյանի նկատմամբ որպես խափանման միջոց 2 ամիս ժամկետով ընտրվել է կալանավորում:

Վարդեն Մովսեսի Սամվելյանը ձերբակալվել է ՌԴ-ում 18.04.2007 թվականին:

ՀՀ գլխավոր դատախազը Վարդեն Մովսեսի Սամվելյանին հանձնելու խնդրանքով դիմել է ՌԴ-ի գլխավոր դատախազին:

15.11.2007 թվականին Վարդեն Մովսեսի Սամվելյանը էտապավորվել է քրեակատարողական հիմնարկ:

Գործի նյութերի ուսումնասիրությունից հիմնավորվել է, որ Վ.Սամվելյանը գտնվել է անազատության մեջ 18.04.07թ-ից մինչև 15.11.2007թ-ը, այսինքն՝ 7 ամիս:

Դատարանը գտել է, որ նշված ժամանակամիջոցում անձին անազատության մեջ պահելու անմիջական հիմք է հանդիսացել ՌԴ իրավասու մարմինների համապատասխան որոշումները, այլ ոչ թե Երևան քաղաքի Էրեբունի և Նորբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից կայացված՝ խափանման միջոց կալանք ընտրելու որոշումը: Տվյալ դեպքում գործադրվել է հանձնման իրավական ինստիտուտը, և հանձնող պետությունը՝ Ռուսաստանի Դաշնությունը, գործել է «Հանձնման մասին» Եվրոպական կոն-

րոպական դատարանի նախադեպային իրավունքը/ Վ.Յ.Յովիաննիսյան, Զ.Գ.Ղուկասյան, Լ.Ս.Յակոբյան.-Եր.: Տիգրան Մեծ, 2005, էջ 168:

¹ Տե՛ս Երևանի Էրեբունի և Նորբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2007թ. նոյեմբերի 22-ի թիվ Կ-116 որոշումը:

Վեցիայի, Մինսկի կոնվենցիայի դրույթների և ՌԴ օրենսդրության հիման վրա: Իսկ ինչ վերաբերում է խափանման միջոց ընտրելու մասին ՀՀ դատարանի 20.05.2005 թվականի որոշմանը, ապա «Հանձնման մասին» Եվրոպական կոնվեցիայի 12-րդ հոդվածի հիման վրա՝ այն պետք է դիտել որպես հարցումը և հանձնումը օժանդակող փաստաթուղթ:

Դատարանը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով»: Այսինքն՝ օրենսդիրը խափանման միջոցի, այդ թվում՝ կալանքի կիրառումը պայմանավորում է քրեական գործով վարույթի ընթացքն ապահովելու անհրաժշշությամբ: Ուստի, եթե քրեական գործով վարույթի ընթացքն ընդհատված է այն հիմքով, որ տվյալ մեղադրյալը չի գտնվում ՀՀ իրավասու մարմինների տրամադրության ներքո, ապա խափանման միջոց ընտրելու մասին որոշումը չի կարող կատարված համարվել: Այդ որոշման կատարման սկիզբ պետք է դիտել ՀՀ իրավասու մարմինների տրամադրության տակ տվյալ մեղադրյալի անցնելու պահը, այսինքն՝ այն պահը, երբ տվյալ անձի նկատմամբ սկիզբ է առել ՀՀ իրավագորությունը:

Ներկայացված մոտեցումը համահունչ է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ պետությունները պետք է պատասխան տան մարդու իրավունքների և ազատությունների այն խախտումների համար, որոնք կատարվել են իրենց իրավագորության ներքո գտնվող անձանց նկատմամբ: Իրավագորության գործադրումն անհրաժշտ պայման է, որ պետությունն ունակ լինի պատասխանատվություն կրել իրեն վերագրվող գործողությունների և բացթողումների համար, որոնք ենթադրաբար խախտել են մարդու իրավունքները (*Ilascu and Others v. Moldova and Russia* գործով Մեծ պալատի վճիռը, թիվ 48787/99, 311-րդ կետ, *Issa and others v. Turkey* գործով վճիռը, թիվ 31821/96, 66-րդ կետ):

Եվրոպական դատարանը գտնում է, որ կարող է առաջանալ հանձնման սպասելիս կալանավորման ժամկետի երկարատևության քննության անհրաժեշտություն: Սակայն եթե հանձնման սպասելիս կալանավորման ժամկետը ձգձգվում է շահագրգիռ անձի շահերից ելնելով կամ նրա խնդրանքով, ապա այդ անձը չի կարող բողոքարկել կալանավորման ժամկետի երկարատևությունը: X-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործով Եվրոպական դատարանը հանձնման սպասելիս քսաներկու ամիս տևած կալանավորումը համարեց իհմնավոր, քանի որ գերմանական իշխանությունները փորձուն

էին այդ ժամանակահատվածի ընթացքում Թուրքիայի կառավարությունից ստանալ երաշխիքներ, որ հանձնելուց հետո դիմողը չի ենթարկվի մահապատժի¹:

Մինսկի կոնվենցիան և «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիան պայմանագրի կողմերի համար նախատեսում են հանձնման հետաձգում և ժամանակավոր հանձնում: Նշված պայմանագրերում ամրագրված դրույթները իրենց արտացոլումն են ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 493-րդ հոդվածում: Եթե անձի նկատմամբ, որի հանձնումը խնդրվում է, ՀՀ տարածքում քրեական հետապնդում է հարուցված, կամ այդ անձը ՀՀ-ում դատապարտվել է այլ հանցագործության համար, ապա նրա հանձնումը կարող է հետաձգվել մինչև սույն օրենսգրքով սահմանված կարգով քրեական հետապնդումն ավարտելը, դատավճիռն ի կատար ածելը կամ պատժից ազատելը: Հանձնումը հետաձգելը չի դիտվում որպես հանձնման պահանջի մերժում:

Եթե սույն հոդվածի առաջին մասով նախատեսված անձի հանձնման հետաձգումը կարող է հանգեցնել հանձնման մասին խնդրանքով դիմած օտարերկրյա պետության օրենքով սահմանված քրեական հետապնդման վաղեմության ժամկետն անցնելուն կամ վնաս պատճառել այդ պետությունում վարվող քննությանը, ապա այդ անձը կարող է հանձնվել ժամանակավոր: Ժամանակավոր հանձնված անձը պետք է օտարերկրյա պետության կողմից վերադարձվի այնտեղ վարվող քրեական գործի վարույթով այն դատավարական գործողությունները կատարելուց հետո, որի համար նա հանձնվել է, բայց ոչ ուշ, քան հանձնելու օրվանից՝ երեք ամսվա ընթացքում: Օտարերկրյա պետության իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի հիմնավորված խնդրանքի և դրա հետ ՀՀ դատարանի, դատախազի համաձայնվելու դեպքում այդ ժամկետը կարող է երկարացվել, բայց մեկ ամսից ոչ ավելի ժամանակով:

Ժամանակավոր հանձնված անձի օտարերկրյա պետությունում գտնվելու ժամանակամիջոցը հաշվակցվում է ՀՀ-ում նրա նախնական կալանքի կամ պատժի կրման ժամկետին:

«Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի և Մինսկի կոնվենցիայով նախատեսված են հանձնելուց հրաժարվելու դեպքեր: Նշված փաստաթղթերում ամրագրված այդ դեպքերն իրենց ամրագրումն են ստացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը/Վ.Յ.Յովիաննիսյան, Զ.Գ.Ղուկասյան, Լ.Ս.Յակոբյան.-Եր.: Տիգրան Մեծ, 2005, էջ 150:

Քրեական դատավարության օրենսգրքի 488-րդ հոդվածի համաձայն՝ անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքի կատարումը մերժվում է, եթե՝

1. հանձնման վերաբերյալ խնդրանքը ՀՀ իրավասու մարմնի կողմից ստանալու պահին, խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության օրենքին համապատասխան, քրեական հետապնդում չի կարող հարուցվել, կամ դատավճիռը չի կարող ի կատար ածվել վաղեմության ժամկետն անցնելու պատճառով կամ այլ օրինական հիմքով.

2. անձի նկատմամբ նույն արարքի համար արդեն իսկ կայացվել է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշում.

3. խնդրանքը վերաբերում է ՀՀ քաղաքացու հանձնմանը. սակայն ՀՀ Սահմանադրության 30.1 հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերով կարող է նախատեսվել նաև ՀՀ քաղաքացիների հանձնումը.

4. հանձնման դեպքում տվյալ օտարերկրա պետության օրենքներին համապատասխան կարող է նշանակվել մահապատիժ, և այդ պետությունը բավարար երաշխիքներ չի տալիս առ այն, որ հանձնելու դեպքում այդպիսի պատիժ չի նշանակվի և չի կիրառվի:

Հանձնման մասին խնդրանքը կարող է մերժվել, եթե անձը, որի հանձնումը հայցվում է.

1. սահմանված կարգով ՀՀ-ում ձեռք է բերել քաղաքական ապաստանի իրավունք.
2. հետապնդվում է քաղաքական, ռասայական կամ կրոնական շարժառիթներով.
3. հետապնդվում է խաղաղ ժամանակ գինվորական հանցագործություն կատարելու համար:

4. հանցագործությունը կատարել է ՀՀ տարածքում:

Հանձնելը կարող է մերժվել նաև, եթե տվյալ օտարերկրյա պետությունը քրեական գործերով իրավական օգնության ոլորտում չի ապահովում փոխադարձությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 498-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ դատարանը, դատախազը սույն գլխով սահմանված կարգով օտարերկրյա պետության իրավասու մարմնի ներկայացրած խնդրանքով, սույն օրենսգրքին համապատասխան, քրեական հետապնդում է իրականացնում ՀՀ քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող այն անձանց նկատմամբ, որոնց հանձնումը մերժվել է, և որոնք կասկածվում են խնդրանքը ներկայացրած օտարերկրյա պետության տարածքում հանցանք կատարելու մեջ:

Մերժման հիմնական հիմքերից մեկը, որը վերջին ժամանակներս ենթարկվել է էական սահմանափակումների, քաղաքական հանցագործությունների հետ կապված հանձնում իրականացնելն է: Այս սկզբունքը զարգացել է 19 -րդ դարի սկզբներին, որի եռթյունն այն է, որ հանձնման վերաբերյալ պահանջ ստացած պետությունը կարող է իրաժարվել հանձնումից, եթե արարքն ունի քաղաքական բնույթ: «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ հանձնում չի իրականացվում, եթե հանցագործությունը, որի համար անձին պահանջում են, հայցող կողմը ճանաչում է որպես քաղաքական կամ քաղաքական հանցագործության հետ կապված հանցագործություն: «Քաղաքական հանցագործություն» սահմանումը երկար ժամանակ գործնականում վեճերի տեղիք էր տալիս: Այնպիսի գործողություններ, ինչպիսիք են դավաճանությունը, լրտեսությունը, արգելված քաղաքական կուսակցությունների հիմնումը կամ մասնակցությունը, սովորաբար, համարվում են քաղաքական հանցագործություններ, քանի որ անմիջականորեն ուղղված են պետության ամբողջականության և անվտանգության դեմ: Սակայն կան մի շարք վտանգավոր հանցագործություններ, որոնք գտնվում են «քաղաքական հանցագործություններ» հասկացության շրջանակից դուրս, չնայած այն հանգամանքին, որ դրանք ուղղված են պետության դեմ: Այսպես, «Հանձնման մասին» Կոնվենցիայի համաձայն՝ պետության դեկավարի կամ նրա ընտանիքի անդամի նկատմամբ մահափորձը կամ սպանությունը չպետք է համարվի քաղաքական հանցագործություն: 1970-ական թթ-ից սկսած՝ ահաբեկչական գործողությունները նույնականացնելու համարվեցին ոչ քաղաքական հանցագործություններ հանձնման նպատակներից ելնելով: Կոնվենցիայի այս դրույթի կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունը հայտարարել է. «Քանի որ ՀՀ օրենքներով քաղաքական հանցագործությունների կամ քաղաքական հանցագործությունների հետ կապ ունեցող հանցագործությունների տեսակներ սահմանված չեն, ուստի այդպիսի հիմքերով հանձնման հարցում ստանալիս Հայաստանի Հանրապետությունը հանձնում կիրականացնի, եթե հարցման մեջ նշված հանձագործությունն այդպիսին է համարվում իր ընդհանուր քրեական օրենքով կամ Հայաստանի Հանրապետության համար գործող միջազգային պայմանագրերով»: «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության առաջին հոդվածի համաձայն՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի կիրառման նպատակով քաղաքական հանցագործություններ չեն համարվում հետևյալները՝

ա) մարդկության դեմ այն հանցագործությունները, որոնք նախատեսված են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «8եղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայում.

բ) «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» 1949թ. ժնկի կոնվենցիայի 50-րդ հոդվածում, «Ծովում գինված ուժերի վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին» 1949թ ժնկի կոնվենցիայի 51-րդ հոդվածում, «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» 1949թ. ժնկի կոնվենցիայի 130-րդ հոդվածում և «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» 1949թ. ժնկի կոնվենցիայի 147-րդ հոդվածում նախատեսված հանցագործությունները.

գ) պատերազմի այն օրենքների բոլոր համեմատելի խախտումները, որոնք գործում են սույն կոնվենցիայի ուժի մեջ մտնելիս, ինչպես նաև պատերազմի այն սովորությունների խախտումները, որոնք այդ ժամանակ գոյություն ունեն և ժնկի վերոհիշյալ կոնվենցիաների դրույթներոն չեն նախատեսվում:

Կոնվենցիան հանձնման շրջանակներից բացառում է նաև այն գինվորական հանցագործությունները, որոնք սովորական քրեական օրենքներով հանցագործություններ չեն համարվում (հոդված 4): Կոնվենցիայի 4-րդ հոդվածի կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունը նույնպես հայտարարություն է կատարել. «Քանի որ Հայաստանի Հանրապետության օրենքներով գինվորական բոլոր հանցագործությունները սովորական քրեական օրենքներով են հանցագործություններ համարվում, ուստի այդ գործերով Պայմանավորվող կողմերի հանձնման վերաբերյալ հարցումները կրավարարի, եթե հայցող Պայմանավորվող կողմի օրենքներով տվյալ արարքը, որի առնչությամբ պահանջվում է համապատասխան անձի հանձնումը, նույնպես դասվում է սովորական քրեական հանցագործությունների շարքին»:

Կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրությամբ սահմանվում է, որ հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի և փոխանակման հետ կապված հանցագործությունների դեպքում Պայմանավորվող կողմերի միջև հանձնումը տեղի է ունենում համաձայն՝ կոնվենցիայի դրույթների, եթե հանցագործությունը, հայցվող կողմի օրենսդրության համաձայն՝ համապատասխանում է նույնաբնույթ հանցագործությանը: Հանձնումը չի կարող մերժվել այն հիմքով, որ Հայցվող կողմի օրենսդրությամբ չեն սահմանված նույնաբնույթ հարկեր կամ տուրքեր, կամ չի նախատեսվում հարկի, տուրքի, մաքսատուրքի և փոխանակման նույնաբնույթ կարգավորում, ինչը նախատեսվում է Հայցող կողմի օրենսդրությամբ:

Այսպիսով, այսօր հանձնման ինստիտուտը հատուկ նշանակություն է ձեռք բերել: Միջազգային գործընթացների շնորհիվ շատ երկրների սահմաններ դարձել են «թափանցիկ», կատարելագործվել են հաղորդակցման միջոցները, որի պայմաններում հեշտացել

է մի պետության տարածքում հանցանք կատարած անձանց այլ պետությունում թաքնվելու ճանապարհը: Նոր պայմաններն ակտիվորեն օգտագործվում են կազմակերպված հանցավորության կողմից, որը միջազգային բնույթ է կրում:

Ժամանակակից հանցավորությունը տարածքային սահմաններ չունի: Այդ իսկ պատճառով հանցավորության դեմ պայքարում էական նշանակություն է ձեռք բերում պետությունների համագործակցությունը: Պետությունների միջև միջազգային համագործակցության ամրապնդման և զարգացման գործում կարևոր նշանակություն ունի հանձնման ինստիտուտը, որը դեռևս գտնվում է զարգացման փուլում:

Հետևաբար, հաշվի առնելով հանձնման ինստիտուտի կարևորությունը ժամանակակից պայմաններում, գնալով ավելի արդիականություն է ձեռք բերում հանձնման ընթացակարգի ավելի խորը ուսումնաիրությունը:

Հանձնման ինստիտուտի զարգացման հիմնարար ուղղություններից մեկը պետք է հանդիսանա երկրների ներքին օրենսդրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ապահովման խնդիրը: Այդ առումով նպատակ պետք է հետապնդել ստեղծելու գործուն և արդյունավետ մեխանիզմներ:

ԲԱԺԻՆ 6.

ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅԻՆ ՀՅԱԼ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Դատական վերանայման էությունը

1. Դատական վերանայման ընդհանուր բնութագիրը

Դատական վերանայումը՝ որպես պետական իշխանության երրորդ ճյուղի՝ դատական իշխանության գործառույթ, դատավարական կառուցակարգերի և ընթացակարգերի համակարգ է, որի խնդիրներն են (1) դատական սխալների ուղղումը, (2) պետության իրավաքաղաքական միասնականության ապահովումը, ինչպես նաև (3) իրավունքի օրենքումը:

Դատական վերանայման ինստիտուտը ներհատուկ է բոլոր ժամանակակից իրավական համակարգերին: Թեև արդարադատության ոչ բոլոր տեսակներն են, որ ենթադրում են վերանայման կառուցակարգերի առկայություն: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության հիման վրա սահմանադրական արդարադատության ոլորտում դատական վերանայումն ըստ էության բացակայում է: Դա պայմանավորված է արդարադատության այդ տեսակի առանձնահատկությամբ, մասնավորապես՝ սահմանադրական արդարադատության արդյունքում կայացվող դատական ակտերի կայունության՝ որպես իրավական արժեքի գերակա նշանակությամբ: Այնուհանդերձ, անգամ սահմանադրական արդարադատության ոլորտում օրենքը նախատեսել է դատական վերանայման հնարավորություն: Այսպես, «ՀՀ սահմանադրական դատարանի մասին» օրենքի 68-րդ հոդվածի 14-րդ մասը սահմանում է, որ

«Սահմանադրական դատարանը սույն հոդվածի 1-ին մասում նշված որևէ գործով (կապված օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելու հետ) ընդունված ըստ էության որոշումից առնվազն յոթ տարի հետո, սույն օրենքով սահմանված կարգով, ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել իր հիշյալ որոշումը, եթե՝

1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը.

2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրավական նշանակություն:

Սույն մասի առաջին պարբերությունում նշված դիմումը չի կարող վերաբերել այն իրավական ակտերին (դրանց առանձին դրույթներին), որոնք Սահմանադրական դատարանի որոշմամբ ճանաչվել են Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Սույն մասի առաջին պարբերությունում նշված դիմումների հիման վրա գործը քննության ընդունելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումն ընդունվում է Սահմանադրական դատարանի անդամների 7 ձայնով:

...

Ի տարբերություն սահմանադրական արդարադատության՝ քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունում դատական վերանայման կառուցակարգերի և ընթացակարգերի համակարգին մեծ դեր է վերապահված: Իրավունքի այդ ճյուղերում դատական վերանայումն ստանում է ծավալուն կանոնակարգում և հիմնված է աստիճանակարգված դատական համակարգի վրա:

Քրեական դատավարությունում դատական վերանայումն ունի ոչ միայն օբյեկտիվ-իրավական, այլև սուբյեկտիվ-իրավական հիմքեր: Այլ կերպ՝ հանցագործության համար դատապարտված անձի համար իր նկատմամբ կայացված դատավճռի վերանայման իրավունքը դասվում է մարդու իիմնարար իրավունքների թվին՝ հրչակված թե՛ ՀՀ Սահմանադրությամբ և թե՛ Մարդու իրավունքների միջազգային-իրավական փաստաթղթերով: Այսպես՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«Որևէ հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իր դատապարտումը և դատավճիռը վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից օրենքի համաձայն»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածը սահմանում է.

«1. Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից: Այդ իրավունքի

իրականացումը, ներառյալ՝ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով:

2. Այդ իրավունքից կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված անշան հանցագործությունների առնչությամբ, կամ երբ տվյալ անձը դատվել է ամենաբարձր ատյանի կողմից, որը հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան, կամ դատապարտված է եղել այդ անձի արդարացման դեմ վճռաբեկ գանգատի քննարկումից հետո»:

Իսկ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք»:

Այս սահմանադրական իրավունքի բովանդակային տարրերը հետևյալներն են.

1) Այն դատական օղակը, որն օժտված է տվյալ դատական ակտի վերանայման իրավասությամբ, պետք է ակտը կայացրած դատական մարմնի հետ ուղղահայաց և ոչ թե հորիզոնական կապի մեջ լինի: Օրինակ՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտը մեկ այլ առաջին ատյանի դատարանի կողմից վերանայելու մասին դրույթը կիակասեր քննարկվող սահմանադրական երաշխիքին:

2) Դատական վերանայման վարույթը, ներառյալ՝ բողոքին ներկայացվող պահանջները, բողոքարկման հիմքերն ու ժամկետները, վերանայող դատարանուն դատական քննության ընթացակարգը, վերանայող դատարանի լիազորությունները, պետք է կարգավորվեն օրենքով: Ընդ որում, այդ կարգավորումը պետք է համապատասխանի որոշակիության և ողջամտության պահանջներին: Օրինակ՝ չպետք է նախատեսվի բողոքարկման այնպիսի կարծ ժամկետ, որ անձը չունենա պատշաճ բողոք ձևակերպելու և ներկայացնելու համար ողջամտորեն անհրաժեշտ ժամանակ:

3) Օրենքով ներկայացվող ֆորմալ պահանջներին բավարարող բողոք բերելու պարագայում վերանայող դատարանը պարտավոր է քննության առնել այն և կայացնել ըստ էության որոշում: Բողոքը վարույթ ընդունելու հարցում վերանայող դատական ատյանը չպետք է օժտված լինի հայեցողական լիազորություններով:

4) Այս իրավունքը ծագում է այն ժամանակ, երբ անձի նկատմամբ կայացվում է դատավճռից: Դատական վերանայման անգամ մեկ կառուցակարգից օգտվելու հնարավորության պարագայում այս իրավունքը համարվում է կենսագործված:

5) Քննարկվող իրավանորմը դատական վերանայման ծավալին որևէ պահանջ չի ներկայացնում: Ուստի, եթե դատավճռի վերանայման հնարավորությունը

սահմանափակվի միայն իրավունքի հարցերով և չներառի նաև փաստի հարցերը, ապա դա չի խախտի քննարկվող սահմանադրական պահանջը:

Դատական վերանայման քրեադատավարական ինստիտուտը մանրամասն կարգավորման է Ենթարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքի 10-11-րդ բաժիններով, որոնք բովանդակում են 376-426-րդ հոդվածները:

2. Դատական վերանայման խնդիրները և սկզբունքները

Դատական վերանայման անհրաժեշտությունը, ինչպես նաև իրավական բնութագիրը կարող են վեր հանվել այդ գործունեության խնդիրների միջոցով: Դրանք են.

(Ա) Դատական սխալների ուղղումը՝ որպես դատական վերանայման խնդիր, բխուն է արդարադատության բուն էությունից: Քրեական արդարադատության շրջանակներում հատկապես վտանգվում են մարդու իիմնարար իրավունքները: Ուստի, դատական վերանայումը կարևորագույն երաշխիք է, որպեսզի մարդու իրավունքների սահմանափակումները լինեն իրավաչափ, և որ ոչ մի անմեղ անձ չդատապարտվի: Մյուս կողմից՝ հանրային շահը պահանջում է սահմանել երաշխիքային համակարգ, որպեսզի հանցանք կատարած անձինք քրեական պատասխանատվությունից չխուսափեն (քրեական իրավունքի սկզբունքների թվում ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածը սահմանում է նաև քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը):

Դատական վերանայման քննարկվող խնդիրն անհրաժեշտ է դիտարկել նշված արժեքների լույսի ներքո՝ ՀՀ քր. դատ. օր. 2-րդ հոդվածում ամրագրված՝ քրեական դատավարության ընդհանուր խնդիրների համատեքստում: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում՝

1) քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի.

2) ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի.

3) ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման:

Այնուհանդերձ, դատական վերանայման այս խնդիրը չի կարելի բացարձակ իմաստով հասկանալ: Յակառակ դեպքում՝ դատական վերանայման կառուցակարգերը պետք է անսահմանափակ լինեին, քանի որ տեսականորեն հնարավոր չէ տալ բացարձակ երաշխիք, որ վերանայող դատական ատյանը ամբողջությամբ ուղղել է ստորադաս դատարանի թույլ տված բոլոր դատական սխալները: Ուստի, դատական սխալների ուղղման խնդիրը հակակշռվում և հավասարակշռվում է մեկ այլ իրավական արժեքով՝ **դատական ակտերի կայունության հիմնադրույթով**:

Բ) Պետության իրավաքաղաքական միասնության ապահովումը դատական վերանայման առավել ընդհանրական բնույթի խնդիրներ է: Այն ճշգրիտ է այնպիսի օրենսդրության առկայության պայմաններում, որն իրական հնարավորություն է տալիս ուղղահայաց գործառնական կապ ստեղծել տվյալ պետության մեջ արդարադատություն իրականացնող բոլոր մարմինների միջև: Այլ կերպ՝ իրավաքաղաքական միասնությունն ապահովվում է դատական համակարգի կազմակերպման ու գործունեության այնպիսի կանոնակարգմանը, երբ որևէ դատական մարմին գերծ չէ առնվազն մեկ այլ դատական մարմնի հետ գործառնական կապից: Այստեղ «գործառնական կապը» հենց վերանայման հնարավորության առկայությունն է:

Քննարկվող խնդրի ապահովման պարտադիր պայման է նաև վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատական ատյանի որոշումները բեկանելու կամ փոփոխելու հնարավորությունը: Դրա միջոցով բարձրագույն դատարանները (դատական համակարգը գլխավորող ատյանները) հնարավորություն են ստանում իրականացնել որոշակի իրավական քաղաքականություն:

Իրավաքաղաքական միասնության ապահովման խնդիրը ներառում է նաև ռոմանագերմանական իրավական ավանդույթին բնորոշ սահմանադրական արդարադատության՝ կազմակերպականորեն ինքնուրույն ինստիտուտի (առանձնացված Սահմանադրական դատարանի) և ընդհանուր իրավասության դատարանների համակարգի միջև գործառնական կապ ստեղծելու անհրաժեշտությունը: Դրան է ուղղված դատական վերանայման այնպիսի կառուցակարգ, ինչպիսին է նոր հանգամանքներով դատական վերանայումը:

Դատական վերանայման այս խնդիրը ևս չի կարելի բացարձակ իմաստով հասկանալ: Յակառակ դեպքում, դատարանների միջև գործառնական կապերը

կիանգեցնեն գործադիր իշխանությանը բնորոշ ներհամակարգային հարաբերությունների (վերադաս-ենթակա հարաբերություններ): Ուստի այն իրավական արժեքը, որը հակակշռում է այս խնդիրը, կոնկրետ գործով արդարադատություն իրականացնող դատարանի անկախությունն է:

Գ) *Իրավունքի զարգացումը* դատական վերանայման (և դատական իշխանության՝ ընդհանրապես) ամենավիճելի խնդիրն է: Ումանագերմանական իրավական ավանդույթներ ունեցող երկրներում (հատկապես՝ խորհրդային և հետխորհրդային իրավական համակարգերում) դատական վերանայումը ընդունված է սահմանափակ դիտարկել:

Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ հատկապես վերանայող դատարանները հակված են դատական ակտերի հիմնավորումներով զարգացնել իրավունքը: Այդ գործառույթի կենսագործման ձևը դատական նախադեպի պարտադիրությունն է, որը կարող է լինել ֆորմալացված կամ չֆորմալացված:

Եթե անգլո-ամերիկյան իրավունքի ընտանիքում այդ իրավունքը հստակորեն ֆորմալացված է, այսինքն՝ թե՛ տեսության մեջ և թե՛ պրակտիկայում ընդունվում է, որ ստորադաս դատարանները պարտավոր են հետևել վերադաս դատարանների նախադեպերին, ապա նույնը չի կարելի ասել մայրցամաքային իրավական ընտանիքի պարագայում: Օրինակ՝ Գերմանիայում դատական նախադեպերը դիտվում են որպես որոշակի *իրավական սովորույթի* առկայության ապացույց, իսկ Ֆրանսիան ձևականորեն մերժում է դատական նախադեպի պարտադիրությունը (հավատարիմ մնալով 18-րդ դարի հեղափոխական ավանդույթին), սակայն գործնականում Ֆրանսիայում ձևավորվել և գործում է դատական նախադեպերի ծավալուն և գործում համակարգ: Այսպես՝ Ֆրանսիայում օրենսգրքերի պաշտոնական տեքստերը հրատարակվում են յուրաքանչյուր հոդվածի օրենսդրական ձևակերպման հետ մեկտեղ՝ դրան առնչվող դատական նախադեպերի տեքստերով հանդերձ:

Խորհրդային Միությունում իրավունքի զարգացման գործառույթը հիմնականում մերժվում էր: Սակայն այն չէր կարող գոյություն չունենալ՝ հատկապես հաշվի առնելով ԽՍՀՄ դաշնային բնույթը: Խորհրդային Միությունում դատական վերանայմանը բնորոշ իրավունքի զարգացման գործառույթը դրսևորվում էր *ղեկավար պարզաբանումների* ինստիտուտի միջոցով, որոնք տրվում էին Գերագույն դատարանի պլենումի կողմից:

Յայաստանի Յանրապետությունը, նախ, իներցիոն եղանակով շարունակեց խորհրդային իրավական ավանդույթը (ղեկավար պարզաբանումների փոխարեն ներդնելով 77 դատարանների նախագահների խորհրդի խորհրդական

պարզաբանումների ինստիտուտը), այնուհետև դատական նախադեպի պարտադիրության օրենսդրական ամրագրման միջոցով փորձում է ներդնել իրավունքի գարգացման դասական մոդել՝ չիրաժարվելով սակայն ԴՆԽ-ից և նրա կողմից ընդունվող խորհրդակցական եզրակացություններից:

Իրավունքի գարգացման գործառույթը պետք է սահմանափակվի օրենքների ընդունման հարցում օրենսդիր իշխանության բացառիկ իրավագորությամբ: Դայաստանի Դանրապետությունում իրավունքի գարգացման գործառույթը միայն բոլորովին վերջերս է օրենսդրական ամրագրում ստացել ՀՀ դատական օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդված, ՀՀ քր. դատ. օր. 8-րդ հոդված), իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկան անգամ ընդիհանուր գծերով որոշակիացված համարել չի կարելի: Այդ պատճառով մեր իրավունքում դեռևս արդիական չեն դատական ակտիվության և պասիվության մասին վեճերը (այստեղ խոսքը վերաբերում է դատարանի իրավամեջնաբանական և ոչ թե ապացուցողական ակտիվությանը):

Եթե դատական վերանայման խնդիրների համակարգը պայմանավորված չէ տվյալ դատավարական համակարգի առանձնահատկություններով, ապա նույնը չի կարելի ասել դատական վերանայման սկզբունքների մասին: Դատական վերանայման սկզբունքների համակցությունը, բխելով քրեական դատավարության ընդիհանուր սկզբունքների ինստիտուտից, օժտված է հարաբերական ինքնուրույնությամբ և ենթակա է որոշակի փոխակերպումների: Այսպես՝ ՀՀ դատական վերանայման սկզբունքների գործող համակարգն էապես տարբերվում է ՀՀ քր. դատ. օր. գործողության սկզբնական շրջանում գործող սկզբունքների համակարգից:

Ներկայում ՀՀ դատական վերանայման սկզբունքների համակարգը ներառում է հետևյալ սկզբունքները՝ բողոքարկման ազատության և հայեցողական վերանայման գուգորդման սկզբունքը, տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքը:

Ա) *Բողոքարկման ազատության և հայեցողական վերանայման գուգորդման սկզբունքի եռթյունն այն է, որ դատական վերանայման առանձին եղանակների պարագայում կողմի՝ պատշաճ ձևակերպված կամարտահայտությունը բավարար է վերանայման վարույթ հարուցելու համար, իսկ մյուս եղանակների պարագայում՝ ոչ: Այսպես, պատշաճ վերաբննիչ բողոքի առկայության դեպքում ՀՀ վերաբննիչ քրեական դատարանը պարտավոր է բողոքն ընդունել վարույթ և քննության առնել այն: Մինչդեռ վճռաբեկ բողոքարկման և բացառիկ բողոքարկման դեպքում (այդ թվում՝ վերաբննիչ*

դատարանում) դա բավարար չէ, և բողոքաբերը պետք է լրացուցիչ հիմնավորի օրենքով նախատեսված առանձին հանգամանքների առկայությունը (օրինակ՝ օրենքի միատեսակ կիրառման խնդրի առկայությունը, կամ իր համար առաջացած ծանր հետևանքները և այլն): Այս պարագայում վերանայող դատարանն ըստ էության օժտված է օրենքի սահմաններում հայեցողություն դրսնորելու իրավական հնարավորությամբ:

Բ) *Տնօրինչականության (դիսպոզիտիվության)* սկզբունքի էությունն այն է, որ անձն ինքն է պատասխանատու իր իրավունքների պաշտպանության համար, և այդ հարցում անձի դրսնորած թերացումը լրացվելի չէ: Այս սկզբունքն առավելապես բնորոշ է մասնավոր-վարութային ընթացակարգերին: Հանրային իրավունքի վարույթներում այն որպես կանոն բացակայում է, քանի որ դրանցում առկա է գործով ճշմարտությունը պաշտոնապես պարզելու հանրային գերակա շահ:

Սակայն ՀՀ քրեական դատավարությունում, որպես հանրային-վարութային գործունեության տեսակում գործող դատական վերանայման ընթացակարգերը ներկայում կարգավորված են տնօրինչականության սկզբունքի հիման վրա: Դրա դրսնորումներից է այն, որ ՀՀ քր. դատ. օր. 385-րդ հոդվածի 1-ին մասի և 415-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա՝ վերաքննիչ և Վճռաբեկ դատարանները դատական ակտը վերանայում են վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Այսինքն, եթե կողմը պատշաճ ջանասիրություն չի դրսնորել և բողոքում չի մատնանշել իր նկատմամբ բույլ տրված խախտումը, ապա հետագայում չի կարող ուղղել այդ բացքողումը: Դատարանը ևս չի կարող լրացնել բողոքաբերի բացքողումը, և, հայտնաբերելով բողոքում չմատնանշված խախտում, չի կարող այն վերացնել:

Տնօրինչականության սկզբունքն առանձնահատուկ դրսնորում է ստանուն Վճռաբեկ դատարանում: Այսպես, ՀՀ քր. դատ. օր. 404-րդ հոդվածի համաձայն.

«2. Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել Վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:

3. Անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ»:

Գ) *Դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունք*: Այս սկզբունքից բխում է, որ այն դատական սխալները, որոնք կարող են ուղղվել վերանայման բացառիկ եղանակով, կարող են ուղղվել նաև վճռաբեկությամբ, իսկ այն դատական սխալները, որոնք կարող են ուղղվել վճռաբեկությամբ, կարող են ուղղվել նաև վերաքննությամբ: Միևնույն ժամանակ, բացառիկ վերանայմամբ չեն կարող ուղղվել

որոշ այնպիսի սխալներ, որոնք կարող են ուղղվել վճռաբեկությամբ, իսկ վճռաբեկությամբ չեն կարող ուղղվել որոշ այնպիսի սխալներ, որոնք կարող են ուղղվել վերաբննությամբ:

Այս սկզբունքի դրսերումներից է նաև այն, որ վերաբննիչ դատարանի իրավասությունը չի կարող ավելի լայն լինել, քան տվյալ գործը քննած առաջին ատյանի դատարանինը: Այս հիմնադրույթը ձևակերպվել է Ռ.Արշալույսյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. փետրվարի 17-ի որոշման 21-րդ կետում՝ հետևյալ ձևակերպմանը.

«...վերաբննիչ դատարանը՝ որպես վերանայող ատյան, գործի եռթյան վերաբերյալ չի կարող ավելի լայն լիազորություններ ունենալ, քան առաջին ատյանի դատարանը»:

3. Դատական վերանայման համակարգի տարրերը և դրանց տարրերակումը

Յուրաքանչյուր պետության իրավունքում գործում է դատական վերանայման տարրերի որոշակի համակարգ: Տարրերի կոնկրետ համակցության ընտրությունը պայմանավորված է մի կողմից տվյալ պետության կառուցվածքի ձևով (դաշնային, ունիտար, ինքնավար միավորների առկայություն) և մյուս կողմից՝ իրավական ընտանիքով, որին պատկանում է տվյալ պետությունը:

Դատական վերանայման համակարգի տարրն իրենից ներկայացնում է իրավական կառուցվածքի (ձև) և կոնկրետ դատավարական փուլի շրջանակներուն իրականացվող ընթացակարգի (բովանդակություն) համակցություն:

Դատական վերանայման կառուցվածքը բնութագրվում է դատական վերանայման նպատակային նշանակությամբ, բողոքարկման իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակով, բողոքարկման ենթակա դատավարական ակտերի շրջանակով, դատական վերանայման սահմաններով, վերանայման արդյունքում վերանայող ատյանի իրավասության շրջանակով: Դատական վերանայման կառուցվածքը նաև դատական իշխանության կենսագործման ձև է:

Դատական վերանայման ընթացակարգը բնութագրվում է կոնկրետ դատավարական փուլի շրջանակներում դատավարական իրավունքի սուբյեկտների իրավունքների, պարտականությունների և լիազորությունների շրջանակով, դրանց իրականացման դատավարական կարգով, առանձին դատավարական փաստաթղթերին (բողոք, պատասխան, դատական ակտ) ներկայացվող պահանջներով:

Դատական վերանայման իրավական կառուցակարգը (ձևը) և վերանայման ընթացակարգը (բովանդակությունը) թեև ունեն հարաբերական ինքնուրույնություն, սակայն դրանք միայն պայմանականորեն կարելի է տարանջատել. դրանք անքակտելի միասնության մեջ են, պետք է համապատասխանեն միմյանց: Սա շատ կարևոր է, այս տեսական դրույթի անտեսումը կարող է հանգեցնել և մեր օրենսդրական պրակտիկայուն արդեն հանգեցրել է որոշակի խնդիրների:

Այսպես, 2007թ. օրենսդրական փոփոխությունների արդյունքում փոխվեց վերաքննիչ վերանայման մեխանիզմը (կառուցակարգը). լրիվ վերաքննությունը (երբ դատարանն իրավունք ուներ դատական ակտը վերանայել ամբողջ ծավալով) վերափոխվեց սահմանափակ վերաքննության (երբ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքով): Սակայն վերաքննիչ վարույթի ընթացակարգը կանոնակարգող ոչ բոլոր իրավադրույթները համապատասխանեցվեցին վերաքննության նոր հայեցակարգին: Այսպես, դատական վիճաբանությունները՝ որպես վերաքննիչ փուլի պարտադիր միավոր, պահպանվեցին: Մինչդեռ վերաքննիչ բողոքում կարող է չբարձրացվել նոր կամ արդեն իսկ հետազոտված ապացույցներ հետազոտելու պահանջ: Այս պարագայուն դատական վիճաբանություններ անցկացնելու իմաստիվ պահանջն անտրամաբանական է:

Դատական վերանայման քրեադատավարական ինստիտուտը բնութագրող հասկացական ապարատի պարզաբանման շրջանակներում կարևոր է «դատական վերանայման տարր», «դատական օղակ» և «դատական ատյան» հասկացությունների հարաբերակցության ճիշտ ընկալումը: Մասնավորապես՝ դատական վերանայման տարրը՝ որպես ընդիհանուր-գործառութային հասկացություն, անհրաժեշտ է տարբերակել դատական օղակից, որպես ինստիտուցիոնալ հասկացություն, ինչպես նաև դատական ատյանից, որպես կոնկրետ-գործառութային հասկացություն:

Քրեադատավարական վերանայման տարրը տվյալ պետության քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված և կանոնակարգված՝ դատական ակտի բողոքարկման ու ստուգման միջոց է: ՀՀ գործող քրեադատավարական համակարգը բաղկացած է հետևյալ հինգ տարրերից՝

1. վերաքննություն,
2. վճռաբեկություն,
3. օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացառիկ վերանայում,
4. նոր ի հայտ եկած հանգամանքներով դատական վերանայում,
5. նոր հանգամանքներով դատական վերանայում:

Դատական օղակը դատական համակարգի տարր է՝ դատական մարմին: Պարտադիր չէ, որ այն համընկնի դատական վերանայման կոնկրետ գործառույթի հետ: Նույն դատական օղակը կարող է իրականացնել մեկից ավելի դատական վերանայման գործառույթ: Այսպես՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրականացնում է վերաքննություն, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացառիկ վերանայում, նոր ի հայտ եկած հանգամանքներով վերանայում, նոր հանգամանքներով վերանայում: Իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն իրականացնում է վճռաբեկություն, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացառիկ վերանայում, նոր ի հայտ եկած հանգամանքներով վերանայում, նոր հանգամանքներով վերանայում): Դատական սկզբնական օղակի կողմից, որպես կանոն, դատական վերանայման որևէ գործառույթ չի իրականացվում:

Ինչպես երևում է, միևնույն դատական վերանայման գործառույթը կարող է իրականացվել մեկից ավելի դատական օղակների կողմից: Օրինակ՝ նոր ի հայտ եկած հանգամանքներով դատական վերանայումը և նոր հանգամանքներով դատական վերանայումը կարող են իրականացվել թե՝ Վերաքննիչ դատարանի (Երկրորդ օղակ) և թե՝ Վճռաբեկ դատարանի (Երրորդ օղակ) կողմից:

Դատական ատյանը ցույց է տալիս այն դատական մարմինները, որոնք իրավասու են քննել տվյալ կոնկրետ քրեական գործը և դրանով կայացված դատական ակտերի դեմ բերվող բողոքները:

Դատական վերանայման տարրերի դասակարգումը կարևոր է ընդհանուր համակարգում դրանցից յուրաքանչյուրի տեղը և դերը ճիշտ պատկերացնելու ու համակարգը ճիշտ կառուցելու համար:

Ա) Բնականոն և բացառիկ վերանայում: Բնականոն վերանայման պարագայուն դատավարության մասնակիցները պատշաճ ձևակերպված կամարտահայտությամբ, որպես կանոն, կարող են գործադրել տվյալ դատական վերանայման կառուցակարգը: Բնականոն վերանայման պարագայուն դատարանի կամ այլ սուբյեկտի կամարտահայտությունը, որպես կանոն, անհրաժեշտ չէ բողոքը վարույթ ընդունելու համար: Այսպիսի վերանայման ենթակա են օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը:

Հակառակ դրան՝ բացառիկ վերանայման ենթակա են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Բացառիկ վերանայման պարագայուն դատական վերանայումը հնարավոր է միայն դատարանի դիսկրեցիոն (հայեցողական) կամարտահայտության պարագայուն: Այդ կամարտահայտությունը կարող է պայմանավորված լինել իրավունքի գարգացման (վճռաբեկություն՝ մինչև 2008թ. ավարտը, եթե վճռաբեկությունը

վերանայման բացառիկ ձև էր), կոպիտ դատական սխալն ուղղելու (բացառիկ վերանայում վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում, նոր ի հայտ եկած հանգամանքներով վերանայում), ինչպես նաև արտահամակարգային դատական մարմինների (Սահմանադրական դատարան, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան) և ընդհանուր իրավասության դատական համակարգի միջև իրավական միասնությունն ապահովելու (նոր հանգամանքներով վերանայում) խնդիրներով:

ՀՅ գործող քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված է բնականոն վերանայման երկու եղանակ՝ վերաքննությունը և Վճռաբեկությունը, և բացառիկ վերանայման երեք եղանակ՝ բացառիկ վերանայում վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում, նոր ի հայտ եկած հանգամանքներով վերանայում, նոր հանգամանքներով վերանայում:

Բ) Հորիզոնական վերանայում և վերադաս վերանայում: Հորիզոնական վերանայման պարագայում վիճարկվող դատական ակտը կայացրած և վերանայող դատական օղակները համընկնում են: Հորիզոնական վերանայման մասնավոր դրսևորում է ինքնավերահսկողությունը, երբ վերանայում է նույն դատական մարմինը:

Հորիզոնական դատական վերանայման դասական օրինակն է Ֆրանսիայում ասիզների (Երդվյալների) դատարանի մեղադրական դատավճռի վերաքննիչ վերանայումը մեկ այլ ասիզների դատարանի կողմից:

Ինքնավերահսկողությունն անհրաժեշտ է տարբերակել դատական որոշման վերաբերյալ կասկածների և անհստակությունների լուծումից (ՀՅ քր. դատ. օր. 430-րդ հոդված): Նշված ինստիտուտն առհասարակ դատական վերանայում չէ, քանի որ դրա պարագայում վիճարկվում է դատարանի կամքի արտահայման եղանակը, իսկ դատական վերանայման պարագայում՝ դատարանի բուն կամքը:

ՀՅ դատական համակարգում ՀՅ բարձրագույն դատական ատյանի առանձնահատուկ դիրքը նկատի ունենալով՝ հորիզոնական դատական վերանայումն անխուսափելի է դաշնում այն դեպքում, երբ բացառիկ վերանայման կարգով վերանայվում է Վճռաբեկ դատարանի դատական ակտ: Վճռաբեկ դատարանում հորիզոնական վերանայման արդյունավետության երաշխավորման տեսանկյունից կարևոր է ՀՅ քր. դատ. օր. 90-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված այն նորմը, որ դատավորը պարտավոր չէ կայացնել ինքնաբացարկն ընդունելու մասին որոշում, եթե դատական ակտ կայացնելու համար չի կարող ստեղծվել արդարադատության մեկ այլ մարմին:

Եթե բարձրագույն դատական ատյանում հորիզոնական վերանայումն անխուսափելի է, ապա ստորադաս ատյաններում՝ անցանկալի: Այդ ինաստով հատկանշական է, որ 2008թ. Հայաստանի Հանրապետությունում գործած հորիզոնական դատական վերանայման կառուցակարգը, երբ նոր ի հայտ եկած և նոր հանգամանքներով գործի քննությունն իրականացվում էր առաջին ատյանի դատարանում, երկար կյանք չունեցավ:

Գ) Սիմետրիկ և ասիմետրիկ վերանայում: Սիմետրիկ վերանայման էությունն այն է, որ տվյալ վերանայման կառուցակարգը գործադրելու կողմերի հնարավորությունները հավասար են: Ասիմետրիկ վերանայման պարագայում կողմերից մեկը (որպես կանոն՝ պաշտպանության կողմը) առավելություն է ունենում:

Դատական վերանայման ասիմետրիան առավելապես պայմանավորված է անմեղության կանխավարկածի ու կրկին դատվելու անթույլատրելության սկզբունքներով և մեղադրյալի վիճակի վատթարացման անթույլատրելիության հիմնադրույթով: Դատական վերանայման ասիմետրիան բնորոշ է միայն քրեական դատավարությանը. քաղաքացիական դատավարությունում ասիմետրիան բացակայում է:

ՀՀ դատական վերանայման համակարգում ասիմետրիան առկա է նոր ի հայտ եկած հանգամանքներով վերանայման պարագայում, երբ արդարացման դատավճիռը կարող է վիճարկվել միայն տվյալ հանցագործության համար նախատեսված վաղեմության ժամկետի շրջանակներում, իսկ մեղադրական դատավճիռը՝ ցանկացած ժամանակ, անգամ դատապարտյալի մահից հետո: Ասիմետրիան առկա է նաև Վճռաբեկ դատարանում բացառիկ վերանայման պարագայում ևս: Մասնավորապես՝ ՀՀ քր. դատ. օր. 412-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, իսկ անձի վիճակի վատթարացման հիմքով՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

Կարևոր գործնական նշանակություն ունի ասիմետրիայի խնդիրը վճռաբեկ վարույթում՝ կապված վճռաբեկ բողոքարկման իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի հետ: ՀՀ քր. դատ. օր. 404-րդ հոդվածի 1-ին մասի.

«Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները Վճռաբեկ դատարան բողոքարկելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դիմողները.

2) գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում»:

Մեջբերված իրավանորմում օգտագործվող «քրեական հետապնդման մարմիններ» հասկացությունը սահմանված է ՀՀ քր. դատ. օր. 6-րդ հոդվածի 22-րդ կետով, որպես «դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը»: Այս սահմանման հիման վրա, տառացի մեկնաբանելով ՀՀ քր. դատ. օր. 404-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավակարգավորումը, կարող ենք հանգել հետևողական, որ վերաքննիչ դատարանում գործի քննությանը մասնակցած դատախազը վճռաբեկ բողոքարկման լիազորություն չունի. դատախազության համակարգից նման իրավասությամբ օժտված են միայն գլխավոր դատախազը և նրա տեղակալները: Մինչդեռ պաշտպանության կողմը ներկայացնող անձինք՝ մեղադրյալը (ամբաստանյալը), նրա օրինական ներկայացուցիչը և պաշտպանը, վճռաբեկ բողոքարկման իրավունքով ուղղակիորեն օժտված են:

Ասիմետրիայի այս դրսևորմանը մենք կանդրադառնանք սույն աշխատանքի 3-րդ գլխի 2-րդ պարագրաֆում:

Դ) Գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերի վերանայում: Դատական վերանայման ձևերի այս տարբերակումը հիմնված է այն գաղափարի վրա, որ երաշխավորման առավել բարձր մակարդակով պետք է օժտված լինեն քրեական դատավարության հիմնական հարցին՝ հանցագործության մեջ անձի մեղավորության հարցին վերաբերող դատական ակտերը: Դրանց շրջանակը սահմանված է ՀՀ քր. դատ. օր. 6-րդ հոդվածի 10.1 կետով և ներառում է առաջին ատյանի դատարանի մեղադրական և արդարացման դատավճիռները, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումները, ինչպես նաև այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը:

Հատկանշական է, որ ի տարբերություն քաղաքացիական դատավարության՝ քրեադատական վերանայման համակարգում գործով վարույթը կարճելու մասին որոշումը դասվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի շարքին: Այսինքն՝ հանցագործության մեջ մեղավորության հարցին հաստատական կամ ժխտական

պատասխաններից զատ՝ գործի ըստ էության լուծում է համարվում այդպիսի պատասխանի անհնարինության մասին պատասխանը:

Դատական վերանայման ենթակա գործն ըստ էության չլուծող որոշումներն իրենց հերթին կարող են դասակարգվել երկու խմբի՝ ավարտական որոշումներ և միջանկյալ որոշումներ: Ավարտական որոշումներով թեև պատասխան չի տրվում քրեական դատավարության հիմնական հարցին, բայց տվյալ դատական վարույթն ավարտվում է: Այստեղ խոսքը վերաբերում է արդարադատություն չհանդիսացող դատական գործունեության ընթացակարգերին՝ մինչդատական վարույթի կամ դատավճիռի կատարման նկատմամբ դատական վերահսկողությանը, հանձնմանը և այլն:

Միջանկյալ դատական ակտերի վերանայման պարագայում վերանայումն իրականացվում է այն պարագայում, երբ ստորադաս դատարանում վարույթը դեռ չի ավարտվել: Միջանկյալ դատական ակտերի վերանայումն իրենից ներկայացնում է ընդհանուր կանոնից բացառություն, քանի որ վերանայման կառուցակարգը, որպես կանոն, պետք է գործադրվի այն ժամանակ, երբ գործն ըստ էության քննող դատարանն ավարտել է վարույթը: Միջանկյալ վերանայման ենթակա են այն սահմանափակ թվով դատական ակտերը, որոնք անմիջապես դատական ստուգման չենթարկելը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ տվյալ վարույթի համար: Օրինակ՝ եթե գործով վարույթի կասեցման մասին որոշումը բողոքարկման ենթակա չլինի, ապա դա կարող է անդառնալի հետևանք ունենալ գործի քննության արագության (ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի) վրա:

ՀՀ քր. դատ. օր-ի հիման վրա վարույթի կասեցման մասին որոշումներից բացի, միջանկյալ վերանայման ենթակա են նաև ՀՀ սահմանադրական դատարան դիմելու միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը:

Գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերի վերանայման տարբերությունն այն է, որ վերջինի պարագայում սահմանված է պարզեցված ընթացակարգ:

Ե) **Իրավունքի և փաստի հիմքով վերանայում:** Այս տարանջատումն առավելապես բնորոշ է անգլո-սաքսոնական իրավական ընտանիքին: Փաստի հիմքով վերանայման պարագայում կարելի է վիճարկել դատարանի կողմից դատական ակտ կայացնելիս հաստատված ճանաչված փաստերը, իսկ իրավունքի հիմքով վերանայման դեպքում դրանք չեն վիճարկվում. վիճարկվում է դատարանի կիրառած իրավունքը. Կողմը փատարկում է, որ դատարանի կողմից կիրառված նյութական օրենքը սխալ է կիրառվել, կամ խախտվել է դատավարական օրենքը: Այս դասակարգումը մեծ հաշվով

պայմանական է, քանի որ փաստական սխալը և իրավական սխալը, որպես կանոն, փոխարկելի են: Սակայն որոշ դեպքերում այն կարող է որոշակի արժեք ունենալ: Օրինակ՝ երբեմն փաստական սխալը դատարանի կողմից որոշակի ապացուցողական տվյալներ չստանալու, այլ ոչ թե տվյալները սխալ գնահատելու արդյունք է:

Այս դասակարգումը կարող է հիմք հանդիսանալ երկու իրար շատ մոտ վերանայման կառուցակարգերի՝ նոր ի հայտ եկած հանգամանքներով և նոր հանգամանքներով վերանայման տարբերակնան համար: Առաջինը փաստի հիմքով վերանայում է, իսկ երկրորդը՝ իրավունքի հիմքով:

Զ) Դատապարտման վերանայում և պատժի վերանայում: Այս տարանջատումը ևս առավելապես բնորոշ է անգլո-սաքսոնական իրավական ընտանիքին: Բանն այն է, որ այդ իրավական ընտանիքում անձին դատապարտելիս և պատժի նշանակելիս կայացվում է երկու ինքնուրույն դատական ակտ՝ մեկը երդվյալների կողմից (verdict), իսկ մյուսը՝ դատավորի կողմից (sentence): Այդ ակտերը կարող են առանձին վերանայվել: Մայրցամաքային իրավական ընտանիքում դատական ակտի նման դուալիզմը բացակայում է, ուստի դատապարտման վերանայման և պատժի վերանայման մասին կարելի է խոսել միայն նույն վերանայման կառուցակարգի շրջանակներում: Այնուհետեւ, դատապարտման վերանայումը և պատժի վերանայումն իրենց դատավարական հետևանքներով իրապես տարբեր են: Ուստի, որպես դատական վերանայման համակարգի զարգացման ուղի՝ կարելի է մտածել պատժի վերանայումը որպես ինքնուրույն վերանայման կառուցակարգ առանձնացնելու մասին: Այդ դեպքում պատժի վերանայման ընթացակարգը կարող է եապես պարզեցվել:

Վերաքննությունը

1. Վերաքննիչ վարույթի հասկացությունը և նշանակությունը

Վերաքննության (ապելյացիայի) իրավական երևույթը ճիշտ ընկալելու համար այդ տերմինը պետք է դիտարկել երկու տեսանկյունից. որպես դատական ակտերի վերանայման իրավական մեխանիզմ և որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ:

Ա) Որպես դատական ակտերի վերանայման մեխանիզմ՝ «վերաքննություն (ապելյացիա)» եզրը տարբեր իրավական համակարգերում տարբեր իմաստ ունի: Ըս-դիանուր իրավունքի համակարգում (Անգլիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և այլն) «ա-

պելացիան» ընդգրկում է դատական ակտերի ստուգման բոլոր ձևերը: Մինչդեռ, ռոմանագերմանական իրավական համակարգում «ապելյացիան» այդ ձևերից ընդամենը մեկն է, որով կողմերին հնարավորություն է ընձեռվում բողոքարկել դատական ակտերի ոչ միայն իրավաբանական, այլ նաև փաստական կողմը¹:

Տեսականորեն և օրենսդրորեն վերաքննության մեխանիզմը կարող է շատ տարբեր դրսնորումներ ունենալ. սկսած այնպիսի մոդելներից, որոնցում վերանայող դատարանն ազատ է ցանկացած փաստ կամ ապացույց կրկին քննության առնելու հարցում՝ անկախ բողոքի սահմաններից (*լրիվ վերաքննություն*) վերջացրած այնպիսի մոդելներով, որոնցում դատարանը խստորեն սահմանափակված է բողոքի շրջանակներով և որևէ լրացուցիչ հանգամանքի կամ ապացույցի, որը բողոքուն մատնանշված չէ, անդրադառնալ չի կարող (*սահմանափակ վերաքննություն*): Ամեն դեպքում, վերաքննությունը դատական վերանայման այլ մեխանիզմներից (Վճռաբեկություն, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունից բխող վերանայում, վարույթի նորոգում նոր կամ նոր ի հայտ եկած հանգամանքների արդյունքում) տարբերվում է *գործով ապացույցների զանգվածը լրացնելու* և ըստ այդմ *գործի փաստական կողմն ուղակիորեն վերանայելու* իրավական հնարավորությամբ:

Վերաքննության մոդելի ընտրության հարցում ՀՀ օրենսդրի մոտեցումը բնութագրվում է երկու ծայրահեղությամբ: Վերաքննության նախնական մոդելը (1999-2007թթ.) լրիվ վերաքննության դասական օրինակ էր. վերաքննիչ դատարանն ընդհանրապես կաշկանդված չէր վերաքննիչ բողոքով:² Մինչդեռ 2008թ-ից գործադրված վերաքննության մոդելի պայմաններում դատարանը ոչ միայն լիովին կաշկանդված է բողոքի հիմքերով և հիմնավորումներով, այլև կողմը չի կարող ներկայացնել նոր ապացույցներ հետազոտելու պահանջ, եթե չհիմնավորի, որ նախկինում նման միջնորդություն ներկայացնելու հնարավորություն ողջամտորեն չի ունեցել: Սա արդեն վճռաբեկության մեխանիզմի հետ սահմանակցող մոդել է:

Տերմինաբանական շփոթից խուսափելու համար անհրաժեշտ է պարզաբանել, որ վերաքննիչ դատարանի կողմից իրականացվող ցանկացած գործունեություն չէ, որ իրականացվում է վերանայման վերաքննիչ եղանակի հիման վրա: Օրինակ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում

¹ Այս տարբերությունը պետք է նկատի ունենալ անգլալեզու իրավական տեքստեր ընթերցելիս. դրանց մի մասը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, ՀՀ դատարանների համար պարտադիր իրավական աղբյուրի նշանակություն ունեն (ՀՀ քր. դատ. օր. 8-րդ հոդված):

² Միակ սահմանափակումը պայմանավորված էր դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքով. պաշտպանության կողմից բերած վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ամբաստանյալի վիճակը չէր կարող վատթարացվել:

դատական վերանայումը կարող է իրականացվել նաև վերաքննիչ դատարանի կողմից (երբ, օրինակ, բողոքարկվում է առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման մասին որոշումը), սակայն այն վերաքննություն չէ:

Բ) Վերաքննիչ վարույթը՝ որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ, կարող ենք բնորոշել հետևյալ կերպ. այն մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը դատական սխալներն ուղղելու ու դատական ակտի մեջ շարադրված հետևողունների՝ գործով փաստերին համապատասխանությունն ապահովելու նպատակով վերաքննիչ ատյանի դատարանի և այլ իրավասու սուբյեկտների՝ օրենքով կարգավորված գործունեությունն է, որն ավարտվում է վերաքննիչ դատարանի կողմից նոր եզրափակիչ որոշման կայացմամբ:

Վերաքննիչ վերանայման մեխանիզմը և վերաքննիչ վարույթի փուլը փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով: Փուլը սահմանում է մեխանիզմի կենսագործման իրավական բովանդակությունը՝ կողմերի իրավունքների ու պարտականությունների, դատարանի լիազորությունների շրջանակը, դատավարական գործունեության հաջորդական ընթացքը: Մյուս կողմից՝ մեխանիզմն ինստիտուցիոնալ իմաստ է հաղորդում դատավարական փուլը կանոնակարգող իրավանորմերին:

Կարևոր է ընդգծել, որ վերաքննիչ վարույթը կարգավորող քրեադատավարական իրավունքի ինստիտուտը (ՀՀ քր. դատ. օր. 10-րդ բաժին) դատավարական իրավահարաբերությունների առավել լայն շրջանակ է ընդգրկում, քան վերաքննիչ վերանայման մեխանիզմը: Վերաքննիչ դատարանի կողմից իրականացվող քրեադատավարական գործունեությունը գրեթե ամբողջ ծավալով կանոնակարգվում է նշված բաժնի նորմերով:¹

Քրեական դատավարության փուլերի համակարգում վերաքննիչ վարույթի դերն առանձնահատուկ է: Իրեն նախորդող դատավարական փուլերից վերաքննության տարբերությունն այն է, որ գործով վարույթը վերաքննության փուլ տեղափոխելը պայմանավորված չէ նախորդ փուլը եզրափակող դատավարական որոշման բնույթով:

¹ Բացառություն են կազմում անձին կալանավորելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման կարգը, որը սահմանվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով սահմանված կարգով: Բացի այդ, օրենսգրքի 289-րդ հոդվածը պարունակում է վկայակոչող նորմ, համաձայն որի՝ քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու, ինչպես նաև դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատական որոշումների բողոքարկումը և ստուգումը կատարվում են 287-րդ և 288-րդ հոդվածներով նախատեսված կանոններով: Այնուհանդերձ, նշված երկու հոդվածները չեն կանոնակարգում դատավարական հարաբերությունների ողջ ծավալը, իսկ բացերի դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել օրենսգրքի 10-րդ բաժնի կանոններով:

Օրինակ՝ քրեական գործի հարուցման փուլից վարույթը կանցնի նախնական քննության փուլ միայն այն դեպքում, եթե վարույթն իրականացնող մարմինն ընդունի քրեական գործ հարուցելու մասին որոշում:

Կամ, գործով վարույթը կթևակոխի քրեական գործի դատական քննության փուլ միայն այն դեպքում, եթե դատական քննության նախապատրաստման դատավարական փուլը եզրափակվի դատական քննություն նշանակելու մասին որոշմամբ:

Այլ կերպ ասած՝ քրեական գործի հարուցման – նախնական քննության – դատական քննության նախապատրաստման – քրեական գործի դատական քննության դատավարական փուլերի հերթափոխն իրականացվում է անկախ դատավարության կողմերի կամարտահայտությունից և ինքնաբերաբար՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործի քննության և լուծնան բնականոն ընթացքն ապահովող փուլային դատավարական որոշման ընդունման փաստով:

Քրեադատավարական համակարգում վերաքննիչ վարույթի առանձնահատուկ դերը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ դատավարական փուլից սկսած՝ փոխվում է քրեական դատավարության փուլերի հաջորդության մեխանիզմը:

Այսպես, քրեական գործի տեղափոխումը վերաքննիչ վարույթ հնարավոր է առաջին ասյանի դատարանի կողմից թե՛ մեղադրական կամ արդարացման դատավճիռ կայացնելու և թե՛ գործով վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում:

Սակայն կողմերի պասիվ վարքագծի պայմաններում քրեական գործը վերաքննության փուլ չի անցնի: Միևնույն ժամանակ կողմերից յուրաքանչյուրն ազատ է գործն ըստ էության լուծող դատական որոշման վերաքննիչ վերանայում նախաձեռնելու հարցում: Գործը կարող է անցնել վճռաբեկ վարույթի, նոր ի հայտ եկած կամ նոր հանգամանքներով գործի նորոգման քրեադատավարական փուլեր ևս բացառապես իրավասուսությեկտների ակտիվ վարքագծի շնորհիվ:

Այսինքն՝ վերաքննիչ վարույթից սկսած՝ քրեադատավարական փուլերի հաջորդության մեխանիզմում վճռական նշանակություն է ստանում կողմերի կամ այլ իրավասուսությեկտների (օրինակ՝ ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ վճռաբեկ դատարանի) կամարտահայտությունը՝ դրսևորված օրենքով սահմանված համապատասխան դատավարական-իրավական ձևով:

Վերաքննիչ վարույթը կազմված է երկու ենթափուլերից. առաջինն սկսվում է բողոքը բերելու պահից և տևում է մինչև վերաքննիչ դատարանի նիստը (վերաքննիչ բողոքարկում), երկրորդն ընթանում է վերաքննիչ դատարանի նիստը բացելու պահից

մինչև վերաքննիչ դատարանի կողմից եզրափակիչ դատական ակտի հրապարակումը (վերաքննիչ դատարանում գործի քննություն կամ վերաքննիչ ստուգում):

2. ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Վերաքննիչ վարույթի առաջին ենթափուլում ընթացող դատավարական իրավահարաբերությունների առանցքը վերաքննիչ բողոքն է՝ վերաքննիչ վարույթի հիմքը և այն «շարժող ելակետը»:

ՀՀ քր. դատ. օր. 6-րդ հոդվածը, որն ամրագրում է օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունների սահմանումները, «վերաքննիչ բողոք» հասկացությանը չի անդրադառնում:

Ժամանակակից դատավարագետները պատշաճ ուշադրություն չեն դարձնում «վերաքննիչ բողոք» հասկացության սահմանմանը և դրա հատկանիշների ուսումնասիրմանը՝ փոխարենը մանրամասն վերլուծելով «վերաքննիչ բողոքարկման նախադրյալները»: Ընդ որում, իրավաբանական գրականության մեջ տեղ գտած «վերաքննիչ բողոքարկման նախադրյալները»՝ վերաքննիչ բողոքարկման առարկան, վերաքննիչ բողոք բերելու ժամկետը, վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը և վերաքննիչ բողոքի ձևն ու բովանդակությունը հանդիսանում են «վերաքննիչ բողոքի» հասկացության հատկանիշներ: Այս առումով վերաքննիչ բողոքարկման միակ նախադրյալ կարող է համարվել վերաքննիչ բողոքը:

Միևնույն ժամանակ «վերաքննիչ բողոք» հասկացության հատկանիշները չեն սահմանափակվում վերաքննիչ բողոքարկման նախադրյալներով. այն օժտված է այլ հատկանիշներով ևս (օրինակ՝ առաջացնում է որոշակի իրավական հետևանքներ):

1. Վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն որոշակի շրջանակի դատավարական որոշումների դեմ, որոնք կազմում են վերաքննիչ բողոքարկման առարկան:

Վերաքննիչ բողոքարկման առարկայի մեթոդաբանորեն ճիշտ սահմանումն այն անհրաժեշտ միջոցն է, որը վերաքննության ինստիտուտի համար կարող է ապահովել իր էությունից բխող տեղ և դեր քրեական դատավարությունում: Մի կողմից դա շատ կարևոր է դատական վերանայման խնդիրների (հատկապես՝ դատական սխալների ուղղման) իրականացման համար: Միևնույն ժամանակ դրա շնորհիվ դատական վերանայման համակարգը կարող է գերծ պահպել երկրորդական դատական ակտերի բողոքարկումից կամ կարևոր դատական ակտերի անժամանակ բողոքարկումից:

Ներկայում ՀՀ քր. դատ. օր-ը պարզապես թվարկում է վերաքննիչ բողոքարկման ենթակա դատական ակտերը (376.1 հոդված): Վերաքննիչ բողոքարկման առարկայի սահմանման այս նոր մոդելը 2007թ. քրեադատավարական փոփոխությունների կարևորագույն ձեռքբերումներից է: Դա սահմանափակում է անհստակությունների հնարավորությունը: Նախկինում վերաքննիչ բողոքարկման առարկան սահմանված էր ընդհանուր հասկացությունների միջոցով, ինչն առաջացրել էր բազմաթիվ վեճեր, որոնք առանձին դեպքերում լուծվում էին ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային միջամտությամբ (օրինակ՝ հետագա դատական վերահսկողության արդյունքուն կայացված դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման հնարավորության հարցը լուծվել է *Ա.Քրմոյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2007թ. փետրվարի 23-ի որոշմամբ): Դարցի հստակ օրենսդրական կանոնակարգումը, իհարկե, նախապատվելի է:

Այսպես, ՀՀ քր. դատ. օր. 376.1-րդ հոդվածի հիման վրա՝ վերաքննիչ դատարան բողոքարկման ենթակա են առաջին ատյանի հետևյալ դատական ակտերը.

ա) Գործն ըստ էության լուծող դատական ակտերը: ՀՀ քր. դատ. օր. 6-րդ հոդվածի 10¹ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն են մեղադրական և արդարացման դատավճիռները, գործով վարույթը կարճելու մասին կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումները:

բ) Գործով վարույթը կասեցնելու որոշումները.

գ) Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները.

դ) Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները.

ե) Հանձնման մասին որոշումները.

զ) Դատավճիռների կատարման փուլում կայացված որոշումները (ՀՀ քր. դատ. օր. 49-րդ գլխով նախատեսված հարցերի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները).

է) ՀՅ քր. դատ. օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր: Օրինակ՝ կիրառման ենթակա օրենքի սահմանադրականությունը ստուգելու համար ՀՅ սահմանադրական դատարան դիմելու կողմի միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը ևս ընդգրկված է վերաքննիչ դատարան բողոքարկման առարկայի մեջ (ՀՅ քր. դատ. օր. 31-րդ հոդվածի 3-րդ մաս):

2. Վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված է որոշակի **ժամկետ**: Վերաքննիչ ժամկետն օրենքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքուն թույլատրվում է վերաքննիչ բողոք բերել: Այս հարցում օրենսդրի նախնական դիրքորոշումն այն էր, որ վերաքննիչ ժամկետը պետք է միասնական լինի: Այսպես, ՀՅ քր. դատ. օր. 379-րդ հոդվածի 1-ին մասի սկզբնական խնդրագրության համաձայն. «Վերաքննիչ բողոք բերվում է առաջին ատյանի դատարանի դատավճռի հրապարակվելու օրվանից 15 օրվա ընթացքում»: Իսկ ըստ 427 հոդվածի. «Առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննության կարգով բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, եթե այն բողոքարկված չի եղել»:

Այնուհետև օրենսդրի մոտեցումն այս հարցում փոխվեց: Ներկայում ՀՅ քրեական դատավարությունում գործում է տարբերակված կարգ, ինչը հնարավորություն է տալիս առանձին տեսակի որոշումների նկատմամբ դրսերել յուրահատուկ մոտեցում: Բացի այդ, երկարաձգվել է նաև վերաքննիչ բողոքարկման ընդհանուր ժամկետը՝ 15 օրից մեկ ամիս: Դա պայմանավորված է դատական վերանայման համակարգում վերաքննիչ վարույթի դերի մեծացմամբ, ինչպես նաև ընդհանրապես՝ բողոքների որակը բարձրացնելու անհրաժեշտությամբ: Դրա հետ մեկտեղ, սահմանվել է վերաքննիչ բողոքարկման երկու կրծատ ժամկետ.

ա) անձին ազատությունից զրկելու մասին՝ գործն ըստ էության չլուծող որոշումները (կալանավորման, կալանքի ժամկետի երկարացման, անձին բժշկական հաստատությունում տեղավորելու մասին): **հնգօրյա ժամկետում**:

բ) գործն ըստ էության չլուծող այլ դատական ակտերը՝ **տասնօրյա ժամկետում** (ՀՅ քր. դատ. օր. 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):

Նման կրծատ ժամկետների սահմանումը նպատակ է հետապնդում արագացնել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ վեճերի լուծումը՝ ուղղված քրեական դատավարության սահուն ընթացքի ապահովմանը: Ինչ վերաբերում է անձին ազատությունից զրկելու մասին՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման համար էլ ավելի կարճ ժամկետ սահմանելուն, ապա դա

պայմանավորված է մարդու ազատության իրավունքի անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարծ ժամկետում վերացնելու՝ օրենսդրի մտադրությամբ:

Վերաքննիչ բողոքարկման ողջամիտ ժամկետի սահմանումը կարևոր նշանակություն ունի վերաքննության ինստիտուտի արդյունավետության համար: Վերաքննիչ ժամկետի ողջամտությունը ենթադրում է գործով մասնակցող բոլոր անձանց շահերի հավասարակշռված հաշվառում, որպեսզի բացառվի դատարանի վերջնական որոշման ուժի մեջ մտնելու անհիմն ուշացումը՝ մի կողմից, և բողոք բերելու անհամաչափ բարդությունները՝ մյուս կողմից:

Մասնավորապես՝ վերաքննիչ ժամկետը ճիշտ սահմանելու համար անհրաժեշտ է կողմերին բավարար ժամանակ տրամադրել՝

ա) վերաքննիչ բողոքը նախապատրաստելու համար,

բ) բնակության վայրից վերաքննիչ դատարանի նստավայր հասնելու համար:

Նշված գործողությունները կատարելու համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածի տևողությունը պայմանավորված է նաև այդ ժամկետի հաշվարկման սկզբնապահի ողջամիտ սահմանմամբ:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետի հաշվարկն սկսվում է առաջին ատյանի դատարանի դատավճրի հրապարակման օրվանից:

Գործն ըստ էռթյան լուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման ժամկետը լրանալուց հետո առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների կողմից պասիվ վարքագիծ դրսենութելու և իրենց այդ իրավունքից չօգտվելու դեպքում տվյալ գործով վարույթը թևակոխում է վերջին՝ դատական որոշումների կատարման փուլ՝ շրջանցելով, մասնավորապես, վերաքննիչ ատյանում վարույթի փուլը:

Այնուհանդերձ, օրենքը նախատեսել է գործը դատական որոշումների կատարման փուլից վերաքննիչ վարույթ վերադարձնելու երկու հնարավորություն՝ որպես բողոքարկման լրացուցուցիչ երաշխիքներ: **Առաջին ՀՀ քր. դատ. օր. 380-րդ հոդվածի համաձայն.** «Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատավճիռ կամ որոշում կայացնող դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը»: **Երկրորդ՝ ՀՀ քր. դատ. օր. 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 376.1 հոդվածի 2-րդ կետի հիման վրա՝ բացառիկ դեպքերում դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում կարելի է բերել վերաքննիչ բողոք, եթե**

տվյալ դատական ակտով խաթարվում է արդարադատության բուն էությունը: Ընդ որում, բողոքը վարույթ ընդունելու հարցը բողնված է վերաքննիչ դատարանի հայեցողությանը: Նման նոր ինստիտուտի սահմանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նոր օրենսդրության հիման վրա դատական ակտը չի կարող բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան, եթե այն չի բողոքարկվել վերաքննության կարգով: Նախկին օրենսդրության պայմաններում նշված պարագայում կրերվեր վճռաբեկ բողոք առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ:

3. Վերաքննիչ բողոքը պետք է համապատասխանի օրենքով դրա **ձևին և բովանդակությանը** ներկայացվող պահանջներին:

Կարելի է առանձնացնել վերաքննիչ բողոքի **ձևին** ներկայացվող պահանջների հետ կապված օրենսդրի մոտեցման երկու հայեցակարգ.

ա) **Մեղմ մոտեցում:** Բողոք կարող է բերվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ձևով՝ տվյալ առաջին ատյանի դատարանի արձանագրության մեջ մտցնելով: Յատուկ պահանջներ բողոքի բովանդակությանը չեն ներկայացվում. այն կարող է պարունակել որոշակի հիմնավորումներ, կարող է և չպարունակել: Այս մոտեցումը որդեգրել է գերմանական օրենսդիրը, և վերը նշված կանոններն ամրագրված են Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի §314-ում և այլ պարագրաֆներում:

բ) **Խիստ մոտեցում:** Բողոքը պարտադիր պետք է ներկայացվի գրավոր ձևով: Նման կարգ է նախատեսված ՀՀ քր. դատ. օր-ով:

ՀՀ քր. դատ. օր. 381-րդ հոդվածի 1-ին մասը թվարկում է վերաքննիչ բողոքի **բովանդակությանը** ներկայացվող հետևյալ պահանջները.

1) **Այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը** (381-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Այս պահանջը ձևական է, քանի որ Յայաստանի Յանրապետությունում քրեական գործերով վերաքննություն իրականացնող միակ մարմինը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանն է:

2) **Տվյալներ՝ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը** (381-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Այս պահանջը դատարանին հնարավորություն է տալիս հեշտությամբ ստուգել, թե արդյոք վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջները դուրս չեն գալիս դատավարության տվյալ մասնակցի իրավասության շրջանակներից:

3) **Բողոք բերած անձի բնակության կամ գտնվելու վայրը** (381 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Այս պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ կարող է

անհրաժեշտություն առաջանալ բողոքատուին ծանուցելու բողոքը քննելու համար նշանակված դատական նիստի օրվա վերաբերյալ և այլն:

4) **Դատավճիռը կամ այլ որոշումը, որը բողոքարկվում է, և այդ որոշումը կայացրած դատարանի անվանումը** (381-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ): Այս պահանջը նպատակ է հետապնդում ստուգել, թե արդյոք բողոքարկվող որոշումը մտնում է վերաբննիչ բողոքարկման առարկայի մեջ:

5) **Նշում այն մասին, թե դատավճիռը կամ այլ որոշումը բողոքարկվում է ամբողջությամբ, թե՝ մի մասով** (381-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ): Այս պահանջը հատկապես կարևոր նշանակություն ունի ներկայում՝ սահմանափակ վերաբննության պայմաններում, եթե այն իրավաբանորեն կանխորոշում է դատական ստուգման առարկան և սահմանները:

6) **Բողոքի հիմքերը, ինչպես նաև վերաբննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, գործի ելքի վրա դրանց ազդեցության հիմնավորումները** (381-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 5.1-րդ կետեր): Սա վերաբննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող առանցքային պահանջ է, քանի որ արտահայտում է վերաբննիչ բողոքի հիմնավորվածության հատկանիշը: Այս պահանջն ունի առանցքային կարևորություն, քանի որ դրանից է բխում վերաբննիչ վերանայման ծավալը. ՀՀ քր. դատ. օր. 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաբննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները (նաև պահանջը) ներկայացվում են բացառապես վերաբննիչ բողոքում և չեն կարող փոփոխվել ու լրացվել գործի դատական քննության ընթացքում:

7) **Բողոքի պահանջը** (381-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ) (նախկին խմբագրությամբ՝ բողոքի էությունը) բողոքատուի առավելագույն հնարավոր խնդրանքն է՝ ուղղված վերաբննիչ դատարանին: Այն պետք է բխի առաջին ատյանի դատարանի վերջնական որոշման վերլուծությունից և դրա անցտության մասին հետևողությունից: Թեև վերաբննիչ դատարանը կաշկանդված չէ բողոքի պահանջով (ինչպես հիմքերով և հիմնավորումներով), այնուհետեւ բողոքը բավարարելու պարագայում դա կարևոր նշանակություն ունի վերաբննիչ դատարանի կողմից կայացվող որոշման տեսակն ընտրելու հարցում:

Բողոքի էությունը ներկայացնելու պահանջի իրավական նշանակությունը պայմանավորված է նաև դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքի ապահովման անհրաժեշտությամբ: Բացի այդ, վերաբննիչ վարույթը եզրափակող դատավարական որոշման մեջ դատարանը պետք է որոշակի իրավական գնահատական

տա վերաքննիչ բողոքի էությանը (վերաքննիչ պահանջին)` լրիվ կամ մասնակի բավարարի այն, կամ բողնի առանց բավարարման:

8) *Առկայության դեպում՝ այն ապացույցները, որոնցով դիմողը հիմնավորում է իր պահանջները, և որոնք պետք է հետազոտվեն վերաքննիչ դատարանում, այդ թվում՝ նաև առաջին ատյանի դատարանում նախօրոք չհետազոտված ապացույցները, ինչպես նաև բողոքին կցվող նյութերի ցանկը* (381-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետեր): Այս դրույթը բողոքատուին հնարավորություն է տալիս դատարան ներկայացնել նոր ապացույցներ կամ միջնորդել, որ դատական նիստում հետազոտվեն այն ապացույցները, որոնք հաստատում են իր վերաքննիչ պահանջները: Նոր վերաքննության պայմաններում այս պահանջի դերը շեշտակիորեն աճել է, քանի որ վերաքննիչ դատարանը չի կարող սեփական նախաձեռնությամբ ապացույցներ հետազոտել:

ՀՀ քր. դատ. օր. 381-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում ամրագրված դրույթը ֆակուլտատիվ է, որի մասին է վկայում «առկայության դեպում» արտահայտությունը: Ուստի, վերաքննիչ բողոքի մեջ այն հիմնավորող ապացույցները չնշելը վերաքննիչ բողոքի վերադարձման կամ առանց քննության թողնելու հիմք հանդիսանալ չի կարող:

9) *Բողոք ներկայացնող անձի ստորագրությունը* (381-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ):

4. Վերաքննիչ բողոքը կարող է բերվել միայն օրենքով նախատեսված **սուրյեկտների** կողմից: Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց և մարմիններին ըստ բողոքարկման իրավունքի ծավալի կարելի է դասակարգել երկու խմբի:

ա) *Բողոքարկման անսահմանափակ իրավունք ունեցող սուրյեկտներ:* Վերաքննիչ բողոք բերելու այս սուրյեկտների իրավունքն առարկայական սահմանափակումներ չունի: Ըստ ՀՀ քր. դատ. օր. 376-րդ հոդվածի՝ այս խմբի մեջ մտնող սուրյեկտներն են ամբաստանյալը, արդարացվածը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, իսկ 2004թ. ապրիլի 3-ից¹ նաև տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդը, մեղադրողը և վերադաս դատախազը:

բ) *Բողոքարկման սահմանափակ իրավունք ունեցող սուրյեկտներն են քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը, նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև տվյալ գործով կողմ չհանդիսացող անձը, եթե դատավճիռը կամ որոշումն առնչվում է նրա շահերին: Քանի որ այս սուրյեկտները քրեական դատավարությունում պաշտպանում են սեփական կամ ներկայացվող գույքային շահեր, ուստի օրենսդիրը վե-*

¹ Այդ օրն ուժի մեջ է մտել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2004թ. փետրվարի 18-ի օրենքը:

բաքննիչ բողոք բերելու նրանց իրավունքը սահմանափակել է միայն քաղաքացիական հայցի մասով:

Առանձին խումբ են կազմում այն սուբյեկտները, որոնք կարող են բողոքարկել միայն գործն ըստ էության չլուծող դատական ակտեր (կասկածյալ, մեղադրյալ, դիմոդ, նրանց իրավաբանական ներկայացուցիչներ):

ՀՀ դատախազության՝ որպես քրեական դատավարությունում հանրային շահը ներկայացնող կառույցի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքարկման իրավունքն ունի առանձնահատուկ նշանակություն: Վերաքննիչ բողոքով դատախազը հայտնում է առաջին ատյանի դատարանի վերջնական որոշմանը ոչ թե՝ իր՝ որպես անհատի, այլ դատախազության ինստիտուտի անհամաձայնությունը, և, ըստ այդմ, դատախազն իրավասու է վերաքննիչ բողոք բերել ոչ միայն ի վեհական, այլև ի շահ ամբաստանյալի:

Դատախազության ներկայացուցիչների թվից վերաքննիչ բողոքարկման իրավունք ունի ոչ միայն մեղադրող դատախազը, այլև նրա վերադաս դատախազը: Դա նվազեցնում է մեղադրանքը պաշտպանող դատախազի ինքնուրույնությունը, սակայն, միևնույն ժամանակ, բխում է դատախազության կենտրոնացվածության սկզբունքից¹: Դանակարգը չի կարող միասնական և կենտրոնացված լինել, եթե տվյալ համակարգի լիազորությունների հետ կապված հարցերում ստորադասն ազատ է ինքնուրույն ընտրելու իր վարքագծի չափը, իսկ վերադասը չունի այդ որոշման վրա ներազդելու դատավարական-իրավական լծակներ:

5. Վերաքննիչ բողոքը բերվում է որոշակի դատավարական կարգով: Դատավարական փաստաթուղթը կարող է վերաքննիչ բողոք համարվել միայն այն դեպքում, եթե այն բերվել է օրենքով սահմանված որոշակի կարգի պահպանմամբ և ընդունվել է իրավասու դատական մարմնի կողմից: Մասնավորապես՝ վերաքննիչ բողոքը ներկայացվում է վերաքննիչ դատարան, իսկ դրա պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան (ՀՀ քր. դատ. օր. 378-րդ հոդված): Ի տարբերություն վճռաբեկ բողոքարկման՝ վերաքննիչ բողոքարկման փուլում բողոքի պատճենները կողմերին ուղարկելու պարտականությունը դրված է ոչ թե բողոքաբերի, այլ համապատասխան առաջին ատյանի դատարանի վրա (ՀՀ քր. դատ. օր. 382-րդ հոդված):

6. Վերաքննիչ բողոքն իրավական ակտ է, որն առաջացնում է որոշակի իրավական հետևանքներ: Պողիտիվ (դրական) առումով վերաքննիչ բողոք բերելու փաստով

¹ ՀՀ Սահմանադրության 2005թ. խմբագրությամբ 103-րդ հոդվածի տեքստից «կենտրոնացվածություն» եզրույթը հանվել է: Սակայն «դատախազության համակարգը դեկավարում է գլխավոր դատախազը» սահմանադրական դրույթը մասմբ արտահայտում է դատախազության կենտրոնացվածության հատկանիշը:

հարուցվում է վերաքննիչ վարույթ, որի հետևանքով առաջանում են բազմաբնույթ իրավական հարաբերություններ վերաքննիչ վարույթին մասնակցող սուբյեկտների միջև: Նեգատիվ (բացասական) առումով վերաքննիչ բողոքի ամենակարևոր իրավական հետևանքը բողոքարկվող դատավճոի օրինական ուժի մեջ մտնելու կասեցումն է¹:

Եթե Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերն օգտագործում են «օրինական ուժի մեջ մտնելու կասեցում» արտահայտությունը, ապա Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգիրքը նախապատվությունը տվել է «դատավճիռների կատարման կասեցում» եզրին (ՈԴ քր. դատ. օր. 359-րդ հոդվածի 1-ին մաս):

Մեզ առավել ճշգրիտ է թվում ՀՀ քր. դատ. օր-ի ձևակերպումը, քանի որ դատավճոի կատարման փուլը՝ որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ, իբրև դատավարության սուբյեկտների գործունեություն, կարող է սկսվել միայն դատավճության ուժի մեջ մտնելուց հետո, ուստի դատավճության օրինական ուժի մեջ մտնելու կասեցման պայմաններում դրա կատարման մասին խոսելու ավելորդ է:

Մյուս կողմից, եթե օրենքն օգտագործի «դատավճություն» կամ «դատավճություն» կատարման կասեցում» արտահայտությունները, ապա այդ հասկացությունը կարտահայտի օրինական ուժի մեջ մտած դատավճիռները, ինչը, կարծում ենք, անընդունելի է դատավճություն վերաքննիչ բողոքարկման մասին խոսելիս:

ՈԴ քր. դատ. օր. 359-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված կանոնից օրենսդրությունը նախատեսել է մի կարևոր բացառություն՝ դատավճություն կատարման կասեցումը չտարածելով առաջին ատյանի դատարանի նիստի դահլիճից օրենքով նախատեսված դեպքերուն կալանքից ազատ արձակված ամբաստանյալների վրա:

Անհրաժեշտ է նշել, որ քննարկվող վերապահման բացակայությունը ՀՀ իրավակիրառական պրակտիկայում խնդիրներ չի առաջացնում: Եթե բողոքարկված է առաջին ատյանի դատարանի այն դատավճիռը, որով դատարանի դահլիճից ամբաստանյալն ազատ է արձակվել, ապա դա պրակտիկայում չի հանգեցնում մինչև դատավճություն եղած վիճակի վերականգնմանը:

Վերաքննիչ բողոքի նշանակությունը վերաքննիչ վարույթի հիմքը լինելով չի սահմանափակվում: Վերաքննիչ բողոք բերելու իրավունքն իրենից ներկայացնում է ամբաստանյալի պաշտպանության իրավունքի կարևոր երաշխիք: Քրեական դատավարությանը սեփական անձնական և գույքային շահերի պաշտպանությամբ հանդես եկող սուբյեկտ-

¹ Որոշակի իրավական հետևանքներ առաջացնելու նեգատիվ ասպեկտը չի վերաբերում գործն ըստ եռության չլուծող դատական ակտերին:

ների համար ևս վերաքննիչ բողոք բերելու իրավունքն այդ շահերի պաշտպանության արդյունավետ միջոց է: Իսկ դատախազությունը՝ որպես հանրային շահերը ներկայացնող սուբյեկտ, չի կարող պատշաճորեն պաշտպանել հանրային շահերն առանց վերաքննիչ բողոք բերելու իրավունքի:

Ուստի և պաշտպանության, և մեղադրանքի կողմը ներկայացնող սուբյեկտների համար վերաքննիչ բողոքարկման իրավունքը հանդիսանում է սեփական դատավարական գործառույթից բխող և մասնավոր կամ հանրային շահերի պաշտպանությունն ապահովող գործուն երաշխիք:

Վերաքննիչ բողոքը կարևոր նշանակություն ունի նաև վերանայման ծավալի համար, քանի որ Հայաստանի Հանրապետությունում ներկայում գործող վերաքննության հայեցակարգի պայմաններում վերաքննիչ բողոքի բովանդակությունը որոշում է գործի վերաքննիչ քննության սահմանները:

Քրեական դատավարությունում վերաքննիչ վարույթ հարուցելու համար վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտները պարտավոր են պահպանել **վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգը**:

«Վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգ» ասելով՝ հասկանում ենք.

ա) քրեական դատավարության սուբյեկտների դատավարական գործունեություն, որի արդյունքում վերաքննիչ բողոքարկման սուբյեկտներն իրականացնում են վերաքննիչ բողոքարկման իրենց իրավունքը կամ իիմնավորվում է այդ իրավունքի իրացման անհնարինությունը.

բ) քրեադատավարական իրավունքի ինստիտուտ, որը կարգավորում է այդ գործունեությունը:

Վերաքննիչ բողոքարկման կարգը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-383-րդ, 388-րդ և 389-րդ հոդվածներով: Դրանց վերլուծությունը թույլ է տալիս վերաքննիչ բողոքարկման կարգի քրեադատավարական ինստիտուտով կանոնակարգվող դատավարական իրավահարաբերությունները դասակարգել հետևյալ խմբերի՝

ա) այն դատական մարմնի սահմանման հետ կապված իրավահարաբերություններ, որին պետք է ներկայացվի վերաքննիչ բողոքը (ՀՀ քր. դատ. օր. 378-րդ հոդված),

բ) վերաքննիչ բողոքի ընդունման և առանց քննության թողնելու հետ կապված իրավահարաբերություններ (ՀՀ քր. դատ. օր. 379-րդ հոդ. 2-րդ մաս, 381-րդ հոդ. 2-րդ մաս),

գ) վերաքննիչ բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու հետ կապված իրավահարաբերություններ (ՀՀ քր. դատ. օր. 380-րդ հոդված),

դ) վերաքննիչ բողոքի մասին կողմերի ծանուցման և դրա դեմ առարկությունների ներկայացման հետ կապված իրավահարաբերություններ (ՀՀ քր. դատ. օր. 382-րդ հոդված),

Ե) վերաքննիչ բողոքը հետ վերցնելու հետ կապված իրավահարաբերություններ (ՀՀ քր. դատ. օր. 383-րդ հոդ. 3-րդ մաս),

զ) վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանի նիստ նշանակելու հետ կապված իրավահարաբերություններ (ՀՀ քր. դատ. օր. 388-րդ և 389-րդ հոդվածներ):

Մրցակցային դատավարությունում հատկապես կարևոր է վերաքննիչ բողոքին պատասխան ներկայացնելու կողմերի իրավունքը: Մասնավորապես՝ ՀՀ քր. դատ. օր. 382-րդ հոդվածի համաձայն:

«1. Ներկայացված բողոքի մասին դատական ակտը կայացրած դատարանը ծանուցում է կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, արդարացվածին, նրանց օրինական ներկայացուցիչներին, պաշտպանին, մեղադրողին, տուժողին, նրա իրավահաջորդին, ներկայացուցչին և օրինական ներկայացուցչին, ինչպես նաև քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին և նրանց ներկայացուցիչներին, եթե բողոքն առնչվում է նրանց շահերին, ինչպես նաև դիմողին, եթե այդպիսին առկա է: Բողոքի պատճենն ուղարկվում է նշված անձանց՝ պարզաբանելով վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու հնարավորությունը և ներկայացնելու ժամկետը, որը չի կարող 15 օրից ավելի լինել:

2. Բողոքի նկատմամբ ստացված պատասխանները կցվում են գործին:

...»

Վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու հնարավորությունը դատավարության սուբյեկտի շահերի պաշտպանության գործուն մեխանիզմ է, քանի որ նշված հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ կողմն իրավասու է վերաքննիչ բողոքի կապակցությամբ տրված պատասխանում ներկայացնել նոր ապացույցներ՝ հիմնավորելով, որ նախկինում օբյեկտիվ հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու տվյալ ապացույցը:

Որպես իր շահերի պաշտպանության միջոց՝ կողմը կարող է ընտրել նաև իր անունից վերաքննիչ բողոք բերելու տարբերակը: Պատասխանը բողոքից տարբերվում է նրանով, որ պատասխանով կողմը կարող է պահանջել միայն առանց բավարարման

թողնել վերաքննիչ բողոքը, մինչդեռ «հակընդդեմ» վերաքննիչ բողոքով կարող են ներկայացվել ինքնուրույն պահանջներ:

Վերաքննիչ բողոքարկման ենթափուլն ավարտվում է.

Ա) Դատական նիստ նշանակելու մասին որոշմամբ: Այդ որոշումը կայացնում է վերաքննիչ դատարանի դատական կազմի նախագահողը, թեև գործի նյութերին նախապես ծանոթանում են դատական կազմում ներառված մյուս երկու դատավորները ևս: ՀՀ քր. դատ. օր. 389-րդ հոդվածի հիման վրա՝ այդ որոշմամբ լուծվում են հետևյալ հարցերը. (ա) գործի քննությունն սկսելու ժամանակը և տեղը, (բ) դատական նիստում անմիջականորեն հետազոտման ենթակա ապացույցների ծավալը, (գ) դատական նիստին կանչվող վկաները, փորձագետները և այլ անձինք, (դ) ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոցը պահպանելը, փոխելը կամ վերացնելը, (ե) համապատասխան հիմքերի առկայության դեպքում գործը դրնվակ դատական նիստում քննելու անհրաժեշտությունը: ՀՀ քր. դատ. օր. 389-րդ հոդվածով սահմանված հարցերի շրջանակը սպառիչ է:

Բ) *Բողոքն առանց քննության թողնելու մասին որոշմամբ:*

Վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելիս վերաքննիչ դատարանի կազմի խնդրին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վ.Ալիխանյանի վերաբերյալ 2009թ. հունիսի 2-ի նախադեպային որոշման մեջ: Նշված գործով վերաքննիչ դատարանը բողոքն առանց քննության էր թողել միանձնյա կարգով: Այս հարցի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ մոտեցումը.

«14. ... Վճռաբեկ դատարանը անհրաժեշտ է համարում նաև անդրադարձական բողոքի հիմքերի հետ փոխկապակցված հետևյալ հարցին՝ արդյոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասո՞ւ էր սույն գործով միանձնյա կարգով բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշում կայացնել, թե ոչ:»

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Այն դեպքում, եթե վերաքննիչ բողոքը (...) բերվել է 375.4 հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծվում է դատարանի կազմը նախագահողի կողմից»:

16. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերում ամրագրված իրավանորմերի տառացի մեկնաբաննան ու համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գալիս է հետևողան, որ գործն ըստ էության լուծող դատական ակտը վերաքննիչ դատարանում բողոքարկելու փուլում դատական ակտ կայացնելու իրավասությամբ օրենսդիրն օժտել է երկու սուբյեկտների՝ վերաքննիչ դատարանի ողջ կազմին (նախագահող դատավոր և դատական կազմում ընդգրկված երկու դատավոր)` վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման պարագայում, և դատարանի կազմը նախագահող դատավորին՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելու պարագայում: Այլ կերպ՝ առաջին դեպքում որոշումը կայացվում է դատարանի կոլեգիալ կազմով, իսկ երկրորդ դեպքում՝ միանձնյա:

Վերաքննիչ բողոքարկման փուլում որոշում կայացնելիս դատարանի կազմի հարցում տարբերակված մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, թե վերաքննիչ դատարանի որոշումը կարող է արդյոք էական ազդեցություն ունենալ վերաքննիչ բողոքարկման իրավունքի արդյունավետ կենսագործման վրա, թե այն ընդամենը կրում է աշխատակարգային բնույթ: Առաջին դեպքում բողոքաբերին պետք է տրվի կոլեգիալության լրացուցիչ երաշխիքը, մինչդեռ երկրորդ դեպքում դրա անհրաժեշտությունը բացակայում է:

17. Վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը, իր բնույթից ելնելով, անհրաժեշտաբար էական ազդեցություն է ունենում վերաքննիչ բողոքարկման իրավունքի արդյունավետ կենսագործման վրա: Ավելին, ի տարբերություն վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1 կետի իմաստով: Համաձայն այդ հոդվածի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտեր են նաև առաջին ատյանի՝ գործն ըստ էության լուծող « (...) դատական ակտի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը (...»): Իսկ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը կայացվում է վերաքննիչ բողոքարկման արդյունքում, քանի որ բացառում է տվյալ գործով վերաքննիչ վարույթը շարունակելը:

Այս պայմաններում կոլեգիալության և վերաքննիչ դատարանի կազմում ընդգրկված դատավորների իրավահավասարության սկզբունքներից շեղումը ոչնչով արդարացված չէ»:

Վճռաբեկ դատարանի՝ նշված դիրքորոշման հիման վրա՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը պետք է կայացվի միայն կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

Վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը կայացվում է հետևյալ դեպքերում. (ա) վերաքննիչ բողոքը չի համապատասխանում դրա ձևին և բովանդակությանը ներկայացված օրենսդրական պահանջներին, (բ) բողոքը բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, (գ) բողոքը ժամկետանց է, (դ) բողոքը բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման՝ ներառված չէ վերաքննիչ բողոքարկման առարկայի մեջ, (դ) բողոքը բերվել է արագացված դատական քննության կարգով կայացված դատավճռի դեմ, և դրանուն հիմնավորվում է, որ դատարանի հետևողությունները չեն համապատասխանում գործով ապացույցներին:

Բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման հիմքերի շոշանակը սպառիչ է: Ինչպես երևում է՝ այդ հիմքերը չեն վերաբերում բողոքի հիմնավորումների որակին, այլ կրում են սոսկ ձևական բնույթ: Բողոքի հիմնավորումների որակին վերաքննիչ դատարանը կարող է անդրադառնալ միայն այն դեպքում, եթե բողոքարկման առարկան օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտ է: Այդ դեպքում վերաքննիչ դատարանն ամբողջ կազմով (երեք դատավոր) որոշում է բողոքարկման հիմքերի բավարարության հարցը (արդյո՞ք բողոքարերին առերևույթ հաջողվել է հիմնավորել, որ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ է տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտում, որի արդյունքում խարարվել է արդարադատության բուն էությունը): Եթե դատական կազմը կիանգի հետևողան, որ հիմքերն առերևույթ առկա են, ապա կոլեգիալ կազմով որոշում կկայացնի դատական նիստ նշանակելու մասին: Հակառակ դեպքում՝ ՀՀ քր. դատ. օր. 381-րդ հոդվածի 6-րդ մասի հմաստով, պետք է կայացվի բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում¹:

3. Վերաքննության կարգով բողոքի քննությունը և լուծումը

Վերաքննիչ դատարանում գործի քննության և լուծման ենթափուլը սկսվում է վերաքննիչ դատարանի նիստը բացելու պահից և ավարտվում է դատական ակտի հրապարակմանը: Այս ենթափուլը կազմող դատավարական գործունեության էությունը և

¹Նոյնանման հանգամանքներում ՀՀ վճռաբեկ դատարանը կայացնում է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում:

տրամաբանությունը կարելի է բացահայտել՝ հետևյալ հարցերի պատասխանները վեր հանելով.

1. Որո՞նք են վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները: Այլ կերպ՝ ո՞ր հարցերն են կազմում վերաքննիչ վերանայման առարկան¹:
2. Դատական ի՞նչ կազմով է քննվում գործը:
3. Ի՞նչ դատավարական կարգով է ընթանում վերաքննիչ դատարանում գործի քննությունը: Ի՞նչ դատավարական իրավունքներ, պարտականություններ ունեն կողմերը, վարութային ի՞նչ լիազորություններ ունի վերաքննիչ դատարանը:
4. Որո՞նք են բողոքարկվող դատական ակտը բեկանելու և փոփոխելու հիմքերը:
5. Գործի քննության արդյունքում դատարանն ի՞նչ դատական ակտեր կարող է կայացնել:

Ա) Վերաքննիչ դատարանում գործի քննության **սահմանների** հարցն առանցքային նշանակություն ունի վերաքննության ձևը (լրիվ կամ սահմանափակ) բացահայտելու հարցում: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության սահմանները որոշվում են անձին առաջարկած մեղադրանքի հիման վրա², ապա սահմանափակ վերաքննության պարագայում այդպիսի դեր է կատարում վերաքննիչ բողոքը: Իրավաբանական գրականության և տարբեր երկրների քրեադատավարական օրենսդրության վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել վերաքննիչ բողոքի հիման վրա գործի քննության սահմանների սահմանափակման մի քանի չափանիշներ.

- **Բողոքի հեղինակը.** տվյալ բողոքի հիման վրա դատական ակտը կարող է բեկանվել կամ փոփոխվել միայն տվյալ բողոքարկվել կամ նրա կողմից ներկայացվող անձի մասով:

- **Բողոքի հիմքը.** դատական ակտը կարող է բեկանվել կամ փոփոխվել միայն այնպիսի հիմքով, որով այն բողոքարկվել է: Օրինակ՝ եթե բողոքի հիմքը պատժի անարդարացիությունն է, ապա վերաքննիչ դատարանը, օրինակ, քրեական օրենքի սխալ կիրառում, չի կարող ուղղել սխալը:

- **Բողոքի առարկան.** այն հանգամանքները, որոնց կապակցությամբ թույլ է տրվել դատական սխալ: Օրինակ՝ եթե անձը դատապարտվել է գողության և

¹ Զշփոթել վերաքննիչ բողոքարկման առարկայի հետ, որի տակ պետք է նկատի ունենալ այն դատավարական ակտերի շրջանակը, որը ենթակա է վերաքննիչ բողոքարկման:

² ՀՀ քր. դատ. օր. 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն անբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջարկվել»:

ավազակության համար, իսկ բողոքը վերաբերում է միայն ավազակությանը, ապա դատարանը չի կարող անդրադառնալ գողության մեղադրանքին:

- **Բողոքի փաստարկումը.** այն իրավական հիմնավորումները, որոնք ներկայացրել է բողոքաբերն ի հաստատումն իր պնդումների:

- **Հետազոտման ենթակա ապացույցների շրջանակը.** դատարանը չի կարող սեփական նախաձեռնությամբ կրկին հետազոտել առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները, կամ չի կարող նոր ապացույցներ հավաքել:

- **Բողոքի պահանջը.** դատարանը չի կարող կայացնել այնպիսի որոշում, որը բողոքաբերը չի պահանջել: Օրինակ՝ եթե բողոքաբերը խնդրել է դատական ակտը բեկանել և կայացնել արդարացման դատավճիռ, ապա դատարանը չի կարող, ակտը բեկանելով, այն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Նշված չափանիշներն էապես փոխկապակցված են, թեև դրանցից յուրաքանչյուրը որոշակի չափով ինքնուրույն է: Օրինակ՝ բողոքի փաստարկումը ներառում է նաև բողոքի առարկան, քանի որ անհնար է որևէ բան փաստարկել առանց դրան անդրադառնալու:

ՀՀ քր. դատ. օր. 385-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է գործում եղած, իսկ բացարիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

«Բացարիկ դեպքերի» հասկացությունը բացահայտվում է օրենսգրքի 382-րդ հոդվածում ամրագրված իրավանորմի հիման վրա: Մասնավորապես՝ դրանք այն դեպքերն են, երբ բողոքաբերը հիմնավորում է, որ *օրյեկտիվորեն հնարավորություն* չի ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կամչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ հիմնավորում է, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմ:

Մեջբերված իրավադրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերը ներկայացված սահմանափակնան չափանիշներից վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ միայն բողոքի պահանջով:

Բ) Վերաքննիչ դատարանում գործը քննող **դատական կազմի** վերաբերյալ ՀՀ քր. դատ. օր. 387-րդ հոդվածը սահմանում է հետևյալ կանոնները. «Գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերաքննիչ դատարանում վերանայվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, որոնցից մեկը նախագահողն է: Գործն ըստ էության չլուծող

դատական ակտերը վերաքննիչ դատարանում վերանայվում են դատավորի կողմից միանձնյա»: Մինչև 2008 թվականը վերաքննիչ դատարանում բոլոր գործերը քննվում էին կոլեգիալ կազմով: Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բողոքների քննության ժամանակ կոլեգիալության սկզբունքից շեղումը պայմանավորված է ոչ մեծ կարևորության գործերով, որոնցով դատական վերանայման վերաքննության մեխանիզմը չի գործադրովում, դատական ռեսուլսի խնայողության նկատառումներով:

Գ) Վերաքննիչ դատարանում բողոքի քննության **դատավարական կարգի** հիմունքները սահմանող հիմնական կանոնն ամրագրված է ՀՀ քր. դատ. օր. 390-րդ հոդվածի 1-ին մասում: Ըստ դրա՝ վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է սույն գլխում շարադրված կանոններով (*Վերաքննության կանոններով*), ինչպես նաև **Վճռաբեկ դատարանում** գործերի քննության համար սահմանված կանոններով: Մինչև 2007թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններն ուժի մեջ մտնելն այս նորմը սահմանում էր. վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է **առաջին ատյանի դատարաններում** գործերի քննության համար սահմանված, ինչպես նաև սույն գլխում շարադրված կանոններով:

Վերաքննիչ դատարանում գործի քննության դատավարական կարգը սահմանող հիմնական կանոնի փոփոխությունը և որպես լրացական իրավական ռեժիմ՝ առաջին ատյանի փոխարեն Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգի սահմանումը հատկանշական է: Այն ցայտուն ցույց է տալիս վերաքննության մեխանիզմի տեսակային վերափոխումը՝ լրիվ վերաքննությունից սահմանափակ վերաքննության անցումը:

Նախկին խմբագրությամբ 390-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանվում էր հետևյալ կերպ. Եթե որևէ հարց վերաքննիչ վարույթի դատավարական կարգը սահմանող գլխով կարգավորված չէ, ապա գործում է առաջին ատյանի դատարանի համար սահմանված կանոնը: Այսպիսի մենաբանությունը ողջամիտ էր. այն հիմնված էր ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության տրամաբանության վրա: Մինչդեռ նշված հոդվածի նոր խմբագրության գործադրումը շեղվում է այդ տրամաբանությունից և ելնում է «Երկու գուգահեռ իրավական ռեժիմների» գաղափարից: Այլ կերպ՝ 390-րդ հոդվածի 1-ին մասը հասկացվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր դեպքում վերաքննիչ դատարանն ինքն է որոշում, թե որ իրավական ռեժիմով է բողոքը քննելու՝ վերաքննությա՞ն, թե վճռաբեկության:

Այս երկու իրավական ռեժիմների տարբերությունը որակական է: Մասնավորապես՝ ի տարբերություն վճռաբեկության՝ վերաքննիչ վարույթը կանոնակարգող գլխում սահմանված է.

- կողմերի՝ դատախազի, ամբաստանյալի, պաշտպանի պարտադիր մասնակցություն (390-րդ հոդվածի 3-րդ մաս)
- որ նախագահողի գեկուցումից հետո դատարանը լսում է բողոքում ներկայացված՝ իր հետևությունները իմնավորելու մասին կողմի ելույթը և դատական ակտը չբողոքարկած հակառակ կողմի պատասխանները (391-րդ հոդված)
- կողմի միջնորդությամբ ապացույցներ հետազոտելու հնարավորություն (391-րդ հոդվածի 4-րդ մաս)
- դատական վիճաբանությունների և ամբաստանյալի վերջին խոսքի հնարավորություն (392-րդ հոդված):

ՀՅ քր. դատ. օր. 390-րդ հոդվածի 1-ին մասի այսպիսի մեկնաբանությունը կարող է հանգեցնել կողմերի իրավունքների սահմանափակման, քանի որ կոնկրետ ռեժիմի ընտրության հիմքեր, դատավարական կարգ ու այդպիսի որոշման բողոքարկման հնարավորություն օրենքը չի սահմանում: Այս պայմաններում վերաբնիչ դատարանը կարող է որոշում կայացնել մրցակցային վերաբննության ռեժիմի փոխարեն բողոքը ոչ մրցակցային վճռաբեկության ռեժիմով քննելու մասին:

Այս հարցի օրենսդրական կանոնակարգման թերությունը դատական նախադեպով փորձել է լրացնել ՀՅ վճռաբեկ դատարանը՝ Գ. Դախնազարյանի վերաբերյալ գործով 2009թ. հունիսի 29-ի որոշման մեջ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը.

«11. ... (ՀՅ քր. դատ. օր. 390-րդ) հոդվածի վերլուծությունից երևում է, որ վերաբնիչ դատարանում գործերի քննության կարգի նախատեսման հետ կապված դրույթները միմյանցից տարանջատված են «ինչպես նաև» շաղկապով:

«Իրավական ակտերի մասին» ՀՅ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն. «(...) եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ»:

(...)

(Այսպիսով,) վերաբնիչ դատարանում գործերի քննությունը կարող է իրականացվել կամ վերաբննության կարգով (ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ գլխի կանոններով) կամ վճռաբեկության կարգով (ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ գլխի կանոններով):

12. ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ բաժինը, որը կարգավորում է վերաբնիչ դատարանում վարույթի հետ կապված հարցերը, չի սահմանում այն դեպքերն ու պայմանները, որոնց առկայության պարագայուն

գործը կարող է քննվել ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի կամ 47-րդ, կամ 48-րդ գլխի կանոններով: Այսինքն, օրենսդիրն այդ վարույթի իրականացման դատավարական ձևի կիրառման հետ կապված հարցերը բողել է վերաքննիչ դատարանի հայեցողությանը:

(...)

13. (ՀՅ քր. դատ. օր. 381-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում, 382-րդ հոդվածի 3-րդ մասում, և 385-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված) իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով ՀՅ վերաքննիչ քրեական դատարանը բողոք կարող է քննել այն դեպքերում, երբ համոզվում է, որ բողոքաբերը օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել այդ ապացույցները ներկայացնել մինչև վերաքննիչ դատարանում գործի քննությունը, այսինքն՝ գործով մինչդատական վարույթի և առաջին ատյանի դատարանում վարույթի ընթացքում:

Լրացուցիչ ապացույցների ներկայացման կամ հետազոտման օբյեկտիվ հիմքերի բացակայության դեպքում ՀՅ վերաքննիչ քրեական դատարանը իրավասու է գործը քննել վճռաբեկության, այսինքն, ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածով սահմանված կարգով:

14. Սույն գործով ՎՃՌԵԿ դատարանի քննության առարկա հանդիսացող հաջորդ հարցն այն է, թե վերաքննիչ դատարանում գործի քննության դատավարական ձևը որոշելուց հետո վերաքննիչ դատարանը պարտավո՞ր է արդյոք դատավարության մասնակիցներին տեղեկացնել վերաքննիչ դատարանում բողոքի քննության կարգի մասին, թե ոչ, և եթե այո, ապա ի՞նչ որոշմամբ և ե՞րբ:

15. (...)

ՀՅ քրեական դատավարության օրենսգրքի (389-րդ հոդվածի 3-րդ մասի) բովանդակությունից երևում է, որ դատական նիստ նշանակելու մասին ՀՅ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը հանդիսանում է այն դատավարական փաստաթուղթը, որի միջոցով դատավարության մասնակիցները տեղեկանում են վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակի և տեղի վերաբերյալ, ինչպես նաև, ելնելով դատարանի կողմից որոշված՝ հետազոտման ենթակա ապացույցների ծավալից, պատկերացում են կազմում, թե ինչ սահմաններում է քննվելու բողոքը: Հետևաբար՝ դատական նիստ նշանակելու մասին ՀՅ վերաքննիչ քրեական դատարանի որոշումն այն դատավարական փաստաթուղթն է, որում պետք է ամրագրվի, թե արդյոք վերաքննիչ դատարանը մտադիր է վճռաբեկության կարգ կիրառել, թե ոչ:

16. Յիմնվելով Ալիխանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի որոշման 16-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վճռաբեկության կարգ կիրառելու որոշում պարունակող Վերաքննիչ դատարանի դատական նիստ նշանակելու մասին որոշումը, գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայմանը վերաբերելու դեպքում, կարող է կայացվել միայն դատարանի կոլեգիալ կազմով: Այդպիսի որոշումը կարող է էական ազդեցություն ունենալ վերաքննիչ բողոքարկման իրավունքի արդյունավետ կենսագործման վրա, ուստի բողոքաբերին պետք է տրվի Կոլեգիալության լրացուցիչ երաշխիք:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «Վճռաբեկ դատարանը Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ (...): Ուստի Վճռաբեկության կարգ կիրառելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը ևս պետք է կայացվի կոլեգիալ:

(...)

18. Յիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարության մասնակիցները պետք է նախապես տեղյակ լինեն, թե ինչ դատավարական ծնով է իրականացվելու բողոքի քննությունը վերաքննիչ դատարանում, քանի որ դա անձի արդար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն երաշխիք է:

(...)

19. Այսպիսով, սույն գործով բարձրացված այն հարցի կապակցությամբ, թե որ դեպքերում է Վերաքննիչ դատարանը գործը քննում վերաքննության և որ դեպքերում՝ Վճռաբեկության կարգով, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը հետևյալն է Վերաքննիչ դատարանը կարող է գործը քննել Վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով միայն այն դեպքում, եթե՝

ա) դատական նիստ նշանակելու մասին որոշման մեջ նշել է այդ մասին և հիշյալ որոշումը պատշաճ կարգով ուղարկվել է դատավարության մասնակիցներին,

բ) Վերաքննիչ բողոք կամ բողոքի պատասխան ներկայացրած կողմը նոր նյութեր չի ներկայացրել և չի միջնորդել հավաքելու կամ հետազոտելու նոր ապացույցներ, կամ Վերաքննիչ դատարանն այն համոզման է եկել, որ կողմը, միջնորդելով գործին կցել նոր նյութեր, կամ դատարան կանչել իր նշած վկային կամ փորձագետին կամ նշանակել փորձաքննություն, չի հիմնավորել, որ առաջին ատյանի դատարանում օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կատարելու

Վերոնշյալ գործողությունները, կամ որ դրանց կատարման վերաբերյալ միջնորդությունները առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել են անհիմն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ եթե վերաքննիչ դատարանը գործը դատական քննության նշանակելու մասին որոշման մեջ չի նշել վճռաբեկության կարգով գործը քննելու իր մտադրության մասին, ապա այլև չի կարող բողոքի քննության ժամանակ փոխել այդ որոշումը և գործը քննել վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով։ Սակայն, եթե վերաքննիչ դատարանը որոշել է գործը քննել վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով, ապա գործի քննության ժամանակ կարող է փոխել որոշումը և գործը քննել վերաքննիչ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով, եթե օբյեկտիվորեն առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերը։

Դ) Բողոքարկվող դատական ակտը **բեկամելու և փոփոխելու հիմքերը** թվարկված են ՀՀ քր. դատ. օր. 395-րդ հոդվածով։ Դրանք են.

1. գործի փաստական հանգամանքների մասին դատավճռում շարադրված դատարանի հետևողությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին,

2. ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը,

3. առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում,

4. դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին։

Դատավճիռների բեկանման և փոփոխման հիմքերի թվարկումն օրենսդիրը սկսում է վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին գործի փաստական հանգամանքների մասին դատավճռում շարադրված դատարանի հետևողությունների անհամապատասխանության վերաքննիչ հիմքից։ Այն արտահայտում է վերաքննության էական առանձնահատկությունը՝ ինչպես առաջին ատյանի դատարանում ներկայացված, այնպես էլ նոր ապացույցներ հետազոտելու վերաքննիչ դատարանի իրավունքը։

Այս հիմքի առանձնահատկությունն է, որ այն դատական քննության արագացված կարգի կիրառմանը նշանակված դատավճռի վերանայման հիմք չէ (ՀՀ քր. դատ. օր. 375.4-րդ հոդված), քանի որ արագացված դատաքննության պարագայում գործի փաստական հանգամանքները կողմերն ըստ էության համաձայնեցնում են, և դատարանում ապացուցում տեղի չի ունենում։

Այս հարցի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել *Ո.Արշալույսյանի վերաբերյալ* գործով 2009թ. փետրվարի 17-ի որոշմամբ.

«21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ և 375.1-րդ հոդվածների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց պահանջները հանգում են հետևյալին.

1) դատական քննություն նշանակելու փուլում գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշումը, ի թիվս այլոց, կայացվում է այն դեպքերում, երբ դատարանն ակնհայտ անհամապատասխանություն է հայտնաբերում ապացույցների և արարքի նկարագրության միջև կամ արարքի նկարագրության և արարքի իրավաբանական որակման միջև։

2) դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդություն հարուցվելու դեպքում դատարանն իրավասու է մերժել միջնորդությունը, ի թիվս այլոց, այն դեպքում, երբ հայտնաբերում է անհամապատասխանություն արարքի նկարագրության և արարքի որակման միջև։

Այսպիսով, դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը քննելիս առաջին ատյանի դատարանը չի կարող անդրադառնալ արարքի նկարագրության և դրա հիմքում դրված ապացույցների համապատասխանության հարցին։ Ուստի, վերաբնիչ դատարանը ևս իրավասու չեր անդրադառնալու այդ հարցին, քանի որ վերաբնիչ դատարանը, որպես վերանայող ատյան, գործի եռթյան վերաբերյալ չի կարող ավելի լայն լիազորություններ ունենալ, քան առաջին ատյանի դատարանը։

Քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառման վերաբնիչ հիմքն իր բովանդակությամբ նույնանում է դատավարության մասնակիցների նյութական իրավունքի խախտման վճռաբեկ հիմքի հետ (ՀՀ քր. դատ. օր. 406-րդ հոդ. 2-րդ մաս): Այն կարող է լինել ինչպես գործի փաստական հանգամանքներին դատավճռում շարադրված հետևությունների անհամապատասխանության արդյունք, այնպես էլ ինքնուրույն հիմք։

Քննարկվող հիմքի բովանդակությունը կոնկրետացվում է ՀՀ քր. դատ. օր. 397-րդ հոդվածով՝

ա) ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումը, որը ենթակա չէր կիրառման,

բ) ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի չկիրառումը, որը ենթակա էր կիրառման,

գ) օրենքի սխալ մեկնաբանումը, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին:

2006թ. մայիսի 23-ի օրենքով ՀՀ քր. դատ. օր. 397-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվեց նոր խնբագրությամբ: Դրանով այս հիմքի ծավալն ընդլայնվեց՝ ներառելով նաև միջազգային պայմանագրերի սխալ կիրառման դեպքերը: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»: Միջազգային պայմանագրերի սխալ կիրառումը վերաբննության և վճռաբեկության հիմքերի շարքը դասելը պետք է համարել մեջքերված սահմանադրական դրույթները քրեական դատավարությունում կենսագործելու երաշխիք: Այս առումով օրենսդրի դիրքորոշումը հիմնավորված է: Սակայն հարցի կարգավորման ընտրված եղանակը, մեր կարծիքով, լավագույնը չէ: Բանն այն է, որ ՀՀ քր. դատ. օր. 406-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում՝ օրենսգրքի 397-րդ հոդվածի ձևակերպումից բխում է, որ միջազգային պայմանագրերը կարող են պարունակել միայն նյութական (և ոչ դատավարական) նորմեր, ինչն իրականությանը չի համապատասխանում: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածները պարունակում են բացառապես դատավարական իրավանորմեր:

ՀՀ քր. դատ. օր-ում առավել մանրամասն կանոնակարգված է քրեադատավարական օրենքի էական խախտման վերաբննիչ հիմքը (ՀՀ քր. դատ. օր. 398-րդ հոդված): Քրեադատավարական իրավունքը կարգավորում է հասարակության համար հույժ կարևոր հարաբերությունների համակարգ, և դրա կարգադրագրերի խախտումները հղի են ծանր հետևանքներով ինչպես հասարակության և պետության, այնպես էլ առանձին քաղաքացիների համար: Ավելին, մարդու իրավունքների խախտումների հավանականությունն ու այդ խախտումների վտանգավորությունը հասարակական կյանքի մյուս ոլորտների համեմատ քրեական դատավարությունում ավելի մեծ է:

Այս ամենը հաշվի առնելով՝ դատավարական օրենսդրության ցանկացած խախտում պետք է իրավախախտի համար որոշակի անցանկալի հետևանքներ առաջացնի: Սակայն գործի ճիշտ լուծման վրա այդ խախտման իրական կամ հնարավոր ազդեցության չափից կախված՝ որոշ խախտումներ կարող են հանդիսանալ դատավճռի բեկանման կամ փոփոխման հիմք, իսկ մյուսները՝ ոչ: Այսպես, ՀՀ քրեադատավարական իրավունքը վերաբննիչ (ինչպես նաև՝ վճռաբեկ) հիմք է համարում քրեադատավարական օրենքի էական խախտումը: Ընդ որում, «էական խախտում» հասկացությունն ընդհանրա-

կան բնույթ չի կրում, այլ սերտորեն կապված է կոնկրետ գործի էության հետ: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել, թե այդ խախտումը գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ որևէ այլ ճանապարհով խոչընդոտել է արդյոք գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել է կամ կարող էր արդյոք ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (ՀՀ քր. դատ. օր. 398-րդ հոդ. 1-ին մաս):

Թեև ընդհանուր կանոնի համաձայն՝ վերաքննիչ դատարանն ազատ է քրեադատավարական օրենքի խախտման բնույթը գնահատելու հարցում, սակայն օրենքը սահմանում է հանգամանքների ցանկ, որոնք չեն կարող չափել գործով ճիշտ որոշման կայացման վրա, ուստի դրանց բացահայտումն ինքնին վկայում է քրեադատավարական օրենքի էական խախտման առկայության մասին: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը հաստատված ճանաչելու դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է բեկանել առաջին ատյանի դատարանի վերջնական որոշումը և կայացնել նորը: Իրավաբանական գրականության մեջ այդ հանգամանքներն ընդունված է անվանել «անվերապահ վերաքննիչ հիմքեր»: ՀՀ քր. դատ. օր-ում անվերապահ վերաքննիչ հիմքերը թվարկված են 398-րդ հոդ. 2-րդ և 3-րդ մասում.

«2. Դատավճիռը պետք է բեկանվի, երբ դատաքննության միակողմանիությունը կամ ոչ լրիվությունը հետևանք են թույլատրելի ապացույցները գործից սխալմամբ հանելու կամ այն ապացույցների հետազոտման հարցում կողմի միջնորդությունն անհիմն մերժելու համար, որոնք կարող էին նշանակություն ունենալ գործի համար:

3. Դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) գործով վարույթի կարծման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարծել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը.

2) դատավճիռը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով.

3) գործը քննվել է ամբաստանյալի բացակայությամբ, բացառությամբ սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի վեցերորդ մասով նախատեսված դեպքի.

4) գործը քննվել է պաշտպանի բացակայությամբ, երբ նրա մասնակցությունը, հանգաման օրենքի, պարտադիր էր, կամ այլ կերպ խախտվել է մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքը.

5) դատարանում խախտվել է մայրենի լեզվից և թարգմանչի ծառայություններից օգտվելու՝ ամբաստանյալի իրավունքը.

6) անձամբ իր պաշտպանությունն իրականացրած ամբաստանյալին իրավունք չի վերապահվել նասնակցելու դատական վիճաբանություններին.

7) ամբաստանյալին չի տրվել վերջին խոսքի իրավունք.

8) խախտվել է խորհրդակցական սենյակի գաղտնիությունը.

9) գործում բացակայում է դատական նիստի արձանագրությունը.

10) դատավճռում իսպառ բացակայում է դրա նկարագրական-պատճառաբանական մասը.

11) խախտվել է գործի քննության ընդդատությունը»:

ՀՀ քր. դատ. օր-ով նախատեսված վերջին վերաքննիչ հիմքը դատավճռով նշանակված պատժի անհամապատասխանությունն է կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին: Այս հիմքի առանձին ամրագրումը վկայում է պատժի անհատականացման՝ իբրև սոցիալական արդարության վերականգնման միջոցի մեջ նշանակության մասին: Այս վերաքննիչ հիմքը պրակտիկայում ամենատարածվածն է: Նշանակված պատժի անարդարացիությունը կարող է դրսերվել հետևյալ ձևերով.

ա) առաջին ատյանի դատարանի կողմից համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում ակնհայտ խիստ հիմնական կամ լրացուցիչ պատժատեսակ կամ պատժաչափ նշանակելը, որը չի համապատասխանում ամբաստանյալի կամ նրա արարքի հասարակական վտանգավորության բնույթին և աստիճանին: Օրինակ՝ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք՝ դատարանը հաշվի չի առել այն, որ ամբաստանյալը դրական է բնութագրվում:

բ) առաջին ատյանի դատարանի կողմից ակնհայտ մեղմ պատժատեսակ կամ պատժաչափ նշանակելը, այդ թվում նաև առանց բավարար հիմքերի օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կիրառելը: Օրինակ՝ դատարանը հաշվի չի առել ամբաստանյալի կողմից դատվածություն ունենալու հանգամանքը:

Ե) Վերաքննիչ վարույթը եզրափակող դատական ակտերի շրջանակը («վերաքննիչ դատարանի լիազորությունները») թվարկված է ՀՀ քր. դատ. օր. 394-րդ հոդվածում: Այդ շրջանակը տարբեր է՝ պայմանավորված բողոքարկված դատական ակտի տեսակով: Գործն ըստ էության չուժող դատական ակտի վերանայման պարագայում վերաքննիչ դատարանն իրավասու է կամ մերժել վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնել նոր դատական ակտ:

Իսկ եթե բողոքարկման առարկան գործն ըստ էության լուծող դատական ակտ է, ապա վերաքննիչ դատարանը.

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ:

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և այդ մասով հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխուն է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարծում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում քաղաքացիական հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

Վերաքննիչ բողոքը մերժելու դեպքում վերաքննիչ դատարանն իրավասու է լրացուցիչ պատճառաբանել անփոփոխ թողնված դատական ակտը, եթե առաջին ատյանի դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված է: Չպատճառաբանվածության և սխալ պատճառաբանվածության մասով այս դրույթն արժանի է քննադատության, քանի որ պատճառաբանության բացակայությունը դատական ակտի բեկանման անվերապահ հիմք է, իսկ սխալ պատճառաբանման դեպքում դատական ակտը չի կարող համարվել ըստ էության ճիշտ:

Վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակը կանոնակարգվում է նաև առանձին վերաքննիչ հիմքեր ամրագրող հոդվածներով: Այսպես, ՀՀ քր. դատ. օր. 396-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«Վերաքննիչ դատարանը, գնահատելով դատաքննության ընթացքում իր կողմից հետազոտված ապացույցները, իրավունք ունի ապացուցված ճանաչելու այն փաստերը, որոնք չեն հաստատվել կամ հաշվի չեն առնվել առաջին ատյանի դատական ակտում: Այդ դեպքում վերաքննիչ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է դատական ակտը կամ գործն ուղարկում է առաջին ատյանի դատարան՝ նոր քննության»:

ՀՀ քր. դատ. օր. 399-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա.

«Գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, վերաքննիչ դատարանը մեղմացնում է կամ խստացնում պատիժը՝ դեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով»:

Քրեական օրենքի սխալ կիրառման վերաքննիչ հիմքը սահմանող՝ ՀՀ քր. դատ. օր. 397-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է.

«Գործի քննության արդյունքում գտնելով, որ արարքն իրավաբանորեն ճիշտ որակված չէ, վերաքննիչ դատարանն իրավունք ունի փոխել հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թերև հանցագործության համար»:

Քրեադատավարական օրենքի եական խախտման վերաքննիչ հիմքը սահմանող՝ ՀՀ քր. դատ. օր. 398-րդ հոդվածը նախատեսում է.

«4. Գտնելով, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել սույն հոդվածի երրորդ մասի 2-11-րդ կետերով նախատեսված խախտում, վերաքննիչ դատարանը բեկանում է դատավճիռը և կայացնում նոր դատավճիռ, իսկ 1-ին կետով նախատեսված դեպքում՝ բեկանում է դատավճիռը, կարծում է գործի վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը:

5. Եթե առաջին ատյանի դատարանը գործով թույլ է տվել քրեադատավարական օրենքի այլ եական խախտում, վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով գործի քննության արդյունքները, փոփոխում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը կամ բեկանում է այն և գործն ուղարկում առաջին ատյանի համապատասխան դատարան՝ այլ կազմով նոր քննության»:

Հոդվածի 4-րդ մասի առաջին դրույթը վերաքննիչ դատարանին հնարավորություն է տալիս, բեկանելով բողոքարկված դատական ակտը, միայն կայացնել նոր դատական ակտ։ Այս դրույթի տառացի մեկնաբանությունը կիանգեցնի անհերեբության, քանի որ վերաքննության նոր հայեցակարգի հիման վրա՝ վերաքննիչ դատարանն օժտված է ավելի սահմանափակ իրավական միջոցներով, քան առաջին ատյանի դատարանը։ Սա նկատի ունենալով՝ նշված դրույթը պետք է մեկնաբանել այնպես, որ վերաքննիչ դատարանը հնարավորություն ունենա նաև, դատական ակտը բեկանելով, գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության։

Վերաքննիչ վարույթն ավարտելու նոր եղանակ է վերաքննիչ վարույթը կարծելը։ ՀՀ քր. դատ. օր. 383-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Եթե վերաքննիչ

բողոքարկման ժամկետն ավարտվել է, իսկ տվյալ դատական ակտի դեմ այլ վերաքննիչ բողոքներ չեն բերվել, ապա բողոքը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում: Որոշումը կայացնելու պահից առաջին ատյանի դատարանի դատական ակտը մտնում է ուժի մեջ»:

Վերաքննիչ վարույթը կարճելու իրավաչափությանը ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է երկու նախադեպային որոշումներով: Այսպես, «Էկոնոմիկասացիա» ՓԲԸ-ի վերաբերյալ գործով 2009թ. հունիսի 2-ի որոշմամբ սահմանված է.

«16. Վերաքննիչ բողոքը հետ վերցնելու վերաբերյալ փաստի հաստատման և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման համար դատարանը պետք է ունենա բավարար հիմքեր, մասնավորապես՝ այդպիսին կարող է հանդիսանալ բողոք բերած անձի՝ վերաքննիչ բողոքը հետ վերցնելու վերաբերյալ վերաքննիչ դատարան բերված դիմումը: Բողոքաբերի կողմից բողոքը հետ վերցնելը պետք է կատարվի վարքագիծ դրսնորելով, այսինքն՝ անձը պետք է իր կամքն արտահայտի բողոքը հետ վերցնելու կապակցությամբ»:

Իսկ Ա.Ծատինյանի վերաբերյալ գործով 2009թ. հունիսի 29-ի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանել է, որ վերաքննիչ վարույթի կարճման ինստիտուտը չի կարող կիրառվել այն դեպքում, եթե պատշաճ ծանուցված բողոքաբերը չի ներկայանուն վերաքննիչ դատարանի նիստին:

ՎՃՌԱԲԵԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ պարզաբանում

Վճռաբեկության քրեադատավարական ինստիտուտի համար կիրառելի են վերաքննության վերաբերյալ ներկայացված տեսական մոտեցումները. Վճռաբեկությունը ևս կարելի է դիտարկել երկու դիտանկյունից՝ որպես դատական ակտերի վերանայման իրավական մեխանիզմ և որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ, վերջինս իր հերթին բաղկացած է երկու ենթակուլերից՝ վճռաբեկ բողոքարկման և վճռաբեկության կարգով բողոքի քննության ու լուծման¹:

¹ Ի տարբերություն վերաքննիչ վարույթի՝ վճռաբեկ վարույթը կանոնակարգող Քր. դատ. օր. բաժինը կազմված է մեկ գլխից: Այնուհանդերձ, վճռաբեկ վարույթի պարագայում ևս բողոքարկման և բողոքի քննության-լուծման ընթացաշրջաններում առկա է դատավարական ձևի ակնհայտ տարբերակում: Ուստի, վճռաբեկ վարույթը ևս մենք կդիտարկենք նույն կառուցվածքով, ինչ վերաքննիչ վարույթը:

Դատական վերանայման վճռաբեկության մեխանիզմը տարբերվում է վերաքննության մեխանիզմից նրանով, որ այն հնարավորություն չի ընձեռում հավաքելու նոր ապացույցներ և անմիջականորեն հետազոտելու գործով ապացույցները: Այլ կերպ՝ ստորադաս դատարանների կողմից հաստատված փաստական հանգանանքների նկարագրությունն ընդունվում է որպես հիմք: Այսպիսով, վճռաբեկ վերանայման շրջանակներում իրականացվում է իրավունքի վերաբերյալ վարույթ:

Վերոգրյալը չի նշանակում, որ գործի փաստական կողմը վճռաբեկության իրավական մեխանիզմից դուրս է: Փաստերի կամ ապացույցների վերաբերյալ անհամաձայնությունը կարող է վճռաբեկ վերանայման առարկա դարձվել անուղղակիորեն՝ վերաձևակերպվելով որպես օրենքի խախտման վերաբերյալ ենթադրություն: Օրինակ՝ բողոքաբերը կարող է պնդել, որ կոնկրետ փաստ հաստատված ճանաչելով՝ ստորադաս դատարանը խախտել է ապացույցների ստուգման կամ գնահատման կանոնները: Այսպիսով, սկզբունքորեն հնարավոր է ցանկացած փաստական սխալ ներկայացնել որպես իրավական սխալ և այն վերացնելու համար օգտագործել վճռաբեկության մեխանիզմը:

Վճռաբեկության մեխանիզմը կարող է ունենալ երկու դրսևորում. *մաքուր* վճռաբեկություն և *խառը վճռաբեկություն*: Մաքուր վճռաբեկության պարագայում նոր ապացույցներ ներկայացնելու և հետազոտելու հնարավորությունը լիովին բացառվում է, իսկ խառը վճռաբեկության պարագայում որոշ բացարիկ դեպքերում այն հնարավոր է: ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված վճռաբեկությունը մաքուր վճռաբեկության օրինակ է. այն փոխառնված է դասական ֆրանսիական մոդելից: Խառը վճռաբեկության օրինակ է խորհրդային վճռաբեկությունը:

Վճռաբեկության քրեադատավարական ինստիտուտը քննարկելիս՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ վճռաբեկ դատարանը՝ վճռաբեկության մեխանիզմը գործադրող դատական մարմինը, Սահմանադրությամբ օժտված է ոչ միայն արդարադատություն իրականացնելու, այլ նաև *օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու* գործառույթով (Սահմանադրության 92-րդ հոդված): Այս պայմաններում ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված վճռաբեկությունը երկակի իրավական նշանակություն է ձեռք բերում. մի կողմից այն դատական սխալների ուղղման միջոց է, իսկ մյուս կողմից՝ միասնական իրավակիրառական պրակտիկա ապահովելու միջոց:

Այս պայմաններում ՀՀ քրեադատավարական վճռաբեկությունը բնութագրվում է այնպիսի հատկանիշներով, որոնք օրգանապես բնորոշ չեն վճռաբեկության իրավական

մեխանիզմին, այլ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի երաշխիք են: Այդպիսի հատկանիշներից է, մասնավորապես, վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու թույլատվական (դիսկրեցիոն) կարգը, որը նպատակ է հետապնդում Վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու եղանակով ապահովել Վճռաբեկ դատարանի որոշումների առավել բարձր որակ:

Վճռաբեկությանը պետք է տարբերել ոչ միայն վերաքննությունից, այլև դատական վերանայման այլ եղանակներից, մասնավորապես՝ նոր ի հայտ եկած կամ նոր հանգամանքներով վարույթի նորոգումից: Վերաքննության և վճռաբեկության ընդհանրությունն այն է, որ դրանք երկուսն էլ դատական վերանայման սովորական ձևեր են, այսինքն՝ գործադրվում են օրինական ուժի մեջ չնտած դատական ակտերի նկատմամբ: Իսկ նոր ի հայտ եկած կամ նոր հանգամանքներով վարույթի նորոգումը դատական վերանայման բացառիկ ձև է, քանի որ կարող է գործադրվել միայն օրինական ուժի մեջ նտած դատական ակտերի նկատմամբ՝ որպես բացառություն դատական ակտերի կայունության (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տերմինաբանությամբ՝ իրավական որոշակիության) սկզբունքից: Այլ կերպ՝ օրինական ուժ ստացած դատական ակտը կարող է վերանայվել միայն բացառիկ հանգամանքի առաջացման (օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից տվյալ գործով որոշման կայացում, կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վճռի կայացում) կամ ի հայտ գալու (օրինակ՝ վկայի կողմից սուստ ցուցմունք տալու, փորձագետի կողմից կեղծ եզրակացություն տալու դատական հաստատում և այլն) դեպքում: Ընդ որում, ի տարբերություն սովորական վերանայման՝ բացառիկ վերանայման ժամանակ կողմերի միջև առկա է ասիմետրիա՝ ի շահ մեղադրյալի: Այս հարցում եվրոպական դատարանի դիրքորոշումն այն է, որ բացառիկ վերանայման պարագայում պետությանը վերագրելի սխալները և խախտումները պետք է մեկնաբանվեն հօգուտ ամբաստանյալի՝ քրեական հետապնդման մարմինների կամ դատարանի կողմից գործի քննության ընթացքում թույլ տրված խախտումները չպետք է վերացվեն ի հաշիվ մեղադրյալի շահերի¹: Այսպիսով, նոր ի հայտ եկած կամ նոր հանգամանքներով վարույթի նորոգման մեխանիզմի գործադրմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ի վեհասարակածի (դատապարտվածի) բեկանելու կամ փոփոխելու համար անհրաժեշտ է հիմնավորել խախտման առավել համոզիչ ակնհայտությունը կամ առավել ծանր բնույթը, քան վճռաբեկության դեպքում:

¹ Տե՛ս **Ուղղիկովն ընդդեմ Ռուսաստանի** գործով 2007թ. մայիսի 24-ի որոշումը, կետ 50; **Քսերազն ընդդեմ Ալբանիայի** 2008թ. հուլիսի 29-ի որոշումը, կետ 58:

Վճռաբեկ վերանայման տարբերությունը բացառիկ վերանայումից նաև վերաբերում է տվյալ մեխանիզմը գործադրող դատական մարմնին. Եթե Վճռաբեկությունը կարող է կիրառվել բացառապես Վճռաբեկ դատարանի կողմից, ապա նոր ի հայտ եկած կամ նոր հանգամանքներով վարույթի նորոգում կարող է իրականացնել թե՝ վերաքննիչ դատարանը և թե՝ Վճռաբեկ դատարանը: Վերաքննիչ դատարանը բացառիկ վերանայում է իրականացնում այն դեպքում, երբ առաջին ատյանի դատական ակտը մտած է եղել օրինական ուժի մեջ՝ առանց վերաքննիչ դատարանում բողոքարկման:

Վճռաբեկության եռթյունն ամբողջական ընկալելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն սահմանադրական հատուկ կարգավիճակ ունեցող բարձրագույն դատական ատյանի՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի դատավարական գործունեության հիմնական ձևն է: Այսպես, սույն աշխատանքում արդեն վկայակոչված՝ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, Վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

Այս սահմանադրական իրավանորմը լրացվել է 2005թ. սահմանադրական փոփոխություններով: Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է ՀՀ Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակը՝ որպես բարձրագույն դատական ատյան, սահմանում է Վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակը (սահմանադրական արդարադատության հարցերից բացի, բոլոր հարցերը), այդ սահմանադրական մարմնի կոչումը (օրենքի միատեսակ կիրառության ապահովումը), ինչպես նաև նախատեսում է սահմանադրական պահանջ այն մասին, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի լիազորությունները պետք է սահմանվեն Սահմանադրությամբ և օրենքով, իսկ այլ իրավական ակտերով սահմանվել չեն կարող:

Ընդհանուր իրավասության հարցերով բարձրագույն դատական ատյանի կարգավիճակը ենթադրում է, որ

ա) Վճռաբեկ դատարանը, իրականացնելով դատական վերանայում, կոչված է ուղղելու դատական սխալները.

բ) Վճռաբեկ դատարանի դատական ակտերը ենթակա չեն սովորական կարգով բողոքարկման.

գ) որևէ այլ դատական մարմին, բացի Վճռաբեկ դատարանից, չի կարող բեկանել կամ փոփոխել Վճռաբեկ դատարանի դատական ակտերը.

դ) Վճռաբեկ դատարանը պետք է անմիջականորեն կամ միջնորդավորված եղանակով ուղղահայաց գործառնական կապերի մեջ լինի ՀՀ ընդհանուր իրավասության բոլոր դատարանների, այդ թվում՝ մասնագիտացված դատարան(ներ)ի հետ:

Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակն ամրագրող սահմանադրական նորմը նաև բովանդակում է Սահմանադրական դատարանի հետ այդ դատական մարմնի հորիզոնական փոխարարերության պահանջ: Դա նշանակում է, որ ոչ Սահմանադրական դատարանն է վերադաս դատական ատյան Վճռաբեկ դատարանի նկատմամբ և ոչ էլ ընդհակառակը:

Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակը ներառում է նաև այդ դատական մարմնի առանձնահատուկ գործառույթը՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովումը: Ընդ որում, դա Վճռաբեկ դատարանի միակ գործառույթը համարվել չի կարող, քանի որ որպես դատարան՝ Բարձրագույն դատական ատյան առաջին հերթին կոչված է իրականացնել արդարադատություն:

ՀՀ վճռաբեկ դատարանին վերապահված՝ օրենքի միատեսակ կիրառության գործառույթը չպետք է օրենսդրության կանոնակարգվի և իրավակիրառական պրակտիկայում իրականացվի այնպես, որ այդ դատական մարմնը դադարի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց լինելուց:

Օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ Վճռաբեկ դատարանի գործառույթի կենսագործման օրենսդրական երաշխիքներից առանձնանում է 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթն այն մասին, որ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, եթե վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Այս իրավադրույթն ըստ էության սահմանում է անգլո-սաքսոնական իրավունքին բնորոշ *stare decisis* կանոնը, թեև այն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի կենսագործման անհրաժեշտ և պարտադիր պայման չէ: Այդ մասին է վկայում, օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության

սահմանադրական իրավունքը. ԳԴՀ 1949թ. Սահմանադրության («Հիմնական օրենքի») 95-րդ հոդվածի 3-րդ մասը նույնպես ամրագրում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառությը՝ այն պատվիրակելով ընդիհանուր իրավասության, ֆինանսական, վարչական, աշխատանքային, սոցիալական ոլորտներում հինգ բարձրագույն դատական ատյանների կազմերից ձևավորված Սենատին: Մինչդեռ Սենատի որոշումները *stare decisis* կարգով պարտադիրությամբ օժտված չեն:

Սեկնարանելով «նույնանման փաստական հանգամանքներով գործ» հասկացությունը՝ ՄԻԵԴ դատական ակտի կիրառելիության մասով, ՀՀ Վճռաբեկ դատարանը *Ա.Այվազյանի վերաբերյալ* գործով 2008թ. մայիսի 23-ին կայացված որոշման 26-րդ կետում նշել է.

«... ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի ... հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են եական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ... ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդիհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդիհանրություն: Եվ ընդիհակառակը, եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդիհանրություն»:

Նշված չափանիշներն ըստ եռթյան կիրառելի են նաև Վճռաբեկ դատարանի որոշումների նախադեպային կիրառման ժամանակ:

2. Վճռաբեկ բողոքարկումը

ՀՀ դատական համակարգում Վճռաբեկ դատարանի նոր կարգավիճակի իմաստավորումը պահանջեց արմատական նոր մոտեցում դրսևորել նաև Վճռաբեկ

բողոքարկման ինստիտուտի նկատմամբ: Մասնավորապես՝ փոփոխությունների ենթարկվեց ինչպես Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, այնպես էլ բողոքարկման հիմքերն ու դատավարական կարգը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածում 2007թ. փետրվարի 21-ին կատարված փոփոխություններով և լրացումներով քրեական դատավարություն ներմուծվեց հավատարմագրված փաստաբանի միջոցով Վճռաբեկ բողոք բերելու կարգը: Մասնավորապես՝ սահմանվեց, որ առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, ինչպես նաև վերաքննիչ դատարանի դատավճիռների և որոշումների դեմ Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն արդարացվածը, դատապարտյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, տուժողը՝ հավատարմագրված փաստաբանի միջոցով, ինչպես նաև քաղաքացիական հայցվորը, նրա օրինական ներկայացուցիչը, քաղաքացիական պատասխանողը՝ հավատարմագրված փաստաբանի միջոցով՝ քաղաքացիական հայցի մասով:

2007թ. նոյեմբերի 28-ի փոփոխությունների արդյունքում վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումների դեմ Վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու իրավունք վերապահվեց՝

1) դատավարության մասնակիցներին, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դիմողներին՝ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով.

2) Գլխավոր դատախազին և նրա տեղակալներին՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը, դրա ներմուծման առաջին իսկ օրերից դարձավ ինչպես տեսաբանների, այնպես էլ պրակտիկ իրավաբանների քննարկման առարկա: Նշված ինստիտուտի հակառակորդները որպես իրենց մոտեցման հիմնավորում նշում էին դրա անհամապատասխանությունն արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքին: Գրեթե նույն մոտեցումն էր ընկած նաև ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումների հիմքում: Արդյունքում, Սահմանադրական դատարանը, քննելով Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի կազմավորման, ինչպես նաև Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով Վճռաբեկ բողոք բերելու պահանջ նախատեսելու սահմանադրականության հարցերը, ՀՀ քր. դատ. օր-ի համապատասխան

նորմերը ճանաչեց Սահմանադրությանը հակասող և անվավեր: Այս հարցում Սահմանադրական դատարանի փաստարկումն առաջին հերթին հիմնված էր իրավաբանական օգնության մատչելիության սահմանադրական արժեքի մեկնաբանման վրա: Մասնավորապես՝ 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍՊԸ-765 որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ.

«14.(...)»

Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման կարգ և վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով երաշխավորված իրավաբանական օգնության տրամադրման որևէ մեխանիզմ չնախատեսելու պայմաններում՝ հավատարմագրված փաստաբանների գոյությունն անհամաշափորեն սահմանափակում է Վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը՝ այդ դատարանում իրավունքների պաշտպանությունից օգտվելու դատավարության մասնակցի հնարավորությունը գործնականում պայմանավորելով նրա ֆինանսական հնարավորություններով:

... ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն: Պետության նշված պարտավորությունը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դատավարության շահերից, յուրաքանչյուր կարիքավոր պետք է իրավունք ունենա ստանալու իրավաբանական որակյալ օգնություն: Դա բխում է արդարադատության իրականացման բնագավառում իրավաբանական ծառայության մատուցման եվլողական փորձից, ինչպես նաև իրավաբանների և իրավաբանական ծառայության մատչելիության վերաբերյալ ՍԱԿ-ի շրջանակներում ընդունված սկզբունքներից:

Ներկայում ՀՀ քր. դատ. օր. 404-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքարկելու իրավունք ունեն՝

- 1) դատավարության մասնակիցները, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դիմողները.
- 2) Գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Ընդ որում, անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ:

Մինչև ՀՀ քր. դատ. օր-ի 2008թ. դեկտեմբերի 26-ի փոփոխությունները, երբ դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոք կարող էին ներկայացնել բացառապես Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով, արդարացված էր այն մոտեցումը, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք վերապահվում էր բացառապես գլխավոր դատախազին և նրա տեղակալներին:

Այս մոտեցումը հիմնավորվում էր նրանով, Վճռաբեկ դատարանի կողմից իր սահմանադրական գործառույթի իրականացման անհրաժեշտ պայման է իրավաբանորեն գրագետ, հիմնավորված, քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխանող Վճռաբեկ բողոքի առկայությունը: Մասնավորապես՝ նշվում էր, որ երրորդ դատական օղակ բողոքները պետք է բերվեն առաջին հերթին այնպիսի գործերով, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ օրենքի մեկնաբանման տարբերությունները վերացնելուն: Ենթադրվում էր, որ այս պահանջը կարող է իրագործվել միայն այն դեպքում, երբ վճռաբեկ բողոք բերելու իրավունքը կսահմանափակվի այնպիսի սուբյեկտներով, որոնք կարող են Վճռաբեկ դատարան ներկայացնել Վճռաբեկ դատարանի գործառույթներին համապատասխանող, կամ նրա սահմանադրական կարգավիճակից բխող բողոքներ: Ղեկավարվելով հենց այդ պահանջով՝ ՀՀ քր. դատ. օր-ն իրավունք էր վերապահել վճռաբեկ բողոք բերել դատավարության բոլոր մասնակիցներին, սակայն միևնույն ժամանակ սահմանել էր բողոքարկման այնպիսի կարգ, որը հնարավորինս կապահովեր ներկայացվող վճռաբեկ բողոքին՝ օրենքով ներկայացված պահանջները:

Այդ պահանջի կենսագործմանն էր ուղղված ՀՀ քր. դատ. օր-ով վճռաբեկ բողոք բերելու իրավունքի վերապահումը բացառապես Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբաններին, գլխավոր դատախազին և նրա տեղակալներին (ՀՀ քր. դատ. օր-ի 404-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Սակայն ներկայում, երբ դատավարության մասնակիցներին իրավունք է վերապահվել առանց որևէ միջնորդության, ուղղակի ձևով վճռաբեկ բողոք ներկայացնել, նման տարբերակված մոտեցումն արդարացված չէ և չի նպաստում Վճռաբեկ դատարանում կողմերի իրավահավասարությանը:

Այս առումով հատկանշական է, որ 2009թ. երկրորդ կեսին ՀՀ վճռաբեկ դատարանը, կարծեք թե, հակվում է օրենքի այնպիսի մեկնաբանմանը, որ կողմերի իրավահավասարության հիմնադրույթից ելնելով՝ մեղադրողին և վերադաս

դատախազին ևս պետք է վերապահել վճռաբեկ բողոքարկման իրավունք: Մասնավորապես՝ մի շարք դեպքերում Վճռաբեկ դատարանը ոչ թե առանց քննության է թողել նշված սուբյեկտների ներկայացրած բողոքները, այլ վերադարձրել է դրանք: Այսինքն՝ ընդունել է, որ դրանք ներկայացված են եղել պատշաճ սուբյեկտի կողմից:

Պաշտպանի առանձնահատուկ դատավարական վիճակը պարտավորեցնում է նրան, որ, իր պաշտպանյալի շահերից ելնելով, դատական ակտը բողոքարկի անկախ նրա ցանկությունից, իսկ երբեմն էլ նրա կամքին հակառակ: Սակայն պաշտպանյալը, համաձայն չլինելով բողոքում շարադրված փաստարկների հետ, կարող է հետ վերցնել իր պաշտպանի ներկայացրած բողոքը (ՀՀ քր. դատ. օր. 65-րդ հոդ. 2-րդ մաս, կետ 21) կամ իրաժարվել պաշտպանից (ՀՀ քր. դատ. օր. 65-րդ հոդ. 2-րդ մաս, կետ 3) կամ պաշտպանի բողոքի հետ միասին բողոք ներկայացնել իր անունից, որում շարադրի սեփական դիրքորոշումը (Քր. դատ. օր. 65-րդ հոդ. 2-րդ մաս, կետ 20): Այն դեպքում, եթե մեղադրյալը ցանկանում է բողոքարկել դատավճիռը, իսկ պաշտպանը վճռաբեկ բողոք բերելու համար հիմքեր չի գտնում, նա պարտավոր է կատարել իր պաշտպանյալի խնդրանքը և վճռաբեկ բողոք կազմել և ներկայացնել նրա անունից: Պաշտպանն իրավունք ունի հետ վերցնել իր ներկայացրած վճռաբեկ բողոքը (ՀՀ քր. դատ. օր. 73-րդ հոդ. 1-ին մաս, կետ 16): Սակայն ամեն դեպքում պաշտպանն իրավունք չունի առանց պաշտպանյալի համաձայնության հետ վերցնել նրա շահերի պաշտպանության համար ներկայացված բողոքը (ՀՀ քր. դատ. օր. 103-րդ հոդ. 9-րդ մաս և 73-րդ հոդ., մաս 4, կետ 4):

Տուժողը, տուժողի իրավահաջորդը, նրա օրինական ներկայացուցիչը և ներկայացուցիչը կարող են բողոքարկել վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող ցանկացած դատական ակտ, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները: Սակայն, եթե դատավճիռը կայացվել է մի քանի անձանց նկատմամբ, ապա տուժողը կամ նրա ներկայացուցիչը, հիմք ընդունելով ՀՀ քր. դատ. օր. 404-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ աձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ, իրավունք ունեն դատավճիռը բողոքարկել միայն այն մեղադրյալի մասով, որի գործողություններով տուժողին անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս:

ՀՀ քր. դատ. օր. 404-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել Վճռաբեկ

դատարան, եթե նա նույն հիմքով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Նման դրույթի սահմանումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նոր սահմանադրախրավական կարգավիճակով, ներհամակարգային ֆունկցիոնալ տարանջատման սկզբունքի վրա հիմնված դատական համակարգում Վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական ատյանի ուրույն դերով և նշանակությամբ, իր կարգավիճակից բխող լիազորությունների առանձնահատկությամբ: Մասնավորապես՝ անձը կարող է վճռաբեկ բողոք ներկայացնել միայն այն պարագայում, եթե նույն հիմքերով վերաքննիչ բողոք է ներկայացրել:

Սակայն նշված նորմի կատեգորիկ և որևէ բացառություն չնախատեսող ձևակերպումը, տառացի մեկնաբանման պարագայում, կարող է հանգեցնել դատավարության մասնակիցների՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի անհիմն սահմանափակման: Մասնավորապես՝ այն պարագայում, եթե առաջին ատյանի դատարանը դատական ակտ է կայացնում հօգուտ ամբաստանյալի և վերջինս վերաքննիչ բողոք չի ներկայացնում, քանի որ բացակայում է դրա անհրաժեշտությունը, ապա վերջինս զրկվում է հետագայում վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքից, եթե մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն ի վեհական ամբաստանյալի փոփոխում է առաջին ատյանի դատարանի կայացված դատական ակտը:

Հետևաբար, ՀՀ քր. դատ. օր. 404-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է մեկնաբանել սահմանափակ, այսինքն՝ դրա գործողությունը տարածել միայն այն դեպքերի վրա, եթե ողջամտորեն կարելի էր ակնկալել, որ կողմը շահագրգուված է եղել տվյալ ենթադրյալ դատական սխալը վերացնելու հարցում:

ՀՀ քր. դատ. օր. 406-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքարկման **հիմք** է դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա.

Վճռաբեկ դատարանը դատավարության մասնակիցների նյութական կամ դատավարական իրավունքի խախտման հարցի լուծման ընթացքում դեկավարվում է Քր. դատ. օր. 397-րդ և 398-րդ հոդվածների կանոններով:

Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էռթյան լուծող դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտի հրապարակման պահից մեկամսյա **ժամկետում**, իսկ գործն ըստ էռթյան չլուծող դատական ակտերի դեմ՝ այդ ակտը ստանալու պահից 15-օրյա ժամկետում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետը հաշվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի կանոններով։ Մասնավորապես՝ ժամկետները հաշվելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը։ Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին։ Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը չունի համապատասխան թիվ, ժամկետը վերջանում է այդ ամսվա վերջին օրը։

Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը։ Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, իսկ կալանքի տակ գտնվող կամ բժշկական հաստատությունում տեղափոխված անձանց համար, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանքի տակ պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնված է մինչև բողոքարկման ժամկետը լրանալը։ Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին հանձնելու ժամանակը որոշվում է փոստային դրոշմով, իսկ կալանքի տակ պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնելու ժամանակը՝ այդ հաստատությունների գրասենյակների կամ պաշտոնատար անձանց կատարած նշումով (Քր. դատ. օր. 173-րդ հոդ., մաս 4):

Վճռաբեկ բողոքարկման **առարկան** կազմում են ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը։

Վճռաբեկ բողոքարկման **կարգը** հետևյալն է. բողոքը բերվում է Վճռաբեկ դատարան, իսկ պատճենը՝ բողոքարկվող դատավճիռը կամ որոշումը կայացրած դատարան և դատավարության կողմերին։ Դատական ակտ կայացրած դատարանը, ստանալով վճռաբեկ բողոքը, գործն անհապաղ ուղարկում է Վճռաբեկ դատարան։

ՀՀ քր. դատ. օր-ը որոշակի ձևական և բովանդակային պահանջներ է ներկայացնում վճռաբեկ բողոքին (ՀՀ քր. դատ. օր. 407-րդ և 414.2-րդ հոդվածներ): Նշված պահանջների չպահպանումը բողոք բերող անձի համար կարող է առաջացնել որոշակի անբարենպաստ հետևանքներ։ Մասնավորապես, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում օրենքով դրան ներկայացվող պահանջներին, Վճռաբեկ դատարանը կարող է՝

- 1) Վճռաբեկ բողոքը բողնել առանց քննության,

2) Վերադարձնել վճռաբեկ բողոքը՝ սահմանելով ժամկետ թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար,

3) Վերադարձնել վճռաբեկ բողոքը՝ առանց ժամկետի սահմանման:

Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե խախտվել են բողոքին ներկայացվող ձևական պահանջները՝ վճռաբեկ բողոքը բերել է այն անձը, ով չուներ այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է, կամ բողոքարկվել է բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ կամ արագացված դատական քննության գործով բերվել է գործի փաստական հանգամանքներին վերաբերող բողոք: Բողոքը թողնվում է առանց քննության նաև այն դեպքում, եթե Վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել:

Վճռաբեկ բողոքը վերադարձվում է՝ թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար՝ ժամկետ սահմանելով այն դեպքում, եթե վճռաբեկ բողոքը ձևի և բովանդակության առումով չի համապատասխանում ՀՀ քր. դատ. օր-ով վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջներին, սակայն Վճռաբեկ դատարանը հնարավոր է համարում առկա թերությունների վերացումը և բողոքի կրկին ներկայացումը դատարան:

Վճռաբեկ բողոքարկման փուլում Վճռաբեկ դատարանին վերապահված այս լիազորությունը հայեցողական է, քանի որ օրենքում ամրագրված չեն այն չափանիշները, որոնցով դատարանը պետք է առաջնորդվի բողոքը ժամկետի սահմանմանը կամ առանց ժամկետի սահմանման վերադարձնելու հարցը լուծելիս:

Առանց ժամկետի սահմանման վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն բովանդակային առումով չի համապատասխանում վճռաբեկ բողոքին ՀՀ քր. դատ. օր-ով ներկայացվող պահանջներին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը վերադարձնում է բողոքը, եթե այն չի համապատասխանում ՀՀ քր. դատ. օր. 407-րդ հոդվածում (բողոքին ներկայացվող ձևական պահանջներ) և 414.2-րդ հոդվածում (բողոքին ներկայացվող բովանդակային պահանջներ) սահմանված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմաններին:

Այսպիսով, Վճռաբեկ բողոքը բերելու իրավունք ունեցող անձանց առջև դրված են հետևյալ պարտականությունները.

- բողոքում նշել իրավաբանական նշանակություն ունեցող պարտադիր տեղեկություններ և կցել փաստաթղթեր,

- ներկայացնել հիմնավորումներ.

ա) օրենքի միատեսակ կիրառման համար գործով կայացվող դատական ակտի էական նշանակության մասին,

բ) Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտին վերանայվող դատական ակտի հակասող լինելու մասին, կամ

գ) դատական սխալի արդյունքում ծանր հետևանքների առաջացման հնարավորության մասին:

ՀՀ քր. դատ. օրով սահմանված վերոնշյալ նորմատիվ պայմանները նպատակ ունեն ոչ թե անձանց ծանրաբեռնել ձևական պահանջներով, այլ պայմանավորված են Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառությով:

Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վերադարձնելը բացառում է նույն անձի կողմից և նույն հիմքերով բողոքի կրկին ներկայացումը Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանվածության պահանջին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանը, կարևորելով բողոքը վերադարձնելու պատճառաբանվածության անհրաժեշտությունը, նշել է.

«Վճռաբեկ վարույթում բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ոչ միայն Վճռաբեկ բողոքի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելը, այլև բողոքը վերադարձնելու պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը: Դրա բացակայության հետևանք է, որ գործով ուսումնասիրված՝ Վճռաբեկ դատարանի թե՝ Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու եւ թե՝ վերադարձնելու մասին որոշումներում ըստ էության չեն տրվում պատճառաբանություններ»¹:

Իր մեկ այլ որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է.

«Սահմանադրական դատարանն ընդունում է, որ Վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք: Սակայն օրենքը պետք է հաշվի առնի, որ, ելելով Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառությոց, նա իր լիազորություններն առավել ամբողջական կկատարի, եթե Վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման օրենսդրական պահանջ ներկայացվի: Նման մոտեցումը ոչ միայն լուրջ ներդրում կլինի դատական տվյալ ատյանի կողմից առավել ամբողջական նախադեպի ձևավորման հարցում, այլ նաև էապես

¹Տե՛ս 2007թ. ապրիլի 9-ի ՍՊԸ-690 որոշում:

կնվազեցնի չիմնավորված բողոքների քանակը և կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը»¹:

ՀՅ բարձրագույն դատական ատյանի առջև դրված խնդիրները պայմանավորեցին Վճռաբեկ դատարանի գործունեության ձևերի վերափոխում և համապատասխանեցում: Նախքան 2006թ. հուլիսի 7-ի օրենքով ՀՅ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները գործում էր վճռաբեկ բողոքարկման ազատության սկզբունքը և օրենքով նախատեսված ձևական պահանջներին բավարարող բողոքն անվերապահորեն ընդունվում էր վարույթ և դաշնում Վճռաբեկ դատարանի քննարկման առարկա: Նշված օրենքով ներդրվեց դատական ակտերի բողոքարկման թույլատվական (դիսկրեցիոն) կարգ, որի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար այն պետք է համապատասխանի որոշակի բովանդակային չափանիշների: Բարձրագույն դատական ատյանը պետք է քննի այնպիսի գործերի վերաբերյալ բողոքներ, որոնք բխում են տվյալ դատական ատյանի դերից, այսինքն՝ կարող են նպաստել օրենքի միատեսակ կիրառմանը կամ իրավունքի զարգացմանը, առնչվում են քաղաքացիների և իրավակիրառողների համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերին: Այդ է պատճառը, որ բողոքը վարույթ ընդունելու պայմաններն առնչվում են իրավունքի, դրա մեկնաբանման ու կիրառման, այլ ոչ թե փաստերի ձեռք բերման, նախնական հետազոտման և գնահատման հետ: Հետևաբար իր սահմանադրական առաքելությունն արդյունավետ իրականացնելու համար Վճռաբեկ դատարանը պետք է օժտված լինի բողոքները վարույթ ընդունելու հարցում հայեցողություն դրսնորելու իրավունքով:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանների նախատեսումը համապատասխանում է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ յուրաքանչյուրի՝ իր իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի իրապարակային քննության իրավունքներին: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն այս հարցի կապակցության բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը և ուղղակիորեն նշել, որ արդարադատության նատչելիության իրավունքը բացարձակ չէ և հատկապես բողոքի ընդունելիության պայմանների տեսանկյունից կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների: Ամեն

¹Տե՛ս 2007թ. ապրիլի 11-ի ՍԴՈ-691 որոշում:

դեպքում պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, քանի որ կոնվենցիան չի պարունակում նշված հասկացության մեջ սահմանումը, ուստի արդարադատության մատչելիության սահմանափակումը թույլատրելի է այնքանով, որքանով չի հակասում դրա հիմնական բովանդակությանը¹:

Նշված սահմանափակումները, սակայն, չպետք է վճասեն արդարադատության մատչելիության իրավունքի էությանը, պետք է հետապնդեն օրինական նպատակ և բանական հավասարակշռություն սահմանեն կիրառված միջոցների և դրանց կիրառման նպատակների միջն²:

ՀՀ քր. դատ. օր. 414.2 հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը **բողոքը ընդունում է վարույթ, եթե**

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին, կամ

3) վերաբննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ:

Այսպիսով, օրենսդրություն հստակեցված են իրավական այն պայմանները, որոնց առկայության դեպքում է միայն իրավասու սուբյեկտի վճռաբեկ բողոքը ճանաչվում իրավաչափ, և այն սահմանված կարգով ներկայացվելու ձևով դրսնորված կամարտահայտման արդյունքում է միայն ՀՀ վճռաբեկ դատարանն իրավասու գործադրել սահմանադրափական կարգավիճակից բխող օրենսդրական իր լիազորությունները:

Բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է եական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու այս հիմքը չափազանց անորոշ ձևակերպումներով է սահմանված, այն նաև որոշակիացված չէ ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքում: Առավել լայն ընկալմամբ օրենքի միատեսակ կիրառության խնդիր առկա առերևույթ դատական սխալի

¹ Տե՛ս **Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության** 1975թ. փետրվարի 21-ի, **Ֆայեղմ ընդդեմ Միացյալ Թագավորության** 1994թ. օգոստոսի 25-ի, **Աշխնգդանն ընդդեմ Միացյալ Թագավորության** 1985թ. մայիսի 28-ի և **Գարսիա Սանիբրարդոն ընդդեմ Իսպանիայի** 2000թ. փետրվարի 15-ի գործերով որոշումները:

² Տե՛ս **Տոլսոն Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության** 1995թ. հունիսի 23-ի, **Բելլետն ընդդեմ Ֆրանսիայի** 1995թ. նոյեմբերի 20-ի, **Ֆիլիսն ընդդեմ Շունաստանի** 1991թ. օգոստոսի 27-ի գործերով որոշումները:

յուրաքանչյուր դեպքում. այսպիսի ընկալման պարագայում օրենքի ոչ ճիշտ կիրառումը ներառվում է օրենքի ոչ միատեսակ կիրառման հասկացության մեջ, ուստի ՀՀ քր. դատ. օր. 414.2 հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերը ևս ներառվում են օրենքի միատեսակ կիրառման հասկացության մեջ:

Ամեն դեպքում, պետք է նկատի ունենալ, որ Վճռաբեկ դատարանն այս հարցում բնականորեն պետք է օժտված լինի հայեցողության լայն իրավունքով: Գործնականում այս խնդիրը լուծվում է նախադեպային իրավական համակարգերին հայտնի «գործից գործ տարբերակման» հիմունքով (case-by-case basis):

Վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին: Բողոքը վարույթ ընդունելու նշված հիմքը ևս ուղղակիորեն պայմանավորված է օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու՝ Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթի իրականացման անհրաժեշտությամբ և հնարավորություն տալիս Վճռաբեկ դատարանին հետևողական լինել ստորադաս դատարանների կողմից իր կայացրած որոշումների կատարմանը՝ դրանով իսկ ապահովելով իրավական կանխատեսելիության և անձի իրավունքների պաշտպանության սկզբունքները:

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ: Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ է ընդունում, եթե բողոքի առերևույթ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք առաջացրել են կամ կարող են առաջացնել ծանր հետևանքներ: Յուրաքանչյուր դեպքում Վճռաբեկ դատարանն իր հայեցողական լիազորության շրջանակներում ինքն է որոշում այնպիսի գնահատողական հասկացության առկայությունը, ինչպիսին «ծանր հետևանքն է»:

Վճռաբեկ դատարանին ներկայացված վճռաբեկ բողոքի՝ քր. դատ. օր-ով բողոքին ներկայացվող ձևական պահանջներին և վարույթ ընդունելու հիմքերին դրա համապատասխանության հարցը պարզելու և դատարանի վարույթ ընդունելու կամ վերադարձնելու հարցը լուծվում է կոլեգիալ՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով: Պալատի այդ որոշումները համարվում են ընդունված, եթե դրանց կողմ է քվեարկել նիստին ներկա դատավորների մեջամասնությունը:

3. Վճռաբեկության կարգով բողոքի քննությունը և լուծումը

Վճռաբեկության կարգով բողոքի քննության ենթափուլը սկսվում է Վճռաբեկ դատարանի նիստը բացելու պահից: Վճռաբեկության կարգով բողոքի քննությունն իրականացվում է դատարանի կոլեգիալ կազմով՝ նիստը նախագահողի (Վճռաբեկ դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ) և առնվազն երեք դատավորի մասնակցությամբ:

Վճռաբեկության կարգով գործի քննության **սահմաններն** ավելի նեղ են, քան վերաքննիչ վարույթում: Այսպես, ՀՀ քր. դատ. օր. 415-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Եթե գործով դատապարտված են մի քանի անձ, իսկ բողոքը բերված է դատապարտյալներից մեկի կամ մի քանիսի նկատմամբ, դատարանը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում պարտավոր է գործն ստուգել միայն տվյալ դատապարտյալների¹ վերաբերյալ»:

Այսպիսով, բողոքի հիմքի, առարկայի, փաստարկման հետ մեկտեղ՝ Վճռաբեկ դատարանը կաշկանդված է նաև բողոքի հեղինակով: Օրինակ՝ եթե երկու անձ դատապարտվել է հանցակցությամբ գորություն կատարելու համար, և նրանցից մեկը վճռաբեկ բողոք է բերել՝ հիմնավորելով, որ գորության փաստն ապացուցված չէ, իսկ մյուսը բողոք չի բերել, ապա Վճռաբեկ դատարանը, համաձայննելով բողոքաբերի փաստարկներին, չի կարող վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանել նաև բողոքը չբերած անձի մասով: Վճռաբեկության սահմանների նման նեղ ընկալումը, կարծում ենք, չի բխում արդարադատության բուն էությունից:

Ինչպես վերաքննիչ դատարանը, այնպես էլ Վճռաբեկ դատարանը կաշկանդված չէ բողոքի պահանջով: Ի թիվս այլ հարցերի, բողոքի պահանջի խնդրին է վերաբերում Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը *Ա.Սերոբյանի* գործով (2007թ. մարտի 30): Քննարկվող խնդրին վերաբերում է որոշման 4.1 կետը.

«Վճռաբեկ բողոքում բողոքատուն ներկայացրել է հարաբերականորեն ինքնուրույն երեք պահանջ.

ա) բեկանել առաջին ատյանի դատարանի դատավճիռը,

բ) բեկանել Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճիռը և

գ) գործն ուղարկել Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննության:

¹ Ըստ էության, այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե դատապարտյալին, այլ ամբաստանյալին:

Թեև օրենսդիրը նախատեսում է առաջին ատյանի դատարանի դատավճիռը վճռաբեկության կարգով բողոքարկելու և վճռաբեկ վարույթի արդյունքում գործն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու հնարավորություն, այնուհանդերձ, Հայաստանի Հանրապետության քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան գործը նոր քննության ուղարկելու բողոքատուի պահանջի հետ զուգորդված՝ առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու պահանջը չի կարող բավարարվել:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի՝ «Գործի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

(1) առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումը թողնում է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման.

(2) բեկանում է առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը և կայացնում է արդարացման դատավճիռ կամ կարծում է գործով վարույթը և դադարեցնում՝ քրեական հետապնդումը.

(3) բեկանում է առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը և կայացնում է մեղադրական դատավճիռ.

(4) փոփոխում է առաջին ատյանի դատարանի դատավճիռը կամ որոշումը.

(5) բեկանում է դատավճիռը կամ որոշումը և, սույն օրենսգրքի 311-րդ հոդվածի հիմքերով, գործն ուղարկում է լրացուցիչ նախաքննության¹:

Եթե բողոքը բավարարելով Վճռաբեկ դատարանը բեկանի առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավճիռները և գործն ուղարկի վերաքննիչ դատարան՝ նոր քննության, ապա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426-րդ հոդվածի հիման վրա գործն ընդհանուր հիմունքներով ըստ էության քննող վերաքննիչ դատարանը չի կարող կայացնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով նախատեսված և վերը թվարկված որոշումներից որևէ մեկը, քանի որ օրենքով նախատեսված չէ արդեն իսկ բեկանված դատավճիռը վերաքննիչ դատարանի կողմից կրկին բեկանելու, փոփոխելու կամ անփոփոխ թողնելու հնարավորություն:

Հետևաբար առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու մասին բողոք բերած անձի խնդրանքը չի բխում օրենքի պահանջներից և չի կարող բավարարվել»:

¹ Սույն որոշումը կայացնելուց հետո ՀՀ քր. դատ. օր. 394-րդ հոդվածի տեքստը փոխվել է:

Հակառակ որոշակի տարածում ունեցող մոտեցման՝ ներկայացված նախադեպային որոշումը ոչ թե սահմանում է, որ դատարանը կաշկանդված է վճռաբեկ բողոքի պահանջով, այլ իհմնավորում է տվյալ բողոքի պահանջի կատարման տեսական անհնարինությունը:

Ի տարբերություն վերաքննության՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշմամբ դատական նիստի օրը չի նշվում: Դատական նիստը նշանակվում է հետագայում՝ «ողջամիտ ժամկետում» (ՀՀ քր. դատ. օր. 417-րդ հոդված): Օրենքը պարտադիր է համարում Վճռաբեկ դատարանի նիստի մասին միայն բողոքաբերին ծանուցելը, իսկ վարույթի մյուս մասնակիցները ծանուցվում են միայն այն դեպքում, եթե դատարանն անհրաժեշտ է համարում, որպեսզի նրանք բացատրություն տան: Այնուհանդերձ, գործնականում վարույթի բոլոր մասնակիցները ծանուցվում են՝ անկախ բացատրություն տալու անհրաժեշտությունից:

Դատավարության որևէ մասնակցի ներկայությունը Վճռաբեկ դատարանի նիստին պարտադիր չէ:

Վճռաբեկության կարգով բողոքի քննության կարգը սահմանված է ՀՀ քր. դատ. օր. 418-րդ հոդվածում: Դատական նիստը սկսվում է գեկուցող նշանակված դատավորի գեկուցումով¹: Դրանում շարադրվում են գործի հանգամանքները, բողոքարկվող դատական ակտի բովանդակությունը և բողոքաբերի փաստարկները: Գործնականում գեկուցող դատավորը շարադրում է նաև գործի դատավարական պատմությունը: Վճռաբեկ վարույթի թերություններից է այն, որ գեկուցողը պարտավոր չէ շարադրել Վճռաբեկ բողոքի պատասխանում շարադրված փաստարկները:

Զեկուցողին հարցեր տալու իրավունք ունեն միայն բողոքը քննող դատավորները:

Այնուհետև, եթե Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարում, ապա արտահայտվելու հնարավորություն է ընձեռում դատավարության մասնակիցներին և հարցեր է ուղղում նրանց: Հակառակ դեպքում (գործնականում շատ ավելի հաճախ է պատահում) բողոքի քննությունը հայտարարվում է ավարտված, և դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ՝ գործով որոշում կայացնելու:

Ինչպես երևում է, Վճռաբեկ դատարանում գործի քննությունն իրականացվում է ոչ թե բանավորության սկզբունքի իհման վրա՝ մրցակցային պայմաններում, այլ գրավոր ընթացակարգով: Դա կարելի է համարել Վճռաբեկ վարույթի էական թերություն: Որպես

¹ Գործնականում, նախքան գեկուցումը, նախագահողը ներկայացնում է բողոքը քննող դատական կազմը և դատական նիստին ներկայացած կողմերին բացատրում է դատական բողոքը քննող դատական կազմի յուրաքանչյուր դատավորի ինքնարացարկի միջնորդություն հայտնելու իրավունքը:

ՀՅ բարձրագույն դատական ատյան՝ Վճռաբեկ դատարանը պետք է դիտվի որպես դատական իշխանության կառուցի մանրակերտ. այդ մարմնի (նաև մյուս բարձրագույն դատական ատյանի՝ ՀՅ սահմանադրական դատարանի) գործունեության գնահատման արդյունքում է հասարակությունն արժևորում ողջ դատական համակարգը և նույնիսկ ինքնին դատական իշխանության գաղափարը: Ուստի ՀՅ վճռաբեկ դատարանը պետք է գործի դատական իշխանության բուն եռթյանը բնութագրական հիմնարար սկզբունքի՝ մրցակցության առավելագույն ապահովման պայմաններում: Կարծում ենք՝ մեր պետությունը պետք է ձգտի ձևավորել այնպիսի իրավական ավանդույթներ, որ Վճռաբեկ դատարանուն հանդես գան մեր Երկրի լավագույն փաստաբաններն ու դատախազները, իսկ հասարակությանը հասկանալի լինի, թե ինչու է բարձրագույն դատական ատյանը մի կողմի փաստարկներն ընդունում, իսկ մյուսինը՝ մերժում:

Վճռաբեկության կարգով դատական ակտի **բեկանման և փոփոխման հիմքերն** են քրեադատավարական օրենքի էական խախտումը, քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի սխալ կիրառումը, որը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա: ՀՅ քր. դատ. օր. 406-րդ հոդվածի հիման վրա վճռաբեկության հիմքերի նկատմամբ տարածվում են վերաքննության համապատասխան հիմքերի վերաբերյալ կանոնները:

Վճռաբեկ դատարանի կողմից **որոշում կայացմելու կարգը** սահմանված է ՀՅ քր. դատ. օր. 423-րդ հոդվածում: Այդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է նիստին ներկա դատավորների մեջամասնությունը: Զայների հավասարության դեպքում ընդունված է համարվում այն որոշումը, որն առավել բարենպաստ է ամբաստանյալի համար: Յրապարակվում է որոշման միայն եզրափակիչ նաև, իսկ որոշումն ամբողջությամբ՝ ստորագրված տվյալ դատական կազմի բոլոր դատավորների կողմից, «ողջամիտ ժամկետում» ուղարկվում է դատավարության մասնակիցներին:

Վճռաբեկ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Վճռաբեկության արդյունքում կայացվող **որոշումների շրջանակը (Վճռաբեկ դատարանի լիազորությունները)** սահմանված է ՀՅ քր. դատ. օր. 419-րդ հոդվածում: Մասնավորապես՝ գործն ըստ եռթյան լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանը՝

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ¹:

¹ «Թողնում է օրինական ուժի մեջ» ձևակերպումը ներկայում անընդունելի է, քանի որ վճռաբեկության կարգով վերանայվում են օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը: Յետևաբար օրինական ուժի

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ.

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և այդ մասով հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը.

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է համապատասխան ստորադաս դատարանի ակտը, եթե համապատասխան ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը եւ կարծում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը.

6) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Այսպիսով՝ վճռաբեկ վարույթի արդյունքում կայացվող որոշումների շրջանակը մեծ մասով համընկնում է վերաքննիչ վարույթի արդյունքում կայացվող որոշումների շրջանակին: Միևնույն ժամանակ որոշման վերջին (վեցերորդ) տեսակը՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտի «վերակենդանացումը», բնորոշ է միայն վճռաբեկությանը: Ավելին, այն նորույթ է ՀՀ իրավական համակարգում, ուստի ենթակա է տեսական իմաստավորման ու գնահատման:

Ընդհանրապես դատական ակտի «բեկանում» նշանակում է դրա վերացում և առոչինչություն: Այս առումով դատավարական իրավունքի տեսությանը չի համապատասխանում այն նոտեցումը, որ առաջին ատյանի դատարանի բեկանված դատավճիռը կարող է «վերակենդանացվել»: Սակայն խնդիրն արդարադատության արդյունավետության տեսանկյունից դիտարկելով՝ օրենսդրի նոտեցումը կարելի է արդարացված համարել: Նախ՝ քննարկվող ինստիտուտը կնպաստի դատական ակտերի

մեջ չի կարող թողնվել այն, ինչը դեռ օրինական ուժի մեջ չի մտել: Ենչտ է «թողնել անփոփոխ» ձևակերպումը:

շրջապտույտի կանխմանը՝ ապահովելով դատավարական խնայողության և դատավարության ողջամիտ տևողության սկզբունքների իրացումը: Բացի այդ, առաջին ատյանի դատարանի օրինական և հիմնավորված դատավճռի «վերակենդանացումը» խրախուսական նշանակություն կունենա այն կայացրած դատարանի համար, քանի որ իրավական ուժ կտա նյութական օրենքի ճիշտ կիրառմամբ և դատավարական օրենքի անշեղ պահպանմամբ կայացված և գործն ըստ էության ճիշտ լուծող որոշմանը:

Վճռաբեկ դատարանը, բեկանելով բողոքարկված դատական ակտը, իրավասու է գործը նոր քննության ուղարկել թե՛ վերաքննիչ դատարան և թե՛ առաջին ատյանի դատարան: Օրենքը չի սահմանում, թե ո՞ր դեպքում է Վճռաբեկ դատարանը գործն ուղարկում վերաքննիչ և ո՞ր դեպքում առաջին ատյանի դատարան: Գործնականում այս հարցի լուծնան հիմք է ընդունվում հետևյալ ուղենիշը. Եթե խախտումն իր բնույթով այնպիսին է, որ վերաքննիչ դատարանն իր իրավական միջոցներով կարող է լուծում տալ դրան, ապա գործն ուղարկվում է դատական երկրորդ օղակ, հակառակ դեպքում՝ առաջին ատյանի դատարան: Այս մոտեցումը բխում է արդարադատության արդյունավետության սկզբունքից. Եթե վերաքննիչ դատարանը, քննության առնելով գործը, իր հերթին ստիպված է լինելու առաջին ատյանի դատական ակտը բեկանելով՝ գործն ուղարկել առաջին օղակ, ապա ավելի նպատակահարմար է գործը նոր քննության ուղարկել առաջին ատյանի դատարան անմիջականորեն Վճռաբեկ դատարանից: Այսպիսով, եթե դատական ակտը բողոքարկելիս գործում է «միայն մեկ ատյան բարձր» հիմնադրույթը, ապա գործը նոր քննության ուղարկելիս «միայն մեկ ատյան ցածր» հիմնադրույթը չի գործում:

Օրենսգիրքը սահմանում է, որ բողոքարկվող դատական ակտն անփոփոխ թողնելու կամ առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու դեպքերում Վճռաբեկ դատարանը կարող է լրացուցիչ պատճառաբանել առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ: Նման մոտեցումը որոշակի հարցեր է առաջացնում: Այսպես, դատական ակտի կառուցվածքում դրա պատճառաբանական մասը հատուկ կարևորություն ունի. այն ապահովում է դատարանի հետևողությունների տրամաբանական կապը գործով հաստատված հանգամանքների հետ: Այն դեպքում, եթք հիմքի և հետևողական միջև միջանկյալ օղակը բացակայում է, ապա դատարանի հետևողությունները դառնում են կամայական և առկախ: Այս առումով անհասկանալի է, թե սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված ակտն ինչպե՞ս կարող է գործն ըստ էության ճիշտ լուծել: Սխալ պատճառաբանությունը տրամաբանորեն հանգեցնում է

սխալ հետևությունների: Կարծում ենք՝ այդպիսի ակտը պետք է արժանանա համապատասխան իրավական գնահատականի և բեկանվի: Դատավճռի չպատճառաբանվածությունը պետք է անվերապահորեն համարվի և գործող ՀՀ քր. դատ. օր. 398-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով համարվում է քրեադատավարական օրենքի էական խախտում: Այսպիսով, ընդունելի է միայն թերի պատճառաբանված դատական ակտերի պատճառաբանումը:

ՀՀ քր. դատ. օր. 420-րդ հոդվածը սահմանում է արդարացման դատավճռիը Վճռաբեկ դատարանում բեկանելու հատուկ պայմաններ: Մասնավորապես՝ արդարացման դատավճռի բեկանման համար կարող է հիմք հանդիսանալ միայն դատախազի, տուժողի կամ նրա ներկայացուցչի բողոքը, կամ արդարացվածի բողոքը, եթե նա համաձայն չէ իր արդարացման հիմքի հետ: Ընդ որում, արդարացման դատավճռի, գործը կարճելու մասին, ինչպես նաև մեղադրյալի օգտին կայացված ցանկացած այլ որոշում չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման հիմքով, եթե արդարացվածի աննեղությունը կասկած չի հարուցում:

Բացառիկ վերանայումը

1. Ընդհանուր պարզաբանում

Դատական վերանայման համակարգում բնականոն և բացառիկ ձևերի առանձնացման անհրաժեշտությունը բխում է կրկին դատվելու անթույլատրելիության կամ *non bis in idem* (*non bis idem*) սահմանադրական հիմնադրույթի հետ: ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար: Այս հիմնարար պահանջն ավելի մանրանասն է ձևակերպված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում.

«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագորության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը (*penal procedure*)

համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ (*fundamental defect*), որոնք կարող են ազդել դրա արդյունքի վրա:

...»

Non bis in idem-ի քրեադատավարական իմաստը խարսխված է քրեական հետապնդման սպառնալիքի վերջավորության գաղափարի վրա: Այս իմաստով *non bis in idem*-ը երաշխավորում է, որ եթե անձի նկատմամբ քրեական հետապնդումը կամ դատական վարույթը վերջնականացես ավարտված է, ապա նույն արարքի համար անձի նկատմամբ վարույթը չի կարող վերսկսվել: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վատթարացում: Քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման:

Ինչպես երևում է կոնվենցիայի՝ վերը մեջբերված տեքստից՝ այս սկզբունքը ենթադրում է իրավաչափ սահմանափակման հնարավորություն: Ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարում է, որ վարույթի վերսկսումը կարող է տեղի ունենալ միայն «բացառիկ» հիմքերով՝ գտնելով, որ այդպիսի հիմքերի կիրառմամբ վարույթի վերսկսումը չի նշանակում նույն արարքի կապակցությամբ երկրորդ վարույթի իրականացում (Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի (*Nikitin v. Russia*) գործով 2004թ. հուլիսի 20-ի վճռի 45-րդ կետ, գանգատ թիվ 50178/99):

Հիմք ընդունելով մեջբերված եվրոպական չափանիշները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (21-րդ հոդված, բաժին 12.1) սահմանված են *non bis in idem* սկզբունքից շեղվելու հետևյալ իրավաչափ հիմքերը. (ա) նոր հանգամանքները, (բ) նոր ի հայտ եկած հանգամանքները, (գ) այն բացառիկ դեպքերը, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշված հիմքերի «բացառիկ» բնույթը բխում է դրանց օրենսդրական ձևակերպումներից: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ նոր հանգամանքներ են ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քրեական գործով կիրառված օրենքը հակասահմանադրական ճանաչելը, կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով ՀՀ դատարանի կողմից կոնվենցիոնալ իրավունքների խախտում ճանաչելը:

Նոր երևան եկած հանգամանքներ են տվյալ գործով վարույթի ընթացքում հանցավոր արարքներ կատարելու փաստը հաստատված ճանաչելը (սուտ ցուցմունք տալը, սխալ թարգմանություն կատարելը, կեղծ փորձագիտական եզրակացություն տալը, իրեղեն ապացույցերը, փաստաթղթերը կեղծելը, դատավորի կամ վարույթն իրականացնող այլ անձի կողմից հանցավոր գործողություններ կատարելը): Ընդ որում, այդ փաստերը պետք է ճանաչվեն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով և ազդած լինեն գործի ելքի վրա: Նոր երևան եկած հանգամանքներ են նաև դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքները, որոնք ինքնին, կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ, ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է:

Ինչ վերաբերում է նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտումներին, ապա դրանց բնորոշումը քրեադատավարական օրենսդրությամբ տրված չէ: Այնուհանդերձ պարզ է, որ դրանք ենթադրում են խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը (ՀՀ քր. դատ. օր. 397-րդ հոդված) և քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քր. դատ. օր. 398-րդ հոդված):

Այսպիսով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է դատական վերանայման երեք բացառիկ եղանակ՝

- ա) բացառիկ վերանայումը վերաբնիչ և վճռաբեկ դատարանում.
- բ) նոր երևան եկած եկած հանգամանքներով վերանայումը.
- գ) նոր հանգամանքներով վերանայումը:

2. Բացառիկ վերանայումը վերաբնիչ և վճռաբեկ դատարանում

Քրեադատավարական վերանայման այս եղանակն անհրաժեշտ է միասնական համարել՝ անկախ այն հանգամանքից, որ այն կենսագործվում է երկու տարբեր

դատական օղակներում՝ վերաքննիչ դատարանում և Վճռաբեկ դատարանում, և, ըստ այդմ, ունի որոշակի տեսակային առանձնահատկություններ:

Այս վերանայման եղանակը վերաբերում է բացառապես գործն ըստ Հության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին: Ընդ որում, վերաքննիչ դատարանում բացառիկ բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանի դատական ակտերը, իսկ Վճռաբեկ դատարանում՝ վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների դատական ակտերը:

Վերաքննիչ դատարանում բացառիկ վերանայում նախաձեռնելու իրավունք ունեն (բողոքարկման սուբյեկտներն են) մեղադրողը կամ վերադաս դատախազը, տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդի՝ մեղադրանքի կողմը ներկայացնող սուբյեկտներից, ինչպես նաև արդարացվածը, դատապարտյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները՝ պաշտպանության կողմը ներկայացնող սուբյեկտներից (ՅՅ քր. դատ. օր. 376-րդ հոդվածի 1-ին մաս):

Վճռաբեկ դատարանում բացառիկ վերանայում նախաձեռնելու իրավունքը վերապահված է ՅՅ գլխավոր դատախազին և նրա տեղակալների, տուժողին, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և իրավահաջորդին՝ մեղադրանքի կողմը ներկայացնող սուբյեկտներից, իսկ պաշտպանության կողմից բողոքարկման իրավագորություն ունեցող սուբյեկտների շրջանակը համընկնում է վերաքննիչ դատարանում բացառիկ բողոքարկման կանոններին (ՅՅ քր. դատ. օր. 404-րդ հոդված):

Բացառիկ բողոքարկման ժամկետի վերաբերյալ կանոնները հետևյալներն են. Վերաքննիչ դատարանում այն նիստական է և կազմում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից վեց ամիս (ՅՅ քր. դատ. օր. 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ), մինչդեռ Վճռաբեկ դատարանում բողոքարկման ժամկետը տարբերակված է՝ անձի վիճակի բարելավման հիմքով բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, իսկ անձի վիճակի վատթարացման հիմքով՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում (ՅՅ քր. դատ. օր. 412-րդ հոդվածի 2-րդ մաս):

Կարծում ենք՝ նույն վերանայման եղանակի հանդեպ բողոքարկման ժամկետների հարցում օրենսդրի դրսնորած տարբերակված մոտեցումն արդարացված չէ, և վերաքննիչ դատարանը կարող է այս հարցում ղեկավարվել Վճռաբեկ դատարանի համար նախատեսված կանոններով և առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո անձի վիճակի բարելավման պահանջով բերված բողոքը համարել պատշաճ բողոք:

Բողոքին ներկայացվող պահանջմերը նույնանում են սովորական վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջմերին (ՀՀ քր. դատ. օր-ի համապատասխանաբար 381-րդ և 407-րդ հոդվածներ):

Թե՛ վերաքննիչ և թե՛ Վճռաբեկ դատարանում բացառիկ վերանայման պարագայում գործում է բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգ, այսինքն՝ բողոքը վարույթ ընդունելիս դատարանը պետք է գնահատի բերված հիմնավորումների որակը, և եթե այն չի համապատասխանում անհրաժեշտ չափանիշին, ապա իրավասու է մերժել բողոքը վարույթ ընդունելը: Վճռաբեկ դատարանում բողոքը վարույթ ընդունելու հիմքերը սովորական վճռաբեկության համար սահմանված ընդհանուր հիմքերն են (ՀՀ քր. դատ. օր. 414.2 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), իսկ վերաքննիչ դատարանի համար սահմանված է, որ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի բավարարության հարցը վերաքննիչ դատարանը լուծում է կոլեգիալ կազմով: Ելնելով դատական վերանայման քննարկվող եղանակի միասնականության հանգամանքից՝ վերաքննիչ դատարանը պետք է ղեկավարվի Վճռաբեկ դատարանի համար գործող կանոններով:

Այս վերանայման եղանակն առաջին հերթին առանձնանում է վերանայման *հիմքերով՝* գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ տված նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը: Այս ձևակերպումը լի է գնահատողական հասկացություններով և ենթադրում է դատական պրակտիկայի կողմից որոշակիացում:

Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր. 398-րդ հոդվածով սահմանված քրեադատավարական օրենքի էական խախտման հետ հիմնարար խախտման հարաբերակցման տարբերակ կարող է լինել հետևյալը. Եթե էական խախտման համար բավարար է, որ խախտումը հավանաբար ազդած լինի գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ապա հիմնարար խախտման պարագայում կարող է պահանջվել հիմնավորում, որ խախտումը հաստատապես ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Ինչ վերաբերում է ՀՀ քր. դատ. օր. 397-րդ հոդվածով սահմանված քրեական օրենքի սխալ կիրառման հետ հիմնարար խախտման հարաբերակցմանը, ապա, օրինակ, կարող է սահմանվել, որ հիմնարար են օրենքով չնախատեսված պատիժ նշանակելու հետ կապված սխալները:

Այս հարցը լուծելիս կարող է հաշվի առնվել նաև անձին մեղսագրված հանցագործության տեսակը և բնույթը:

Հիմնարար խախտման հիմքով վերանայումն անհրաժեշտ է տարբերել նոր երևան եկած հանգամանքներով վերանայումից: Առաջինի դեպքում գործի ճիշտ լուծման համար անհրաժեշտ բոլոր փաստական հանգամանքները պետք է լինեն դատարանի տրամադրության տակ, սակայն, դրանց հակառակ՝ դատարանը պետք է թույլ տված լինի նյութական կամ դատավարական իրավունքի՝ հիմնարար նշանակության խախտում: Մինչդեռ, նոր երևան եկած հանգամանքներով վերանայման պարագայում գործը քննած և լուծած դատարանը, որպես կանոն, պետք է զրկված լինի պատշաճ արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ և բավարար ապացուցողական հիմքից:

Այս առումով բացառություն է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով տվյալ գործի քննության կապակցությամբ դատավորների կատարած հանցավոր գործողություններ հաստատվելու հանգամանքը, որպես նոր երևան եկած հանգամանք (ՀՀ քր. դատ. օր. 426.3 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Այնուհանդերձ, այս պարագայում ևս նշված երկու բացառիկ վերանայման եղանակները միմյանցից տարբերվում են, քանի որ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանում բացառիկ վարույթի համար էականը թույլ տված խախտման փաստն է՝ անկախ դատավորի այն հանցագործությամբ պայմանավորված լինելու հանգամանքից:

Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում բացառիկ վերանայման կարգով գործի քննության կարգը, ժամկետները, դատարանի կազմը, դատարանի կողմից ընդունվող որոշումների շրջանակը կարգավորվում է, համապատասխանաբար, վերաքննության և Վճռաբեկության համար սահմանված կանոններով:

3. Նոր երևան եկած հանգամանքներով վերանայում

Նոր երևան եկած հանգամանքներով դատական վերանայումը պայմանավորված է տվյալ գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի ի հայտ գալով:

Վերանայման այս ձևի գործադրման համար **հիմքերը** սահմանված են ՀՀ քր. դատ. օր. 426.3 հոդվածով: Դրանք են.

Առաջին վկայի, տուժողի ցուցմունքների, թարգմանչի կատարած թարգմանության ակնհայտ սխալ կամ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելը, ինչպես նաև իրեղեն ապացույցների, քննչական ու դատական գործողությունների արձանագրությունների և այլ փաստաթղթերի կեղծված լինելը, որոնք հանգեցրել են չիմնավորված կամ անօրինական դատավճիռ կայացնելուն: Այս հիմքը վերաբերում է

գործով ապացուցողական զանգվածի խոտանին, որն իր բնույթով այնպիսին է, որ անմիջականորեն ազդել է դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վրա:

Երկրորդ՝ դատավորների հանցավոր գործողությունները, որոնք նրանք թույլ են տվել տվյալ գործը քննելիս: Այս հիմքը վերաբերում է դատարանի անկախության և անկողմնակալության պահանջի խախտմանը: Ի տարբերություն նախորդի՝ այստեղ չի պահանջվում հիմնավորում, որ դատավորի հանցավոր գործողություններն ազդած լինեն դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վրա: Բավարար է միայն այն փաստի հաստատումը, որ այդ գործողությունները կատարվել են տվյալ գործի քննության կապակցությամբ: Դոդվածում օգտագործվող հանցավոր գործողությունները կարող են ներառել.

- ա) դատավորի կողմից կաշառք ստանալը (ՀՀ քր. օր. 311-րդ հոդվածի 3-րդ մաս).
- բ) դատավորի կողմից ցուցմունք տալուն հարկադրելը (ՀՀ քր. օր. 341-րդ հոդված).
- գ) ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը (ՀՀ քր. օր. 352-րդ հոդված):

Երրորդ՝ գործի քննությունը կատարող անձանց այնպիսի հանցավոր գործողությունները, որոնք հանգեցրել են դատարանի չհիմնավորված և անօրինական դատավճիռ կամ գործը կարճելու վերաբերյալ որոշում կայացնելուն: Գործի քննություն կատարող անձինք կարող են լինել տվյալ գործը քննած քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը, հետաքննության մարմնի պետը, նրանց նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազը, նրա վերադաս դատախազը, քննիչի նկատմամբ գերատեսչական վերահսկողություն իրականացրած քննչական բաժնի պետը: Այս հիմքը ևս պահանջում է հանցավոր գործողությունների և դատական ակտի միջև պատճառական կապի հաստատում:

Չորրորդ՝ ի հայտ են եկել դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այլ հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչ այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ինչպես նաև ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ գործով վարույթը կարճվել է: Այս հիմքը վերաբերում է բացառապես արարքի հանցավորությանը և ոչ պատժելիությանը: Այսինքն, եթե ի հայտ գա հանգամանք, որն ինքնին կամ այլ

հանգամանքների հետ համակցության մեջ կիմնավորի, որ դատապարտյալի նկատմամբ նշանակվել է նվազ ծանր կամ ավելի ծանր պատիժ, ապա այն նոր երևան եկած հանգամանք չի համարվի:

Չորրորդ հիմքն իր բնույթով գնահատողական է, մինչդեռ թվարկված առաջինից երրորդ հանգամանքները պահանջում են ֆորմալ ապացուցում. այսինքն՝ դրանք պետք է հաստատված լինեն բացառապես օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով: Այնուհանդերձ, ՀՀ քր. դատ. օր. 426.3 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե օբյեկտիվ պատճառներով (վաղեմության ժամկետները լրանալը, համաներման ակտ ընդունվելը, առանձին անձանց ներում շնորհելը, մեղադրյալի մահը) նշված հանգամանքների վերաբերյալ դատական ակտ կայացնելն անհնարին է, ապա այդ հանգամանքները պարզվում են ՀՀ քր. դատ. օր. նախատեսված կարգով կատարվող քննությամբ:

Նոր երևան եկած հանգամանքներով բողոք բերելու **ժամկետը** պետք է երկակի իմաստով հասկանալ.

ա) դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու հարաբերությամբ և

բ) համապատասխան հանգամանքն ի հայտ գալու հարաբերությամբ:

Առաջին դեպքում օրենքը սահմանում է տարբերակված կանոնները.

Արդարացման դատավճռի և գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումների վերանայումը թույլատրվում է միայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքում: Դրան հակառակ՝ ժամկետներով սահմանափակված չէ մեղադրական դատավճռի վերանայումը՝ այնպիսի հանգամանքներ ի հայտ գալու հետևանքով, որոնք ցույց են տալիս դատապարտյալի անմեղությունը կամ նրա կողմից ավելի բերև հանցանք կատարելը: Ընդ որում, դատապարտյալի մահը արգելք չէ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելուն՝ դատապարտյալի կամ այլ անձանց իրավունքների վերականգնման նպատակով (ՀՀ քր. դատ. օր. 426.3 հոդվածի 4-6-րդ մասեր):

Համապատասխան հանգամանքն ի հայտ գալու հարաբերությամբ վերանայման այս եղանակով բողոք բերելու ժամկետի վերաբերյալ կանոնը հետևյալն է. բողոք կարող է բերվել 4 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին (ՀՀ քր. դատ. օր. 426.3 հոդվածի 2-րդ մաս):

Նոր երևան եկած հանգամանքներով դատական վերանայման **առարկան** են կազմում միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը: Ընդ որում, ՀՀ քր. դատ.

օր. 426.3 հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ այս վերանայման եղանակը կիրառելի է նաև «այն քրեական գործերով, որոնցով դատավճիր չի կայացվել», այսինքն՝ կայացվել է քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատական ակտ:

Նոր Երևան Եկած հանգամանքներով դատական բողոքարկման **ընթացակարգը** կազմված է Երկու առանձին վարույթներից, որոնցից մեկը պարտադիր է (դատական բողոքարկում), իսկ մյուսը՝ ֆակուլտատիվ (դատախազական քննություն՝ որպես դատական բողոքարկման նախնական փուլ):

Դատախազական քննության ընթացակարգը կանոնակարգված է ՀՀ քր. դատ. օր. 426.5 և 426.6 հոդվածներով: Համաձայն դրանց՝

«1. Նոր Երևան Եկած հանգամանքների մասին հայտարարությունները և հաղորդումներն ուղարկվում են դատախազին:

2. Սույն օրենսգրքի 426.3 հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում դատախազը որոշում է կայացնում նոր Երևան Եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցել և այդ հանգամանքների առթիվ կատարում է քննություն կամ այդ մասին հանձնարարություն է տալիս քննիչին:

3. Եթե հաղորդումն ստացած դատախազը նոր Երևան Եկած հանգամանքների կապակցությամբ վարույթ հարուցելու համար հիմքեր չի գտնում, ապա նա պատճառաբանված որոշմամբ մերժում է վարույթ հարուցելը: Այդ որոշումը հաղորդվում է շահագրգիռ անձանց, որոնք այն կարող են բողոքարկել վերադաս դատախազին»: (426.5 հոդված):

«1. Նոր Երևան Եկած հանգամանքների քննությունն ավարտելուց հետո դատական ակտը վերանայելու համար հիմքերն առկա համարելով՝ դատախազը քննության արդյունքներով կազմված եզրակացությունն ուղարկում է գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին:

2. Գլխավոր դատախազը, նրա տեղակալը գործի վերանայման հիմքերն առկա համարելով, բողոք են ներկայացնում դատարան՝ դրան կցելով համապատասխանաբար քննության կամ ուսումնասիրության ակտերը:

3. Դատական ակտերը վերանայելու հիմքեր չլինելու դեպքում դատախազն իր պատճառաբանված որոշմամբ կարծում է վարույթը: Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում ուղարկվում է հաղորդում ներկայացրած անձին»: (426.6 հոդված):

Նոր Երևան Եկած հանգամանքներով դատական բողոքարկման ընթացակարգը կարող է հաջորդել դատախազական քննությանը, սակայն հնարավոր է նաև, որ շահագրգիռ անձի կողմից անմիջականորեն բողոք ներկայացվի իրավասու դատարան՝ շրջանցելով դատախազական քննության փուլը: Թեև այս հարցում նոր Երևան Եկած հանգամանքներով վերանայման հիմքերի միջև օրենքը տարբերակում չի դնում, սակայն անհրաժեշտ է նշել, որ գործնականում դժվար է պատկերացնել չորրորդ հիմքով վարույթի հարուցումն անմիջականորեն դատարան, քանի որ այն պահանջում է որոշակի փաստերի հաստատում և արձանագրում՝ պաշտոնական քննության արդյունքում (օրինակ՝ նոր հայտնված վկայի հարցաքննություն և նրա տված ցուցմունքների արձանագրում): Իսկ նոր Եկած հանգամանքներով պաշտոնական քննություն իրականացնելու լիազորությամբ ներկայում գործող օրենսդրությունն օժտում է բացառապես դատախազին, կամ նրա հանձնարարությամբ՝ քննիչին¹:

ՀՅ քր. դատ. օր. 426.2 հոդվածը սահմանում է, որ նոր Երևան Եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեն հետևյալ **սուրյեկտները**. դատավարության մասնակիցները, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների, ՀՅ գլխավոր դատախազը և նրա տեղակալները:

Նոր Երևան Եկած հանգամանքներով բողոքը քննելու իրավասությամբ օժտված **դատարանը** որոշված է «մեկ ատյան բարձր» սկզբունքով: Այսպես, ՀՅ քր. դատ. օր. 426.1 հոդվածի համաձայն. «Նոր Երևան Եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ Վճռաբեկ դատարանը՝ բողոքի հիման վրա»:

Որպես վերանայման բացառիկ ձև՝ նոր Երևան Եկած հանգամանքներով վարույթը ենթադրում է բողոքարկման **թույլատվական կարգ**: ՀՅ քր. դատ. օր. 426.8 հոդվածի համաձայն.

«1. Դատարանը դատական ակտը նոր Երևան Եկած կամ նոր հանգամանքներով վերանայում է վերանայման վարույթ հարուցելու որոշման հիման վրա:
2. Դատարանը վերանայման վարույթի հարուցումը մերժում է, եթե

¹ ՀՅ քր. դատ. օր. սկզբնական խմբագրությամբ՝ նոր Երևան Եկած հանգամանքներով պաշտոնական քննություն կատարելու լիազորությամբ օժտված էր նաև **հատուկ արտոնագիր ունեցող փաստարանը**, իսկ 2007-2008թթ. գործած խմբագրությամբ՝ **հավատարմագրված փաստարանը**: Ներկայում հատուկ լիազորություններ ունեցող փաստարանների հնատիտուտն օրենսդրություն վերացված է:

1) բողոքը ներկայացվել է դրա համար սույն օրենսգրքով նախատեսված ժամկետի խախտմամբ, և այն վերականգնելու մասին միջնորդություն չի ներկայացվել, կամ

2) առերևույթ բացակայում է նոր երևան եկած հանգամանքը, կամ

...

4) դատական ակտը վերանայելու համար հիմք դարձած նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել, և եթե դատարանին հայտնի չէ նման հանգամանքի առկայությունը, կամ

5) բողոքը ներկայացրել կամ ստորագրել է ոչ պատշաճ անձը, կամ այն ընդհանրապես ստորագրված չէ:

3. Դատարանը վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացնում է բողոքը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում: Վերանայման վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով¹:

Ինչպես երևում է մեջբերված հոդվածից՝ վերանայման վարույթի հարուցումը մերժելու հիմքերի թվում, ֆորմալ հիմքերի հետ մեկտեղ, առկա է նաև հայեցողական հիմք՝ նոր երևան եկած հանգամանքն առերևույթ բացակայելը:

Նոր երևան եկած հանգամանքներով բողոքի քննության կարգը, ինչպես նաև բողոքի քննության արդյունքում դատարանի կողմից կայացվող դատական ակտերի շրջանակը համապատասխանում է տվյալ դատարանում գործի քննության ընդհանուր կարգին (ՀՀ քր. դատ. օր. 426.9 հոդված):

4. Նոր հանգամանքներով վերանայում

Եթե նոր երևան եկած հանգամանքները վերաբերում են գործով փաստերին, ապա նոր հանգամանքները՝ իրավունքին, այդ թվում՝ փաստերի իրավական գնահատականին:

Վերանայման այս ձևությունը համարված է արժեք. այն հնարավորություն է տալիս գործառնական կապեր ստեղծել ՀՀ ընդհանուր իրավասության դատական համակարգի՝ մի կողմից, և այդ համակարգից դուրս գործող մատչելի դատական մարմինների միջև (ներկայում՝ ՀՀ սահմանադրական դատարան և Մարդու իրավունքների եվրոպական դատարան): Այդ գործառնական կապն անհրաժեշտություն է՝ նշված մարմինների իրավաբանության արդյունավետությունն ապահովելու և դրանք

¹ Այստեղ խոսքը կարող է վերաբերել միայն վերաքննիչ դատարան բերված բողոքին, քանի որ Վճռաբեկ դատարանի որոշումները սովորական բողոքարկման ենթակա չեն:

իրավական պաշտպանության գործուն ինստիտուտներ դարձնելու նկատառումներով։ Օրինակ՝ եթե որևէ արտահամակարգային դատական մարմնի եզրահանգումները պարտադիր չլինեն ընդհանուր իրավասության դատական համակարգի համար, ապա քաղաքացիների կողմից այդպիսի դատական մարմնի դիմելը կդառնա իմաստագուրք։

ՀՀ քր. դատ. օր. 426.4 հոդվածը սահմանում է նոր հանգամանքներով վարույթի հարուցման **հիմքերը**։ Նշված հոդվածի համաձայն.

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում։

1) Յայաստանի Յանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքը հակասահմանադրական է ճանաչել։

2) Յայաստանի Յանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից այդ դատարանի հիմնադրման կամ նրա իրավասությունը սահմանող այլ միջազգային պայմանագրին համապատասխան՝ այդ դատարանը դատավճիռ կամ որոշում է կայացրել, որով հիմնավորվում է, որ տվյալ քրեական գործի քննության ժամանակ Յայաստանի Յանրապետության դատարանը թույլ է տվել Յայաստանի Յանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում։

3) Յայաստանի Յանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված այլ նոր հանգամանքների դեպքերում¹:

2. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված նոր հանգամանքները հաստատված են համարվում համապատասխանաբար Յայաստանի Յանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ և Յայաստանի Յանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դրանց ուժի մեջ մտնելու պահից»։

Նշված **առաջին հիմքը** վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին։ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու է որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը։ Եթե ՀՀ Սահմանադրության սկզբնական խմբագրությամբ այս հարցով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու

¹ Նշված երրորդ հիմքը ներկայում կիրառական նշանակություն չունի, քանի որ ՀՀ միջազգային պայմանագրերով այլ նոր հանգամանքներ նախատեսված չեն։

իրավասությամբ օժտված էին միայն ՀՀ նախագահը և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների մեկ երրորդը, ապա 2005թ. խմբագրությամբ ՀՀ սահմանադրական դատարանը դարձավ քաղաքացիների համար իրապես մատչելի արդարադատության մարմին:

Քննարկվող նոր հանգամանքի իրավական կանոնակարգումն իրականացվում է ոչ միայն ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ, այլև «ՀՀ սահմանադրական դատարանի մասին» օրենքով: Մասնավորապես՝ նշված օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումների հիման վրա քննվող գործերով օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտը օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

Դատկանշական է համանման կանոնի բացակայությունը «ՀՀ սահմանադրական դատարանի մասին» օրենքի 68-րդ հոդվածում, որը սահմանում է ոչ թե մասնավոր, այլ հանրային շահի պաշտպանությամբ հանդես եկող սուբյեկտների (ՀՀ Ազգային ժողովի առնվազն 27 պատգամավոր, ՀՀ նախագահ, ՀՀ կառավարություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան) դիմումի հիման վրա օրենքի դրույթի՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու իրավական հետևանքները:

Այստեղ մենք առնչվում ենք դատական նախադեպի հետադարձ ուժի խնդրին, որը մեր իրավական համակարգի համար նոր իրավական խնդիր է, սակայն բավականաչափ քննարկված և նշակված է դասական նախադեպային իրավունքի երկրներում: Խնդիրն այն է, որ Սահմանադրական դատարանի կողմից օրենքը հակասահմանադրական ճանաչելու մասին որոշմանը հետադարձ ուժ տալը կարող է խաթարել հասարակական հարաբերությունների կայունությունը՝ հատկապես այնպիսի օրենքների վերաբերյալ գործերով, որոնց կիրառման շրջանակը լայն է եղել: Այդ պատճառով համաշխարհային պրակտիկան նախընտրելի է համարում դատական նախադեպի՝ հետադարձ ուժով կիրառման արգելքը: Այստեղից էլ քննարկվող ինստիտուտի անվանումը՝ նոր հանգամանքներ, այսինքն՝ նոր առաջացած, այլ ոչ թե գոյություն ունեցած և նոր բացահայտված հանգամանքներ:

Բնականաբար, այս կանոնից բացառություն պետք է արվի կոնկրետ դիմումատուի համար, որպեսզի սահմանադրական արդարադատությունը՝ որպես մասնավոր շահերի իրավական պաշտպանության միջոց, չարժեղուկվի:

ՀՀ սահմանադրական դատարանը 2008թ. ապրիլի 15-ի ՍՊԸ-751-Ն որոշմամբ ընդունված է այդ բացառության շրջանակը՝ Սահմանադրական դատարանի

որոշումներին ըստ էության տալով վեցամսյա նախընթաց հետադարձ ուժ: Այսպես, այդ որոշմամբ «ՀՀ սահմանադրական դատարանի մասին» օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ կետի դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր՝ այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը¹ չի գերազանցում վեց ամիսը:

Վեցամսյա ժամկետը պայմանավորված է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու ժամկետով: Այստեղ գաղափարն այն է, որ այդ ընթացքում անձը պահպանում էր նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, ուստի նրա նկատմամբ Սահմանադրական դատարանի որոշման բարենպաստ հետևանքները չկիրառելն անարդարացի է:

Մեր կարծիքով՝ Սահմանադրական դատարանի կողմից օրենքի անվավերության հետևանքները պետք է առանձնահատուկ լինեն քրեական իրավունքում: Նկատի ունենալով այդ ոլորտի հատուկ նշանակությունը և անձի վիճակը բարելավող քրեական օրենքին միանշանակորեն հետադարձ ուժ տալու սահմանադրական պահանջը (ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մաս)` արարքի հանցավորություն սահմանող օրենքի դրույթները հակասահմանադրական ճանաչելու պարագայում այդ որոշումը պետք է հետադարձ կիրառություն ստանա:

Նոր հանգամանքների շարքում նշված **երկրորդ հիմքը** ներկա դրությամբ վերաբերում է միայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանին:

Ստրաֆուրգի դատարանը, լինելով բացառիկ երևոյթ թե՛ միջազգային և թե՛ ներպետական իրավական համակարգերի համար, անգնահատելի դեր է կատարում եվրոպական տարածաշրջանում իրավական արժեքների միատեսակ ընկալման գործում, և այդ դատական մարմինն արդյունավետ չէր լինի, եթե ներպետական իրավական միջոցներով երաշխավորված չլիներ այդ դատական մարմնի վճիռների ներպետական կիրառումը:

¹ Այստեղ առկա է անհստակություն, քանի որ Սահմանադրական դատարանը չի կոնկրետացրել, թե որպես հաշվարկման վերջնակետ, պետք է ընդունել Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելո՞ւ օրը, թե՞ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվեցիայի 46-րդ հոդվածի համաձայն.

«1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են:

2. Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ»:

ՀՀ դատական պրակտիկայում արդեն եզակի չեն Ստրասբուրգի դատարանի վճռի հիման վրա դատական վերանայման բողոքները: Ներկայացնենք առավել հատկանշական օրինակներից մեկից՝ Մ.Զարությունյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. ապրիլի 10-ի որոշումից հատվածներ:

«25. Բողոք բերած Մ.Զարությունյանը նշել է, որ Եվրոպական դատարանը 2007թ. հունիսի 28-ի վճռով ճանաչել է, որ նշված գործի քննության ընթացքում Հայաստանի Հանրապետությունը Միշա Հարությունյանի նկատմամբ խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, որի արդյունքում անբողջ դատավարությունը դարձել է անարդար:

Բողոքում նշվում է, որ թե՛ առաջին ատյանի, թե՛ վերաբնիչ և թե՛ Վճռաբեկ դատարաններն իր նկատմամբ կայացված դատական ակտերում հիմնվել են խոշտանգումների կիրառման արդյունքում ձեռք բերված ապացույցների վրա:

26. Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, հետևաբար ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ դրանք չեն կարող օգտագործվել որպես ապացույց և դրվել մեղադրանքի հիմքում: Որպես ապացույց օգտագործվել են նաև բռնությունների, սպառնալիքների և խոշտանգումների կիրառման արդյունքում Գուրգեն Տավարածյանից, Կարեն Անտոնյանից ձեռք բերված ցուցմունքները: Բացի այդ, դեպքի պարագաների և հանգանանքների վերականգնում կատարելու մասին արձանագրությունը և տեսաժապավենը որպես ապացույց օգտագործելը հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի խախտման:

27. Ելնելով վերոգրյալից՝ Մ.Զարությունյանը խնդրել է նոր հանգանաքի՝ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա հարուցել վերանայման վարույթ, վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի 2003թ. մայիսի 8-ի որոշումը, վերացնել այն, նորոգել քրեական գործը,

հաստատել Միշա Յարությունյանի 1999թ. ապրիլի 16-ի, 1999թ. ապրիլի 17-ի, գուրգեն Տավարածյանի 1999թ. մարտի 5-ի, 1999թ. հուլիսի 30-ի, Կարեն Անտոնյանի 1999թ. մարտի 5-ի, 1999թ. օգոստոսի 3-ի ցուցմունքների, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում Գ.Տավարածյանի և Կ.Անտոնյանի կողմից տրված ցուցմունքների, Մ.Յարությունյանի և Կարեն Անտոնյանի ու Գուրգեն Տավարածյանի միջև առերես հարցաքննությունների, Միշա Յարությունյանի մասնակցությամբ կատարված դեպքի հանգամանքների և պարագաների վերականգնման մասին արձանագրության և տեսաձայնագրման երիզի, Գուրգեն Տավարածյանի և Կարեն Անտոնյանի մասնակցությամբ կատարված դեպքի վայրի լրացուցիչ զննության մասին արձանագրության, Գուրգեն Տավարածյանի և Կարեն Անտոնյանի մասնակցությամբ կատարված դեպքի վայրի լրացուցիչ զննության ընթացքում ձեռք բերված նյութի՝ 2,5սմ երկարությամբ 6նմ տրամաչափով մետաղե բեկորի և այլ բազմաթիվ նյութերի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը, բեկանել Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2002թ. հունիսի 19-ի, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաբերնից դատարանի 2003թ. ապրիլի 1-ի դատավճիռները, կարծել Մ.Յարությունյանի նկատմամբ քրեական գործով վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը:

...

Վճռաբեկ դատարանը գտավ, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

28. Ինչպես երևում է Յարությունյանն ընդդեմ Յայաստանի վճռից, դիմումատում՝ Միշա Եղիկի Յարությունյանը, պնդել է, որ նա կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա վիճարկում է իրենից, ինչպես նաև վկաներ Գ.Տավարածյանից և Կ.Անտոնյանից խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու հանգամանքը: Եվրոպական դատարանի վճռի 50-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ դիմումատուի գանգատմերը վերաբերել են քրեական գործի վարույթում վատ վերաբերմունքի ցուցաբերման հետևանքով ձեռք բերված ապացույցներն իր դեմ օգտագործելուն: Ըստ դիմումատու Մ.Յարությունյանի՝ գործի հանգամանքներին չի համապատասխանում Կառավարության այն պնդումը, թե խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքներն իրեն դատապարտելու հիմք չեն հանդիսացել: Նա նշել է, որ որպես ապացույց դատարանը հղում է կատարել իր 1999թ. ապրիլի 16-ին և 17-ին տրված խոստովանական ցուցմունքներին և վկաներ Գ.Տավարածյանի ու Կ.Անտոնյանի տված ցուցմունքներին, որոնք ձեռք

Էին բերվել խոշտանգումների միջոցով: Անտեսելով պաշտպանության կողմի ներկայացրած մի քանի միջնորդությունները՝ դատական երեք ատյաններից և ոչ մեկը որոշում չեր կայացրել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքների օգտագործումն անթույլատրելի ճանաչելու մասին, թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի համաձայն՝ նրանք օժտված էին նման իրավունքով:

29. Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք դիմումատուի դեմ հարուցված քրեական գործի դատաքննության ընթացքում ներպետական դատարանները որպես ապացույց օգտագործել են դիմումատուի կողմից 1999թ. ապրիլի 16-ին և 17-ին տված ցուցմունքները, ինչպես նաև վկաներ Գ.Տավարածյանի և Կ.Անտոնյանի 1999թ. մարտի 5-ին տված ցուցմունքները, Եվրոպական դատարանը նշել է, որ չնայած պաշտպանության կողմի ներկայացրած մի քանի միջնորդությունների, եռաստիճան դատական համակարգից և ոչ մի ատյանում քննարկվող ցուցմունքների օգտագործումը որպես ապացույց հստակորեն անթույլատրելի չի համարվել:

Դաշվի առնելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը հանգել է հետևողան, որ ներպետական դատարանները դիմումատուին մեղավոր ճանաչելու ապացույցների շարքում որպես ապացույց օգտագործել են նաև դիմումատուի խոստովանական ցուցմունքը և վկաներ Գ.Տավարածյանի ու Կ.Անտոնյանի՝ բռնության ազդեցության տակ տված ցուցմունքները (վճռի 59-րդ կետ):

30. Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուն հարկադրված է եղել խոստովանական ցուցմունքներ տալ, իսկ վկաներ Գ.Տավարածյանն ու Կ.Անտոնյանը հարկադրված են եղել տալ ցուցմունքներ, որոնք ապացուցում են դիմումատուի մեղքը: Դիմումատուի և նշված վկաների նկատմամբ վատ վերաբերմունքի հետևանքով ձեռք բերված ցուցմունքները փաստորեն օգտագործվել էին ներպետական ատյաններում որպես ապացույց՝ դիմումատուի դեմ քրեական դատավարությունում: Ավելին, դա կատարվել է անտեսելով այն հանգամանքը, որ վատ վերաբերմունքի ցուցաբերման փաստն արդեն հաստատված էր գուգահեռ ընթացող վարույթում, որը հարուցվել էր ոստիկանության քննարկվող աշխատակիցների նկատմամբ:

Նշված վերլուծությունների հիման վրա Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմումատուի քրեական

վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումն ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար: Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

31. Այսպիսով՝ Եվրոպական դատարանը որոշում կայացնելով, որ խոշտանգումների միջոցով ձեռք բերված դիմումատուի և վկաներ գ.Տավարածյանի ու Կ.Անտոնյանի ցուցմունքները որպես ապացույց օգտագործելն ամբողջ դատավարությունը դարձրել է անարդար, հիմնավորել է, որ տվյալ քրեական գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության դատարանը թույլ է տվել Եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում (կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մաս), որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ որպես նոր հանգամանք դատական ակտը վերանայելու հիմք է:

32. Միաժամանակ գործի նյութերից և Եվրոպական դատարանի վճռից երևում է, որ գործի նյութերում առկա են դիմումատուի մեղքը հաստատող այլ ապացույցներ, որոնց Եվրոպական դատարանն անդրադել է իր որոշման 28-րդ կետում (սույն որոշման 23-րդ կետ): Մինչդեռ Վճռաբեկ դատարանում, ի տարբերություն առաջին ատյանի դատարանի, չի իրականացվում ապացույցների անմիջական հետազոտություն, և Վճռաբեկ դատարանի տրամադրության տակ գտնվող դատավարական հնարավորությունները բավարար չեն սույն գործով դատապարտված Ս.Հարությունյանի անմեղության կամ մեղավորության հարցը թույլատրելի ապացույցների հիման վրա լուծելու համար: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա պետք է բեկանել Միշա Հարությունյանի վերաբերյալ դատական ակտերը և գործն ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Մեջբերված որոշումից պարզորոշ երևում է նոր հանգամանքներով վերանայման մի կարևոր հատկանիշ. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կամ ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայությունն ինքնին չի հանգեցնում անձի արդարացման. այս հարցում պետք է հաշվի առնել արձանագրված խախտման բնույթը և համարժեք իրավական միջոցներով ուղղել այն՝ «մինչև խախտումը եղած վիճակի վերականգնման» սկզբունքով:

Նոր հանգամանքներով վերանայման ժամկետի վերաբերյալ կանոնները սահմանված են ՀՀ քր. դատ. օր. 426.4 հոդվածի 3-րդ մասով: Մասնավորապես՝ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք կարող է բերվել 3

ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

Նոր հանգամանքներով բողոքարկման իրավունք ունեցող **սուբյեկտների** շրջանակի մեջ մտնում են ՀՀ գլխավոր դատախազը և նրա տեղակալները, ինչպես նաև այդ հանգամանքի հետ առնչվող գործին մասնակցած շահագրգիռ անձինք: Շահագրգիռ անձի փոխարեն բողոք կարող է ներկայացնել նրա լիազորած անձը (պարտադիր պետք է լինի փաստաբան), որը բողոքի հետ միաժամանակ դատարան պետք է ներկայացնի նաև իր լիազորությունները հաստատող փաստաթուղթը:

Նոր հանգամանքներով վերանայման մյուս պայմանները համընկնում են նոր երևան եկած հանգամանքներով վերանայման պայմաններին, որոնք պարզաբանված են նախորդ կետում:

ԲԱԺԻՆ 7.

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՅ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԿԱԽ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Դատավորների միջազգային միությունը հիմնադրվել է 1953 թվականին Չալցրուրում (Ավստրիա) որպես մասնագիտական, ոչ քաղաքական, միջազգային կազմակերպություն՝ միավորելով ազգային դատավորների միություններին:

Միության հիմնական նպատակը դատական իշխանության անկախության ամրապնդումն է՝ որպես արդարադատության իրականացման կարևորագույն պահանջ և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիք:

Ներկայումս կազմակերպությունն ընդգրկում է նման 70 ազգային միություններ կամ ներկայացուցական խմբեր աշխարհի հինգ մայրցամաքներից:

Դատավորների միջազգային միության խորհրդակցական մարմինը՝ Կենտրոնական խորհուրդը, կազմակերպում է ամենամյա հանդիպումներ, նախընտրելի է՝ տարբեր երկրներում: Յուրաքանչյուր անդամ միություն Կենտրոնական խորհրդում ունի երկու ներկայացուցիչ:

Դատավորների միջազգային միությունը բաղկացած է հետևյալ չորս տարածաշրջանային խմբերից:

1. Եվրոպական դատավորների միություն (38 երկիր),
2. Իբերո-ամերիկյան խումբ (15 երկիր),
3. Աֆրիկյան խումբ (12 երկիր),
4. Ասիական, Հյուսիսամերիկյան և Օվկիանիայի խմբեր (9 երկիր):

Դատավորների միջազգային միությունն ունի չորս Ուսումնասիրող հանձնաժողովներ, որոնց գործունեության ուղղություններն ընդգրկում են՝ դատական ծառայության և դատական համակարգի կարգավիճակի, քաղաքացիական իրավունքի և դատավարության, քրեական իրավունքի և դատավարության, ինչպես նաև հանրային և սոցիալական իրավունքների ոլորտները: Հանձնաժողովների անդամները, ազգային գեկույցների հիման

Վրա, ուսումնասիրում են արդարադատության իրականացմանը վերաբերող աշխարհի յուրաքանչյուր երկրում առկա համընդհանուր շահերին առնչվող խնդիրներ՝ ըստ համեմատական և միջպետական մակարդակների: Միությունն ունի խորհրդակցական մարմնի կարգավիճակ ՄԱԿ-ում (մասնավորապես՝ Աշխատանքի միջազգային կազմակերպությունում և ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդում) և Եվրոպայի խորհրդում:

**ՂԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԴԱՄԱԿԱՆ ԱՌԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ**

ԱՄՍ
ԱՅՎՈՐԻ ՔՈՍ
ԱՎԱՏՐԱԼԻԱ
ԱՎԱՏՐԻԱ
ԱՐԳԵՆՏԻՆԱ
ԲԵԼԳԻԱ
ԲՈԼԻՎԻԱ
ԲՐԱԶԻԼԻԱ
ԲՈՒԼԳԱՐԻԱ
ԲՈՒՐԿԻՆԱ ՖԱՍՈ
ԳԵՐՄԱՆԻԱ
ՂԱՆԻԱ
ԵԳԻՊՏՈՍ
ԷՍՏՈՆԻԱ
ԹՈՒՆԻԱ
ԻՌԼԱՆԴԻԱ
ԻՍԼԱՆԴԻԱ
ԻՍՊԱՆԻԱ
ԻՍՐԱՅԵԼ
ԻՏԱԼԻԱ
ԼԱՏՎԻԱ
ԼԵՅԱՆԱՍ
ԼԻԽԱՆՇՏԵՅՆ
ԼԻՏՎԱ
ԼՅՈՒՔՍԵՍԲՈՒՐԳ
ԽՈՐՎԱԹԻԱ
ԿԱՄԵՐՈՒՆ
ԿԱՆԱԴԱ
ԿԻՊՐՈՍ
ԿՈՍՏԱ ՌԻԿԱ
ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ
ՀԱՐԱՎԱԼԱՎԻԱՅԻ ՆԱԽԿԻՆ ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՈՒՆԱՍՏԱՆ
ՀՈՒՆԳԱՐԻԱ
ՂԱԶԱԽՍՏԱՆ
ԲԱՊՈՆԻԱ
ՄԱԼԹԱ
ՄԱԼԻ
ՄԱՐՈԿԿՈ
ՄԵՔՍԻԿԱ
ՄԻԿԱՑԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈԼԴՈՎԱ
ՄՈՆԳՈԼԻԱ
ՆԻԳԵՐ
ՆԻՋԵՈԼԱՆԴԻՆԵՐ
ՆՈՐՎԵԳԻԱ
ՇՎԵԴԻԱ
ՇՎԵՅՑԱՐԻԱ
ՉԵԽԻԱ
ՉԻԼԻ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԹԱՅՎԱՆ)
ՊԱՆԱՍ
ՊԱՐԱԳՎԱՅ
ՊԵՐՈՒ
ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ
ՊՈՒԵՐՏՈ ՈՒԿՈ
ՈՈՒՄԻՆԻԱ
ՍԱԼՎԱԴՈՐ
ՍԵՆԵԳԱԼ
ՍԼՈՎԱԿԻԱ
ՍԼՈՎԵՆԻԱ
ՎԵՆԵՍՈՒԵԼԱ
ՎՐԱՍՏԱՆ
ՏԱՆՉԱՆԻԱ
ՏՈԳՈ
ՈՒԿՐԱՆԻԱ
ՈՒՐՈՒԳՎԱՅ
ՖԻՆԼԱՆԴԻԱ
ՖՐԱՆՍԻԱ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՃՐԴԻ ՆԻՍՏԵՐ

1. 1953 – Զալցբուրգ, Ավստրիա
2. 1954 – Կադենարիա, Իտալիա
3. 1956 – Մյունխեն, Գերմանիա
4. 1958 – Փարիզ, Ֆրանսիա
5. 1961 – Ռում, Իտալիա
6. 1963 - Ամստերդամ, Նիդեռլանդներ
7. 1964 - Բրյուսել, Բելգիա
8. 1965 – Վիեննա, Ավստրիա
9. 1966 – Զալցբուրգ, Ավստրիա
10. 1967 – Լյուքսեմբուրգ, Լյուքսեմբուրգ
11. 1968 – Վերոնա, Իտալիա
12. 1969 - Բեռլին, Գերմանիա
13. 1970 – Թունիս, Թունիս
14. 1971 – Ռիո դե Ժանյար, Բրազիլիա
15. 1972 – Նիցցա, Ֆրանսիա
16. 1973 - Բրուքս, Բելգիա
17. 1974 – Ֆիրենց, Իտալիա
18. 1975 – Կոպենհագեն, Դանիա
19. 1976 – Լաուսան, Շվեյցարիա
20. 1977 – Թրաեր, Գերմանիա
21. 1978 - Ռիո դե Ժանյար, Բրազիլիա
22. 1979 – Սթոքհոլմ, Շվեդիա
23. 1980 – Թունիս, Թունիս
24. 1981 - Վիեննա, Ավստրիա
25. 1982 – Մադեյրա, Պորտուգալիա
26. 1983 - Դակար, Սենեգալ
27. 1984 – Թրիենբերգ, Լիխտենշտեյն
28. 1985 – Օսլո, Նորվեգիա
29. 1986 – Ռում, Իտալիա
30. 1987 - Ռումին, Իռլանդիա
31. 1988 - Բեռլին, Գերմանիա
32. 1989 – Մակար
33. 1990 – Ռեսինկի, Ֆինլանդիա
34. 1991 – Քրանս Մոնթանա, Շվեյցարիա
35. 1992 – Սկիլիա, Իսպանիա
36. 1993 – Սան Պաուլու, Բրազիլիա
37. 1994 - Աթենք, Հունաստան
38. 1995 – Թունիս, Թունիս
39. 1996 - Ամստերդամ, Նիդեռլանդներ
40. 1997 – Սան Խուան, Պուերտո Ռիկո
41. 1998 – Պորտո, Պորտուգալիա

42. 1999 – Թայփեյ, Թայվան
43. 2000 – Ռեսայֆ, Բրազիլիա
44. 2001 – Մադրիդ, Իսպանիա
45. 2003 - Ալիքանտ, Իսպանիա
46. 2003 – Վիեննա, Ավստրիա
47. 2004 – Վալե դե Բրավո, Մեքսիկա
48. 2005 – Մոնտեվիդեո, Ուրուգվայ
49. 2006 – Սինֆոն, Հունգարիա
50. 2007 – Տրոնհեյմ, Նորվեգիա
51. 2008 - Երևան, Հայաստան
52. 2009- Մարաքեշ, Մարոկկո

ՀՅ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

«ՀՅ դատավորների միություն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1997 թվականի ապրիլին: Միության անդամները ՀՅ բոլոր ատյանների դատարանների դատավորներն են:

Որպես հասարակական կազմակերպություն՝ ՀՅ դատավորների միության նպատակներն են:

1. աջակցել ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կայացմանն ու ամրապնդմանը, անկախ դատական համակարգի զարգացմանը, օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին.

2. նպաստել միության անդամների և դատավորների որակավորման բարձրացմանը, ուսուցմանը, վերապատրաստմանը և աշխատանքային փորձի փոխանակմանը, դատավորների անկախության, անձեռնմխելիության և անվտանգության ապահովմանը, հեղինակության բարձրացմանը, դատարանի և դատական իշխանության անկախության ապահովմանը, ամրապնդմանը և դատարանի նկատմամբ հասարակության վստահության մեջացմանը, միության անդամների հանդիպումների և հանգստի կազմակերպմանը.

3. պաշտպանել միության անդամների օրինական շահերն ու օրենքով սահմանված իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը.

4. պահովել դատավորի վարքագծի կանոնների պահպանումը.

5. օժանդակել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովմանը.

6. համագործակցել դատավորների արտասահմանյան և միջազգային միությունների հետ.

7. օրենքով սահմանված կարգով իրատարակել պարբերականներ, իրավաբանական գրականություն, լուսաբանել միության անդամների փորձը, դատարանի և դատական իշխանության գործունեությունը:

1997-2003 թվականներին ՀՅ դատավորների միության նախագահն էր ՀՅ սահմանադրական դատարանի անդամ Ալվինա Գյուլումյանը (այժմ՝ Մարդու իրավունքների Եվոպական դատարանի դատավոր):

2003 թվականից մինչ օրս ՀՀ դատավորների միության նախագահն է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Քրաչիկ Սարգսյանը:

Միության ստեղծման առաջին իսկ օրերից սկսել է իրատարակվել «Դատական իշխանություն» (նախկինում՝ «Օրինարերք») գիտամեթոդական ամսագիրը: Իրավական թերում ունեցող լրատվամիջոցներից «Դատական իշխանությունը» առաջինն էր, որ անդրադավ դատական պրակտիկային: 2004 թվականից «Դատական իշխանություն» ամսագիրն ընդգրկվել է թեկնածուական ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի՝ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատած ցանկում:

Ամսագիրը լույս է տեսնում կայուն պարբերականությամբ, 400-500 օրինակ տպաքանակով:

Հիմնադրման օրվանից ՀՀ դատավորների միությունն ակտիվ գործունեություն է ծավալել դատավորների ուսուցման, վերապատրաստման, նրանց շահերի պաշտպանության և դատական համակարգի ու օրենսդրության բարելավման ուղղությամբ: Միության անդամների շահերի պաշտպանության նպատակով ՀՀ դատավորների միությունը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով, ներկայացրել տարբեր միջնորդություններ, նախաձեռնել և իրատարակել է Դատավորի վարքագծի կանոնագիրը ու դրա մեկնաբանությունները և այլն: Միությունն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև ՀՀ-ում տարբեր օրենսդրական նախաձեռնությունների քննարկմանը, կազմակերպել է բազմաթիվ սեմինարներ ու քննարկումներ: Հիմնադրման օրվանից միությունը սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրատարակել է ավելի քան երկու հարյուր անուն գրականություն՝ ձեռնարկներ, ժողովածուներ, մենագրություններ և այլն:

Ներկայումս միությունն ակտիվ համագործակցում է արտերկրյա համանման կառույցների հետ, և արդեն ստորագրվել են համագործակցության հուշագրեր տարբեր երկրների դատավորների միությունների հետ:

2005 թվականի նոյեմբերի 19-24-ը Ուրուգվայի Արևելյան Հանրապետության մայրաքաղաք Մոնտեվիդեոյում կայացած Դատավորների միջազգային միության 48-րդ համաժողովի օրակարգում դրված էր նաև Դատավորների միջազգային միությանը ՀՀ դատավորների միության անդամակցության հարցը: ՀՀ դատավորների միությունը 2004 թվականի մարտին դիմել էր անդամակցելու խնդրանքով՝ ցանկություն հայտնելով լինել Դատավորների միջազգային միության լիիրավ անդամ: ՀՀ դատավորների միության անդամակցության հարցը քննվել էր Հռոմում՝ Միության Կենտրոնական խորհրդում և որոշվել

Էր ՀՀ դատավորների միության պատվիրակությանը հրավիրել 48-րդ համաժողովին: Հայաստանից Մոնտեվիդեո մեկնեցին ՀՀ դատավորների միության նախագահ Հրաչիկ Սարգսյանն ու ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի նախագահ Տիգրան Սահակյանը:

Համաժողովի նոյեմբերի 23-ի նիստում Դատավորների միջազգային միության ընդհանուր քարտուղարի տեղակալ, Թուրինի քաղաքային դատարանի դատավոր Զակոնո Օբերտոն համաժողովի մասնակիցների՝ աշխարհի տարբեր երկրներից ժամանած ավելի քան 200 դատավորների դատին ներկայացրեց ՀՀ դատավորների միության դիմումը: Համաժողովը միակարծիք էր, և ՀՀ դատավորների միությունը դարձավ միջազգային կազմակերպության 68-րդ անդամը: ԱՊՀ երկրներից այդ կառույցի անդամ են Մոլդովան, Վրաստանը, Ռուսաստանը և Ղազախստանը:

2007 թվականի սեպտեմբերին Նորվեգիայի Տրոմսեյմ քաղաքում տեղի ունեցավ Դատավորների միջազգային միության հոբեյանական 50-րդ տարեկան համաժողովը, որին մասնակցում էր նաև Հայաստանի Հանրապետության դատավորների միության պատվիրակությունը:

Դատավորների միջազգային միության կանոնադրության համաձայն՝ տարեկան ժողովում, ի թիվս այլ հարցերի, քննարկվում է նաև հաջորդ տարեկան ժողովի անցկացման վայրի ընտրության հարցը:


2008 թվականի տարեկան ընդհանուր ժողովն անցկացնելու համար հայտ էին ներկայացրել Հայաստանի Հանրապետության, Իսպանիայի, Ռումինիայի, Մարոկկոյի և Ղազախստանի դատավորների միությունները: Նախագահական կոմիտեում նախնական հայտերի ուսումնասիրման արդյունքում որպես 2008 թվականի թեկնածու անդամներ Կենտրոնական խորհուրդ ներկայացվեցին Հայաստանի Հանրապետության, Իսպանիայի և Ռումինիայի դատավորների միությունները: Կենտրոնական խորհուրդը, քննարկելով երեք երկրների առաջարկները, փակ գաղտնի քվեարկությամբ 2008 թվականի տարեկան ընդհանուր ժողովի կազմակերպման երկիր ընտրեց Հայաստանի Հանրապետությունը:

Այսպիսով, առաջին անգամ ողջ տարածաշրջանում և ԱՊՀ տարածքում 2008 թվականի սեպտեմբերի 7-11-ը Հայաստանում տեղի ունեցավ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ 51-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ, որին մասնակցում էին աշխարհի 53 երկրներից Հայաստան ժամանած ավելի քան 216 դատավորներ ու պատվիրակներ:

ՀՀ դատավորների միության գործունեության և նախատեսվող ծրագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել <http://www.judge.am> կամ <http://www.datavor.am> ինտերնետային կայքերը:

ԲԱԺԻՆ 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԽՈՐՉՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԽՈՐՉՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ №- 122

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՆ ԸՆՏ ԷՒԹՅԱՆ
ԼՈՒԾՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22.1-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների կողմից կայացվող վճռի կառուցվածքը և ուղեցույցը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների կողմից կայացվող դատավճռի կառուցվածքը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Առաջին ատյանի դատարանների գործն ըստ էության լուծող դատական ակտերում որպես տառառ կիրառել «Arial Armenian», տառաչափ՝ 12, էջի չափսերը՝ A4, լուսանցքը վերևից և ներքևից՝ 2սմ, ձախից՝ 3սմ, աջից՝ 1 սմ, տողերի միջև հեռավորությունը՝ 1 միավոր:

4. Առաջին ատյանի դատարանների գործն ըստ էության լուծող դատական ակտերում չեն թույլատրվում հապավումները, սակայն հնարավոր է պայմանական անունների օգտագործումը (օրինակ՝ «ԱրմենԹել» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ նաև՝ Ընկերություն կամ «ԱրմենԹել» ՓԲԸ)): Օտար լեզվով անվանումները պետք է նշվեն նաև հայերեն տառադարձությամբ:

5. Առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի յուրաքանչյուր բաժին, ելնելով շարադրվող մտքի տրամաբանական կապից, կարող է արաբական թվերով բաժանվել առանձին ենթարաժինների: Այդ դեպքում ենթարաժինը նշվում է առանձին պարբերության տեսքով, իսկ համարակալումը պետք է ներառի բաժնի համարը և այդ բաժնում պարբերության հերթական համարը:

6. Առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի էջերը համարակալվում են:

**Հայաստանի Հանրապետության
վճռաբեկ դատարանի նախագահ**

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

**2008թ. հունիսի 13
թ.Երևան**

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2008թ. հունիսի 13-ի թիվ 122 որոշման

Առաջին ատյանի դատարանի կողմից քաղաքացիական գործով կայացվող վերջնական դատական ակտի կառուցվածք և ուղեցույց

I

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Առաջին ատյանի դատարանի վճռի կառուցվածքը հետևյալն է.

Ներածական մաս

Նկարագրական մաս

1. դատավարական նախապատմություն
2. հայցվորի դիրքորոշում
3. պատասխանողի դիրքորոշում
4. երրորդ անձի դիրքորոշում
5. հակընդդեմ հայցվորի և հակընդդեմ հայցով պատասխանողի դիրքորոշումներ

Պատճառաբանական մաս

1. գործի փաստեր
 - չվիճարկվող փաստեր
 - փաստեր, որոնք ապացուցման ենթակա չեն
 - ապացուցման ենթակա փաստեր
2. կիրառելի իրավունք
3. իրավական հարցեր (խնդիրներ)
4. վերլուծություն

Եզրափակիչ մաս

1. Վեճի լուծնան վերաբերյալ վերջնական եզրակացություն
2. դատական ծախսերի բաշխում
3. Վճռի բողոքարկման կարգ

II

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Վճիոը կազմվում է հետևյալ ուղեցույցների համաձայն.

Դամարակալում և վերնագրում

Մասերը, բացի Ներածական և Եզրափակիչ մասերից, համարակալվում են հռոմեական թվերով: Մասերը որպես կանոն չեն վերնագրվում: Մասերի համարակալումը կատարվում է էջի կենտրոնում, տարանջատվում է դատական ակտի տեքստի նախորդող և հետագա շարադրանքից մեկական տողով:

Բաժինները վերնագրվում են ընդգծմամբ: Բաժնի համարակալումն իրականացվում է տվյալ մասում նրա հերթական համարով:

Ներածական մաս

Ֆորմատը և բովանդակությունը. Էջի վերին կենտրոնական մասում տեղակայվում է Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը. բարձրությունը՝ 2,73սմ, լայնությունը՝ 2,84սմ, իսկ վերին աջ կողմում նշվում է քաղաքացիական գործի համարը:

Զինանշանից 1սմ ներքև՝ էջի կենտրոնական մասում, մեծատառերով գրվում է «ՎՃԻ» բառը, իսկ հաջորդ տողի կենտրոնում մեծատառերով գրվում է «ՀԱՆՈՒ Հայաստանի Հանրապետության» բառակապակցությունը:

Հաջորդ տողի ձախ կողմում նշվում է վճռի հրապարակման օրը, ամիսը, տարեթիվը, իսկ աջ կողմում՝ վճռի հրապարակման վայրը:

Բաց բողնելով մեկ տող՝ էջի կենտրոնում նշվում է վճիր կայացրած դատարանի անվանումը, այնուհետև հաջորդող տողերում նշվում են դատարանի կազմի և մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կերպ.

«նախագահությամբ՝
ազգանունը],

քարտուղարությամբ՝

դատավոր դատավորի անուն ու ազգանունը],

[նիստի քարտուղարի անուն ու ազգանունը],

մասնակցությամբ՝

այս մասում նշվում են գործին մասնակցող անձանց տվյալները՝ յուրաքանչյուրինը՝ նոր տողից»:

Դաջորդ տողում նշվում է, թե ինչ գործ է դատարանը քննության առել՝ հետևյալ կերպ.

«քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի (դիմումի) [հայցվորի անունն ու ազգանունը կամ անվանումը] ընդդեմ [պատասխանողի անունն ու ազգանունը կամ անվանումը] [պահանջի համառոտ բնույթը] պահանջի վերաբերյալ»:

Բաց թողմելով մեկ տող՝ էջի կենտրոնում տեղադրվում է «ՊԱՐՁԵՑ» բառ՝ մեծատառերով:

Նկարագրական մաս

Բովանդակությունը. Նկարագրական մասում դատարանի նախընտրած հերթականությամբ շարադրվում են.

1. դատավարական նախապատմությունը
2. հայցվորի դիրքորոշումը
3. պատասխանողի դիրքորոշումը
4. երրորդ անձի դիրքորոշումը
5. հակընդդեմ հայցվորի և հակընդդեմ հայցով պատասխանողի դիրքորոշումները

1. Դատավարական նախապատմությունը

Այս բաժնում անհրաժեշտ մանրամասներով նշվում է, թե հայցվորը ե՞րբ է դիմել դատարան, և ե՞րբ է հայցը վարույթ ընդունվել, արդյո՞ք պատասխան կամ հակընդդեմ հայց ներկայացվել է (ե՞րբ), թե՝ ոչ, ներգրավվել են արդյո՞ք երրորդ անձինք, նախապատրաստվել է արդյո՞ք գործը դատաքննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22² գլուխ կանոնների համաձայն:

Եթե տեղի է ունեցել կողմի փոխարինում (իրավահաջորդության, անպատշաճության հիմքով), ապա՝ նշում այդ մասին՝ անհրաժեշտ մանրամասներով:

Եթե գործն ամբողջությամբ կամ որևէ մասով քննվում է ոչ առաջին անգամ (ամբողջությամբ կամ մասնակի բեկանումից հետո, նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով), ապա համառոտ նկարագրվում է նաև համապատասխան դատավարական նախապատմությունը:

2. Հայցվորի դիրքորոշումը

Այս բաժնում դատարանի նախընտրած հերթականությամբ շարադրվում են.

- պահանջի փաստական հիմքերը, ուր հնարավորինս սեղմ շարադրվում են այն հիմնական փաստերը, որոնք առաջադրել է հայցվորը,
- յուրաքանչյուր առանձին պահանջի իրավական հիմքերն ու հիմնավորումները, ուր շարադրվում են օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերը, որոնք հայցվորի պահանջի հիմքում են,
- յուրաքանչյուր պահանջի առարկան, ուր շարադրվում է, թե հայցվորն ի՞նչ է պահանջում յուրաքանչյուր հիմքով,
- եական նշանակություն ունեցող միջնորդություններ:

3. Պատասխանողի դիրքորոշումը

Այս բաժնում դատարանի նախընտրած հերթականությամբ շարադրվում են (Եթե պատասխան ներկայացված է, իսկ եթե պատասխան չի ներկայացվել, ապա՝ նշում այդ մասին).

- պահանջի փաստական հիմքերից յուրաքանչյուրի դեմ բերված առարկությունները, եթե պատասխանողը ժխտում է հայցվորի առաջադրած փաստերը («ժխտող առարկություն»),
- առարկության փաստական հիմքերը, ուր հնարավորինս սեղմ շարադրվում են այն հիմնական փաստերը, որոնք առաջադրել է պատասխանողը («պողիտիվ առարկություն»),
- պատասխանողի փաստարկները պահանջի իրավական հիմնավորման վերաբերյալ՝ յուրաքանչյուր հիմքի մասով առանձին,
- պատասխանողի կողմից առաջադրված լրացուցիչ իրավական հիմքերը,
- դիրքորոշումը հայցվորի պահանջի վերաբերյալ,
- եական նշանակություն ունեցող միջնորդությունները:

4. Երրորդ անձի դիրքորոշումը

Երրորդ անձի դիրքորոշումը շարադրվում է ըստ հայցվորի կամ պատասխանողի դիրքորոշման կետերի, կախված այն հանգամանքից՝ երրորդ անձն ինքնուրույն պահանջ ներկայացնու՞մ է, թե հանդես է գալիս պատասխանողի կողմում:

5. Հակընդդեմ հայցվորի և հակընդդեմ հայցով պատասխանողի դիրքորոշումները

Հակընդդեմ հայցի առկայության դեպքում վճռում պետք է ներկայացվեն նաև հակընդդեմ հայցվորի և պատասխանողի դիրքորոշումները՝ վերոգրյալ բաժինների կարգով: Ընդ որում, հակընդդեմ հայցվորի և պատասխանողի դիրքորոշումները կարող

Են նկարագրվել ինչպես առանձին, այնպես էլ համապատասխանաբար պատասխանողի և հայցվորի դիրքորոշումների հետ միասին:

Պատճառաբանական մաս

Բովանդակությունը. պատճառաբանական մասում շարադրվում են.

1. գործի փաստերը,
2. կիրառելի իրավունքը (իրավական իիմքերը),
3. իրավական հարցերը (խնդիրները),
4. յուրաքանչյուր իրավական հարցի վերլուծությունը,
5. յուրաքանչյուր իրավական հարցի վերաբերյալ իրավական եզրակացությունը:

1. Գործի փաստերը

Այս բաժնում դատարանի նախընտրած հերթականությամբ շարադրվում են այն փաստերը, որոնք դատարանը իիմք է ընդունում իր վճոի համար: Դրանք են.

- Ա. չվիճարկվող փաստերը,
- Բ. փաստեր, որոնք ապացուցելու պարտականությունից կողմն ազատվում է,
- Գ. ապացուցման ենթակա փաստեր:

Ա. Չվիճարկվող փաստերը

Նաև ազատությունը. չվիճարկվող է այն փաստը, որը մի կողմն առաջադրել է, իսկ հակառակ կողմը՝ ընդունել այն իր կողմից ներկայացված դատավարական փաստաթղթով կամ դատական նիստի ընթացքում արված հայտարարությամբ կամ չի առարկել այդ փաստին որոշակի ժամկետում, եթե տվյալ ժամկետում պարտավոր էր առարկություն ներկայացնել (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք, 95-րդ հոդված):

Ծրջանակը որոշելով. չվիճարկվող փաստերի շրջանակը որոշվում է գործը դատաքննությանը նախապատրաստելու ընթացքում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն, ապացուցում պահանջող փաստերի շրջանակը որոշելիս: Դատարանը կարող է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ հանել տվյալ փաստն ապացուցման ենթակա փաստերի շրջանակից նաև դատաքննության ընթացքում, եթե փաստին հակառակվող կողմն ընդունում է տվյալ փաստը դատաքննության ընթացքում, և տվյալ փաստին չի հակառակվում գործին մասնակցող անձանցից ոչ մեկը:

Շարադրանքի կանոնները. նման փաստերը դատարանի կողմից չեն հաստատվում (ապացուցված չեն համարվում), սակայն իիմք են ընդունվում վեճի

լուծման համար: Բացառություն են կազմում այն չվիճարկվող փաստերը, որոնք ապացուցելը դատարանն անհրաժեշտ է համարում՝ ելնելով արդարադատության շահերից (փաստեր, որոնց անարժանահավատությունն առերևույթ ակնհայտ է կամ, որոնք պահանջը քննելու նախապայման են համարվում, օրինակ՝ համատեղ սեփականատեր լինելու հանգամանքը կողմերին համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքը բաժանելու պահանջը քննելու համար), որի պարագայում դրանք ներառվում են ապացուցման ենթակա փաստերի թվում, և բաշխվում է դրանց ապացուցման բեռը:

Բ. Փաստերը, որոնք ապացուցման ենթակա չեն

Հասկացությունը. ապացուցման ենթակա չէ այն փաստը, որն ապացուցելու պարտականությունից կողմն ազատված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի ուժով (հանրահայտ և նախադատելի փաստեր), թեկուզեն նման փաստը վիճարկվել է:

Ծրանակը որոշելով. այն փաստերի շրջանակը, որոնք ապացուցման ենթակա չեն որոշվում է գործը դատաքննությանը նախապատրաստելու ընթացքում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն ապացուցում պահանջող փաստերը որոշելիս: Միաժամանակ դատարանը կաշկանդված չէ որևէ փաստ ապացուցման ոչ ենթակա համարելու դատավարության որևէ փուլում՝ մինչև դատաքննության ավարտը:

Շարադրանքի կանոնները. նման փաստերը դատարանի կողմից չեն հաստատվում (չեն ապացուցվել), սակայն հիմք են ընդունվում վեճի լուծման համար: Այս ենթաքաժնում պետք է մատնանշվեն այն ապացուցմերը, որոնցով հիմնավորվում է հիշյալ հոդվածով սահմանված որևէ հիմքի կիրառումը: Փաստը տվյալ դատական տարածքում (տվյալ դատարանին ընդդատյա տարածքում) հանրահայտ լինելու մասին դատարանի եզրակացությունը կարող է արվել առանց որևէ ապացույցի, եթե դրա հանրահայտության հանգամանքը դատարանին հայտնի է: Այն փաստը, որը դատարանը հանրահայտ է համարում, կարող է հիմք ընդունվել վեճի լուծման համար, անգամ եթե կողմերից որևէ մեկն այդ փաստը չի առաջադրել, պայմանով, որ նման փաստի առկայությունը կարող էր խելամտորեն ենթադրվել:

Գ. Ապացուցման ենթակա փաստերը

Յասկագությունը. ապացուցման ենթակա է գործին մասնակցող անձի առաջադրած յուրաքանչյուր փաստ, բացառությամբ Ա և Բ կետերով նախատեսված փաստերի:

Շրջանակը որոշելով. ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշվում է գործը դատաքննությանը նախապատրաստելու ընթացքում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն ապացուցում պահանջող փաստերը որոշելիս կամ մինչև դատաքննությունը:

Շարադրանքի կանոնները. այս ենթաքաժնում ապացուցման ենթակա յուրաքանչյուր փաստի վերաբերյալ դատարանի նախընտրած հերթականությամբ պետք է.

- շարադրվի բուն փաստը, որն առաջադրել է կողմը,
- պատճառաբանվի, թե ո՞վ է կրում դրա ապացուցման պարտականությունը (բեռը) և օրենքի ո՞ր նորմի համաձայն,
- դատարանի կողմից գնահատվի յուրաքանչյուր հետազոտված ապացույց՝ ու կողմի փաստարկ տվյալ ապացույցի ապացուցողական նշանակության մասին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,
- ներառի դատարանի եզրակացությունը տվյալ փաստի վերաբերյալ, շարադրելով՝
 - փաստ, որը դատարանն ապացուցված է համարում և հաստատում է,
 - շարադրելով փաստը, որը դատարանը համարում է չապացուցված:

2. Կիրառելի իրավունքը (իրավական հիմքերը)

Ի՞նչն է վկայակոչվում. վկայակոչվում են օրենքները, միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը:

Յաշվի առնելով, որ դատական ակտերը նոր իրավական նորմեր չեն սահմանում, այլ ընդամենն օգնում են միատեսակ մեկնաբանել և կիրառել իրավունքի այս կամ այն նորմը, նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտերը չեն վկայակոչվում:

Ո՞ր նորմերն են վկայակոչվում. այս բաժնում վկայակոչվում են իրավական այն նորմերը, որոնք դատարանը կիրառելու է:

Ամեն դեպքում վճռի հիմքում կարող են դրվել միայն այն իրավական հիմքերը, որոնք քննարկվել են դատարանում, այն է՝ հիմքեր, որոնց կիրառման կամ կիրառումը մերժելու

Վերաբերյալ կողմերը հնարավորություն են ունեցել իրենց կարծիքը ներկայացնելու դատարանին՝ փաստարկելով, թե ինչո՞ւ դատարանը պետք է ընդունի իրենց դիրքորոշումը և չընդունի հակառակորդինը: Կողմը համարվում է նման հնարավորություն ունեցած, եթե պատշաճ կերպով ծանուցվել է այն նիստի վայրի և ժամանակի մասին, որի ընթացքում տվյալ իրավական իիմքերը նախատեսվում էր քննարկել:

Ինչպե՞ս են վկայակոչվում իրավական իիմքերը. իրավական իիմքերը վկայակոչվում են՝ նշելով տվյալ նորմը սահմանող ակտի անվանումը, տվյալ նորմի համարն ակտի համարակալման համակարգում՝ փակագծերում հղում կատարելով տվյալ իրավական նորմի պաշտոնական աղբյուրին, ուր այդ նորմը իրապարակված է (օրենքների պարագայում նման հղումը ցանկալի է, բայց պարտադիր չէ):

Իրավական նորմի բառացի մեջբերումից պետք է խուսափել, բացառությամբ այն դեպքերի, երբ վճռում քննարկվելու է տվյալ նորմում պարունակվող բառերի կամ արտահայտությունների նշանակությունը՝ տվյալ նորմը մեկնաբանելու համար կամ այլ նպատակով: Այս դեպքում էլ պետք է մեջբերվի նորմի միայն վերաբերելի մասը:

Ամեն դեպքում պետք է բացառել նորմերի՝ միմյանց հաջորդող բառացի մեջբերումները:

3. Իրավական խնդիրը

Հասկացությունը. իրավական խնդիրը գործի փաստերի և կիրառելի իրավունքի նորմի համադրման արդյունքում ծագող այն հարցադրումն է, որի պատասխանը հանգեցնում է վեճի կամ վեճի լուծման համար անհրաժեշտ նախապայման հանդիսացող հարցի լուծմանը: Նույն գործով կարող են ծագել մեկից ավելի իրավական խնդիրներ:

Ինչպե՞ս որոշել խնդիրը. իրավական խնդիրը որոշելու համար կիրառելի իրավական նորմի(երի) հետ համադրվում են պահանջի կամ առարկության իիմքում դրված էական փաստական իիմքերից յուրաքանչյուրը: Համադրվում են միայն այն փաստերը, որոնք հաստատված են դատարանի կողմից կամ, որոնք դատարանը իիմք է ընդունում որպես չվիճարկված փաստեր կամ փաստեր, որոնց ապացուցման պարտականությունից կողմն ազատված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի հիմքով:

Ինչպե՞ս ձևակերպել խնդիրը. խնդիրը ձևակերպվում է հարցի ձևով: Որպես կանոն իրավական խնդրի սահմանման համար փաստերի եռթյունը պետք է շարադրվի համառոտ և անդեմ, իսկ իրավական նորմը՝ միայն այն մասով, որը վերաբերելի է: Այնուհետև իրավական հարցի ձևակերպումը կատարվում է հետևյալ բանաձևով.

արդյո՞ք տվյալ փաստի նկատմամբ կիրառելի է իրավական նորմի տվյալ պայմանը կամ արդյո՞ք տվյալ փաստը բավարարում է կիրառելի իրավական նորմի պահանջը:

Օրինակներ

Օրինակ Ա

Յիայոթետիկ գործի փաստերը. հայցվորը խնդրել է պատասխանողից բռնագանձել փոխառությամբ տրված գումարը: Որպես պահանջի իմմավորում նա ներկայացրել է երկու կողմերի ստորագրությամբ պայմանագիր: Պատասխանողն առարկելով պահանջին՝ ժխտում է իր կողմից փոխառության գումար ստանալու փաստը՝ որպես իմմավորում վկայակոչելով գումարի հանձնումը հավաստող որևէ ապացույցի բացակայությունը:

Իրավական խնդիրը. արդյո՞ք փոխառության պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև ստորագրվել է գրավոր պայմանագիր, սակայն առկա չէ դրամի կամ գույքի հանձնումը հավաստող ապացույց:

Ծանոթություն. Տվյալ դեպքում խնդրում տեղ գտած «փոխառության պայմանագիրը համարվում է կնքված» արտահայտությունն իրավական նորմի (ՀՀ քաղաքացիական օրենսգիրը, 877-րդ հոդված, 1-ին մաս) դիսպոզիցիայի շարադրանքն է, իսկ մնացյալը՝ փաստի շարադրանքը: Իրավական նորմի պայմանի և փաստերի կապակցումը, դրանց հարցական համադրումն ապահովված է «Արդյո՞ք» հարցական բառի օգտագործմամբ:

Օրինակ Բ

Յիայոթետիկ գործի փաստերը. ըստ օրենքի ժառանգը մահացել է առանց ժառանգությունն ընդունելու: Նրա կինը դիմելով դատարան՝ խնդրել է իրեն ճանաչել ներկայացման իրավունքով իր մահացած ամուսնու՝ ըստ օրենքի հասանելիք ժառանգությունն ընդունած:

Իրավական խնդիրը. արդյո՞ք մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինը կարող է անցնել մահացած ժառանգի ամուսնուն:

Ծանոթություն. Այս խնդրում կանոնը վերցված է կիրառելի իրավական նորմի հիպոթեզից՝ «մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինը» և վերաշարադրված է (ՀՀ քաղաքացիական օրենսգիրը, 1221-րդ հոդված, 1-ին մաս), իսկ մնացյալը՝ փաստի և հարցի շարադրանքն է:

Օրինակ Գ

Յիապոթետիկ գործի փաստերը. անձն առուվաճառքի պայմանագրով գնել է անշարժ գույք: Այդ ձեռք բերված գույքի նկատմամբ իր իրավունքները գրանցելու համար գործարքից երկու ամիս անց դիմել է Կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված 30-օրյա ժամկետը բաց թողնելու հիմքով Կադաստրի կողմից սեփականության իրավունքի գրանցումը մերժվել է:

Իրավական խնդիրը. արդյո՞ք գործարքի կնքելու պահից 30-օրյա ժամկետի լրանալը հիմք է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցումը մերժելու համար:

Ծանոթություն. Տվյալ դեպքում խնդրում տեղ գտած «գործարքի կնքելու պահից 30-օրյա ժամկետ» արտահայտությունն իրավական նորմի հիպոթեզի («Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մաս) պայմանի վերաշարադրանքն է, որը համադրվել է փաստի և հարցի հետ:

4. Վերլուծություն

Բովանդակությունը. այս բաժնում դատարանը ֆորմալ տրամաբանության կամոններին համապատասխան կատարում է յուրաքանչյուր իրավական խնդրի առանձին քննարկում, համադրում է գործի փաստերը կիրառելի իրավական նորմերի հետ և իրավունքի հարցի վերաբերյալ հանգում եզրակացության, քննարկում է գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը, հանգում է եզրակացությունների:

Մեջբերումները. այս բաժնում իրավական նորմերի բառացի մեջբերումներից հարկ է խուսափել: Նորմի առանձին մաս կարող է բառացի մեջբերվել միայն այն դեպքում, եթե մեկնաբանվելու է այդ մասում պարունակվող որևէ բառ կամ բառակապակցություն:

Նախադեպի կիրառումը. նախադեպային ակտի մեջբերումները պետք է ուղեկցվեն հստակ հղումով տվյալ ակտին՝ նշելով գործի անունը, որոշման ամսաթիվը, ինչպես նաև՝ անդրադառնալ տվյալ նախադեպի կիրառելիության հարցին: Կիրառելիության հարցի շրջանակներում անհրաժեշտ է համառոտակի շարադրել վկայակոչվող գործի փաստերը, համադրել դրանց նմանությունը քննվող գործի փաստերին, որից հետո միայն եզրակացնել նախկին գործով տրված լուծման և դրա պատճառաբանության կիրառելիությունը քննվող գործին: Եթե նախադեպը կիրառելի է, ապա նախադեպային որոշման մեջ տեղ գտած պատճառաբանությունը բառացի վերաբերելու կարիք չկա. բավարար է վկայակոչել բուն նախադեպային որոշումը, եթե դատարանը չի ցանկանում լրացնել պատճառաբանություն ավելացնել:

Դատական ծախսերը. այս բաժնում դատարանն արձանագրում է ներկայացված հայցադիմումի համար պետական տուրքի վճարված, վճարումը հետաձգված կամ վճարումից ազատված լինելու մասին: Այնուհետև քննարկում է պետական տուրքից զատ այլ դատական ծախսերի առկայության հարցը: Կախված վեճի լուծումից՝ դատարանը եզրահանգումներ է կատարում գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի՝ բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն բաշխման վերաբերյալ:

Եզրափակիչ մաս

Բովանդակությունը. Եզրափակից մասի սկզբում դատարանը վկայակոչում է վերոգրյալ պատճառաբանությունն ու վճիռ կայացնելու իր իրավասության աղբյուրը (դատավարական նորմերը), որոնցով դեկավարվելով վճիռ է կայացնում:

Դատական ակտի նախորդող տեքստից բաց թողնելով մեկ տող՝ էջի կենտրոնում տեղադրվում է «ՎՃՌԵՑ» բառը, որից հետո ևս մեկ տող բաց թողնելով շարադրվում է հետևյալը.

1. **Վեճի լուծման վերաբերյալ դատարանի վերջնական եզրակացությունը (լուծումը)**. այս բաժնում նշվում են յուրաքանչյուր հայցապահանջը բավարարելու կամ մերժելու մասին դատարանի եզրակացությունը (լուծումը):

2. **Դատական ծախսերի բաշխումը**. այս բաժնում նշվում է դատարանի եզրահանգումը գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ:

3. **Ծանոթությունները**, ուր նշվում է,

որ վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին, և

դատական ակտի բողոքարկման ժամկետն ու այն վերադաս դատական ատյանը, ուր կարող է ներկայացվել բողոքը:

Օրինակ՝

«Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ, 131-րդ և 134-րդ հոդվածներով, դատարանը

1. Յակոր Յակոբյանի հայցը բավարարել ամբողջությամբ: Պողոս Պողոսյանից հօգուտ Յակոր Յակոբյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճասի հատուցում:
2. Պողոս Պողոսյանից հօգուտ Յայաստանի Յանրապետության բռնագանձել 200 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:
3. Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում: Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:»:

¹ Ծանոթացում. Նետազոտված են համարվում այն ապացույցները, որոնք որևէ կողմ ներկայացրել է դատարանին կամ դատարանը ձեռք է բերել իր նախաձեռնությամբ (բացառությամբ, որոնք դատարանը նախապատրաստական նիստում կամ դատաքննության ժամանակ անբույալ տրամադրելի է համարել և հանել է հետազոտման ենթակա ապացույցների շարքից՝ պայմանով, որ դրանք հետազոտվել են դատաքննության ժամանակ, այն է.

- ապացուցման պարտականություն կրող կողմը հնչեցրել և ներկայացրել է կամ վկայակոչել է նախկինում ներկայացված ապացույցը դատարանին՝ տվյալ ապացույցի թույլատրելիության նախապայմաններն ապահովելով: Դատարանի նախաձեռնությամբ ձեռք բերված ապացույցի պարագայում դատարանն է հնչեցրել տվյալ ապացույցը և ներկայացրել այն կողմերի քննարկմանը: Վկայի ցուցմունքի պարագայում տվյալ կողմը (իսկ դատարանի նախաձեռնությամբ հրավիրված վկայի պարագայում՝ դատարանը) հրականացրել է վկայի ուղղակի հարցաքննություն դատաքննության ժամանակ, եթե կողմերը չեն միջնորդում ընդունել վկայի գրավոր ցուցմունքն ինչպես կա,
- փաստը վիճարկող կողմին ապացույցը ներկայացնելուց հետո հնարավորություն է ընձեռնվել անհրաժեշտ հիմնավորմանը առարկել այդ ապացույցի թույլատրելիության դեմ, բացառությամբ, եթե տվյալ կողմը հնարավորություն է ունեցել նույն հիմքով առարկել տվյալ ապացույցի դեմ նախապատրաստական նիստի ընթացքում (գրավոր և իրեղեն ապացույցների պարագայում): Նման հնարավորությունը համարվում է ընձեռնված, եթե կողմը պատշաճ ծանուցվել է տվյալ նիստի վայրի և ժամանակի մասին: Ամեն դեպքում ժամանակին առարկելը և իր առարկության հիմքը մատնանշելը կողմի պարտականությունն է: Վկայի ցուցմունքի պարագայում նման առարկությունը պետք է ներկայացված լինի ուղղակի հարցաքննության ժամանակ վկային ուղղված հարցից կամ դրան տրված պատասխանից անմիջապես հետո,
- ապացույցը ներկայացնելիս կամ իր ելույթում ապացուցման բեռ կրող կողմը հնարավորություն է ունեցել փաստարկել դրա ապացուցողական նշանակությունը (Կշիռը),

- փաստին հակառակվող կողմն ապացուցը ներկայացնելուց հետո կամ իր ելույթում հնարավորություն է ունեցել հակաֆաստարկներ ներկայացնել դրա ապացուցողական նշանակության (կշռի) դեմ:

Վարչական դատարանի կողմից վարչական գործով կայացվող վերջնական դատական ակտի կառուցվածք

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Այս բաժնում նկարագրվում են՝

ա) հայցի առարկան (հայցապահանջը)

բ) հայցի հիմքը (հիմքերը)

գ) գործի նախապատրաստման փուլի համառոտ վերլուծությունը կամ նկարագրությունը (եթե այդպիսին իրականացվել է)

դ) գործով էական միջնորդությունների և դրանց վերաբերյալ կայացված դատական ակտերի մասին, այլ էական դատավարական գործողությունների մասին

ե) ներկայացված ապացույցների թվարկումը

զ) ապացուցման բերի բաշխման մասին

է) այլ դատավարական մանրամասներ:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Այս բաժնում նկարագրվում են հայցի վերաբերյալ հիմնավորումները:

3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը.

Այս բաժնում նկարագրվում են պատասխանողի հիմնավորումները և առարկությունները:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը և դատական ակտի պատճառաբանությունները.

Այս բաժնում ներկայացվում են՝

ա) հանրահայտ ճանաչված հանգանանքները.

բ) նախադատելի հանգանանքները.

գ) ապացուցման ենթակա հանգանանքները:

Այս ենթաբաժնում նկարագրվում է բուն ապացուցման գործընթացը, այն է՝ ապացուցման բերի բաշխմանը համահունչ պետք է քննարկել յուրաքանչյուր փաստի

առկայության կամ բացակայության հարցը՝ ելնելով ապացույցների հետազոտման և գնահատման ֆորմալ դատավարական կանոններից:

- ա) կիրառելի օրենքի և իրավական այլ ակտերի որոշում.
- բ) Եվրոպական դատարանի և վճռաբեկ դատարանի կիրառելի նախադեպերի որոշում, եթե այդպիսին կա.
- գ) հայցի յուրաքանչյուր հիմքի վերլուծություն վերաբերելի հաստատված փաստերի հիման վրա:

5. Եզրափակիչ մաս.

- հայցի լուծման մասին վերջնական եզրահանգում.
- վճռի բողոքարկման կարգը
- հարկադիր կարգով վճռի կատարման մասին նշում, օրենքով սահմանված դեպքերում:

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2008թ. հունիսի 13-ի թիվ 122 որոշման

Առաջին ատյանի դատարանի քրեական գործով կայացվող վերջնական դատական ակտի կառուցվածք

1. Գործի դատավարական նախապատմությունը.

- ա) Երբ և ում կողմից է քրեական գործ հարուցվել,
- բ) առաջադրված մեղադրանքի բովանդակությունը,
- գ) Երբ է մեղադրական եղրակացությանը ուղարկվել դատարան,

2. Ապացույցների հետազոտում և գնահատում.

- ա) դատարանի կողմից հաստատված փաստերը,
- բ) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևողությունները,
- գ) այն ապացույցները, որոնք դատարանի կողմից ճանաչվել են անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ոչ արժանահավատ, եթե այդպիսիք կան,
- դ) առաջադրված մեղադրանքի հետ հակասության դեպքում դատարանի պատճառաբանությունը,

3. Դատարանի իրավական վեոլուծությունները.

- ա) արարքի որակում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի հատկանիշներով,
- բ) Եվրոպական դատարանի և /կամ/ Վճռաբեկ դատարանի կիրառելի նախադեպային մեկնաբանությունների կիրառման որոշում, եթե այդպիսին կա,
- գ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածով թվարկված հարցերի լուծում,
- դ) դատավարական այն նորմերը, որոնցով դատարանը դեկավարվել է որոշում ընդունելիս:

4.Եզրափակիչ մաս.

- ա) դատարանի որոշումները,
- բ) դատավճռի բողոքարկման կարգը:

**Արագացված դատաքննությամբ կայացված վերջնական դատական
ակտի կառուցվածք**

1.Գործի դատավարական նախապատմությունը.

- ա) Երբ և ում կողմից է քրեական գործ հարուցվել,
- բ) առաջադրված մեղադրանքի բովանդակությունը
- գ) Երբ է մեղադրական եղրակացությամբ ուղարկվել դատարան,

2.Արագացված դատական քննություն.

Գործի քննության ժամանակ դատարանը պետք է պարզի և այս մասում պարտադիր պետք է շարադրի հետևյալ բովանդակությամբ.

«Մինչ դատաքննությունն սկսելն անբաստանյալ _____-ը միջնորդեց դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարեց, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է, համաձայն է մեղադրանքի հետ:

Դատարանը համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ և 375.2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները որոշում է կայացրել արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին:


Դատարանը հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, գտնում է, որ ամբաստանյալ _____-ը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի _____ հոդվածով նախատեսված արարք:

3. Դատարանի իրավական վերլուծությունները.

- ա) Այս մասում չեն շարադրվում ապացույցները,
- բ) Վճռաբեկ դատարանի կիրառելի նախադեպային մեկնաբանությունների կիրառման որոշում, եթե այդպիսին կա,
- գ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածով թվարկված հարցերի լուծումը հաշվի առնելով 45^1 գլխի կանոնները,
- դ) դատավարական այն նորմերը, որոնցով դատարանը դեկավարվել է որոշում ընդունելիս:

4.Եզրափակիչ մաս.

- ա) դատարանի որոշումները,
- բ) դատավճռի բողոքարկման կարգը, որտեղ նշվում է, որ այն չի կարող բողոքարկվել քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ ԽՈՐՉՈՂԻ

ՈՐՈՇՈՒՄ №-102

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ ՏԱԼՈՒ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԶԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը, ուսումնասիրելով ՀՀ դատարաններում քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված անհապաղ կատարման ենթակա որոշումները կատարման ուղարկելու դատական պրակտիկան, արձանագրում է, որ ՀՀ դատարանները հիմնականում ճիշտ են կիրառում վերը նշված հոդվածով սահմանված դրույթները:

Այսուհանդերձ դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ դատարանները, չեն տրամադրում կատարողական թերթ դիմողի դիմումի բացակայության պատճառով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կատարողական թերթը տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ անհապաղ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 49-րդ, 94-րդ, 99-րդ, 151-րդ հոդվածների համաձայն կայացված դատական ակտերն ուժի մեջ են մտնում կայացման պահից և ենթակա են կատարման՝ անհապաղ:

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է նաև, որ դատարանների կողմից տրամադրվող կատարողական թերթերն ունեն տարբեր ձևեր, ինչն անհրաժեշտություն է առաջացնում միանման ձևաթղթեր սահմանելու:

Ելելով վերոգրյալից և դեկավարվելով «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

- Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա կատարողական թերթը տրվում է պահանջատիրոջը՝ նրա դիմումի հիման վրա:
- Օրինական ուժի մեջ մտած և անհապաղ կատարման ենթակա դատական ակտերի հիման վրա կատարողական թերթը տրվում է պահանջատիրոջն անհապաղ՝ առանց նրա դիմումի:
- Հաստատել ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի հիման վրա տրվող կատարողական թերթի օրինակելի ձևերը՝ համաձայն 1, 2, 3 հավելվածների:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ
ԽՈՐՃՐԴԻ ՆԱԽԱԳԱՅՆ**

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

13 հունիսի, 2006թ.

ք. Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ
ԽՈՐՉՈՂԻ 2006թ. ՀՈՒՆԻՍԻ 13-Ի
ԹԻՎ 102 ՈՐՈՇՄԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆ

(դատարանի անվանումը)

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ

Գործ թիվ _____
(գործի համարը)

»__« _____ 200__թ.

օր ամիս (ակտի կայացման վայրը)

Հայաստանի Հանրապետության
դատարանը
(դատարանի անվանումը)

քննեց _____

(նշել քննված հարցը)

_____ պահանջի
մասին

»__« _____ 200__թ.-ին
օր ամիս

Ո ՐՈ Շ Ե Ց

(դատական ակտի եզրափակիչ մասը)

ՊԱՐԱՆՁԱՏԵՐ

ՊԱՐՏԱՊԱՆ

(անուն, ազգանուն, հայրանուն)	(անուն, ազգանուն, հայրանուն)
բնակության (գտնվելու վայրի) հասցեն	բնակության (գտնվելու վայրի) հասցեն
(անձնագրային տվյալները)	(անձնագրային տվյալները)
(սոց. քարտի համարը՝ դրա առկայության դեպքում)	(սոց. քարտի համարը՝ դրա առկայության դեպքում)
(իրավաբ.անձի դեպքում՝ հաշվառման համարը և պետ. գրանցման վկայականի համարը)	(իրավաբ.անձի դեպքում՝ հաշվառման համարը և պետ. գրանցման վկայականի համարը)

Կատարողական թերթը տրված է »__« 200__թ.

Որոշումն ուժի մեջ է մտել »__« 200__թ.

Ղատավոր _____

(անուն, ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ
ԽՈՐՉՐԴԻ 2006թ. ՀՈՒՆԻՍԻ 13-Ի
ԹԻՎ 102 ՈՐՈՇՄԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆ

(դատարանի անվանումը)

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ

Գործ թիվ _____
(գործի համարը)

»__« _____ 200__թ.

օր ամիս (ակտի կայացման վայրը)

Հայաստանի Հանրապետության
դատարանը
(դատարանի անվանումը)

քննեց հայցվոր (դիմող) _____ հայցադիմումը
(դիմումը)
(անունը, ազգանունը (անվանումը))

ընդդեմ պատասխանող

(անունը, ազգանունը (անվանումը))

պահանջի
մասին
(պահանջը)

»__« _____ 200__թ.-ին
օր ամիս

Վ ճ Ո Ե Ց

(դատական ակտի եզրափակիչ մասը)

ՊԱՐԱՆՁԱՏԵՐ

ՊԱՐՏԱՊԱՆ

(անուն, ազգանուն, հայրանուն)	(անուն, ազգանուն, հայրանուն)
բնակության (գտնվելու վայրի) հասցեն	բնակության (գտնվելու վայրի) հասցեն
(անձնագրային տվյալները)	(անձնագրային տվյալները)
(սոց. քարտի համարը՝ դրա առկայության դեպքում)	(սոց. քարտի համարը՝ դրա առկայության դեպքում)
(իրավաբ.անձի դեպքում՝ հաշվառման համարը և պետ. գրանցման վկայականի համարը)	(իրավաբ.անձի դեպքում՝ հաշվառման համարը և պետ. գրանցման վկայականի համարը)

Կատարողական թերթը տրված է »__« _____ 200__թ.

Վճիռն օրինական ուժի մեջ է մտել »__« _____ 200__թ.

Ծանոթագրություն: Կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել վճիռն
(դատավճիռն) օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա
ընթացքում:

Դատավոր՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ
ԽՈՐՉՐԴԻ 2006թ. ՀՈՒՆԻՍԻ 13-Ի
ԹԻՎ 102 ՈՐՈՇՄԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱՐԱՆ

(դատարանի անվանումը)

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ

Վարույթ թիվ ՎԿ-
(Վարույթի համարը)

»__« _____ 200__թ. _____

օր ամիս (ակտի կայացման վայրը)

Հայաստանի Հանրապետության
դատարանը
(դատարանի անվանումը)

դատավոր _____ քննեց
(անունը, ազգանունը)

_____ դիմումը ընդդեմ պատասխանող

_____ (անունը, ազգանունը (անվանումը))
ապահովությունը պահանջի
մասին
(անունը, ազգանունը (անվանումը)) (պահանջը)

»__« _____ 200__թ.

օր ամիս

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ե Ց

Բռնագանձել _____ -
(Վճարման կարգադրության եզրափակիչ մասը)

ՊԱՐԱՆԶԱՏԵՐ

ՊԱՐՏԱՊԱՆ

(անուն, ազգանուն, հայրանուն)	(անուն, ազգանուն, հայրանուն)
բնակության (գտնվելու վայի)	բնակության (գտնվելու վայի)
հասցեն	հասցեն
(անձնագրային տվյալները)	(անձնագրային տվյալները)
(սոց. քարտի համարը՝ դրա առկայության դեպքում)	(սոց. քարտի համարը՝ դրա առկայության դեպքում)
(իրավաբ.անձի դեպքում՝ հաշվառման համարը և պետ. գրանցման վկայականի համարը)	(իրավաբ.անձի դեպքում՝ հաշվառման համարը և պետ. գրանցման վկայականի համարը)

Կատարողական թերթը տրված է » « 200 թ.

Վճարման կարգադրությունը ստացել է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ
» 200 թ.

Ծանոթագրություն: Կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել վճարման
կարգադրությունն օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ
ստանալուց

ԻԵՍՈՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ՂՆԹԱԳՐՈՒՄ:

Դատավոր՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն) Կ.Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՃՈՒ

ՈՐՈՇՈՒՄ №-79

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՁԻ 28-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
4-ՐԴ ՄԱՍԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը, ուսումնասիրելով ՀՀ դատարաններում քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման դատական պրակտիկան, արձանագրում է, որ ՀՀ դատարանները հիմնականում ճիշտ են կիրառում վերը նշված հոդվածով սահմանված դրույթները:

Այնուհանդերձ դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ նշված դրույթները ստանում են տարաբնույթ մեկնաբանություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն հարցեր տալ, միջնորդություններ անել, բացատրություններ տալ դատարանին: Գործին մասնակցող անձանց բացատրությունները ապացույցներ են, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այս տեսանկյունից կողմերի բացատրությունները հանդիսանում են ապացույցի յուրահատուկ տեսակ, որի առանձնահատկությունն այն է, որ դատարանը փաստական տվյալներ է ստանում գործի ելքով նյութաիրավական շահագրգռվածություն ունեցող անձանցից: Հետևաբար, նպատակ ունենալով ապահովել գործին մասնակցող անձանց բացատրությունների՝ որպես ապացույցի տեսակի պատշաճ ապացուցողական նշանակությունը, պատասխանատվություն է սահմանվել սուտ բացատրություն տալու համար:

Մինչև գործի քննության անցնելը դատարանը գործին մասնակցող անձանց, այդ թվում նաև՝ կողմերին, նրանց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելիս, պետք է նախազգուշացնի նաև այն հետևանքների մասին, որոնք կարող են առաջանալ այս կամ այն դատավարական գործողությունը կատարելու կամ չկատարելու, մասնավորապես՝ գործի փաստական հանգամանքների մասին սուտ բացատրություն տալու հետևանքով:

Դատարանը պետք է գործով կողմերին նախազգուշացնի սուտ բացատրություն տալու դեպքում քրեական պատասխանատվության մասին և ստորագրություն վերցնի օրենքի պահանջների պարզաբանման վերաբերյալ, որը պետք է կցվի դատական նիստի արձանագրությանը: Նմանատիպ գործողություն դատարանը կատարում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ մասով՝ փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, և 63-րդ հոդվածի 5-րդ մասով՝ վկայի կողմից ակնհայտ կեղծ ցուցմունք տալու հետևանքները պարզաբանելու դեպքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման միասնական դատական պրակտիկա ձևավորելու նպատակով, դեկավարվելով՝ «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական դատավարության ընթացքում դատարանը պետք է կողմերին

նախագուշացնի գործի փաստական հանգամանքների վերաբերյալ սուտ բացատրություն տալու համար քրեական պատասխանատվություն նախատեսված լինելու մասին:

2. Դատարանը պետք է կողմերից ստորագրություն վերցնի նախագուշացնան մասին և կցի դատական նիստի արձանագրությանը:

2. Հաստատել քաղաքացիական դատավարության ընթացքում կողմերին գործի փաստական հանգամանքների մասին սուտ բացատրություններ տալու համար քրեական պատասխանատվություն նախատեսված լինելու մասին նախագուշացնան ձևը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ
ԽՈՐՃՐՈՒ ՆԱԽԱԳԱՅՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

8 դեկտեմբերի, 2005թ.
ք.Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ
ԽՈՐՃՐՈՒ 2005թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-ի
ԹԻՎ 79 ՈՐՈՇՄԱՆ

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ես՝ _____, հրավիրված
լինելով
(անուն, ազգանուն)

Հայաստանի Հանրապետության _____
դատարան
(դատարանի անվանումը)

(քննվող գործի անվանումը)

գործով,

որպես _____, պարտավորվում եմ դատարանին տալ
դատավարական կարգավիճակը

ճշմարիտ բացատրություններ գործի փաստական հանգամանքների մասին:

Դատարանի կողմից ինձ բացատրված է, որ գործի փաստական հանգամանքների մասին սուտ բացատրություն տալու համար Ենթակա Եմ պատասխանատվության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածին հանապատասխան:

(ստորագրություն, անուն, ազգանուն)
